



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օպտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

31

5
F-99

Օրինակի համար . Խոտիխա կիննայ հիւսիսային լայնութեան 36 և 46 աստի ճաններուն միջոց . Տաճկաստանի Անատոլու և Յուլիէլի մեծ աշխարհներն՝ 33 և 43 աստիճանաց միջոց , Հայաստան 36 և 41 աստիճանաց միջոց . Գաղղիա աւելի դէպ ՚ի բնեռ է , այսինքն հիւսիսային լայնութեան 42 և 51^o ներուն մէջտեղը : Անգղիա գեռ աւելի դէպ ՚ի հիւսիս , այսինքն լայնութեան 49 և 61 աստիճանաց միջոց :)

Ա101 Ի՞նչ ազգեցութիւն կընէ ծովի բարեխառնութեան վրայ : — Տաք կիմայից սաստկութիւնը կը մեղմացընէ , և երբ սատած չըլլայ՝ կը նուազէ ցրտութեան խըստութիւնը :

Ա102 Երինք ի՞նչ ազգեցութիւն ունին բարեխառնութեան վրայ : — Երանց գօտիներն բաւական բարձր կը պաշէն՝ երկրին բարեխառնութիւնը , եթէ պաշտպաննեն զայն հիւսիսային և արեւելեան հովիքն . բայց աւելի ցուրտ կընեն՝ եթէ երկրին արեւմտեան կողմը շարուած ըլլան :

Ա103 Գետնին յատուկ բնութիւնն ի՞նչ ազգեցութիւն կընայ ընել բարեխառնութեան վրայ : — Չոր և աւաղուտ գետին մը բարեխառնութիւնը աւելի տաք կը պահէ՝ քան թէ ճահիճներով ծածկուած երկիր մը , որ կը պաղի՝ առատ և շարունակ չըլլացմաք մը :

Ա104 Ի՞նչ ազգեցութիւն կընեն ամպք հովերու ուղղութեանը վրայ : — Աբեգակ-

նային ճառագայթից անցքն ընդմիջելով՝ չեն թողուր որ գետինն միափերպ առաքնայ , ասովնաև օգոյ անօսորութիւնն տեղ տեղ կը նուազի : Այս է զիխաւոր պատճառներէն մէկն՝ որով հովուն ոչ ոյժն և ոչ ուղղութիւնն միափերպ կըլլան :

Ա105 Ի՞նչ յարաբերութիւն ունի մըթնող որոտային ելեկտրականութիւնն հողմոյ ձևացմանը հետո՝ Ելեկտրականութիւնն անձրեկ կը փասէ ամազոց մէջ գտուած փամփշտային ձևով ջուրը . բայց ելեկտրականութեան այս ազգեցութեանն հետ միշտ կըլլան նաև քանակի ամփոփումն և ջերմութեան արձակումն , և երկուքն ալ օգոյ շարժման առիթ են :

Ա106 Ինչո՞ւ համար երբեմն հովի ուժգին և բուռն կը փէկ և երբեմն ալ մեղմ : — Որովհետեւ հովերը պատճառող առիթը տարբեր են , և շատ պատճառներ կան որ անոնց խտութիւնը կը չափաւորեն :

Ա107 Ո՞ր առիթներն են որ կը յեղափոխեն օդային վաղուկի մը խտութիւնը : — Երինք , անտառք , ծովք և ամառք :

Ա108 Սովորաբար ո՞րչափ տեղ կը վաղէ հովի՛ որոշեալ ատեննուան մէջ : — Հովուն երացութիւնն շատ կը զանազանի , ամենէն մեղմ զեփիւոն ժամուան մը մէջ կը վաղէ 1800 մեգր , մինչդեռ ժամերն արմատալող և չնքերը կործանող մրրիկ մը նոյնչափ ատեննուան մէջ կը վաղէ 162,000 մեգր :

(Այս երկուքին միջասահման կը սեպուին	
Զեկիւո զգալի, ժամուան մէջ	3,600 մէդր
Հողմ չափաւոր	7,200 —
— սաստիկ	36,000 —
— աւելի սաստիկ	72,000 —
Մըրեկ	104,400 —):

4109 Ի՞նչպէս կ'իմացուի հօգուն երաշութիւնն : — Այս արագութենէն որով ամսի մը շուքը կը վաղէ երկրիս երեսին վրայ :

(Հողմաշափք և հողմացցցք յարմար նը շանափք են այս բանիս , որք կը ցուցընեն նաև հոփին զարնուածքին ոյժը՝ մակերեւութի մը վրայ):

4110 Ծնդհանրապէս հօվի ինչ օգուտ կը բերէ երկրիս : — Հողմք ամենաոտագակար են , որովհետեւ նախ , կը հաստատեն զանազն գաւառաց մէջ բարեխմառնութեան հաւասարակշռութիւն : — Բ . Անդագար կը յուղեն օդոյ կոյսոր և շարունակ կը նորոգեն , — Գ . կը մշեն անձրեւոտ ամպերը և կը թրծն գետինը ու սերմը կը բեղմաւորեն : — Դ . կը տանին հնուու անգեր ծալքանց և սերմանց փոշիները , որով կ'օգնեն բուսեղինաց տեսակներուն աճմանը : — Ե . Նաւաց և հողմաղացից շարժիչ յդն են :

4111 Ի՞նչ օգուտ կը բերէ օդոյ՝ հովերուն պատճառած յուղումն : — Յուղեալ օդն իրեն հիւլէից շարժնութեամբ՝ տեղը

կը փոխէ . ասով արտահնչութիւնք՝ (որ միշտ մէկ տեղ մը հաստատուն մնալով վուանգաւոր պիտի ըլլային) , հաւասարապէս կը տարածուին անոր մէջ . դարբնոցաց ծուխն , քաղաքաց ապականեալ օդն , ծաղկանց և նեխութենէ ելած կաղերուն ցնդմունքն , ամենն ալ կը խառնուին , և շարունակ կը նորոգուին ի ձեռն օդոյ վաղուկաց :

4112 Ինչո՞ւ համար այն հովերն որ ընդարձակ ցամաքներէ կ'անցնին՝ ընդհանրապէս չոր կ'ըլլան , իսկ անոնք որ կ'անցնին մեծ ծովերու վրայէն սովորաբար անձրեւաբեր կ'ըլլան : — Որովհետեւ առաջիններն շատ քիչ խոնաւութիւն կը ծըծեն , և մէկաներն ծովու վրայէն անցնելով շատ անդամ կը յագենան ջրային շոգիներով :

4113 Ինչո՞ւ համար ձմեռն երբ սառ կ'ըլլայ , կամ հով շատ չոր ըլլայ՝ ձեռաց կ'ըլլանակի մորթն կը ճաթըռատի : — Որովհետեւ օդն կը չորցընէ մորթին թացութիւնը , և ցուրտն զայն սաստիկ կը սեղմէ , այնպէս որ ալ բաւական առածգութիւն չունենար՝ ձեռաց պէտք եղած շարժմունքներն ընելու , սառը համար մորթն կը քաշուի և կը ճաթըռատի :

4114 Ինչո՞ւ համար հովերու զանազան անուններ կը տրուին : — Որովհետեւ հովերն երկրիս զանազան կէտերէն կու զան , զանոնք որոշելու համար իրենց ելած տեղերնուն անուամբ կը կոչուին սովորաբար :

§. Դ. — Կանոնաւոր Հոդմք :

1115 Ի՞նչպէս կարելի է դասակարգել հովերը : — Հովերն կը զանազանուին մէկ մը ընդհանուր կամ հաստատուե և պարբերական, մէկ մ'ալ անկանոն կամ փոփոխական ըլլալով :

1116 Ո՞ր հովերն են որոնց ուղղութիւնն աւելի հաստատուն է : — Անոնք՝ որ անփոփոխ և հաստատուն առիթէ մը կը պատճառին, և ընդարձակ սահմանաց վրայ կը տիրեն : Ասոնց մէջ զիմաստորներն են դաշնաւոր և մնանոն ըստուած հովերն . առաջիններն կը փշեն բոլոր տարին արևելքն յարեւմուտք, մէկալներն կը փշեն վեց ամիս հիւսիսային արևելքէն ¹, վեց ամիս արև հարաւային արևելուտքէն ²:

(Երկու տեսակ հովերն ալ թէ դաշնաւորք և թէ մնանոնք կը բռնեն հասարակածներուն միջոցը :)

1117 Որո՞նք են կանոնաւոր հովերն որ կը տիրեն բարեխառն գօտւոյն մէջ, ինչպէս յիտալիա, Պաղպիա, և յԱնգղիա : — Բարեխառն գօտւոյն մէջ ամենեւին կանոնաւոր հով չկայ . այն կլիմային երկիր-

1 Իտալելքն Greco, այսինքն Յցին, որովհետև Յունաստանի կողմէն կու գայ այս հովս յիտալիա:

2 Իտալ. Libeccio, Լիբեկոն, ՚ի Լիբեց (ՅԱ. Փրիկոյ) փշելուն համար :

ներն միշտ ենթակայ են փոփոխելի և անկանոն հողմոց ազգեցութեանը . միայն ծովային զեփիւոք կըրնան ըստուիլ երբեւ պարբերական հողմք այս կլիմայից :

(Վերը յիշեալ աշխարհներէն զատ զրեթէ ամբողջ Երոպաս, ինչպէս նաև մեծ մասն Ասիոյ և հիւսիսային Ամերիկոյ՝ այս կիման ունին, որովհետև այրեցածին և ցրտային գօտեաց մէջ տեղն են :)

Ա. — Դաշնաւոր Հոդմք և Մոնակը :

1118 Ի՞նչ է դաշնաւոր հողմոց պատճառն : — Այրեցած գօտւոյն մէջ երկրիս մակերեւութէն սաստիկ տարցած ողն՝ կելէ կը բարձրանայ, և ցրտային գօտիներէն նոր օգ կու գտյ զայն փոխանակելու :

1119 Ի՞նչ ուղղութեամբ կը փշեն դաշնաւոր հողմք : — Հիւսիսային կիսագունդին մէջ կը փշեն հիւսիսէն արեկելք, իսկ հարաւային կիսագունափին մէջ կը փշեն հարաւէն արեկելք :

(Երկիրս գրեթէ գնտածե ըլլալով հասարակածն որ զայն կը Մջապատէ անոր ամենէն մեծ կըրութեան կէտին, կըրնայ մոտածութիւն որ այս գունտս երկու հաւասար մաս բաժնէ . արդ այս մասանց կէտն, այսինքն այն որ հասարակածէն կը ձգուի ինչշտան հիւսիսային բեկո՞ր բեկո՞ին անուամբ կը կոշտի Հիւսիսային կիսագունա-

և այն է որուն վրայ մենք կը գտնուինք, մանաւանդ թէ հոն կը գտնուին զբեթէ ամեն ցամաքը երկրի : Խսկ Հարաւային կիսագունա կը գունափառ միւս կէսն, որ հասարակածէն կը ձգուի ինչուան հարաւային բենո : Մասն Ամերիկոյ, պղտի մասն Աֆրիկոյ և Ավստրալիոյ՝ այս կիսագունափառ մէջ գտուած միայն ցամաք երկիրներն են, մնացածն բոլոր անհուն ծով մէ :

1120 Եթէ հասարակածն է երկրիս այն մասն ուր կը զիմէ ցուրտ օդոյ փոխանակելու համար զոտք ուղղակի հիւսիսին և հարաւէն դէպ ՚ի այրեցած գոտին չի փշեր : — Որովհետեւ բեւուային վաղութեա հաջորդ են մեր գունափին թաւալական շարժմանը՝ որով ինքն իր վրան կը գաւանոյ արեմուտքէն արեւելք, և որովհետեւ երկրիս շարժմունքն աւելի արագ է քան զհով, անոր համար կը կարծուին թէ իրենք հակասակ կողմէ կը փշեն, այսինքն արեւելքէ արեմուտք :

1121 Երբ այրեցած գոտւոյն տաքցած օդն բարձրանայ՝ ինչ ուղղութիւն կ'առնու : Բնեռաց ուղղութիւնը, որպէս զի փոխանակէ այն օդը որ անկէց կը հեռանայ, ցած վաղութաց միջոցաւ զհուեալը բեւուաց և հասարակածին միջոց կը ծագին չըրս շարունակ վաղուեներ . երկու սառդիմէր որ երկու բեւուներէն դէպ ՚ի հասարակած կ'երթան, և երկու վերինք՝ որ ան-

կէց կը հեռանան բեկոներուն երթալու համար :

1122 Ինչ օգուտ կ'ըլլայ երկրիս այս մթնոլորտային օդոյ հաւասարակշիռ մնալու յատկութենէն : — Եթէ այրեցած գոտւոյն օդն չպաղէր բեկուաց զով վազուկներէն, տաքութիւնն այնչափ սաստիկ պիտի ըլլար հոն որ կենդանիք պիտի չկարենային զիմանալ : Ընդհակառակին եթէ ըլլարային գաւառաց օդն մեղմացած չըլլար հասարակածային գոտւոյն տաք վազուկներէն, ցուրտն հոն անտանելի պիտի ըլլար :

1123 Ուրիշ ինչ օգուտ կ'ըլլայ օդոյ՝ այս տարբեր գաւառաց օդոց խառնուրդէն : — Հասարակածային գաւառաց մէջ բուսեղինաց մեծ աւատութիւնն (որ հօն աւելի կ'աճին քան թէ երկրիս ուրիշ մասի մը վրայ) կը պատճառէ թթուածընի առատ քանակութիւնն մը : Բարեխառն գաւառաց մէջ կրակն, մարդիկ և կենդանիք կը պատճառաց շատ ածղային թթուած . այս երկու մթնոլորտաց փոփոխուելէն կը հետեւի որ այս կազն ամեն կողմէ կ'երթայ, ուր որ աւելի պէտք է :

1124 Ինչու համար այն խառնուրդէն կը հետեւի որ իւրաքանչիւր գաւառ ընդունի իրեն աւելի յարմար եղած կազը : — Որովհետեւ արեւագարձից տակ բուսեղինք պէտք ունին շատ ածղային թթուածի, մինչդեռ բարեխառն և բեւուին մօտիկ գո-

տեաց կենդանիք կը կարօտին թթուածնի : 0դոյ վազուկներն աւելի ցուրտ գաւառներէ կը բերեն ածղային թթուտ՝ այրեցած գոտույն տնկոց . այրեցած գոտույն հովերն ալ թթուածնին կը բերեն բարեխառն գոտեաց մէջ , ուր կենդանիք առատապէս կ'ածին :

1125 Ի՞նչ զլխաւոր փոփոխութիւն կը կրեն դաշնաւոր հողմք : — Ասիա՝ հասարակածին հիւսիսային կողմք գտուելուն պատճառաւ՝ դաշնաւոր հողմոց վրայ փոփոխութիւն մը կընէ , երկու օդոց ամենականնաւոր և շարունակ վազուկներով :

1126 Ի՞նչ անուն կը տրուի այս երկու վազութաց : — Այս երկու տարբերական հոդունք կը կոչուին Մոնակու :

1127 Ի՞նչ են Մոնակու պատճառող առիթք : — Ցամաք երկիրը , և մասնաւորապէս Սախա , որ այրեցած գոտույն հիւսիսային կողմն է , կը կրեն շատ զգալի տարբերիւն մը՝ երբ երկիրս դարձնէ արեւուն իր հիւսիսային բնեսոք : Նոյն տարբերիւնն ըշլաք՝ երբ գունտիս հարաւային բնեւուն արեւուն դառնայ , որովհետեւ այս վերջին կիսագունտին մէջ՝ ջաւրը անհուն տարածութիւն ունին , և երկրէս քիչ կը տարնան . այս տարբերութեանէս կը ծագին երկու վազուկք , որ մէկմէկու կը յաջորդեն եղանակաց նորոգուելուն տառն :

1128 Ի՞նչ ուղղութիւն ունին Մոնակու : — Վեց ամիս , այսինքն ասլրիէն մինչև

հոկտեմբեր՝ կը փչէ ուժգին Լիբիկիոնն (1116) , մէկալ վեց ամիսներուն մէջ չոր և հանոյական հով մը կը փչէ , յունականն կամ հիւսիսային արևելեանն :

1129 Մոնակու ալ կը պատճառեն բարձր հակառակ վազուկներ : — Ոչ . իրենք քիչ բարձրութիւն ունին , և որովհետու լերինք անոնց ընթացքը կը խոտորեն՝ անոր համար հնդկային Ովկիանոսին մէջ զրեթէ ուղղակի հիւսիսէն ՚ի հարաւ կը փեն :

1130 Ի՞նչ կերպով Մոնակու օգտակար կըլլան նաւարկութեան : — Այս վազուկաց ապարերավականութիւնն այնպէս է որ նաւար ապահովութեամբ ճամբայ կ'ելլէն վեց ամիս մէկ ուղղութեամբ մը երթալու , վեց ամիս ալ անդիէն դառնալու :

Բ . — Ծովային սիցք : — Մրրիկ :

1131 Մեր կլիմայից պարբերական հովլըն որո՞նք են : — Ծովային Միջք . որո՞նք թէսկէտեւ չեն կրնար ոչ ընդհանուր և ոչ կանոնաւոր հով ըսուկէ , սակայն պարբերական են և յատուկ՝ բոլոր ծովեղերեայ գաւառաց :

1132 Ի՞նչ է ծովային սիւքին պատճառն : — Ծովուն և երկրիս բարեխառնութեան շուտ մը փոփոխիլն ցորեկի և զիշերի փոխանակութեամբ :

1133 Ինչո՞ւ այս փոփոխութեամբ կը պատճառին ծովային սիւգք : — Ցորեկ ա-

տեն գետինն ծովէն աւելի կը տաքնայ ,
երկրիս վրայ տարածեալ օդն այն ատեն
աւելի անօսր կ'ըլլայ և կը սկսի բարձրա-
նալ . ծովոն վրայ գտուած կարգերն ալ
կը փոխանակեն բարձրացողները , և կը
ձեւայ վազուկ մը ծովէն 'ի ցամաք : Խսկ
դիշերը հակառակը կ'ըլլայ , որովհետեւ գե-
տինն կը պազի ջրէն աւելի շուտ . ուստի
կը ձեւանայ վազուկ մը որ ցամաքէն 'ի ծով
կ'երթայ :

Ա 154 Ի՞նչէ գլխաւոր արդասիք ծովային
սիւգերուն : — Շարունակ բարեխառնել
այն գաւառաց կիմայն՝ որոնց մէջ կը
տիրեն :

Ա 155 Ի՞նչու համար ծովային սիւգն շատ
առողջարար է : — Որովհետեւ գրեթէ ջր-
ին երեսէն կու գայ ցամաքին , զոյ և ա-
ռանց հասնուելու վատառողջ արտաշըն-
չութեանց :

(Հատ օգտակար է առողջութեան կէս
օրէն առաջ ծովեղերը շրջագայիլ :)

Ա 156 Ինչու համար ցորեկը ծովեղերքէն
պարաելով մարդ հաճելի զովութիւն մը
կը զգայ : — Որովհետեւ , Ա . Օդն ջըրոյ
հետ չափակուելով կը կորուցընէ մեծմասն
ջերմութեան չողիացուել ժիր պահելու հա-
մար . ասով կերպ ցորա կ'ըլլայ քան թէ
ծովեղին վրայ գտուող օդն : — Բ . Ծո-
վոն եղերքն ծածկուած է չոր աւազով , որ
արեէն սաստիկ կը տաքնայ , և այս է պատ-
ճառն որ ծովեղերը գտուողներն շատ ա-

ելի կը զգան բարեխառնութեան տարբե-
րութիւնը :

Ա 157 Ի՞նչ պատճառաւ ցամաքէն եկող
սիւգն՝ զով կու գայ ծովու վրայ գտուող
նաւասածուց : — Որովհետեւ արևուն մըտ-
նելէն վերջը գետնին մակերևոյթն շատ ա-
ւելի չուտ կը պազի քան թէ ջըրոյ մակե-
րևոյթն , հետեւաբար ցամաքէն եկող սիւգն
վիշերուաւ մէջ աւելի զով կը թուի :

Ա 158 Ինչու համար առողջարար չէ արե-
ւուն մանելէն վերջը ծովեղերը շրջա-
գային : — Որովհետեւ օդն որ կը շարժի
ցամաքէն , մասնաւորապէս եթէ մօտերը
քաղաք մը գտուի , կը բերէ ամեն տեսակ
վեսասկար արտաշնչութիւններ և ապա-
կանեալ կազեր , որ կը ծագին 'ի բնական
բաղալուծմանց և գործարանաւոր մարմնոց
նեխութենէն , և այս բանս ամենավա-
սկար է առողջութեան :

Ա 159 Ինչու համար երեւնն ճանապար-
հաց փոշին գետնին կը բարձրանայ ամեն-
արագ պատյուներով դառնալով : — Այս
բանս կ'ըլլայ երբ երկու հակառակ օդոց
վագուկը իրարու հանդիպին . այն ատեն
իրենք գետին կ'իջնան և ոչ միայն փոշին
կը բարձրացըննեն , հապա ծառեր , չէնքեր
կը լուն , կը կործանեն , շատ վեսներ կը
պատճառեն :

(Եթե այսպիսի օդոց վազուկքն շատ սաս-
տիկ ըլլան՝ կը ձեւանայ օդապատյտ հիմամբ
կամ բարառ (Trombe) :

1140 ինչու համար օդապտոյտք որ կը ծագին երկու հակառակ վազուկներէ՝ հաստատ չեն մնար, այլ երբեմն շատ մեծ արագութեամբ կը սահին։ — Եթէ երկու վազուկներն հաւասար ոյժ ալ ունենան առաջ օդապտոյտն զբեթէ հաստատուն կը մնայ, բայց եթէ վազուկներէն մէ կը աւելի ոյժ և երագութիւն ունենայ՝ այն ատեն յաղթեավ մէկափն շարունակ կը քէ։

(Այս բանս ինչպէս օդոյ մէջ կըլլայ, նոյնպէս ալ զետոց ջըրոյ մէջն ալ կը պատահի. երբ ջըրոյ վազուկ մը հանդիպի պատի արգելքի մը՝ երկու կը բաժնուի անցնելու համար, բայց եթէ այս արգելքս լայնէկ մակերեւոյթ մ'ունենայ կամ մասաւանդ եթէ կտրուած ըլլայ դէպ ՚ի ներս դարձած անկեան ձեռով, այն ատեն ջըրոյ թերեն մէկն ետ կը գառնայ. և ատով կը ձեանան երկու վազուկք՝ որ հակառակ կողմ կ'երթան, որով կը ծագի յորճակը մը, որ վասնդաւորէ, ինչպէս գիտեն ամեն լողացողք. և եթէ խիստ սաստիկ ըլլայ՝ նաւաց ալ վասնդ կը բերէ։)

1141 ինչու համար եթէ յանկարծ փոթորիկ մը ծագի՞ հովերն շարունակ ուղղութիւննին կը փոխեն։ — Որովհետեւ. Ա. Ամպերուն մէջ խտացած ջըրային շողին՝ շատ առածգական ըլլալով՝ կը պատճառէ քանակութեան ընդլայնմունքներ և նուազութիւններ, համեմատ այն բարձրութեան որ կ'ունենայ երկրիս հետ։ Այսպէս շատ

անդամ կը տեսնենք ամպ մը հօրիզոնին վրայ՝ ուր կը տիրէ խիստ ցրտութիւն մը, որ շատ կը մեծնայ եթէ հովի զայն երկրիս աւելի մօտեցընէ. ասիկայ բաւական պատճառ մը կ'ըլլայ ձեւայընելու օդոյ վազուկներ, որոնց կենդզունն կ'ըլլայ ամպն։ — Բ. Մէկմէկու մօտէն անցնելով՝ ամպերն կը թողուն իրենց ելեկտրականութիւնը, և կը պատճառեն քանակութեան մեծ նուազում մը, ասոր համար նաև այս ասթիս մէջ կը ծագին օդոյ վազուկներ։ — Գ. Զեացած վազուկներն քովէ քով անցնելով՝ կը շփուին և կը ձնչուին. անովկ'արձկուի չերմութիւն և ելեկտրութիւն, որով գարձեալ երկրորդական վազուկներ կը ձեանան։

(Ինչ որ հօրիզոնին մէկ կէտին վրայ կ'ըլլայ, կըրնայ նաև ուրիշներու վրայ ալ ըլլավ. այս կերպավ մըըրկի մը ժամանակ շատ և զանազան օդոյ վազուկներ կը ձեանան։ Ամենասաստիկ փոթորկաց միջոց՝ (որ մեր կիմայցից մէջ շատ քիչ կը պատահին, իսկ արեալարձից միջոց կը յաճախեն) օդն ձնչմամբ և շփմամբ կը լուսաւորի և բորբոքած զանգուած մը կ'երեւայ։

1142 ինչու համար փոթորկի ատեն օդոյ բարեխառնութիւնն շարունակ կը փոխուի։ — Որովհետեւ երբ ամպ մը անձրեկի դառնայ՝ ծածկեալ չերմութիւնն՝ որ զջուրը շողլոյ փիճակի մէջ կը բռնէր, բնականապէս օդոյ մէջ կ'անցնի, և անձրեն որ կու

զայ՝ կը պատկցընէ գեամինը, և մէկէն չու-
զիացումն կը լըլայ. ասով օդն իր ջերմու-
թեան մեծ մասը կու տայ ջըրոյն, ասիէ կը
ծագին ցուրտ և տաք օդոց վաղուկներ,
որոնք յաջորդաբար կ'անցնին երկրիս վը-
րայ և կը զգացընեն իրենց բարեխառնու-
թեան տարրերութիւնը, քանի որ հաւա-
սարակութիւնն դեռ ամբողջապէս հաս-
տասիալ չէ:

1143 Ինչո՞ւ համար երբեմն հովի անձրէ
կը բերէ և երբեմն աղէկ օդ: — Եթէ հովի
ամպէրէն աւելի ցուրտ ըլլայ՝ այն ատեն
զանսնիք խոտացընելով անձրէի կը դարձը-
նէ. ընդհակառակն եթէ աւելի տաք ըլլայ՝
այն ատեն զանսնիք կը հալեցընէ և կ'անե-
րեւութացընէ:

(Ովկացին տաք հովի ալ՝ եթէ յագեալ ըլլայ
խոնաւութեամբ՝ նոյնպէս անձրն կը բերէ:)

1144 Ինչո՞ւ համար երբեմն երկինքն
յանկարծակի ամպէրով կը գոյսուի: —
Որովհետեւ ցուրտ օդոց վաղուկ մը՝ մինու-
լուրտին մէջ պատճառելով բարեխառնու-
թեան յանկարծական ցածութիւն մը, կը
խոտացընէ ամպոց օդոց մէջ լուծեալ ջը-
րային շոգին:

1145 Ե՞րբ կ'ըլլայ որ ամպք յանկարծա-
կի կը ցրուին: — Այս բանս կ'ըլլայ երբ
չոր և գոլ հով մը հասնելով ամպոց վրայ՝
անոնց խոնաւութիւնը կը քաշէ և ասով
աներեւոյթ կ'ընէ ջրային շոգին՝ որով կաղ-
մուած է:

1146 Ի՞նչ պատճառաւ մարտի հովերն
ցուրտ և չոր են: — Որովհետեւ պաղ կը
հասնին հիւսիսէն և հիւսիսային արևել-
քէն, բենուային ծովուն ցուրտ ջըրերուն
վրային անցնելնուն համար, կամ Եւրոպիոյ
ցամարին մեծ մասէն, որ գեր ամենացուրտ
է՝ ձմեռուան սառերուն պատճառաւ:

1147 Ի՞նչ օգուտ կը բերեն երկրիս՝ մար-
տի հովերն: — Զմեռուան մէջ եկած ջը-
րով յագեալ գետինը կը ցարեցընեն, ա-
նոր կարծրացեալ հողակրտսերը կը ճեղ-
քեն, որով ցանուած սերմերն կը բող-
բովին:

(Գարունն մեր կիմայից տակ կ'ըլլայ
մարտ, ասլիլ և մայիս ամիսները. Եթէ
անձրեւու ըլլայ՝ շատ արօտ կը բերէ բայց
քիչ ցարեն, եթէ չոր՝ քիչ պտուղ, բայց
բարեհամ և աղէկ. եթէ գարունն ցուրտ
ըլլայ՝ բոլոր պտուղներն կ'ուշանան, եթէ
տաք ըլլայ՝ շատ պտուղ կը բերէ, բայց ոչ
աղէկ: Երկրիս հոմար լաւագոյն գորունն
այն է՝ յորում արեւն անձրեին ետեկն կը
հասնի. վասն զի ասով փափոխակի չոր և
անձրեւու կ'ըլլայ:)

§. Ե. — Հովանարութիւն:

1148 Ի՞նչ է Հովանարութիւն: — Պոց
տեղերու օդոց նորոգուին, ինչպէս են ժո-
ղովարանք, եկեղեցիք, թատրոնք, հի-
ւանդանոցք, բանտք և այլն:

1149 Տան մը օդն միշտ կը փոփոխի: —
Այս . տան մը մէջ շարունակ օդոյ վա-
զուիներ կըլլան. ասք մը՝ որ գէպի՞ գուրս
կ'ելլէ, և ցորս մը՝ որ ներս կը մտնէ:

1150 Ի՞նչ կերպով կարելի է փորձել եր-
կու օդոյ վազուիներու ներկայութիւնը: —
Երկու ճարագ գնելով բնակուած սենեկի
մը դրան մէկը վրան մէկն ալ տակը, երկու
բացից ուղղութիւնն կը ցուցընէ որ տակի
կողմէն կայ ցուրտ օդոյ վազուկ մը՝ որ սե-
նեկին մէջ կը մտնէ, և ուրիշ մը՝ որ բար-
ձրէն անկից կ'ելլէ:

1151 Ի՞նչպատճառաւ դրան վերի կողմի
դրուած ճարագին բացն՝ գէպ ՚ի սենեկին
դուրս ուղղութիւն կ'ունենայ: — Որով
հետեւ սենեկին տաք օդն՝ թեթևութեանը
պատճառաւ կ'ելլէ անոր վերի կողմը, և
անկից ալ կը քուփ պաղ օդոյ վազուկով,
որ աւելի խօս ըլլալով՝ գոնէն կը մտնէ
գետնին քսուելով, և քարշելով դուրսէն
գէպ ՚ի ներս ճարագին բացը՝ որ դուրսած է
դրան վարի կողմը:

(Երբ սենեկի մը մէջ աղէկ վառ կրակ մը
գտուի, այն ատեն տարցած օդն ծխանէն
կ'ելլէ, և դրան ճնշքերն դուրսէն ներս
պաղ օդ կը բերեն:)

1152 Ի՞նչո՞ւ համար սենեակ մը ընդհան-
րապէս աւելի տաք կ'ըլլայ քան արտաքին
օգը, թէպէտե իրեն մէջ կրակ վառուած
չըլլաց: — Որովհետեւ սենեկաց մէջի օդոյ
նորոգուին շատ դանդաղաբար կ'ըլլայ, և

մեր մարմինն քիչ ատենուան մէջ կը հա-
ւասարակափ գառւած միջոցին օդոյ բա-
րեխառնութեանը հետ, այնպէս որ ալ
ցրտի զգացումն չիմանար:

1153 Ի՞նչո՞ւ համար թատերաց վերի
պատզամներուն մէջ աւելի տաք կ'ըլլայ՝
քան թէ ցածերուն և միջայատակին: —
Որովհետեւ բազմութենէն և թատրոնը լու-
սաւորող ճարագներէն տարցած օդն՝ աւելի
թէթենալով՝ կ'ելլէ սրահին բարձր կողմը,
մինչդեռ գոնէն և տեսլատեղէն կը հաս-
նին միջայատակին վրայ ցուրտ օդոյ երկու
վազուիներ, որոնք նախ վարը կը մնան,
ինչուան որ հասնելով բարեխառնութեան
շափաւոր աստիճանի մը՝ ելլեն մնացած
տաք օդոյն հետ:

1154 Ի՞նչո՞ւ համար բուխերիկք (քօծե)
վնասակար կ'ըլլան առողջաւթեան՝ երբ
գոյ սենեկաց մէջ գործածուին: — Որով
հետեւ նոր օդոյ մուտքն կը խափանուի ա-
սով, կամ հովահարութիւն չըլլար, կամ
շատ անկատար կ'ըլլայ. այս պատճառաւ
չնչառութեան պէտք եղած թթուածինն կը
պակսի, և կը մնայ մեծ քանակութիւն մը
ածղացին թթուածի, որ չնշելի չըլլարվ կը
պատճառէ զիսու ցաւ և պտոյս:

1155 Ի՞նչո՞ւ համար սովորութիւնն է զը-
նել բուխերիկին վրայ ջրբալ լեցուն բաց
աման մը: — Որովհետեւ աղէկ դոցուած
ու տաք սենեակներու մէջ օդոյ խոնաւու-
թիւնն ջուրի կը խտանայ թղթապատ և

պաղ պատերու վրայ , ասով օդն շատ չոր կը լուսոյ . այս բանն վնասակարէ է շնչառութեան , և վտանգաւոր ազդեցութիւն մը կ'ընէ մարմինոյ մորթին վրայ , խակ բուժերիկին վրայ զետեղուած ջուրն՝ կը տաքնայ , և չոգի գառնալով կը մատակարարէ օդոյ խոնաւութեան աստիճան մը՝ պատշաճ զայն չնող անձանց պիտոյիցք :

1156 Ի՞նչ կերպով կ'ըլլայ հանքաց մէջ հովտհարութիւն : — Հանրին մէջ երկու ծակեր կը բանան , այն կերպով որ՝ մէկէն մասած օդն պարտաւորի հանրին ամեն կողմերէն անցնիլ՝ յառաջ քան մէկալ կողմէն դուրս ելլել :

1157 Ի՞նչ կերպով հանքի մը մէջէն ապականած կաղերը դուրս կը հանեն : — Աղէկ կրակ մը կը վասեն այս երկու ծակերէն մէկուն մէջ , որ իրենց ձեկին համար կ'ըստին դուրք բափոց կամ հանքաց . կրակին տաքութենէն անօսրացեալ օդն կը բարձրանայ՝ պատճառելով ձգում մը , որ դուրէն դուրս կը փոխադրէ ծուխին հետմիատեղ բոլոր պականեալ կաղերը :

1158 Ի՞նչ կը պատճառէ սենեկի մը օդոյ մէջ չնչառութիւնն : — Կենդանեաց ընչառութիւնն կը նուազէ թթաւածքնին տարրերաց քանակը , և կը յաւելու ածղային թթուալ և բորակածինը (աղօդ) :

(Մարդ ժամաւան մը մէջ կը սպառէ 63 տասնորդամեղրի խորանարդ կամ լիարթթուածին կազի , և օրուան մը մէջ անշն-

շեի կ'ընէ չորս խորանարդ մեղր օդէն աւելի :)

1159 Ի՞նչպէս կարելի է արգելուլ ըղվասն այն սենեկաց օդոյ՝ ուր պարտաւորեալ ըլլայ մէկն մասալ օրուան մեծ մասը : — Հոն աղէկ հովհարութիւն մ'ընելով : Գրան վարի կողմի ծակերն և պատառհանին ալ վերի կողմիններն ամենէն ապահով հնարքներն են՝ սենեկի մը օդը չարունակ փոփոխելու համար :

1160 Ի՞նչո՞ւ համար քաղաքաց բնակիչքը և մասնաւորապէս անոնք որ գործարանաց մէջ կ'աշխատախն աւելի տժգոյն և նիշար կ'ըլլան : — Ա . Որովհետեւ անմարքուր մթնողրտ մը կը չնչեն , որ թթուածին չունի : — Բ . Մորթն կը կորուացնէ իր տառագականութիւնն և թափանցիութիւնը , տառ համար իրեն տակ չի նշարուիր առեան կարմրութիւնը :

1161 Ի՞նչ պատճառաւ գեղացիք և լեռնացիք ընդհանրապէս դալոր և գունաւոր տեսք մը կ'ունենան : — Որովհետեւ օրուան մեծ մասը կ'անցընենքաց օդոյ մէջ , և կը չնչեն մարտոր մթնողրտ մը , աւելի առածզական և լի թթուածինով :

(Կերակրոց յասկութիւնն , կենաց կերպըն , սովորութիւնը և շատ ուրիշ երկրորդական պարագայներ՝ աւելի դիւրակարգ և զուտ կ'ընեն արիւնը , և շատ աղջեցութիւն ունին անձանց գոյնին վրայ :)

§. 2. — Մակրնթացուրիւնք :

1162 Ի՞նչ պատճառաւ պարբերապէս ամեն օր և որոշալ ժամերու մէջ ծովիշատ կը բարձրանայ , մինչդեռ յաջորդ ժամերուն մէջ շատ կը ցածնայ , ծովեղբերին մեծ մասը բաց թողլով : — Այս բանս կը լսյ մակրնթացութեամբ :

1163 Ի՞նչ է մակրնթացուրիւնն : — Տեսակ մը ոռողունն ամերով ովկանսուի : Ովկանսուն կը բարձրանայ և կ'իջնայ օրը երկու անգամ . իր ջրերուն բարձրանալուն և իջնալուն միջոցն կըսուի մակրնթացութիւն :

(Սմեն օր բարձրագոյն մակրնթացութիւնն նախընթաց օրէն քառասուն և ինն վայրկեան աւելի ուշ կու գայ : Օրուան առջ վեց ժամերուն մէջ ծովի կը բարձրանայ , և բուն այս կ'ըսուի մակրնթացուրիւն . հասնելով իրենց ամենէն մեծ բարձրութեանը՝ ջրերն քանի մը վայրկեան մնայուն կը լսան , վերջը կը սկսին ցածնալ , այս ալ կը սուի տեղատուրիւն :

1164 Ի՞նչ պատճառաւ է օր մակրնթացութեամբ օրէ օր աւելի կ'ուշանան : — Այս բանս կը կախուի լուսնին վիճակէն , օր նոյն կէտին վրայ գտնուելու համար՝ քառասուն և ինն վայրկեան աւելի կ'ուզէ քան զերպիրու :

(Երկիրս ինքն իր վրայ քսան և չորս ժա-

մուան մէջ կը գտանայ , ուրեմն ամեն քըսան և չորս ժամուան մէջ ինքը նոյն դիրքը կ'առնաւ . բայց լուսինն աւելի գանդաղ գառնալով երկրիս բոլորակիք՝ առջի օրուան նոյն կէտին վրայ կը գտուի քառասուն և ինն վայրկեան աւելի ուշ : Սմեն մէկ նոր լուսնին , այսինքն զրեթէ ամեն 29 օր ու կէս վերջը՝ մակրնթացութիւնք գարձեալ նոյն ժամուան կը գտանան !)

1165 Ի՞նչ ազգեցութիւն ունի լուսինն ծովու ջուրց վրայ , որ այնպէս կը զուզոնթանան ծովուն և լուսնին շարժմունքն : — Մակրնթացութիւնք լուսնին ազգեցութեամբ կ'ըլլան , որ իրեն կը քաշէ ծովուն ջուրիրը :

1166 Ինչո՞ւ համար ծովուն ջուրերն լուսնէն միայն կը քաշուին և ոչ արեկէն : — Որովհետեւ արևն երկրէս 400 անգամ աւելի հեռու է քան լուսինն , ասով իր ձգութիւնն համակերպ կ'ըլլայ երկրիս ամբողջութեան վրայ , մինչդեռ լուսնին ձգողութիւնն մասնական է , և միայն երկրիս մակրեւութիւն աւելի թեթեւ մարմնոց վրայ կ'ազգէ :

(Ուակայն արեւն աւլ կ'ազգէ մակրնթացութեանց վրայ , թէպէտեւ լուսնէն զրեթէ իրեկ անգամ նուազ ուժով մը լ)

1167 Ո՞ր ատեն մակրնթացութիւնք աւելի սաստիկ կամ տկար կ'ըլլան : — Աւելի սաստիկ մակրնթացութիւնք կ'ըլլան լուսնի լուսն և նոր լուսնի ատեն . իսկ աւ-

ւելի ակար մակընթացութիւնք լուսնի քառորդութեանց ժամանակ :

1168 Ինչո՞ւ համար լուսնի լրման և նոր լուսնի ատեն մակընթացութիւնը աւելի սասափի կըլլան : — Որովհեաև լուսինն և արեն այնպիսի գիրք մը կ'ունենան՝ որ իշխնց ձգողութեան ուժը միակերպ կ'աղդեն ծովու ջուրց վրայ :

1169 Ինչո՞ւ համար աւելի տկար կըլլան այն մակընթացութիւնք որ կը պատահին լուսնին քառորդութեանց : — Որովհեաև այն ատեն արեւուն ձգողութիւնն լուսնին հակառակ զիրով կ'աղդէ :

1170 Տարւոյն որ ժամանակը մակընթացութիւնք կը հասնին ամենէն մեծ բարձրութեան : — Գարնանային զիշերահաւատքէն ասած և աշնանայնէն վերջը , այսինքն մարտի և սեպտեմբերի մէջ . որովհետեւ այն ատեն կը հանդիպին ամեն պարագայք՝ որ ջրոց բարձրանալը կը պատճառեն :

(Բնական է որ ջուրք բարձրանալով կէտի մը վրայ՝ պէտք է ցածնան ուրիշ տեղ մը . Եթէ մակընթացութիւնն շատ բարձր ըլլայ՝ հետեւաբար տեղատութիւնն ալ ամենացած պիտի ըլլայ, ինչպէս որ ալ կը պատահի :)

1171 Ինչ պատճառաւ լինք ալ ծովիրունան մակընթացութիւններ չեն ունենար : — Ա. Որովհետեւ շատ պղոփ են, և լուսինն հաւատաբարէս կ'աղդէ անոնց ջրեւ-

րուն ամբողջութեանը վրայ : — Ա. Լուսինն այնքան արագութեալը կ'անցնի անոնց մակերեւութիւն վրայէն՝ որ ջրոց հաւասարակըութիւնն ժամանակ չունենար այլ այլեւու :

(Եթէ լուսինն հաւասար ազդեցութիւն մընէր ովկիանոսին ամբողջ ջրերուն վրայ՝ մակընթացութիւնք պիտի չըլլային . բայց կըլլան , որովհետեւ լուսինն ծովուն վրայ միայն ուղղակի իր տակը եղած ջրոց կոյտը իրեն կը քաշէ . մէկ կէտի մը քաշուելով ծովուն ջուրերն՝ կը կարուցընեն մաս մը իրենց ծանրութեան , և կը թեթենան . բայց մէկաներն որ այս ձգողութիւնն չեն կրեր՝ կը պահեն իրենց ծանրութիւնը , և ասով կը ծառացեն բարձր և դիզուած բռնելու մաս մը իրենց չեղուկին : Ա. Հա մակընթացութեան պատճառն . իսկ երբ լուսինն հետանց իր զիրքէն կը դարձի իր աղջած ձգողութիւնն ալ , և ջուրերն դարձեալ կ'իշնան :)

1172 Եթէ լուսինն կ'աղդէ թեթեն մարմոց վրայ՝ ինչո՞ւ համար ջուրերն իրեն քաշելին առաջ՝ ոգը չի քաշէր, որ շատ աւելի թեթեւ է : — Լուսինն նոյնպէս իրեն կը քաշէ օգն ալ , հետեւաբար կըլլան նաև միթնորդաբային մակընթացութիւնք :

(Ունէք և ծանրացափը որ ալ աւելի ըլլացուն են , չենք զգար այս օդային մակընթացութիւնը . որովհետեւ թէ բարձր ըլլայ թէ ճնշուած օգոյ սիւնն նոյնպէս կը կըռէ :)

1175 Ինչո՞ւ համար երբ խաղաղ ջրոյ մը
մէջ քար մը նետուի՛ կը պատճառէ անոր
մակերեւութին վրայ շարժմունք մը , որ կը
ծաւալի ձևացընելով համակենդրոն շրջա-
նակներ , որը երթալով կը մեծնան : —
Արտիշտեկ ջուրն կ'առնու ճնշում մը այն
կէտին վրայ՝ ուր քարէն կը զարնուի , և
շրու կտղմն եղած ջուրն կը դիմէ անկէ ձևա-
ցած գոսք լցըցնելու . այն ատեն կը հե-
տեփ իրաք անցում մը հեղուկին ամեն մա-
սերուն մէջ , որ իր սաստիկ շարժնու-
թեամբը կը զայց չօրս կորմի մղումը . և
այս մղումն հիւլէ հիւլէ ծաւալելով՝ կը
պատճառէ այն շրջանակներ՝ որք կը խռո-
վն ջրոյն հանդարտութիւնը :

1174 Ի՞նչ է ծովուն ալեաց պատճառն :
— Հովի՞ , որ անհաւասարապէս կը ճնշէ
ծովուն մակերեւոյթը , և աւելի մեծ կիր-
պով մը կը պատճառէ այն ճնշումը զոր՝ կը
պատճառէք քար մը , կամ որ ե իցէ ջրոց
մէջ նետուած հաստատուն մարմին մը :

(Ամիբ միայն ուզգահայեաց շարժմունք
ունին վարէն վեր , և մնայուն են իրենց
տեղ : Փայտի կոտր մը կամ որ ե է ծփոլ
առարկայ մը՝ փոփոխակի կը բարձրանայ
ու կը ցածնայ ալիքին հետ , բայց ամենեւին
տեղը չի փոխեր՝ բայց եթէ չովիչն քըուի :)

1175 Եթէ ալիբ մնայուն են՝ ինչո՞ւ հա-
մար կը կարծուին թէ առաջ և ետկէ իրթան :
— Այս բանս խարէական երկոյթ մ'է :
Եթէ ոլորաձեւ երկաթ մը ինքն իր վրայ

շուրջ բերես , կամ ոլորեալ ապակեայ
գաւազան մը , կամ հաստ չուանի կոտր
մը , և ուրիշ նման առարկայներ , ասոնք կը
կարծուին թէ կը շարժին և կը յառաջանան
մոնելով զիրենք դարձընող մասերուն
մէջ . բայց այս բանս պարզ երկոյթ մ'է ,
այսպէս ալ ալեաց շարժմունքն :

(Ամիբն երկոյթ մ'է և ոչ է կական իր մը :
Զուրն կ'առնու ալիքի ձեւ , և այս ձես շա-
րունակ կը նորոգուի և կը հեռանայ , ա-
սոր համար ամեն ալիք հաստատուն կէտ
մ'է ուսկից միայն կը հեռանայ ձեն զոր
կանոնուն մէկիկ մէկիկ բարձր այն ջրոյ
մասունքներն որոնց վրայէն կ'անցնի :)

1176 Ինչո՞ւ համար ծովուն ալիքներն ե-
ղերներուն մօս կը մանրին : — Արտիշտեկ
պարեխներուն , ժայռերուն , աւազի կոյ-
տերուն և բարձր յատակներու վրայ դար-
նուելով՝ կը կոտրուին , և կը կորուսցընեն
կանոնաւոր ձեւը . անոր համար ալ կատա-
րեալ կոր ու զալար շեն երկնար :

1177 Փրփուրներու պատճառնին է որք
կը պասկեն խոսովեալ ծովուն կոհակները :
— Հովի՞ , որ կը բաժնէ ալեաց վերի կող-
մը , ցրուելով ամեն կողմէ հեղուկին կաթիլ-
ները :

ԳԼ. Բ. ԶՐԱՅԻՆ ՕԴԵՐԵԿՈՑԹՔ.

§. Ա. — Տեսանելի շողիք :

1178 Ի՞նչ են ջրային օդերևոյք : — Այս ընդհանուր անուամբ կիմացուին ըոլոր այն մթնողորտային երևոյթք՝ որոնք չըսով կը ձևանան, թէ Հաստատուն, թէ չեղուկ, և թէ օդաձև վիճակի մէջ ըլլան :

1179 Ո՞րոնք են այս երևոյթից գլխաւորքն : — Ամպք, մառախուղ, անձրե, կարկուտ, ցօղ, և այլն :

Ա. — Ամպք :

1180 Ի՞նչ են ամպք : — Ամպք են մեծամեծ կյաներ փամիրըստային շոգեսյմըթնովորին մէջ բարձրացած :

1181 Ի՞նչ կերպով կը ձևանան ամպք : Ամպք կը ձևանան ամեն անգամ որ անտեսանելի ջըրային շոգիք՝ որ օդոյ բարձրերը կը գտաւին փամիրըստային վիճակի խտանան :

1182 Ի՞նչ կերպով կ'ըլլայ այս երևոյթու : — Ծովու ջուրը, մշակեալ իրիք, և ամեն խոնաւ մորմինք՝ կը պատճառեն շոգիացումն . ուսկից շարունակ կը գտաւի օդոյ մէջ ցրուեալ ջըրոց մեծ քանակութիւն մը շոգեզէն վիճակի մէջ : Ջուրն այս վիճակիս

մէջ տեսանելի չէ, և եթէ չըլլային խոնաւ ւաշափք կամ որ և իցէ ուրիշ հնարք մը, միայն մեր աչքով չէինք կըրնար իմանալ անոր ներկայութիւնը՝ մթնողորտին մէջ. բայց երբ որ և է պատճառ մը ցածընէ օդոյ բարեխանութիւնը, ասիկայ՝ ալ չի կըրնար պարունակել ջրային շոգեսյ նոյն քանակութիւնը . աւելցածն կը խասանայ շատ մը պատի գնամիկներու կամ փամի փուշներու ձևով, որոնք վար չեն ինկնար, որովհեամ վեր կը բռնուին մէջ մը այն ջրային շոգեին զոր իրենց մէջ ունին, և որ օդէն աւելի թեթև է, մէկ մ'ալ որովհեամ վարի կարգերու տաք օդն զիրենք վեր կը մէջ : Այս վիճակիս մէջ ջըրային շոգին տեսանելի կ'ըլլայ և կը կազմէ օդոյ մէջ այն կոյտերը՝ զոր ամազ կ'անուանենք : Կաև եթէ երկու տարբեր բարեխանութեամբ խոնաւ օդոյ կոյտիրարու միանան կըրնան անզ մը ձևացընել :

(Մէկ մեգր խորանարդ օդ՝ 10 աստիճանի բարիստանութեամբ՝ առկամեալ կը ըլլունէ 9 կրամ և 7/10 շոգեսյ անտեսանելի վիճակի մէջ . նոյն քանակութիւնն օդոյ միայն 2 աստիճանի բարեխանութեամբ՝ 6 կրամ և 1/10 շոգեսյ կը պարունակէ :

1183 Ի՞նչ կերպով խոնաւ օդոյ երկու կոյտը որ իրարու խանութին կըրնան ամազ մը ձևացընել : — Եթէ օդոյ կոյտ մը երկու աստիճան բարեխանութեամբ՝ կըրնայ պարունակել գրեթէ 6 մասն անտեսա-

ների ջրային չողւոյ , ուրիշ օդոյ կոյտ մ'ալ ունենայ 8 աստիճան բարեխառնութեան՝ կրնայ պարտնակիել գրեթէ 9 մասն նոյն պէս անտեսնանելի չողւոյ . ենթադրենք որ այս երկու կոյտը իրարու խռովութին , հարկ է որ մէկ կոյտ մ'ըլլայ , և ունենայ 5 աստիճանի բարեխառնութիւն . և իրեն մէջ զտնուի 13 մասն չողւոյ . 5 աստիճանով օգնչի կրնարբովանդակիել ջրայ 7 ½ մասնէն աւելի օդածե վիճակի մէջ . ասովաւ ելցածներն , այսինքն 8 մասն չողւոյ պիտի խտանան և ամսով գառնան :

1184 Ի՞նչ տարբերութիւն կայ մասայովի և ամսով մէջ : — Ասով միայն կը տարբերին որ ամսով փամփրչտային չողիներ են , որոնք կամ բարձրեը կ'ելլան , կամ կը ձեւանան օդոյ բարձր կողմանց մէջ , մինչեւ մառախուզք՝ որ նոյնպէս փամփրչտային չողիներ են՝ գետնին երեսին վրայ կը գտնուին :

1185 Ի՞նչ պատճառաւ փամփրչտային չողին երբեմն մառախուզք՝ կը ձեւացընէ , երբեմն ալ բարձրանալով ամսոց մէկ կ'առնու : — Մթնոլորտային օդոյ բարեխառնութիւնն է փամփրչտային չողւոյն բարձրանալուն պատճառն . եթէ օդն գետնէն աւելի ցարտ ըլլայ և նոյն աւելն ցուռած ըլլայ խռնաւութիւնը՝ մառախուզք՝ կը ձեւանայ . իսկ եթէ գետնին օդէն աւելի ցարտ ըլլայ՝ փամփրչտային չողին կը բարձրանայ երկրիս երեսն վեր և ամսով կը ձեւանոյ :

1186 Ի՞նչու համար ամսով շատ բարձր կ'ըլլան երբ գեղեցիկ օդ ընէ : — Ա . Որովհետեւ ամսոց շոգին նուազ խտացած կ'ըլլայ , և փամփուաներն ալ ամենապահիկ կ'ըլլան : — Բ . Գեղեցիկ օդոյ ատեն՝ տաք օդն լուծեալ կը բռնէ շոգւոյ մեծ քանակութիւն մը և այն ատեն շոգին տեսանելի շըլլար :

1187 Ի՞նչ կերպով ամսով կը զանազանին մէկմէկէ : — Խոռովհեամբ , բարձրութեամբ , և գունով :

1188 Ի՞նչ աղեցութիւն կ'ընեն հողմոց փոփոխութիւններն ամսոց վրայ : — Ա . Եթէ ցուրտ օդոյ վազուկ մը յանկարծակի փէտ երկրի մը վրայ , անոր մթնոլորտին անտեսանելի շոգին կը խտացընէ , և մասնախուզի կը դարձընէ : — Բ . Եթէ շատ խոնաւ ատք հով մը հանդիպի ցուրտի մը՝ նոյնակս մառախուզք՝ կամ ամսով կը պատճառի : — Գ . Եթէ ընդհակառակն չոր և տաք օդոյ վազուկ մը անցնի ամսոց մակերեւութիւն վրայէն կը ցրուէ զանոնք , իրեն բաշելով անոնց շոգին , և անտեսանելի ընելով :

1189 Ի՞նչու համար լերանց գագաթն և կոնակն շատ անգամ ծածկուած կ'ըլլան ամսերով , որք կարծուին թէ անոնցմէ կ'կլեն : — Որովհետեւ օդոյ մէջ ցրուած ջրային չողին մէկէն կը խտանայ երբ լերան պատկողմանց հետ շօպափոփի :

1190 Ո՞ր գաւառներն աւելի ենթակայ

են անձրւի : — Ամենէն աւելի անոնք՝ որ հողմոց փոփոխութեանց ենթակայ զըտուին, ինչպէս է Անդգիրա :

1191 Ինչո՞ւ համար Անդգիրա ստէպթան ձըր մասախուզով կը ծածկուի : — Որովհ հետեւ Անդգիրա ցուրտ է . մինչդեռ զինքը շրջապատող ծովի հասարակածին վաղու կաց պատճառուա՛ համեմատօրէն աւելի տափ է . հետեւաբար տափ ծովու խոնաւութեամբ լեցուն հովու մը հանդիպիլն կը դ զւոյն ցուրտ օդոյն հետ՝ կը պատճառէ մը թագին ամպեր, որոնք կը դառնան յորդ և սասափկ անձրւի, և կամ մթնոլորտին մէջ շատ չեն բարձրանար . որովհետեւ կղլույն ցուրտ գետինն զրեթէ զանոնք միւտ թանձր և նեղացուցիչ մասախուզ մը կը դարձընէ :

1192 Ո՞ր երկիրներու մէջ անձրւին քիչ կու գայ : — Անոնց՝ որոնց մէջ հովերն զրեթէ անփոխութելի են, ինչպէս Եղիպատոսի մէջ :

(Ա.փրիկոյ և Բերուի անտառաց մէջ երեր չանձրւեր : Բոււսեղինաց պէտք եղած խոնաւութիւնն Եզիփտոսու՝ Կելսա գետին ողողմամբը կ'առնու, որ տարւոյն որոշեալ ժամանակաց մէջ իր բարեբար և պտղատու գոյութեամբ ալեօթը կը ծածկէ մշակալ երկիրը :)

1193 Ո՞րչափ հեռի կը լըլան ամպը երկու : — Թեթև ամպ մը կը բնայ երկրիս ամենէն բարձր լեռներէն աւելի ալ բարձր

ելլել . բայց ծանր և թանձր ամպը շատ անգամ կը դաշին աշտարակաց և ծառոց գագաթան, և ինչուան երկրիս մակերեւ ւութին ալ կը բսուին :

(Այն ամպերն որ փետուրի կամ սրփուած մազերու ձեւ ունին շատ անգամ երկրէս հեռու կ'ըլլան չորս և նաև ութ հազարամելիքը :)

1194 Ո՞ր ամպերն երկրիս աւելի մօտ կը գտուին : — Անոնք՝ որ աւելի լի են ելեկարութեամբ : Այն ամպերն որոնցմէ կայծակ կը ցատքէ երկրիս վրայ՝ անկէ 600 մեդրէն աւելի հեռու չեն լըլար, և շատ անգամ անոր կը դպչին իրենց ամենէն ցած ծայրերովը :

1195 Ի՞նչ մեծութիւն ունին սովորաբար ամպը : — Ամպեր կան որոնց մակերեւոյթն 50 քառակուսի հազարամեդրէն աւելի կ'ըլլաց, և հազար մեդրէն ալ աւելի թանձրութիւն կ'ունենան . Ընդհակառակին կան ամպեր ալ որ միայն քանի մը մեզր մակերեւոյթ ունին :

1196 Ինչպէս կը ճանչցուի ամպի մը թանձրութիւնն : — Որովհետեւ ամպը ընդհանրապէս լերան կողմերուն կը կոթըլնին՝ զայն աւելի կամ նուռազ տարածութեամբ մը կը պատեն . լերան վրայ ելլելու ատեն կարելի է հաշուել ամպին մէջը մտնելու կէտէն սկսեալ կտրուած ճամբուն ինչուան այն կէտը՝ ուր պարզ երկինք կը տեսնուի . այս հեռաւորութիւնս՝ (հանելով լերան կո-

րութեան չափն) կու տայ ամպին թանձրութիւնը :

1197 Ի՞նչ պատճառքաւ ամպք այնչափ տարբեր ձևեր կ'առնուն : — Ա . Իրենց ծագման յատուկ պատճառուն : — Բ . իրենց ելեկտրական վիճակովն : — Գ . Վերաբերութեամբ օդոյ վազուկացը հետ : — Դ . Երկրիս երեսէն ունեցած բարձրութեալին :

1198 Ի՞նչ կերպով ելեկտրութիւնն կ'աղդէ ամպոց ձեխն : — Եթէ երկու ամպեր լի տարբեր ելեկտրութեամբ՝ մէկմէկու հանդիպին՝ միանալով կոյսո մը կը ձևացընեն, որոյ զանգուածն շատ նուազէ, և կը ընան նաև ամբողջապէս ցըռուիլ :

1199 Ո՞ր ամպերն աւելի այլանդակ ձևեր կ'առնուն : — Անոնք որ շատ լցուած են ելեկտրութեամբ :

1200 Ծնդհանրապէս ի՞նչ է ամպոց գոյնն : — Գորդշագոյն ճերմակ կը լլան՝ երբ արեն հորիզոնին վրայ ըլլայ, կարմիր, նարենջագոյն, կամ գեղին կը լլան՝ արշալուսոյ և վերջալուսոյ ատեն :

(Երկընթին կապոյտ գոյնն ամպերին չէ, այլ մթնոլորտային օքէն, որ շափաւոր քանակով մը տեսնուած՝ կապոյտ գունի կը զարնէ, և որշափքանակն ընդգրածակուի՝ այնքան գոյնն ալ աւելի թանձր կապոյտ կ'երեի, Ասոր համար է որ ամպերն ալ հեռուէն դիտելով կը կորուսցնեն իրենց բնական գոյնը և կապոյտ կ'երեան :)

1201 Ինչո՞ւ համար եթէ արեն հորիզոնէն անսերեւութեանայ՝ ամպք ընդհանրապէս կարմիր կը լլան : — Որովհետեւ արեն զանային ճառագայթք մթնոլորտէ անցնելու ատեն՝ երեք նախնական ըստած գոյներու կը բաժնուին, որ են կապուտակի, գեղին և կարմիր, և որովհետեւ այս երեք գոյներու տարբեր աստիճան խոտարման կառնուն, երբ տարբեր միջցներու զըստուին, կը հետեւի որ աւելի բնեկի բնեկիսզք, ինչպէս են, կապոյտն և գեղինն, ալ չեն անդրագարնար բարձր աստրակայց վրայ, ինչպէս են ամպք . մինչդեռ կարմիրն որ աւելի նուազ կը խոտորի՝ զանոնք կը գունաւորէ, և ասոր համար իրենք կարմիր կ'երեան : Ասկէ զատ, կարմիր ճառագայթըն մէկաններէն աւելի ոյժ ունենալով աւելի մեծ հեռաւորութիւնէ ալ կը գունաւորէ առաք աստրակայները, անցնելով օգոս կարգերուն մէջէն, որք հորիզոնին վրայ շատ թանձրութիւն կ'ունենան, մինչդեռ մէկալ ճառագայթքն կապուտակին և գեղինն ցընդելով կը կորուսին այս անցքին մէջ :

1202 Ի՞նչ է վերջալուսոյ պատճառն : — Արեւուն քանի մը ճառագայթքներն որ կ'անցնին մթնոլորտէն և կը խոտորին գէպ՝ ի երկրագունատ, մինչդեռ արեն հորիզոնէն վար գտնուի :

(Յուրատ երկիրներու մէջ վերջալուսոյն երկայն ատեն կը տեէ . որչափ որ աւելի հաստրակածին մօտենանք՝ այնչափ կարճ կը

տեսէ . օրինակի համար Դարմատիոյ մէջ արեն Հորիզոնէն աներևութանալէն կէս ժամ վերջը՝ թանձր գիշեր մը կը կամէ . Փիլիփի մէջ հաղիւ քառորդ մը անցնի , իսկ հասարակածին տակ քանի մը վայրկենէն զիշերը կը մթըննայ : Այս երեսութիս պատճառն է . — Ա . Երկրիս երազութիւնն , որ այրեցած գուույն մէջ աւելի սասարի է քան ցրտայնոցն : — Բ . Նայն իսկ երկրիս ձեն , որ կը ը ըլլալով՝ հասարակածային գաւառները զըեթէ մէկէն իրեն շուրբին մէջ կը մացընէ , բեկաներուն աւելի ուշ կը լայ , որովհետեւ սամիակ են :

1203 Ի՞նչ պատճառաւ ամպր իրենց գոյնը կը փոխեն : — Իրենց մեծութիւնն , թանձրութիւնն և դիրքն նկատմամբ արեգական շարունակ կը փոփոխուին . ասոր համար ամպր ալ երբեմն մէկ գոյն մը կ'առնուն երբեմն ալ ուրիշ մը :

1204 Ի՞նչ ուժեր կը շարժեն ամպերը մթնոլորտին մէջ : — Ամենէն աւելի հովիրն ինչպէս նաև ելեկտրութիւնն ալ բաւական կ'ազդեն ամսոց շարժմանը վրայ :

1205 Ի՞նչպէս կը ճանչցուի որ ամպր երբեմն չովին տարբեր ուժով մը կը շարժին : — Որովհետեւ շատ անդամ գեղեցիկ օդոյ ատեն կը տեսնուին պահի ամպեր նոյն բարձրութեան մէջ , որը հակառակ կողմէրէ կը շարժին մէկ կէտի մը հաւաքոււլու :

1206 Ի՞նչ կերպով կ'իմացուի որ ելեկ-

արութիւնն՝ կ'ազդէ ամսոց վրայ : — Որովհետեւ երբեմն կը տեսնուին երկու ամպեր , որոնք յետ պարզելու իրենց տարբեր ելեկտրութիւնը , մէկմէկու կը հանդիպին և մէկէն կ'աներեւութանան :

1207 Ի՞նչպէս կը լսնան գասակարգուիլ ամպերն : — Ամպերն իրենց գոյներուն և ձեռոց փոփոխութեանը համար՝ չեն կը նարնար գասակարգուիլ հաստատուն կիրազով մը . սակայն այն ձևերն որ սովորաբար կ'առնուն եօթն են , ասոր համար ալ եօթն տեսակ կը զանազանին :

1208 Ի՞նչ ձեւ ունին առաջին տեսակի ամպր : — Այս ամպերն կը ձևանան շատ մը երկայն , նուրբ և ալէ ձեւ հիւսուածքներով , որը կը նմանին փետուրի կամ նօսր մազերու երկնքին կամարին վրայ ցրուած , անոր համար ուսումնական լեզուութիւնակ կ'ըսուին (Cirrus ըստ Լատինաց) :

1209 Ի՞նչ յատկութիւն ունին այս տեսակ ամպերն : — Այս գիսակածեւ ամպերն ամենէն բարձր ելլողներն են , և իրենց միջին բարձրութիւնն ծ կամ 6 հազարամետր է :

1210 Ընդհանրապէս ի՞նչ օդ գուշակել կու տան գիսակը : — Գրեթէ միշտ աղէկ և չըր օդ մը : Երբ գիսակը երեսնան ըսելէ որ օդն քիչ խոնաւութիւն կը պարունակէ , այն ալ կամաց կամաց կը խոտանաց մթնոլորտին բարձր կողմերը :

(Երբեմն գիսակը հորիզոնական երիշ-

ներով շարուած դէպ՚ի վար կը կախուին ,
այն տաեն անձրեկի նշան է :

1211 Ինչո՞ւ համար երբեմն ամսր այս-
պէս զիսակի ձև կ'առնուն քան թէ ուրիշ
ձև մը : — Որովհետեւ երբ օդն տար և չոր
կըլլայ՝ այն ամենաքիչ խոնաւութիւնն ալ
խտանալչն առաջ (զոր առ կախ կը բռնէ),
պէտք է որ մժնողորախն շատ բարձր կողմը
ելլէ , այսինքն բարեխառնութեան շատ
ցած աստիճանի մը կը հասնի . այս բարե-
խառնութեան հասնելով կը պայի և կը
կորուսցընէ մասն իր շոգւոյն . օդն ի հար-
կէ աւելի խիտ կ'ըլլայ , որով դարձեալ
դէպ՚ի երկիր կը գառնայ , ոչ յանկար-
ծակի ինչնալով այլ տարածուելով տարրեր
տարբեր ուղղութեամբ՝ խտացած շոգւոյն
մէջն . և ասով անոր շատ մը երկայն զը-
ծերու ձև կու տայ աւելի կամ նուազ կա-
նոնաւոր , և այս է զիսակաց պատճառն :

1212 Ո՞ր են երկրորդ տեսակ ամպերն :
— Ամառուան այն անհետեղ ամպերն՝ որք
միշտ թիչ կամ շատ բոլորաձև կ'ըլլան՝ նր-
ման լիրանց կամ ծուխի պառոյներու : Ա-
սոնք իրենց թանձրութեանը և մեծ հոյտե-
րուն համար՝ կ'ըստեին Դիկայր (Cumulii) :

1213 Առջարաբար ի՞նչ օդ կը ցուցընեն
դիկայր : — Երբ նման բըրդի մեծ հոյտե-
րու և հովուն հակառակ քալեն , անձրե-
կը նշանակեն . բայց ամեն անգամ որ ե-
ղերին ցցուած ու պայծառ ըլլան , և հո-
վուն ուղղութեամբը երթան՝ գեղեցիկ օդ
կ'աւետեն :

(ԲնդՀանրապէս դիկայր կը ձեանան
կէ սօրուան ու անկէ ետքը երկու ժամուան
միջոց , երբ ջերմութիւնն սաստիկ ըլլայ .
եթէ իրիկուան դէմ աստիճանաբար նուա-
զին աղէկ նշան է . բայց եթէ շանան՝
զիստալու է որ զիշերուան մէջ մըրիկ պի-
տի ըլլայ) :

1214 Ինչո՞ւ համար եթէ դիկայր հովուն
ուղղութեանը դէմ երթան , անձրեկ նշան
կու տան : — Որովհետեւ այս բանն կ'ըլ-
լայ երկրիս վրայ տիրող հովուն հակառակ
և բարձր հովու մը ուժով . և երբ երկու
խանաւ ու հակառակ հովեր հանդիպին եր-
կինք զրեթէ միշտ կը ծածկուի ամպերով
որ անձրեկ կը դառնան :

1215 Ի՞նչ պատճառէ առաջ կու գան
երկու դիկայր : — Այս ամպոց ձեւանալն
առաջ կու գայ տաք վազուեներէն՝ որ եր-
կէս անտեսանելի շոգիներ կը բարձրացը-
նեն , և հակառակ հովերէն՝ որ զանոնիք կը
ճնշն ամեն կոզմերէ ամպեր ձեւացընելով ,
որ շատ թանձր և խիտ կ'ըլլան :

1216 Երրորդ տեսակին ամպերն որո՞նք
են : — Անոնք՝ որ ընդհանրապէս կը տես-
նուին արեւոն մտնելուն մօտ , և հաւա-
քում մ՚են ամպոց՝ որ կը պատեն հորիզո-
նին ստորին մասը , ինչպէս մեծ երիզ մը ,
վարի և վերի եղերքներն որոշ սահմանեալ ,
միջնցիւ կողմերն երթալով կը ցնդին և
կը կորուին մթութեան մէջ : Այս կար-
գիս վերաբերող ամպերն կ'ըսուին երի-
զակը (Strati) :

1217 Ի՞նչ է կրիզակայ ձևանուուն պատճառն : — ձեւհիմներու և մարդակաց շողիացումն , որ կեսօրութենէ վերջը առատապէս կ'ըլլաց , և մասախուզի ձեռով կամաց . կամաց կը բարձրանայ մթնողորոտին մէջ . բայց օդոյ վազուին որ կը ձեւանայ , վազելով երկրիս վրայէն գէպ 'ի այն կետերը՝ որ գեռ նոր տաքցած են արեւէն , կը դասէ այս մատախուզներն երկրիս մակերեւոթէն , և առկախեալ կը կ'ցընէ քիչ կամ շատ լայն գոտուոյ մը ձեռով :

(Երբ առաւօտը այս ամսկերն ցրուին՝ նշան կու տան պայծառ օրուան մը :)

1218 Զորբորդ տեսակ ամսկերն որոնք են : — Այս տեսակիս կը վերաբերին այն շատ բարձր , պղոտի , կլոր , մէկմէկու ամենամօտ ամսկերն՝ որ կը բռննեն սովորաբար չորիբոնին բարձր կողմը , տակից կը հեռանան ինչպէս կենդրոնէ մը գէպ 'ի վար գարձած գրանսանդներու և քանցից նման : Եւ որովհետեւ գիտակաց և գիտակաց ձեւերէն միացած են , անոր համար կ'ըստին Գիտադրակը (Cirro-cumuli) :

1219 Ի՞նչ կը նշանակեն Գիտադրակը : — Այս ամսոց ներկայութիւնն նշան կու տայ ամսուուն մէջ չոր և ամենատաք օդոյ մը , ձեռուուն մէջ սատի :

1220 Որոնք են Գիտադրակ կ'ըստած ամսպերն (Cirro-strati) : — Անոնք որ հինգերորդ տեսակին կը վերաբերին . բամբակի գնահերու երեսոյթն ունին և կը նշանակեն

սովորաբար բարեխառնութեան ցածութիւն մը , անձրեւ և հոգմ :

1221 Որոնք են ամենէն մեծ ամսպերն : — Անոնք որ կը ձեւանան գիտակաց և երիզակաց միութենէն , և կը նշանին մեծամեծ աշտարակներու՝ որ բարձրանան տափարակ գետնի մը վրայէն , կամ կը ձեւանան վերանց կերպով , ահազին մեծութեամբ ճիւազներու և հսկայից ձեւերով , և այլն :

1222 Ի՞նչպէս կը կոչուին և որ տեսակին կը վերաբերին այս ամսպերն : — Կ'ըսուին Դիղրիզակը (Cumulo-Strati) , և կը վերաբերին վեցերորդ տեսակին :

(Ոյս ամսկերն ոչ բարեխառնութենէն և ոչ հովին կը կախուին , այլ բաղադրող տարերաց ծանրութենէն . այս պատճառու օդոյ ու եղանակի որոշ նշան մը չ'են տար . սակայն շատ անգամ ամսուը փոթորկէ առաջ , ձևեան ալ ծիւնէ տառաջ կ'երեան :)

1223 Ո՞ր ամսն է որ Թարաց կը կոչուի : — Այն ամեն ամսկերն որ անձրեւ կը բերեն , և Հօթներորդ տեսակ ամսոց Կ'ըլլան :

1224 Ի՞նչ է թթոթաւին հաստատուեն ձեն : — Սովորաբար զիսիւլոյր կանոնի մը ձեւ , որուն վերի կողմն կ'երկըննայ գիտակաց մէջ շարաւանակ երիզակի մը ձեռով :

1225 Ի՞նչ գիտիսութիւններ կ'ըլլան ամսոց մէջ անձրեւէն առաջ : — Դիզակը մեայուն կ'ըլլան , գիտակը մասով մը կը միանան և գիտերիզակ կը գառնան . եթէ

այս կոյտին գոյնն մթութենէ 'ի գորշ մոյք գառնայ՝ քիչ վերջը մը անձրեւ կու գայ :

(Ա) առաւտանց երկինքն շատ անզամ դիզերիզակով ծածկեալ կ'ըլլայ , և առատ անձրեւ կու գայ . բայց երկու երեք ժամ վերջը արևն կը ցրուէ ամպերը , որովհետեւ կը բարձրացընէ օդոյ բարեխառնութիւնը և երկինքն ամենապայծառ կ'ըլլայ :)

1226 Ի՞նչ օգուտ ունին ամպք : — Կը մեղմացընեն ցորեկուան սասաթիկ տաքութիւնը : — Բ . Կ'արգելուն գետնին ճառագայթումը՝ արևուն մտնելէն վերջը : — Գ . Մ'եծ ազդիրք են անձրեւ :

1227 Ինչո՞ւ համար երբեմն կը ըստուի որ հովի ամպերը կը վարէ : — Որովհետեւ տաք հով մը անտեսանելի չոգիով լեցուած մասամբ մը կ'երեցընէ զայն ամպէ ձեռով , երբ հանդիպի օդոյ ցուրտ վազուկի մը :

(Ա) յ բանս որոս կը տեսնուի երբ դիտուի ամառուան մէջ երբ մեր և ուրիշ կննդանեաց շունչն տեսանելի չէ , բայց ընդհակառակն ձմեռուան մէջ որոս կը տեսնուի . որովհետեւ այս եղանակին մէջ օդոյ արտաքին բարեխառնութիւնն շատ աւելի ցած ըլլալով՝ բան մեր արտաշնչութեամբ դուրս առաւածը , մէկէն կը խտացընէ անոր խոնաւութիւնը :)

1228 Ինչո՞ւ համար կը ըստուի որ հովի ամպերը կը սպասէ : — Որովհետեւ երբ անոնց վրայ տաք փշէ իրենց խոտացած շուդին կը վերածէ անտեսանելի չոգւոյ , և զայն ատեն ամպերն կը ցնդին :

1229 Ի՞նչ պատճառաւ երբ ամպք արևուն մտնելու ատեն կարմիր երենանն նշան կու տան թէ վաղը զեղեցիկ օր մը պիտի ըլլայ : — Որովհետեւ անով կ'իմացուի որ օդն չոր և խիտ է , և այնպիսի մթնորութեմ կը կազմէ՝ որ միայն արեւուն կարմիր ճառագայթներն կը ընան անոր միշէն անցնիլ :

1230 Ինչո՞ւ համար արեւմտեան կողմը ամարոց թուլս գեղին գոյնն նշան կու տայ անձրեւի : — Որովհետեւ ամպերուն այս գոյնը կը ցուցընէ որ օդն շատ խոնաւ է , և այնչափ նուր որ նաև գեղին ճառագայթներն ալ կը ընան անոր միշէն անցնիլ :

1231 Ինչո՞ւ համար օդն աղէկ կը գուշակուի եթէ իրիկուան վերջի ամպերն կարմիր ըլլան և առաւտեան առաջնինքն ալ ճերմակ : — Որովհետեւ ըսելէ թէ օդն չոր է երբ արևն կը մտնէ , և առաւտոն ալ այնչափ թափանցիկ է՝ որ բոլոր լուսաւոր ճառագայթներն կը ընան անոր միշէն անցնիլ՝ առանց քակուելու :

1232 Ինչո՞ւ համար առաւտոը ծիրանի գոտոյն երենան նշան է երկայն անձրեւի : — Որովհետեւ ծիրածանն միշտ արեւուն հակառակ և ամպերով լեցուած կողմը կ'ելլէ անոր համար առաւտոը արեւմտեան կողմը կ'երեւայ , ուր հովելն կը մղեն ամպերը . և այս հովերն ինչպէս նաև հարաւայիններն միշտ անձրեւ կը բերեն :

(Եթէ առաւտոն ծիրանի գոտուոյն երեւ-

նազուն հետ՝ արեկելքէն հովմը սկսի փշել,
ասիկայ կը վանէ ամսպերը արեմուռքէն
Հորիզոնին տակ, և ալ չանձրեեր:

1235 Ինչու համար աղեկ օդ կը յուսուց-
ցոի երբ ծիրանի զօտին իրիկունը կլէ, —
Արովչեան իրիկուան գէմ ծիրանի զօ-
տին արեկելքան կողմը կ'երեայ, և այս
բան կը յուցընէ որ հակառակ կողմն ամ-
բազմ ապատ է ամսպերէ, կամ թէ արեկել-
քէն ուժգին հովմը կը տիրէ օդ մէջ, այս
երկու պայմաններն ալ նշան են որ օդն
աղեկնալու վրայ է:

(Բայց եթէ արեմուռան հովմ կրիսուի,
նաև իրիկուան գէմ ծիրանի զօտուցն երե-
նալն՝ յօս մը չի տար մինուրտին աղեկ-
նալուն):

1236 Ինչու համար ծիրանի զօտին միշտ
արեուն հակառակ կողմը կը ձեւանայ: —
Արովչեան ծիրանի զօտին արեգակնացին
լուսոց անգրագարձութիւն մ'է, հարի է
որ ամսպերմ ամամ անգրագարձուցիք մարմինն՝
անոր հակառակ կողմը զօտուի: Անկարելի
է վարագուրի մը ետեր կեցած իրդիքնըը
հոյցիի մը մէջ տեսնել, եթէ ամսպերն ալ
արեուն հետ նոյն զրից մէջ բլան՝ վարա-
գուրին պէտ կ'ըլլան, և ծիրանի զօտին ալ
չի կրնար երեալ:

Գուշակուրիմիք օդոց՝ ամսոց երեուրին:

Եթու զիսուգիզուիք միանան և ձեռցընեն
մեծ կրյու մը նշան է անձրեիք, և եթէ բազ-
մանան և ան ու թանձրը բլան նշան է յորդ-
ե սաստիկ անձրեններու, բայց կարճաւուեւ:

Եթէ ամառոււան և աշխան մէջ հարու-
ցոյն կոմը առեմուռան հովմերն երթարով
ճերմակ ամսպերը զիզեն մէկմէկու վրայ
երած զիզակաց նման, և միացած կ'ետերն
ուն ըլլան, զրեթէ միշտ փոթորիկ կը հան-
դիսի:

Ամենաբարձր և մէկմէկէ հեռու զի-
սուկը՝ պարզութեան նշան են, բայց ան-
ձրե կը նշաննեն երբ երիզի ձեռով միանան:

Եթէ զիզակը վերածուին զիզերիզու-
կոց առնըրով մեծ առարածութիւն մը միթե-
որորսին մէջ առանց ծածկելու ամրոց
հօրիզոնը, բնդգանդրապէս մըրիկ կը բւերեն:

Ամսպերն ընդ հանդրապէս եթէ հայուն
տղղութեանը գէմ քալին կարապետ են
անձրեի, բայց երբ երկընքին մէջ թափա-
սին սուէզ ձեհրնին և ուղղութիւննին փո-
խելով, այն առան անհրաժեշտ մըրիկ կը
նշանակին:

1237 Խնչ է պատճառն այն լուսաւոր
ըթանակաց՝ որ երբիմն կը տեսնուին արե-
ւուն և լուսնին բոլորտիքը: — Նոյն առան-
ցոց լոյսն է որ կ'անգրագառանց ջրոց

կամ սառի մասոնքներէն, շոտ կամ քիչ
մեծութեամբ և տարրեր զիրքերով գրուած:

1256 Ի՞նչպէս կը կոչուին այս շրջա-
նակը: — Կ'ըսուին բակը, պատիք և արե-
ւանմանակ շրջանակը:

1257 Ի՞նչ տեսք ունի Բակն: — Բակը
տարրեր գոյներով գաղաթինահայեաց շրջ-
անակներ են. շրջանակին արեւուն աւելի
մօտ եղած ներքին մասն՝ կարմիր գունա-
ւորած է և յատակ ու օրոշ կ'երեւայ, իսկ
արտօրին բոլորակն մառախուղին հետ
շփոթելով կը խառնուի:

1258 Ի՞նչ տեսք ունի Պսակն: — Պսակը
քիչ կը տարրերին բակերէն, միայն ներ-
քին մասն մանիշակագոյն է, մինչդեռ ար-
տարին շրջապատճ կարմիր կ'ըլլայ, պսակը
աւելի շատ անգամ լւսնին չորս կողմը
կ'երենան:

1259 Ի՞նչ ձե ունին Այրեանմանակ շրջ-
անակը: — Ասվարաբար երկու շրջանակ-
ներ են արեւուն բոլորտիքը ձեւացած, ո-
րոնցմէ մէկն զայն բակի մը պէս կը պատէ,
մինչդեռ միւսն հորիզոնաձև կը բաժնէ ա-
րեւուն սկաւառակը, և ուղղահայեաց կը
կորէ շրջանակը:

1260 Ի՞նչ է լզանակ կ'ըլլայ արեւուն և
լւսնին չորս կողմի բակաց, պսակաց, և
այլն, ցրտելէն եաքը: — Ինչպէս որ ա-
սոնք բոլորովմին չորս օդոյ ատեն չեն երեկո,
այսպէս ալ յայտնի նշան կու տան խտա-
ցած խոնաւութեան և անձրեկ:

1241 Ինչու համար ամսու ատեն երկին-
քը ամպերով ծածկուած զիշերները՝ կը
զգանք ուժոյ նուազումն և թուլութիւն
մը: — Որովհետեւ երկրիս ջերմութիւնն
չի կըրնար աղատարար ճառագայթիլ մըթն-
ոլորտին բարձր կողմերը, վասն զի ամ-
պերուն հասնելով իրենք զայն գարձեալ
գէպ ի գետին կը ճառագայթին, այս բանս
կը պատճառէ սաստիկ և խզդուկ տաքու-
թիւն մը, միանդամայն և տռատ արտա-
շնչութիւն որ ուժոյ պարտասութիւնն կը
բերէ:

1242 Ինչու համար հանգիստ կըլլանք
ամսուուն յստակ և պարզ գիշերները:
— Որովհետեւ այն ատեն երկրիս ջերմու-
թիւնն աղատարար ճառագայթիլով՝ կը
թողու մեծաւ մասամբ գետնին մակերեղյու-
թը, և ասով բարեխասունութիւնը կը ցած-
նայ:

1243 Ինչու համար գէշ օդն մեզի բնդ-
հանուր անհանգստութիւն մը կը բերէ:
— Որովհետեւ, Ա. Խոնաւ օդն՝ հաւա-
սար զանգուածով չորս օդէն աւելի շրային
շողի և նուադ թթուածին կը պարունակէ.
— Բ. Խոնաւ օդն սովորականէն աւելի
թիթէ ըլլալով շնչառութիւնը աւելի արագ
և գծուարին կ'ընէ: — Գ. Խոնաւ օդն ե-
ւեկարութեամբ ի ըլլալով՝ կը զրգու մեր
չշային կազմուածքը:

Բ. — Մասախուղ:

1244 Ինչ է մասախուղն: — Արաթիւն մէ աւելի մեծ փամփրշտային զնոտաձեւ շոգւց՝ բաւական թանձք, որ կը կազմէ յատակ մը, և որ սովորաբար շատ չի բարձրանար գետնին երեսէն:

1245 Ինչպէս կը տարբերի մասախուղն ամսին: — Մասախուղն կը բանէ գետնին մօտ օգոյ ցած կարգերը, մինչգեռ ամսին կը կենան աւելի բարձր մթնոլորտի մէջ, բայց հեռուանց մասնելով մասախուղն ալ ամսին երեսցի ունի:

(Ո)մակերտ ծածկուած լերան մը դրայ և դոզ անձ մը հաւասար պայմանի մէջ կը զատիք այն բնակչաց հետ՝ որ զատիք մէջ աւելի կամ նուազ թանձք մասախուղն պատուած հնի:)

1246 Ինչէն կը ձեւանաց մասախուղն՝ որ կը նշանաւի առաւակաց, լճաց, և ձահո ձաց, և ացն, դրաց: — Այս մասախուղն կը ձեւանաց զրիթէ այն շոգւց նման՝ որ յայտնապէս կ'ելլէ տաք դրայ լիցուն ամանէ մը, օգն որ կը շօշափուի շոգիացով մակերեսութիւն հետ՝ տաք և խոնաւութեամբ լի է, այս երկու պայմաններս անսկապէս աւելի թիթիւ կ'ընդին զայն քան դրացի օգոյ ցարտ կամ խօս կարգերը, ասսոր համար բնին վեր կ'ելլէ, բայց աւելի ցուրտ կարգերէն անցնելու ատեն կը խօսա-

ցընէ, իր շոգւցին մէկ մասը, որ այս պատճառաւ տեսանելի կը ըլլաց:

1247 Ինչո՞ւ համար այս շոգին կը ձեւանաց կրկրիս գրայէն բիշ հետաւորութեամբ, փոխանակ բարձրտնալու և ամսկեր ձեւացնելու: — Այս բանն կըլլաց եթէ ամբողջ օգոյ կոյտն այնչափ յագեալ շըլլաց խոնաւութեամբ կամ այնչափ տաք չըրմաց՝ որ նոր խասացած շոգին դարձեալ լուծէ, կամ եթէ մթնոլորտաին մէջ օգոյ փազուկներ չըլլան: Բայց երբ օգոյ ամբողջ կոյտն խոնաւ ըլլաց, կամ շատ ցուրտ և անշարժ, այն առեն շոգին որ կը բարձրանաց ջրոց և գետնին մակերեսութիւնն կը կենաց երկրէն քիշ բարձրութեամբ, և մասախուղն կը ձեւացընէ:

1248 Ինչո՞ւ համար երբ օգն շատ խոնաւ ըլլաց, շոգին մասախուղն կը գանայ, փախանակ բարձրանալու և ամսկանալու: — Եթէ օգն խոնաւ ըլլաց այն առեն նաև շատ թեթե կ'ըլլաց, տափ օգոյ և շոգւցով միջի ծանրութեան տարրերութիւնն քիչ զգափի կ'ըլլաց, տառը համար շոգին վեր չի մնայիր:

1249 Ինչո՞ւ համար եթէ օգն շոր ու տաք ըլլաց՝ մասախուղն չըլլար: — Որովհետեւ այն առեն օգն կը ձերձէ զշոգին՝ ձեւացածին պէս, և զայն լուծեալ կը բանէ անտեսնելի վիճակի մէջ, ինչտան որ ցուրտ օգոյ վազուկ մը խասացընէ, զայն բաւական բարձրութեամբ և ամսկի երեսցին մը տաց:

1230 Ի՞նչ պատճառաւ երբ սաստիկ հով
մը ելք ձեւացած մառախուղին ամենեին
տեղ մը չի կենար : — Որովհետեւ հովին եթէ
տաք ըլլայ՝ զայն կը լուծէ , և կը բռնէ ան-
տեսանելի շոգւյո վիճակի մէջ . իսկ եթէ
ցուրտ ըլլայ՝ կը ցացցընէ շոգիացող գետ-
նին և մակերեւութաց բարեխսառնութիւնը .
ասոր համար շոգիացումն ալ կը նուազի ,
և ամենապատի անձրեկի կաթիլներու կը
վերածէ առջի ձեւացած մառախուղը :

1231 Ե՞րբ գետինն կը ծածկուի խիտ
մառախուղովմը : — Երբ որ աւելի ցուրտ
ըլլայ քան օդը , և ասիկայ աւելի տաք ըլ-
լալէն զատ խոնաւ ալ ըլլայ :

(Երբ երկրիս մակերեւութին փրայ ըլլայ
բուռն շոգիացումն մը՝ կը պաղի , որովհե-
տեւ շոգիացումն զինքը մատակարարող
կոյափն չերմութեան մեծ մասը ծածկեալ
կ'ընէ : Բայց որովհետեւ չերմութիւնն կը
ջանայ շարունակ հաւասարակռուելու ,
ոյսպէս ալ օդոյ ցած կարգերուն չերմու-
թիւնն երկրիս կ'անցնի . այս կերպով թէ
երկրիս չոգին և թէ օդոյ մառախուղ կը
դառնան , որ կը մնայ գետնին մակերեւու-
թին փրայ ինչուան որ արտաքին պատճառ
մը զայն ցրուէ :)

1232 Սառերու հալելէն առաջ կամ նոյն
ատեն ձեւացած մառախուղ պատճառը ինչ
է : — Սառերն հալելով խոնաւութեամբ
կը լցընեն գալջ հովի՝ որ կը վաղէ իրենց
մակերեւութին փրայէն , և սառած զետին

վրայէն ալ վաղելով՝ իր չերմութենէն կը
կորուսցնէ , և ծըծեալ ջրային չոգին ա-
ղատ կը թողու , խտացընելով զայն մառա-
խուղի ձեռով :

1233 Վի՞ն կ'իմացուի իշեող մառախուղ ը-
սերով : — Խնող մառախուղը անոնք են
որ կը ձեւանան երկրիս երեսէն բաւական
բարձրութեամբ վեր , պատճառելով ամպ
մը՝ որ շուտով վար կ'ինկնայ՝ երբ զինքը
գէպի ի վեր մըող առիթին դապրի :

(Խնող մառախուղներն շատ յաճախ են
Անդիսյ մէջ և մասնաւորապէս ս' լոնտրաւ
Երբ շոգին ամպի խտանայ՝ երկրէս քիչ
հեռաւորութեամբ՝ բարձրերը եղած ամե-
նախոնաւ օդն կ'արգելու անոր բարձրա-
նալը , և ամպն գարձեալ կ'ինոյ գետնին
փրայ , բարչելով նաև ծուխն և ձանձառ-
խարիթ՝ որ կ'ելլեն այն ճարտարարուեստ
երկրին բազմաթիւ ծխաններէն , և կը
ձեւացնէ աղտօս մառախուղ մը՝ որ կը
սեցընէ զգեստները , գէմքերը և ճերմա-
կեղէնները :)

1234 Ի՞նչ պատճառաւ է որ երբեմն մա-
ռախուղն ամենաբարակ և թափանցիկ
անձրեւ մը կը դառնայ : — Որովհետեւ
ցուրտ և չոր հովմը կը խտացընէ շոգւյոն
պղտի զնտիկները , շատ մը պղտի անձրեկի
կաթիլ գարձընելով , որ երկրիս փրայ կ'իշ-
նան :

1235 Ի՞նչո՞ւ համար ցուրտ և չոր հովմը
բարակ անձրեկի կը դարձնէ մառախուղին

գնատիկները : — Որովհետեւ ցուրտ հովի զաննք պաղեցրնելով կը նուազեցընէ իշխնց մէջը պարսնանակաւած շոգւոյն առած գութիւնը . անոնց ամենաբարակ պատենն ալ որով ձեւացած են կը սեղմուի , և ջնջուելով զիրենք վեր բռնուղ առիթն , գնատիկներն իրենց յատուկ ծանրութեամբը գեամին կ'ինկնան :

1256 ինչո՞ւ համար սովորաբար կ'ըսնէ թէ այս բարակ կամ ցօղագին անձեռն օդը կը մարքէ : — Որովհետեւ ցուրտ հովի որ զայն կը պատճառէ՝ սովորաբար կը ծագի արեւելքէն կամ արեւմուտքէն , կը ցրուէ բարձրը գտուած ամպերը , և երբ մասախուզն բոլորովին խտացած ըլլայ՝ երկինքն ամպերէ աղաս կը մնայ և պարզ կ'ըլլայ :

1257 ինչո՞ւ համար կը կարծուի թէ մասախուզն երթալով կը բարձրանայ գետնին երկանէն , առանց նոյն տեղէն հեռանալու : — Որովհետեւ խոնաւ օդն որ կը շշափուի ձեւացած մասախուզին վերի մասին հետ , կը կրէ ցած բարեխառնութիւն մը , որ կը խտացընէ անոր մէջ պարտնակեալ չերմութեան մէկ մասը . այս կերպով առաջին մասախուզին վրայ նոր կարգեր կու գան , և իր հաստութիւնը շարունակ կ'աւելնայ :

1258 ինչ զատանառաւ զիշերային մասախուզը սովորաբար արեռն ձագելուն կը ցրուին : — Որովհետեւ այն ատեն օդն

կը տաքնայ և կը ծրծէ մասախորլաց շոգին , անտեսաննելի ընելով զայն :

1259 ինչո՞ւ համար զիշերուան օդոյ ցրութիւնն չի պատճառեր պարագայիկ մասախուզ մը : — Որովհետեւ օդն միշտ շոգիներով բոլորովին յագեալ չէ , հետաբար կը րնայ պաղելով հասնի յադման կէտին՝ առանց արձեկելու լուծուած շոգին :

1260 Մթնոլորտին որ պայմաններուն մէջ մասախուզը յաճախ կ'ըլլան : — Մասախուզը կը յաճախն երբ օդն խոնաւթեամբ յագեալ ըլլայ , ուստի աշնան և ձմեռուան վերջերը մասախուզը աւելի առատ կ'ըլլան քան թէ ուրիշ եղանակաց մէջ :

(Ցովուն աւելի մօտ երկիրք և ճախճախուոք ենթակայ են մասախուաց՝ տարւոյն ամեն եղանակաց մէջն ալ :)

1261 ինչո՞ւ համար ըլլուքը աւելի մեծ կ'երենան երբ զիտուին շատ խիս մասախուզը մը միջէն : — Որովհետեւ խտացած շոգին շատ կը չելքէ լուսոյ ճառագայթները . հեռաեաբար իրենց միջէն նշմարուած առարկայք աւելի մեծ կ'երեւան :

1262 ինչո՞ւ համար չենք կը բնար աղէկ ճանչնալ առարկայի մը հեռաւորութիւնը երբ օդն խոնաւ ըլլայ և մասախուզ մթընցած : — Որովհետեւ առարկաներէն անգրագարձեալ լոյսն՝ անցնելով մասախուզ միջէն մասամբ մը կը ծրծուի , ուստի առ

արկայք ալ անորոշ տեսնուելով՝ աւելի
հետո կը կարծուին :

1263 Ինչո՞ւ համար արեւուն, լուսին,
և նաև արուեստական լցան՝ մառախուզի
միջին կարմիր գունով կը տեսնուին : —
Որովհետեւ այս մարմիններէն ելլող լցան
կը լուծուի՛ երբ թափանցէ թանձր մատա-
խոլց կարգի մը մէջ, և միայն կարմիր ճա-
ռազայիթներն որ աւելի սւետով են՝ կը ընան
մեղի հասնիլ, մինչդեռ մէկալներն կը շփո-
թին ջրային չոգույն հետ և երթալով կը
կորսուին :

1264 Եթէ ցուրտն կը պատճառէ մառա-
խուզը, ինչո՞ւ համար սաստիկ ցուրտ օրեւ-
րուն առաւօտը մառախուզ չըլլար, երբ
սառն մնայուն կը լլայ : — Ա. Որովհետեւ
այնպիսի օրեր օդն ամենացրտար ըլլալով՝
միայն ամենապլատ մաս մը առածգական
չոգույն կը ընանաց պարունակել : — Բ. Եթէ
նաև պղտի մաս մ'ալ խոնաւութեան ար-
ձրկուի՛ ասիկայ մէկին կը սառի գետնին
ամենացրտ մակերեւութին վրայ, ուր որ
կի՞նէ :

1265 Ի՞նչ պատճառաւ մառախուզն յա-
ճախ ձորերու մէջ կը լլայ : — Ա. Որով-
հետեւ ձորերուն օդն զբեթէ միշտ ամբող-
ջապէս յագեալ կը լլայ խոնաւութեամբ, բարիսառնութիւնն հազիր զգալի նուռա-
զուց մ'ալ կը բաւէ իրեն թողու լուծեալ
չողին փամիշտացին ձևով : — Բ. Հոմիքն
գժուարաւ կը թափանցեն ձորերուն մէջ,

ասով իրենց մէջ շարունակ կը ուիրէ շատ-
խոնաւ օդոյ մթնոլորտ մը :

§. Բ. — Յօη :

Ա. Յօդանման երեսորդ :

1266 Ինչո՞ւ համար ընակարանաց պա-
տուհանաց ապակիներն ձմեռ ատեն կը
ծածկուին ջրային շոգեով մը՝ որ կաթիւ
կաթիւ կը ծորի : — Որովհետեւ արտաքին
ցուրտ օդն որ կը շօշափուի ապակեաց՝ ա-
նոնց բարեխանութիւնը կը ցածր լինէ, այն-
պէս որ սենեկին տաք օդն անոնց վրայ
հասնելով կը խոտանայ և կը թողու իր շո-
ղին, ասիկայ ալ հեղուկանալով՝ կաթիւ
կաթիւ կը ծորի :

1267 Ի՞նչ բանէ առաջկու գայ բնակեալ
սենեկաց մէջ ջրային շոգին : — Ա. Սե-
նեկին օդն ալ նման արտաքինին միշտ կը
պարունակէ շոգեոյ քանակութիւն մը : —
Բ. Շունչն, և բնակողաց անզգալի ար-
տաշնչութիւնն, տաք կերակրոց, ըմպե-
լեաց, և այլն, ծուխն, կը յաւելուն այս
չոգույս քանակութիւնը :

1268 Ի՞նչ կ'իմացուի՛ անզգալի արտաշն-
չութիւն ըսկելով : — Այն արտաշնչութիւնն
որ չարունակ կ'ըլլայ ամբողջ մարմինոյն մակ-
երեւութիւն վրայ, մորթին ծակերսն մի-
ջին, առանց զայն թրչելու կամ ուրիշ

յայտնի նշան մը տալու իր ներկացութեանը :

(Առողջ անձանց արտաշչութեանն իր բարք չդադրին մորթին չորսութիւն մը կը բերի որ կը թեփափի, և նշան կու առ չի-
ւանդութեան :)

1269 Կթէ արտաշչութիւնն անզգալի և անտեսանելի է ինչպէս կը յացնուի : — Ետա ցուրտ ձմեռ տան կը բաւէ բրո-
նիւ ողորկ և փայրուն ածելուց իգաւ մը,
կը տեսնուի որ մէկէն կը ծածկուի խո-
նու քազով մը, եթէ ձեռքը վերցանի խո-
նու քազն ալ կը ցնգի, ուրեմն անկարելի
է որ այս պարագային մէջ բաց կ' խսնա-
ւութենէն (որ կը բզիի ձեռքէն) ուրիշ ա-
ռիթ մը պատճառէ այս երեսը :

1270 Ի՞նչպէս կ'իմացուի որ մեր չունչն
ջրացին չոգի ունի : — Ուղուրտ ապակիի
մը վրայ վշերավ ցողի նման խոսացած չոգ-
ոյ յատակ մը կը մնայ ապակիին վրայ,
վերջը կամաց կամաց կը ցընցի : ուրեմն
նշան է որ խոսացած չոգին առաջ կու գոյ
մեր չունչէն :

(Այսպէս ալ աղէկ գոցուած կառքի մը
մէջ նատելէն քանի մը վայրկեան վերջը՝
ապակիներն առատ ցողով մը կը ծած-
կուին :)

1271 Ինչու համոր ամառ տան մեր չըն-
չոյն չոգին քիչ տան ապակիին վրայ կը
մնայ, և վերջը կը ցնցի : — Ուղովչեան
արտաքին օդոյ ջերմութիւնն աւելի է քան

սենեկինը և ապակիները տափ կը բռնի, ուստի հազիւ թէ չունանիր խոնաւութիւնը
առ անոր, ապակեայն սարսութիւնն մէ-
կէն զայն անտեսանելի կամ առաձգական
չոգւոյ կը վերածէ :

(Տաք օդն ունի մեծ ընդունակութիւն մը
առաջգական չոգւոյ : Վէկ մեդր խորո-
նարդ ոգ 20 աստիճանի տաքութեամբ՝ կրր-
նայ պարունակիւ ինչուան տասն և եօթին
կրամ առաձգական կամ անտեսանելի
չոգւոյ :)

1272 Ի՞նչ պատճառաւ մեր չունչն որոշ
կը տեսնափ ձմեռ տանի : — Ուղովչեան
ձմեռ տանի օդն ցուրտ կ'ըլլայ, ուստի
չնչեալ օդոյ մէջ պարունակեալ ջրացին չո-
գին մէկէն կը կորուսցընէ մաս մը, իր ջեր-
մութեան, և տար համար կը խոսնայ
փամփրչացին չոգւոյ ձեռվ, և տեսանելի
կ'ըլլայ :

1273 Ի՞նչ պատճառաւ երբեմն ձմեռը՝
անկողնի սենեկաց արտկիներուն վրայ կը
ձմեռան ծառոց կամ տերենոց զեղեցիկ
ձմեր : — Սենեկին մէջ բնակող անձանց
չունչն և արտաշչութիւնն կը մատակարա-
րեն օդուն մեծ քանակութիւն մը չոգւոյ,
որ հասներավ չատ ցուրտ ապակեայն վրայ,
ոչ միայն հեղուկի կը խոտանայ, հասպա յա-
ջորդարար կը սասփի, և երբեմն այդ սիսիի
կանոնաւոր և քարտկ ձեւեր կ'առնու :

1274 Ի՞նչ պատճառաւ աշնան մէջ բնա-
կութեան մը պատերն կը ծածկուին խո-

նաւութեամբ՝ երբ տաք եղանակ մը յաջորդէ ցուրտի: — Որովհետև բնակութեանց պատերն՝ մանաւանդ՝ եթէ շատ հաստ ըլլան, չեն կը բնար մթնողորտային օդոյ նը ման չուտով փոխել բարեխառնութիւննին. և ասիկայ զանոնք գեռ ցուրտ զըտնելով վրանին կը մնայ, խտացընելով մաս մ'իր չերակութեան:

1275 Ինչո՞ւ համար ձմեռ ատեն երբ երկայն ժամանակ բայց տեղ պտըտինք, մազերնիս և զիմարկին ծովերն կամ ժապաւէններն կը ծածկուին ամենամանը ցողի նման կաթիլներով: — Որովհետև մեր չունչը մէկէն կը խտանայ մազերնուու և զիմարկին վրայ, որոնք բաց օդոյ տակ ըլլալով, ցած բարեխառնութիւն մը կունենան:

(Մօրուօք անձինք աւելի ենթակայ են այս բանիս:)

Բ. Բուհ Յօդ և Եղիսամեն:

1276 Ի՞նչ է յօդե: — Յօդն է ջըրոյ խռացեալ չողին, ցուրտ գոյացութեան մը չօշափմամբ:

(Պատ. ջըրոյ շիշ մը կը խտացընէ մթնութրտային խոնաւութիւնը, որ կաթիլներու ձևով կը վաղէ անոր դրսի երեսներէն:)

1277 Աւելի ո՞ր մարմնոց վրայ կ'իջնայ յօղն: — Ամենէն աւելի բուսեղէնք կը ծածկուին յօղով:

1278 Ինչէն կու գայ օդոյ խոնաւութիւնն որ գիշերը յօղի կը փոխուի: — Ա. Ցորեկը եղած չողիացումէն: — Բ. Եթէ ցորեկը շատ չողիացումն ալ չըլլայ, օդոյ մէջ միշտ ցրիւ գտուած խոնաւութիւնն յօղի ձևով կ'իջնայ գիշեր ատեն. — Գ. Նոյն իսկ անկոց արտաշչութիւնն ալ կը ընկած բուտց սերմներուն վրայ խտանալ:

1279 Ինչո՞ւ համար մարգաքետինք երբեմն յօղով կը ծածկուին: — Որովհետև երկրիս մակերեսոյթն՝ երբ արևն արեմուտք դառնայ, կը սկսի շատ պայմիւ իր չերմութեան ճառագայթմամբը. օդոյ չողին ալ որ աւելի տաք է, կը խտանայ երբ ցուրտ գետինին դպչի:

(Գետինն այնչափ կը պայմի որ շատ անգամ զրոյէն շատ աստիճան վար կ'իջնայ:)

1280 Ինչո՞ւ համար յօղն միայն պայծառ անամակ գիշերները կը ձեռնայ: — Որովհետև երկրային չերմութեան ճառագայթումն ազատապէս կը կատարուի երբ օդոց միջոցն աղատ ըլլայ, և գետինն կը ընալ աւելի ճառագայթիլ. այս բանս չըլլար՝ երբ երկինքն ամսկերով ծածկուած ըլլայ, որովհետև անօնիք կը խափաննեն ճառագայթեալ չերմութեան անցըը, և զայն նորէն կը դարձնեն երկրիս:

1281 Ի՞նչո՞ւ համար յօղն առատապէս կը նատի բաց և անարգել տեղեաց մէջ: — Որովհետև ճառագայթումն չարդիլութիչներէն, ծառերէն, ցանկերէն, և այլն:

1282 ինչո՞ւ համար իսկա տերեւուռ ծառոց տակի գետինն քիչ ցողով կը ծածկուի : Որովհետեւ ծառուուր տերեներն իրենց տակի գետինն ջերմութեան ճառագոյթումը կը դժուարացընեն, որ և շարպենալով բաւականապէս պաղիլ՝ կ'արգելու ջրային շոգւոյն իր վրայ նստիլը ցողի ձեռով :

(Փոխաթ մը, տախտակ մը, նաև բարակ լսոթ մ'ալ կ'արգելուն ցողը իրենց ծածկած առարկայցի վրայ իջնալու :)

1283 ինչո՞ւ համար ցանկի մը կամ պատմի մը ստորսու երեք ցող չի գտուիր, թէ պէտք քանի մը բթաշխ չեռու առաստապէս ցող ըլլայ : — Ա. · Որովհետեւ այս առարկայք մասամբ մը կ'ընդգիմանան գետենին ջերմութեան ճառագոյթինանը : — Բ. · Իրենք կը ճառագոյթին իրենց ջերմութիւնը գէպի ի երկիր : — Գ. · Ցողն այս առարկայիցից մասերը չեռու առաջ ի առաջ մէկ առաջին հիմունքի կը բանալ, որովհետեւ առաջին հիմունքն որ աննոնց վրայ իջնայ պատմին կամ ցանկին մազականութենէն կը ծըծուի . այս մազականութիւնը կը ձեւացընէ տեսակ մը շարունակ վազուի շոգւոյն հիմէլից, որ իրեն կը քաշէ ամեն հիմէները որ իր ազգեցութեան սահմանին մէջ ժանեն . ուստի անոնք որ կ'ինկնան քիչ հեռաւորութեամբ՝ կը քաշուին և կը նստին ցանկին կամ պատմին վրայ :

(Պատերն գժուարաւ կը ծածկուին ցողով, որովհետեւ շոգւոյն վամփուշուներն

շարունակ ծըծուելով, չեն կը բնար ձևանալ պատի կաթիներ՝ որով ցողն կը կազմի :)

1284 Կ՞նչ պայմաններ կը գիւրացընհն ցողին նստին : — Ա. · Մթնոլորտին կատարեալ հանգարատութիւնն . — Բ. · Յդյմէջ ցրուած տատա խոնաւութիւնն . — Գ. · Երկայն գիշեր մը՝ շատ տաք օրէ մը եաբը :

1285 Ինչո՞ւ համար տառաւորը ցող չերեար՝ եթէ գիշերը հովելլէ : — Որովհետեւ, Ա. · Հովել կը ցամքեցընէ ցողը՝ քանի որ այս կը ձեռանայ . — Բ. · Յդն երբ սաստիկ յուղուած ըլլայ՝ կ'արգելու ջերմութեան ազատ ճառագոյթումը :

1286 Ինչո՞ւ համար խոր ձորերու մէջ ցողն առաստ կ'ըլլայ : — Որովհետեւ ցորեակուան ցղիացումն առաստ կ'ըլլայ ձորերու մէջ, ուր օդն խաղաղ է . իրենց մէջ զրեթէ բոլոր օդոյ խոնաւութիւնն ցողի կը դառնայ գիշերուան ցրատութեամբը :

1287 Ինչո՞ւ համար ցողն առելի առաստ կը նստի քանի մը տեսակ առարկայից վըլլայ՝ քան ուրիշներու : — Որովհետեւ ոմանց մակերեւութիւն բարեխառնութիւնն մէկաւ նոնցմէ աւելի շատ կը պաղի . երբ հաօնի գիշերն իրենց ջերմութիւնն կը սկսի ճառապայթիլ :

(Ցողն աւելի առաստ կ'իջնայ տնկոց վրայ քան թէ գետնի, ամենաբարակ առաղիք քան թէ պինդ և խիտ հողու վրայ, առակւոյ՝ քան թէ մետաղաց վրայ :)

1288 Ո՞ր գոյութիւնք են որ ճառագայթ մամբ աւելի շուտ կը կորուցընեն իրենց ջերմութիւնը : — Խոսն, պինդ ու խիտ փայտն, և ծառոց աերևներն : Ծնդ հակառակն ջնջ մետաղք, կարծր քարեր իրենց ջերմութիւնը չատ գժուարաւ կը կորուցընեն :

1289 Բուսոց բոլոր տերեւներն ալ ունին նմանապէս հաւասար զօրութիւն ջերմութիւնը ճառագայթելու : — Ոչ. քանի մը տերեւք՝ ինչպէս անոնք որ ծածկուած են բարակ աղուամազով մը՝ աղէկ կը ճառագայթեն ջերմութիւնը, մինչդեռ անոնք որ կեղեւուս և փայլուն են՝ չատ գանդաղութեամբ կը ճառագայթեն :

1290 Կերպար և մանաւանդ բրդելէնք՝ ինչո՞ւ համար ամենաերն ցօղով չեն ծածկուիր երբ պարզ օգոյ գրուին : — Որովհեաւ, Ա. բրդէ հիւսուածք ամենալաւ ծըծողք ըլլարով ճառագայթեալ ջերմութեան երկրէս ճառագայթուածը կը ծըծեն քանի որ իրենցը կորուցընեն. այս պատճառու երբեք չեն հասնիր այնչափ ցած բարեխառնութեան մը՝ որ իրենց վրայ խօսացընէ օգոյ ջրային շոգին : — Բ. գրեթէ ամեն կերպար ծածկուած են ամենաբարակ թելերով որոնց վրայ կը նստի շոգոյ առաջին փամփուշոն, որ կը ձեւացընէ ցօղի կաթիլը. բայց հազիւթէ նստի մակերեսութէն ճառագայթեալ և ընդունած ջերմութիւնն կընդլայնէ անոր մէջ

պարունակեալ ջրային շոգին, և այս փամփուշոն աւելի թեթևնալով բարձրը կ'ելլէ, գրեթէ բոլորովին չոր թաղլով կերպարու, մինչդեռ բոլորափեր եղած խոտն կը խոնաւնայ՝ վրան խտացած ցօղին պատճառու :

1291 Ինչո՞ւ համար ճամբու մը աւազն բոլորովին չոր կ'ըլլայ, մինչդեռ խոտն բոլոր ծածկուած կ'ըլլայ ցօղով : — Որովհետեւ աւազն որչափ որ իր ջերմութենէն ճառագայթէն նյոյնչափ ալ կ'ընդունի, ասոր համար իր բարեխառնութիւնն շրջակայ խոտին չափ չի ցածնար, և չի թողուր իրեն վրայ ցօղը ձեւանալու :

1292 Ինչո՞ւ համար ցօղն քիչ կը նստի խիտ և կորդ գետնի մը վրայ : — Որովհետեւ պինդ և խիտ հողն բաւական աղէկ հաղորդիչ ըլլարով ջերմութեան՝ ցորեկն ընդունածը կը պահէ, և չի թողուր իր մակերեւութէն ճառագայթելու :

(Ա) Ենայն լաւ հաղորդիչք՝ ջերմութեան ցրումը չեն թողուր, որովհետեւ սովորաբար պինդ և խիտ կ'ըլլան. ասով իրենց վրայ գժուարաւ կը ձեւանայ ցօղն, ինչպէս որ շատ գժուարաւ ալ կը ձեւանայ ամենապէս հաղորդիչ մարմնոց վրայ՝ որ շատ աղէկ կը ճառագայթեն և կը ծըծեն զջերմութիւնը :

1293 Ինչո՞ւ համար ցօղն ամենէն աւելի ծառոց և տնկոց վրայ կը խտանայ : — Որովհետեւ տաւնկը իրենց արտաշնչութեաւ

նը ատեն ջրային շոգի դուրս կու տան, որ
հասնելով տերևոց մակերևութին վրայ կը
խոտանայ, և կը ձեւացընէ առաջին պղտի
կաթիլն, որուն վրայ հետզհետէ նոր խո-
նաւութիւն կիջնայ՝ ցողին կաթիլները ձե-
ացընելու համար :

1294 Ինչ է տնկոց արտաշնչութիւնն :
— Բաւոց արտաշնչութիւնն է այն ջրային
հիմքոց ցնդումը՝ որ ամբողջ տունին ծա-
կերէն կելլէ, և մասնաւորապէս տերևնե-
րէն, առանց յայտնի նշան տալու իր ել-
քին :

1295 Ինչո՞ւ համար շատ անդամ զգեստ-
ներն կը թրջին երբ մէկն բայ տեղ շրջա-
գայի գարնան կամ աշնան գեղեցիկ իրի-
կուն մը : — Որովհետեւ առատ թօն կիջ-
նայ և անոնց հիւսուածին մէջ կը թափան-
ցէ : — Առատ թօնն կը ձեւանայ օդոյ մէջ
պարունակեալ ջրային և հեղուկացեալ
շոգիէն՝ առանց պաղ մարմնոց շշափման :

1296 Ինչպէս կըրնայ շոգին հեղուկա-
նալ առանց պաղ մարմնոց հետ շշափուե-
լու : — Որեւուն մտնելու ատեն եղած զո-
փութիւնն կը բաւէ օդոյ յագեալ շոգին
բարակ և անտեսանելի անձրևի մը վերա-
ձելու :

1297 Ո՞ր գիշերներ ցողն աւելի առատ
կը ձեւանայ : — Այն գիշերները որ ամա-
ռատան և աշնան տաք ցորեկուան մը յա-
ջորդէն, մանաւանդ եթէ այն օրուան հովին
արևմտեանն եղած ըլլայ :

1298 Ինչո՞ւ համար ցողն տաք օրէ մը
վերջը առատ կ'ըլլայ : — Որովհետեւ օրուան
ջերմութիւնն կը գրգռէ ամեն խոնաւ մար-
միններէ ընդհանուր շոգիացումը, և օդն
իրիկուան դէմ գրեթէ շոգւով յագեալ կը
դտուի :

(Ցօշն առատ կ'ըլլայ մասնաւորապէս
աշնան տաք օրուենէ մը վերջը, որովհե-
տեւ գիշերներն բաւական երկայն են և
գետինը կը պաղեցընեն . և երբ գետինն
շատ աւելի ցուրտ ըլլայ քան զօդն՝ շատ
ցող կը ձեւանայ :)

1299 Ինչո՞ւ համար իրիկուան խոնաւու-
թիւնն առողջարար չէ : — Որովհետեւ օ-
դէն զատուած խոնաւութիւնն գետինին վը-
րայ ինկնալով կը խոնացընէ ցործարանա-
ւոր գոյացութեանց և ապահանեալ հիւլէից
քանակութիւնն մը, կ'արձելի նեխեալ ար-
տաշնչութիւնները՝ որ ցորեկը օդոյ մէջ կը
թափանին, և զանոնք վար կ'իջեցընէ : Այս
վխառակար բանս աւելի կ'ըլլայ ճահիճնե-
րու մօտերը, որոնցմէ ապահանեալ գոյա-
ցութիւնը դէպ ՚ի վեր կը քարշակին՝ այս-
պիսի ջուրց մակերևութին վրայ եղած ա-
րագ շոգիացմամբ :

1300 Ինչո՞ւ համար ցողի կաթիլն կըր
կ'ըլլայ : — Որովհետեւ ջրոյ առաջին հիւ-
լէն որ կ'իջնայ՝ երկրորդին կենդրոն մը կը
ձեւանայ, երկուքն ալ միացած՝ կ'ըլլան կեն-
դրոն երրորդին, և այսպէս շարունակ .
և որովհետեւ ամեն հիւլէք դէպ ՚ի կ'ենդրոն

կը դիմեն՝ անկէ հաւասարապէս հեռու դիրք մը կ'առնուն, և ասով գնտածն մը կ'ըլլայ:

1501 Ինչո՞ւ համար ցօղն կը վազէ կաղապէն երթուններուն, խաչխաչներուն, և այլն, տերեւններուն վրայէն՝ առանց զանոնք թըրք ջելու: — Որովհետեւ աստնց մակերեւոյթն ծածկուած է մոմային բարակ փոշովլ մը որուն վրայէն կը վազէ ցօղն առանց զանոնք թըրք ջելու:

1502 Ինչո՞ւ համար թանձրամարմին տունկը որ չոր տեղեր կը բուսնին՝ ծածկուած են բարակ աղուամաղովլ մը: — Որպէս զի ցօղոյ կաթիլներն կարենան կենալ այս աղուամովին ամենանուրը թելերուն վրայ. աստնք ալ իրենց մազականութեամբը կամաց կամաց կը ծըճեն ցողին խտացած հեղուկը, և կը բերեն տունկին մակերեւութին վրայ, որ զայն սնունդի տեղ կը կ'ընդունի:

1503 Ինչո՞ւ համար թառամեալ տունկ մը կը գալարանայ՝ երբ գիշերը առատ ցօղի տակ ըլլայ: — Որովհետեւ ցօղին ջուրն կը թափանցէ անկոց բջջաւոր հիւսուածքին և մարմնոց ծակերուն մէջ՝ անձրեսի ջրէն աւելի աղէկ:

1504 Ի՞նչ պատճառաւ աշնան և գարնան առաւատանց՝ խոտն, գետինն, և ինչուան տանց տանիքներն ալ կը ծածկուին սուրի պղտի հատիկներովլ: — Այս բանս կ'ըլլայ՝ որովհետեւ նշանակեալ եղանակաց

մէջ գիշերներն երկայն են, և օրուան մէջ գետնին ընդունած ջերմութիւնն ալ, ուրիշ նիւթոցն ալ՝ կիջնայ զրոյէն շատ աստիճան վար. ասոր համար օգոյ շոգին իրենց վրայ համանելովլ ոչ միայն կը խոտանայ, այլ նաև կը սառի պահելովլ գրեթէ ցօղի կաթիլներուն ձեր, և այս կ'ըսուի եղեամել:

1505 Ի՞նչ են այն պղտի տսեղնածն սառերն որ ձմեռուան ցուրտ առաւտանց կը ծածկեն բոլոր ծառերն և գետինը, իրեւթէ ձիւն եկած ըլլար: — Այն սառերն կը պատճառին երբ օգն շատ խոնաւ և ցուրտ ըլլայ: Եղեման ձեւանալն անկանոն և շուտ կ'ըլլայ, ամեն տեղ կը նստի, և մէկն կը սառի դեռ կենդրոնացեալ կաթիլներու չի գարձած. որովհետեւ այն մարմնոց վրայ որ կ'իջնայ՝ ամենացուրտ կ'ըլլան:

§ . Գ . — Անձրև :

1506 Ի՞նչ է Անձրև: — Անձրե կ'ըսուի քանակութիւն մը հեղուկ ջրոյ կաթիլներու, որ մթնոլորտէն կ'ինկնան երկրի մը վրայ, քիչ կամ երկայն ատեն:

1507 Ի՞նչ է անձրեի պատճառն: — Անձրեն կը ձեւանայ ամպոց մէջ շոգոյ վամբիրատաց փոխուելովլ շատ մը հեղուկ կաթիլներու, որ իրենց ծանրութեան ուժովլ կ'ինկնան:

1508 ի՞նչ պատճառաւ շոգւյ փամ փուշք անձրեւ կը դառնան : — Ա . Օդոյ վաղուկներէն պատճառած յուզմամբ՝ որ կը հասնին տարբեր ուղղութեամբ ամսի մը վրայ : — Բ . Խոնաւ և ցուրտ հովէ մը՝ որ փամիշտային շոգւյոյն վրայէն կանցնի : — Գ . Որ և է փոփոխութեամբ օդոյ բարեխառնութեան : — Դ . Մթնոլորտին եւ լեկարտական վիճակէն :

1509 ի՞նչ պատճառաւ անձրեն լերանց վրայ աւելի առաս կու գայ քան թէ գաւ տաց : — Որովհետեւ լեռներն իրենց բարձրութեամբը իրեւ պատնէ մը կեցած ևն ամալոց՝ որոնք հովէն մզուելով անոնց վրայ կը հասնին , և անձրեւ կը դառնան , խտանալով նոյն լերանց ցուրտ կողերէն :

1510 ի՞նչո՞ւ համար ձորերու մէջ եկած անձրեն մեծ կաթիլներով կը ձեւանայ , մինչեւ սովորաբար լեռներունը ամենաբարակ կ'ըլլայ : — Որովհետեւ ձորերու մէջի օդն գրեթէ միշտ մօտ կ'ըլլայ իր յագման կէտին , ուստի անձրեն ելլելով ամպերէն իր անցքին մէջ կը խտացընէ մաս մը օդոյ խոնաւութեան , և գետին հասնող կաթիլներն ամենամեծ կ'ըլլան :

(Արևադարձներուն մէջ իշած անձրեն , այսինքն հասարակածին աւելի մօտ եղած գտառաց մէջ , երբեմն այնպէս մեծ կ'ըլլայ , որ ամեն մէկ կաթիլ մէկ քառորդ ունիկին աւելի կը կընէ :)

1511 ի՞նչո՞ւ համար երբեմն անձրեւ կա-

թիլներն խոչոր կ'ըլլան և երբեմն ալ ամենամանր : — Անձրեւ կաթիլներն այնչափ աւելի մեծ կ'ըլլան՝ որչափ որ աւելի ցածըլլայ ամպն , և որչափ կարճ վայրկենի մէջ ջրային շոգին ի ջուր փոխուի :

(Ելեկարական թօթափման յաջորդած անձրեն՝ գրեթէ միշտ մեծկակ կաթիլներով կ'ըլլայ :)

1512 ի՞նչո՞ւ համար շատ ցած ամսէ մը ինկող անձրեն սովորաբար մեծակաթիլ կ'ըլլայ : — Ա . Որովհետեւ ջուրն անցնելով քիչ օդոյ կոյտէ մը՝ տկար ընդդիմութիւն մը կը գտնէ , և շատ պղոփի մաս չի բաժնուիր : — Բ . Անձրեն կը խտացընէ օդոյ մէջ ցրուեալ խոնաւութիւնը , և ասոր համար իրեն կաթիլներն ալ քանակութեամբ կը մեծնան :

(Եթէ շատ բարձրութենէ ջրոյ աման մը թափուի՝ կը տեսնաւի որ գետնին մօտենալով հեղուկն շատ մը ամենապղոփի մասեր կը բաժնուի . բայց այս բանս շըլլար եթէ ջուրն քիչ բարձրութենէ թափուի , հասպա գրեթէ ամրող զանգուածովը վար կինկինայ :)

1513 ի՞նչո՞ւ համար անձրեն այնչափ յաձախ շըլլար գիշերը՝ քան ցորեկը , թէ պէտե արեւ մտնելուն ատեն երկինքն զոցուած ըլլան պմպերով : — Որովհետեւ երկէս ճառագայթեալ ջերմութիւնն ամպերուն կ'երթայ և զանոնք կը տարցընէ . անով շոգւյ փամփուշտներն ալ աւելի կը

թեթևնան, և շատ անգամ գիշերը ամպերն բոլորսին կը ցրուին :

1514 Ինչո՞ւ համար եթէ ցորեկն ամպոտ ըլլայ և անձրեն սկսի իրիկունը գալ՝ դրեթէ ամբողջ զիշերը կը չարունակուի : — Որովհետեւ այն տաեն ճառագայթումն հակոսակ կերպով կ'ըլլայ, այսինքն ամպերէն դէպ՚ի գետին կու գայ . այս առթիս մէջ ամպերն իրենց ջերմութենէն կը կորուցընեն, անոր համար անձրեկ կը դառնան :

1515 Ինչո՞ւ համար երբեմն մեծ ամպ մը խիստ քիչ անձրե կու տայ, որ ռամիօրէն ամսի մը անցը կը կոչուի : — Ամպն չէ որ կ'անցնի, վասն զի կը տեսնենք որ անձրեւին դադրելէն վերջն ալ ամպն դեռ մեր զիմուն վրայ կը մնայ . հասպա օգոյ վաղուկ մ'է որ արագութեամբ անցնելով ամպին վրայէն անձրեկ կը խտացընէ անոր մէկ մասը :

1516 Ինչո՞ւ համար շատ անգամ յստակ երկինքն յանկարծ կը ծածկուի ամպերով, որոնք անձրեկ կը փոխուին, մինչդեռ մթնոլորտն աղատ և երկինք ալ բոլորովին պայծառ կը մնայ : — Այս բանն կ'ըլլայ երբ ցուրտ և շատ թանձր օդ մը հանդիպի տաք ու խոնաւ օդոյ մը, այս վերջինիս ջրացին չոփին ամպի կը խտանայ, և մէկէն անձրե կը դառնայ . իսկ երբ երկու վաղուկներէն մէկն յաղթէ միւսն՝ ամպերը կը քչէ, հորիզոնն պայծառ կը մնայ, և

մթնոլորտին մէջ կ'իմացուի որ հովի վուխոր է իր ուղղութիւնը :

1517 Այնպիսի տեղեր ալ կան ուր անձրեք պարագայիկ (այսինքն որոշ ժամանակով մը) ըլլան : — Այս, արեւադարձային գաւառաց մէջ անձրեւաց եղանակն անվրէպ նշգութեամբ կ'իմացուի : Այս գաւառաց մէջ կ'անձրեկ երբ արեն նիշտ հասարակածին վրայ ըլլայ :

1518 Ինչո՞ւ համար արեւադարձային երկիրներու մէջ կ'անձրեկ երբ արեն հասարակածին վրայ գտուի : — Որովհետեւ հովին ուղղութիւննին կը փոխեն, և հողմոց փոփօխութեննէն ետեւ կու գան յորդանձրեք :

(Այրեցած գտուոյն մէջ անձրեւաց եղանակն գրեթէ վեց ամիս կը տեկ, և այն աշխարհաց ձմեռն է . բայց մերինէն շատ տարրեր ձմեռ մ'է, որովհետեւ մեր գարնան կը հաւասարի, և այս ժամանակիս մէջ բուսեղէնք կը նորոգուին, տունկը կը ծաղկին և մշակութիւնն կը յառաջանայ :)

1519 Ինչո՞ւ համար անձրեն հաւասար քանակութենամբ չի գար ամեն երկիրներու մէջ ալ : — Ա . Որովհետեւ ամեն երկիրներու մէջ ալ հաւասար չեն հովին և օդոյ վազուկներն, որոնք ամեննէն աւելի կ'աղցեն անձրեկն վրայ : — Բ . Լերանց և անտառաց մերձաւորութիւնն ալ մասնաւոր ազգեցութիւնն մ'ունի ամպոց վրայ : — Գ . Մշակութիւնն և երկիրն յատկու-

թիւնն նոյնպէս պատճառ են աւելի կամ՝
նուազ անձրեխ :

1320 Երկրիս ո՞ր կողմէրուն մէջ աւելի
կ'անձրեէ : — Արևադարձային երկիրնե-
րու մէջ և արեւադարձից մօտերք : Այն
տեղերը անձրեային եղանակին մէջ եկած
ջըրոյ քանակութիւնն՝ ամբողջ տարւոյն
մէջ մեզի եկածէն շատ աւելի է :

1321 Ինչո՞ւ համար արևադարձին տակ
աւելի անձրե կու գայ քան թէ ուրիշ
տեղեր : — Որովհետեւ այն տաք երկիր-
ներուն պատճառաւ օդն խոնաւութեամբ
կը յագենայ . երբ արևն ուղղահայեաց ըլ-
լայ հասարակածին վրայ՝ օդոյ վաղուկներն
բեկոներէն դէպ 'ի այն կէտը կը դիմեն ,
և հոն մէկմէկու կը հանդիպին . բայց որովհ-
չեակ իրենց բարեխառնութիւնն տարբեր
է հարկաւ չողույ մեծ քանակութիւնն մը
կը խոսնայ և անձրեխ կը վերածուի :

1322 Ի՞նչ երապոլ լերանց մօտակայու-
թիւնն կ'ազդէ երկրի մը անձրեի քանա-
թեանը վրայ : — Լերինք՝ եթէ երկրի մը
մէջ արգելք ըլլան արեւատեան խոնաւ հող-
մոյ մտնելու , նոյնպէս ալ կ'արգելուն ամ-
պոց մուտքը , որոնք խոտանալով լերանց
վրայ՝ ուր կը մղուին , անձրեստ կ'ընեն
տակի երկիրը . մինչեռ արգիլեալ երկիրն
խիստ քիչ անձրեի ենթակայ կ'ըլլայ :

(Եղիպտոս ամեննեին շանձրելեր , իր տե-
ղական գրիցը պատճառաւ . Բերուի մէջ
տլ հաղիւ երբեք կ'անձրեէ :)

1323 Ինչո՞ւ համար կ'ըսուի որ լերինք ե-
անտառք կը քաշեն անձրեւ : — Երկու
պատճառաւ . Ա . Որովհետեւ կ'արգելուն
օդային վաղուկաց ընթացքը , և նոյնպէս
ամպերն ալ , որք կը խտանան անոնց վլ-
րայ և անձրեի կը փոխուին : — Բ . Ան-
տառներն ելեռներն ամպերուն ելեկորու-
թիւնը կը քաշեն , անոնք ալ հակառակ ե-
լեկորութիւն կ'առնուն , և այս անհաւա-
սարակառութիւնն՝ անձրե կը պատճառէ :

1324 Ինչո՞ւ համար անապատաց մէջ ա-
մեննեին շանձրեէր : — Որովհետեւ այն եր-
կիրներուն բոցակէզ աւազներն կը վանեն
ամպերը , որք կ'անցնին անոնց վրայէն ա-
ռանց անձրեի փոխուելու :

1325 Տարւոյն ո՞ր եղանակին ընդհան-
րապէս անձրեն աւելի առատ կու գայ :
— Անձրեի օրերն աւելի բազմաթիւ են
աշնան մէջ քան թէ ձմեռը , ձմեռուան
մէջ աւելի քան թէ գարնան մէջ , և գար-
նան մէջ ամառէն աւելի :

1326 Ի՞նչպէս սկարելիէ չափել տարուան
մը մէջ երկրի մը եկած անձրեին քանա-
կութիւնը : — Տանը ամենէն բարձր կողմը
լայնկեկ աման մը գնելու է , որուն ստորին
մասն հաղորդուի խողովակով մը ապա-
կեայ սրուակի մը հետ , որուն մէջ ժողո-
վի վերի ամանին մէջ եղած անձրեն . ամեն
մէկ ժամանակ կը չափուի հաւաքուած ան-
ձրեի չուրին , և այս չափմամբ կը նոյնայ ի-
մացուիլ եկած ջըրոյ քանակութիւնն :

(Ենթադրենք թէ վերի տմանն ըլլայ լսյն մէկ քառակուսի մեղր, և միւսն մէկ տասնորդամեղր, յայտնի է որ երբայս ամանն ամբողջապէս լեցուի գետնի վրայ եկած ջրոյ քանակութիւնն ալ մէկ տասնորդամեղր պիտի ըլլայ, և այս բարձրութիւնն այնչափ պիտի աւելնայ՝ որչափ որ ամանն անձրեւլ աւելի լեցուի :)

1527 Ի՞նչո՞ւ համար աշունն տարւոյն ամենէն անձրեւու եղանակն է : — Որովհետեւ այս եղանակիս մէջ լուծեալ շոգին բռնելու համար՝ ջրոյ ոյժն երթարով կը պակիս բարեխառնութեան զիջմամբք . ասոր համար ամառուան շոգիացմամբ օդոյ մտակարարուած շոգւսյն մեծ մասն կ'ին կ'նայ երկրիս վրայ՝ անձրեկ ձեռվլ :

1528 Ի՞նչ օգուտ կ'ընեն աշնան անձրեւներն : — Կը շուտցընեն ընկած տերեւներուն փոտելը, և գանոնք պարարտութեան կը վերածեն, որով գետինը բարեբեր կ'ընեն :

(Եթր աշնան անձրեւներն շատ յաճախ ըլլան՝ կ'աւրեն պտղոց համը և զանոնք պահէլ կը գժուարացընեն, ինչուան կը փրտեցընեն գետ ջրաղուած : Աշնանային անձրեկ երր շատ առատ ըլլան՝ խալողոց ալ վխասակար ազդեցութիւն մը կ'ընեն :)

1529 Ի՞նչո՞ւ համար ձմեռն ընդհանրապէս աւելի անձրեւու կ'ըլլայ քան գարունը : — Որովհետեւ նուազելով օդոյ բարեխառնութիւնն նոյնպէս ալ իրմէ կը պակասի շատ լուծեալ շոգի բռնելու դիւ-

րութիւնը, և մեացածն հետզհետէ անձրեկ ձեռվլ կ'ինկնայ :

(Գարնան մէջ բարեխառնութիւնն կը սկսի աճել, և ասով ամենեկին հակառակն կը պատճառի, այսինքն օդն ունենալով մեծագոյն ընդունակութիւն՝ առատ լուծեալ շոգոյ քանակութիւն մը կը պարունակէ, և մարտէն մինչև սեպտեմբեր անձրեք առատ չեն ըլլար :)

1530 Ի՞նչ օգուտ կ'ըլլայ գետնին ձմեռը եկած անձրեւներէն : — Անձրեք շատ շուտ կը թրջեն գետինը, և կը լեցընեն աղբիւրները գրեթէ ամբողջ տարուան համար :

(Եթէ չափազանց ըլլան անձրեք պատկանիչ օղովրմունք կը պատճառեն, և խոնաւ գարուն մը բերելով մարդկանց և ուրիշ կ'ենդանեաց վխասակար կ'ըլլան :)

1531 Ի՞նչ օգուտ կ'ընեն գարնան անձրեւներն : — Գարնան առջի կէսին մէջ եկող անձրեւներն, Ա. կ'օգնեն հողոց բրբամանը : — Բ. կը ծլեցընեն սերմանքը : — Գ. Մարգաց աճումը կը յաւելուն . — Դ. Գետինը խոնացըներով անոր շատ չեն ազդեցըներ ամառուան տարութիւնը :

(Եթէ անձրեք շատ առատ գան գարնան երկրորդ մասին մէջ ամենավխասակար կ'ըլլան, որովհետեւ կը լսկեն ցանուած սերմերը, կը պատճառեն վաղահաս կանաչութիւն մը, այնպէս որ ամբողջ բուսական ծուծն կը կորսուի տերեւներուն և

ցողունին մէջ, նիազ և նիհար թողլով պը-
տուղները :

1532 Ինչո՞ւ համար պարտիզանք գար-
նան մէջ կը պահպանեն բոյսերը քանի մը
անձրեներէ, և կը թողուն ուրիշ անձրե-
ներու : — Որովհետեւ անձրեին բարե-
խառնութիւնն սաստիկ կ'ազդէ բուսեղի-
նաց վրայ, պարտիզանք կը զգուշանան
մատաղ բոյսերը պաշտ անձրեներու տակ
թողլու, որք անտարակոյս զանոնք կրնան
փճացրնել :

1533 Անձրեի ջուրն միշտ հաւասար բա-
րեխառնութիւն ունի : — Ոչ. կան տաք
անձրեներ, կան և պաղեր :

1534 Ի՞նչ է պատճառն անձրեին բարե-
խառնութեան տարբերութեանը : — Ողոյ
մէջ տիրող հովուն յատկութիւնն կ'ազդէ
անձրեին բարեխառնութեանը վրայ :

1535 Ի՞նչ հով կը տիրէ օդոյ մէջ՝ երբ
անձրեն տաք ըլլայ : — Հարաւային և ա-
րևմտեան հովերն են որ կը տաքցընեն
ջուրը՝ ընկած ատենը, որովհետեւ այս տաք
և խոնաւ հովերն կը կորուսցընեն մեծ
մասն իրենց ջերմութեան և զայն կը հա-
ղորդեն օդոյ, երբ մաս մը իրենց խոնա-
ւութեան վերածուի հեղուկ վիճակի կամ
անձրեի :

1536 Ո՞ր հովն է որ կը պաղեցընէ ան-
ձրեը : — Հիւսիսային և արևելեան հո-
վերն. որովհետեւ այս հովերն անձրեի
դարձող ամպի մը վրայէն անցնելով հե-

ղուկ վիճակի վերածուող շոգիէն արձա-
կեալ ջերմութիւնը իրենց կը քաշեն, ա-
սոր համար անձրեն շատ պաշտ կը հասնի
երկրիս :

1537 Խոնաւութիւնէ զատ ուրիշ ի՞նչ ար-
գասարեր յանկութիւն կ'ունենայ անձրեի
ջուրն : — Անձրեի ջուրն ստիպուելովանց-
նիլ օդոյ մեծագոյն կամ նուազ քանա-
կութիւնէ մը՝ իրեն ալ շատ կ'օդանայ, ած-
ղային թթուու և աւշակի բորակուտի մա-
սունքներ կը պարունակէ, և այս գոյա-
ցութիւնք ալ շատ օգտակար են հողոց
պտղաբերութեան :

1538 Ի՞նչ կերպով անձրեն կը մաքրէ
մթնոլորտը : — Ա. Գետին կը քաջէ բու-
սեղինաց մասունքը, և մեծ քանակութիւն
մը պղոփ ճճեաց՝ որ կը թափառին մըթն-
ոլորտին մէջ : — Բ. Կը լրածէ օդոյ մէջ
ցրուած վեսակար արտաշնչութիւնները :
— Գ. Ցանկարծակի ցածցընելով օդոյ բա-
րեխառնութիւնը՝ ուսկից որ կ'անցնի, կը
պատճառէ յուղմունք մը, որով կոյտք
մէկմէկու հետ կը խառնուին, և վերի կար-
գաց մաքուր և թեթև օդն կը փոխանակէ
թանձր և ապականեալ օդոյ ստորին կար-
գերը : — Դ. Առատ անձրե մը կը մաքրէ
հողը, և կ'աղատէ անոր մակերեսոյթը աղ-
տեկութեանց կոյտերէն, կը լեցընէ փո-
սերը, և այլն :

1539 Ինչո՞ւ համար անձրեուոտ ատեն
ամսք շատ կը ցածնան, այնպէս որ երբեմն

ինչուան գետին կը դաշին : — Ա. Որով
հետև փամիշտաց պատասն շատ կը մեծ-
նայ և զանոնք կը ծանրացընէ : — Բ. Այս
տարբերութիւնն այնչափ աւելի զգալի
կ'ըլլայ՝ որչափ որ օդն շատ թեթևնայ և
զանոնք չկարենայ դիւրաւ վերցընել :

1540 Ի՞նչ կերպով կիմացուի որ օդն
նուաղ թանձր է՝ երբ անձրեւի փոխուի :
— Ծանրաչափին սնդիկն որ կը բարձրա-
նայ համեմատութեամբ օդոյ թանձրու-
թեանը՝ շատ ալ կը ցածնայ երբ օդն ան-
ձրեւը վրայ ըլլայ :

1541 Ինչու համար նեղ զգեստք դժուա-
րաւ կը հագնուին երբ թաց ըլլան : — Ա. Որովհետև խոնաւութիւնը թափանցելով
հիւսուածոց մէջ անոնց քանակութիւնը
կը մեծցընէ, հետեւաբար կը քաշուին և
քիչ առածքական կ'ըլլան : — Բ. Խոնաւու-
թիւնը զանոնք կը կըպցընէ մորթին հետ :

1542 Ի՞նչ պատճառաւ կանթեզր և
ճրագք աւելի բացագոյն բոցով մը կը վա-
սին երբ անձրև գալու վրայ ըլլայ : — Ա.
րովհետև կիզանուտք շատ թթուածընի
պէտք ունին՝ որպէս զի մնուցանէ կիզու-
մը և զանիկայ փայլուն ու բուռն ընէ .
երբ օդն շատ խոնաւ ըլլայ՝ հաւասար քա-
նակութեամբ քիչ թթուածին և շատ ջրային
չոփի կը պարունակէ, անով բոցէն կ'առ-
նու իր փայլունքը :

1543 Ինչու համար օդն անչանոյ հոտե-
սով կը լեցուի, երբ անձրւն մօտենայ : —

Որովհետև, Ա. Օդն շատ կը թեթևնայ ,
հետևաբար լուալեաց, փոսերու, և այլն,
հեղուկներն կը կրեն նուաղ ճնշում մը, և
թռչական մասերն մեծաւ քանակութեամբ
իրենցմէ կ'ելլեն : — Բ. Օդոյ խոնաւու-
թիւնն կը լուծէ թռչական կազերը, և գար
շահոտ հեկէք թրջուելով և ծանրանալով
երկրիս մօտ կը մնան, և մեր հոտառական
ջլոց կը նեղեն :

(Ծուխն ալ շատ չի բարձրանար օդոյ
մէջ երբ սակիայ շատ խոնաւութեանը հա-
մար քիչ կը է, և ծուխն հիւէններն որ
աւելի մեծ և հաստատուն են գետին կ'իջ-
նան իրենց մեծագոյն ծանրութեան պատ-
ճառաւ :)

1544 Ինչու համար ծաղկանց հոտն ա-
մենասուր և թափանցող կ'ըլլայ՝ երբ ան-
ձրեն մօտենայ : — Ա. Որովհետև օդոյ
խոնաւութիւնն կը լուծէ ծաղկանց հոտա-
ւէտ հիւէնները, և կը տարածէ մինողոր-
տին ստորին կարգերուն մէջ : — Բ. Խո-
նաւութիւնն թափանցելով ծաղկանց թե-
լերուն մէջ զանոնք կ'ընդլայնէ, թերթից
պատի ծակալիքն ալ կը լայնան, և իրենցմէ
ծաղկանց էական իւղերն աւելի շուտ կը
փախչին :

1545 Ի՞նչ պատճառաւ անձրւուն մօ-
տենարու ատեն ձիերն և քանի մը ուրիշ
կինդանիներ վիզերնին կ'երկընցընեն, և
քթերնէն օդ կը փշէն : — Ա. Որովհե-
տև այս կինդանիք կը հաճին չնչել ծաղ-

կանց, բոււսոց և չոր խոտին հոռալ. — Բ. 07ն շատ թեթե ըլլալով և թթուածինէ զուրկի շիքաւեր անոնց շնչառութեանը պիտոյիցը. իրենք ալ այս կերպով կը կենան՝ որ կարեի եղածին չափ մեծ քանակութեամբ օդ չնչեն :

1546 ինչո՞ւ համար երբ անձրև գալու վրայ ըլլայ, ծիծառնուկի գետնին շատ մօտ կը թռչին: — Որովհետեւ ճճիք՝ որ ծիծառնց ախորդելի ուտելիքն են՝ գետնին աւելի մօտ կիջնան՝ թողլով օդոյ ցուրտ կողմերը:

(Նաև շատ բարձր թռչող ծիծառնը նըշան կու տան անձրեի, երբ օդոյ բարձր կողմերը ճանճերու ետեւն կինկնան, ուրանի ուժով ըլլալով՝ բարձրերը կը թռչին, լաւագոյն մթնոլորտի վիճակ մը գտնելու համար:)

1547 ինչո՞ւ համար գարնան մէջ երբ օդն սկսի աւրուիլ, անձեղը զոյգ զոյց չեն թռչիր: — Որովհետեւ երբ օդն ցուրտ և անձրեւոտ ըլլայ՝ մէկ անձեղն միայն բոյնը կը թռջու և կերպակուր բնոտելու կ'երթայ, մինչեւ միւսն կը կենայ հաւեկիթները կամ ձագերը ծածիելու համար. իսկ երբ գեղցիկ ըլլայ օդն այս կենդանիներն ըլլախնալով որ իրենց հաւեկիթներն կամ ձագուկներն վաստին ցրտութենէն՝ միատեղ գուրս կ'ելլին:

1548 ինչո՞ւ համար ջրհաւաք ծովլուն մակերեւութին շատ մօտ կը թռչին՝ երբ գեղցիկ օդ ընէ: — Որովհետեւ թռչունք ըլլ-

րոց մակերեւութին մօտ կեցող պղտի ձըկներով կ'ապրին՝ երբ օդն պառզ ըլլայ:

1549 ի՞նչ նշան կու տան ջրհաւաք երրցամաք ելլին և եղերքը ժողովին: — Անձրեւի նշան կու տան. որովհետեւ այն ատեն ձկներն ջըրին խորերը կիջնան, և ջրհաւաք կըստիպուին գետնին վրայ գտուած որդերը և ճճիները ուտելու:

1550 ինչո՞ւ համար հեռուէն լսուած որոշ ձայներն կը նշանակին օդոյ մէջ մօտ փոփխութիւն մը: — Որովհետեւ այս բանս կը ցուցընէ որ օդն շատ թանձր և հանդարտ է, և չի կըրնար երկայն ատեն նոյն վիճակին մէջ մնալ:

1551 ինչո՞ւ համար անձրեւի նշան է երբ կրակի վրայ գրուած խոհանոցի ամաններուն չորս կողմի ձանձախարիթն վառի: — Որովհետեւ ձանձախարիթն օդոյ մէջ ցրուեալ խոնաւութիւնն պատճառաւ կ'ուռի, կ'ընդլայնի և կ'ընդայէ բցցին շատ մը գուրս ցցեալ կ'էտեր, որբ գիւրաւ կը վառին կրակին հետ ջշափուելով:

1552 ի՞նչ կ'իմացուի արեան, ծըծումը, մանանայի, և այլն, անձրե ըլլելով: — Այսպիսի անուամբք կը կոչըրին այն անձրեւներն որ ասոնց գոյներով կու գան:

1553 ինչէն կ'ըլլայ կարմիր անձրեւն: — Այս երեսոյթս կըրնայ պատճառիլ, Ա. Պղտի կարմիր ճճեաց մեծ քանակութենէ մը: — Բ. Հովհն բարձրացած և մթնուրախն մէջ ցրուած հանգային կարմիր

փոյիներէ . — Գ . Քանի մը տեսակ բոյսերէ , որոնք օդոյ մէջ գտուած ըլլալով անձրեւն երկրիս մակերևոյթը կը քաշուին :

1554 Ի՞նչ է ծըծումքի անձրեւաց պատճառն : — Քանի մը ծաղկեալ բուսոց գեղին փոյին , որ հովին օդոյ մէջ ցրուելով գետին կինկնայ անձրեւն հետ : Առնեաց , եղենեաց , և ամեն ռետինոտ բուսոց ծաղկանց այս առատ փոշին երբեմն կը տարուի շատ հեռու . երբեմն ալ ընդհակառակն կինկնայ ջըրոց վրայ՝ որ այս ծառոց անտառներէն քիչ հեռու ըլլան , և կը կարծուի թէ ծըծումք կ'անձրեւէ :

1555 Ինչո՞ւ համար երբեմն անձրեւի հետ խառն խիճեր , աւազ , կասիայի և եղջիւրենուայ կուտեր , և այլն , կու գան : — Այս գոյացութինքս բարձրերը կելլեն օդային թաթառներէ , և հեռու անդեր կը քշուին հովերուն ուժովը , և սովորաբար գետին կինկնան իրենց յատուկ ուժին պատճառաւ , երբ հակառակ հով մը նուազեցընէ դանոնք քշովին ուժը :

§ . Դ . — Զիշն :

1556 Ի՞նչ ձեան պատճառն : — Ջիւնն կը ձևանայ ամոզոց փամիշըշտային շողիներուն հանդարս բիւրեղացմամբը :

1557 Ինչո՞ւ համար ձիւնն պատճառ պատառ կու գայ : — Որովհետեւ շոգւոյ զա-

նազան հիւլէներ մէկզմէկ կը բռնեն և շատ կակուց պատառներու կամ ծովերու ձևով կը գիգուին . իւրաքանչիւր սառած փամշըշտային շողին իրեն մէջ կը պահէ զինքը վեր բռնելու ծառայող օդը :

1558 Ինչո՞ւ համար ձիւնն միայն ձմեռ ատեն կու գայ : — Որովհետեւ այս ատեն արեւոն ճառագայթներն երկրիս մակերեւութին առ' իշեղ կը զարնեն , որ պաղ մնալով զինքը ըրջապատող օդը մի տաքցըներ :

1559 Ինչո՞ւ համար ամառը նաև դաշտաց մէջ ձիւն չի գար : — Որովհետեւ եթէ ամենաբարձր ամսպի մը ցրտութիւնն՝ ձիւն պատճառելու չափ կարենար ալ ըլլալ , օդոյ ստորին կարգերէն անցած ատեն՝ եթէ ասոնք հաւասարապէս տաք ըլլան՝ կը հեղուկնայ և անձրեւի կը փոխուի . իսկ եթէ հանդիպի իրարմէտ տարբեր շատ զգալի բարեխառնութեանց՝ աւելի կը սառի , և կարկուտ կը դառնայ :

1560 Ինչո՞ւ համար բարձր լերանց կատարը ձիւն կու գայ՝ թէպէտեւ տակի դաշտերն տաք ըլլան : — Որովհետեւ ձիւնն այն ատեն երկրիս մակերեւութին վրայ կու գայ՝ երբ անցած օդոյ կարգերուն բարեխառնութիւնն զրոյէն վար ըլլայ . արգբարձր լերանց վրայ՝ նաև ամառ ատեն մթնոլորտն այս պայմանս կ'ունենայ :

1561 Ի՞նչ կ'իմացուի մշտնջնենաւոր ձեանց սահման ըսելով : — Կ'իմացուի հաստատուն բարձրութիւն մը՝ ինչուան ուր ամառ-

նոյին ջերմութիւնն կարենայ գետնէն ճառագայթելով հալեցընել ձիւները, և անզեց անդին ձիւնք անհաւ մնան :

1562 Մշտնչենաւոր ձեանց սահմանն երկրագունտիս մակերեւութին ամեն կողմի ալ հաւասար է : — Ոչ. Երանց վրայի ձիւները հալեցընելու համար ջերմութեան զօրութիւնն կը կախուի լերանց աշխարհագրական լայնութեան սատիրանէն, ամառաւան երկայնութենէն, լերանց գոտեաց շարունակութենէն, և հովերուն ուղղութիւնն է :

1563 Ի՞նչ է ձեան ծոպերուն ձեւն : — Ասոնց ձեւն կը փոփոխի ըստ արագութեան որով կը միանան բարձր կողմերը. սովորաբար առած ձեւերն աստղաձեւ և ութակողմ բիւրեղներ են :

(Վոլորաբար ծոպք վեց ճառագոյթով ասազի ձեւ կառնուեն, զարմանալի կանոնաւորութեամբ : Երբ ցուրտն սաստիկ ըլլայ՝ ձիւնն բարակ փոշիի պէս ալ կու գայ.)

1564 Ինչո՞ւ համար ձիւնն երբեմն ամենապատի կտորներով կու գայ, երբեմն ալ մեծ ու լայն : — Օդոյ բարեխառնութիւնն մեծ ազգեցութիւն ունի այս բանն մէջ. Երբ օդն ամենացուրտ ըլլայ՝ ձիւնն շատ պղտիկ կ'իջնայ, հակասակն կ'ըլլայ՝ երբ օդոյն բարեխառնութիւնն բարձր աստիճանի ըլլայ :

1565 Ինչո՞ւ համար մանր կ'ըլլայ ձիւնն երբ օդն շատ ցուրտ ըլլայ : — Որովհետեւ

շոգւոյ փամփըտաց սառումն այնպէս չուտ կ'ըլլայ՝ որ իրենց ձգողութեան ոյժն ժամանակ չընենար անոնց վրայ ազգելու իր մասնական ազգեցութիւնը. ամպէն զատուած ձիւննալ հովերուն խաղալիկ եղած երբեմն շատ հեռու կը քըուի :

1566 Ինչո՞ւ համար ձեան ծոպերն մեծ կ'ըլլան երբ օդն աւելի տաք ըլլայ : — Ա. Որովհետեւ ձեան ձեւնալն աւելի գանդաղ կ'ըլլայ . — Բ. Ձիւնն օդոյ միջնէն անցնելով՝ կը խտացընէ մթնոլորտին մէջ ցրուած ալ խոնաւութիւնը, և քանի որ ամպէրէն իջնայ՝ կը մեծնայ :

1567 Ինչո՞ւ համար սովորաբար կ'ըսուի որ հոսն կ'ուտէ ձիւնը՝ ինկնալէն վերջը : — Որովհետեւ ընկած ձեան տակ մը՝ իր բիւրեղներովը կը ներկայացընէ անհօւն քանակութիւն մը կէտերու, որոնց վրայ գալով ցուրտ և չոր հովմը՝ կը պատճառէ՝ ամենաբար չոգիացում մը, և ձիւնն քիչ ատենէն կը չնջուի գետնէն, առանց ուրիշ տեղ մը կը գոլուելու :

1568 Ինչո՞ւ համար ձիւնն ձերմակ է : — Որովհետեւ կը ձեանայ շատ մը հատուածակողման ձեռով պղտի բիւրեղներով, որոնք կ'անդրագարձընեն իրենց վրայ զարնող բոլոր լուսաւոր ճառագայթները :

(Եթե ամեն ճառագայթներն ալ որ լուսաւոր փանճ մը կը կազմեն անդրագարձ ցոլանան, անդրագարձուցիչ առարկայն ճերմակ կ'ըլլայ. եթէ քանի մը ճառագայթ-

ներ միայն անդրադարձ ցոլանան և մէկալ ներն ընկղմին՝ այն ատեն առարկայն գուշակը կ'ըլլայ :

1569 ինչու համար ծիւնն մէկէն կը հալի՛ երբ սկսի աղստափի և կամ վրան հող նետուի : — Որովհետեւ մե և մութ դպյացութիւնք կը ծըծնն մաս մը արեւուն ջերմութենէն, փոխանակ անդրադարձընելու զայն, ինչպէս որ կ'ընէ ամենաճիրակ ծիւնն . ասոր համոր այս տարածեռ մարմինը տաքնալով և շշափուելով կը հաղորդեն իրենց ջերմութիւնը ձեան, որ շատ դիւրաւ կը հալի :

1570 ի՞նչ բանի կ'օգտէ ծիւնն : — Ա. Կ'օգտէ տաք բռնելու գետինը և արգասաւորելու ձեւու ատեն : — Բ. Տաք երկիրներու մէջ կը բարեխառնէ ամառուան տապագին ջերմութիւնը, պաղեցընելով հովերը՝ որք սառնապատ ջերանց դադաթներէն կ'անցնին : — Գ. Բարձր տեղեր իջնալով և շարունակ կամաց կամաց հուելովք կը յորդորէ առուակները, որոնք ապականիչ հեղեղներ կը դառնային՝ եթէ ծիւնէն մատակարարուած ջըրոյ քանակութիւնն շուտ մը անձեւի ձեռով դարի իրենց :

1571 ի՞նչ կերպով ծիւնն կը ընայ տաք բռնել գետինը : — Զեան հաղորդողութիւնն ամենատկար ըլլալով իրեն տակ ծածկուած հողուն բարեխառնութիւնն աղ ամենակին զրոյէն վար չիջնար . մինչդեռ

ձեան վրայ պատող օդոյ բարեխառնութիւնն շատ աւելի ցած կ'ըլլայ :

1572 ինչու համար երբ ուզովի արթընցընել ցուրտէն սպած անձ մը՝ պէտք է մարմինը ձիւնով չիել : — Որովհետեւ սառումն երբեք զրոյի աստիճանի չըլլար, հապա շատ աւելի անկէ ցած, ուստի ձիւնն հայելով (որ միշտ վըրոյ աստիճանի կ'ըլլայ), բաղդատութեալք աւելի տաք կուդայ արտաքին օդէն :

1573 ինչու համար 'ի Գաղղիա հարաւային արեւելեան հովի շատ ցուրտ կ'ըլլայ, մինչդեռ նոյն հովի բարեխառն կու գայ իտալիոյ : — Որովհետեւ այն հովի իտալիա կը հասնի առանց լերանց բարձր գօտիներէն անցնելու, ասոր համար կ'ունենայ չափաւոր բարեխառնութիւնն մը, իսկ իտալիայէն Գաղղիա երթալու համար՝ պէտք է անցնի Ալպեանց բարձր կատարներէն՝ որոնք մշտնջնաւոր ծիւներով ծածկուած ըլլալով շատ կը պաղեցընեն զայն :

1574 ինչու համար ծիւնն ամենագէշ հաղորդիչ է ջերմութեան : — Նախ, որովհետեւ ձեան բիւրեղներն կը պարունակեն իրենց մէջ օդոյ մեծ քանակութիւնն մը՝ որ գէշ հաղորդիչ է երկրորդ որ կակուղենն, և հիւլիներն ալ մէկմէկէ շատ հեռու, որչափ որ մարմին մը քիչ հոծ ըլլայ և իր կոյտն ալ քիչ համատարր՝ այնշափ աւելի տկար կ'ըլլայ իր ջերմութեան հաղորդիչ զօրութիւնն :

4575 Ի՞նչ կերպով ձիւնն օգտակար կ'ըլ-
լայ բուսոց : — Ա . Որովհետեւ կը պաշտ-
ոպանէ տունկերը և մասնաւորապէս մա-
տադ բայսերը , և կը կենդրուացընէ իրենց
բոլորակիք բռասային կենսական ֆրմաւ-
թիւնը : — Բ . Չի թողար որ հոգն շատ չոր-
նայ , գետանին շոգիացումը գժուարացընե-
լով : — Գ . Կը ջնջէ ճճիները որոնք կ'ա-
պականնեն սերմերը , թոշնոց ալ չի թողուր
որ զանոնք ուտեն :

4576 Ի՞նչ պատճառաւ է որ երբեմն
ձիւնն վարդակարմիր դոյն կ'առնու : —
Նոյն գյուցութիւնքն որ կարմիր կը ներ-
կին անձըւել նոյնապէս և կը գունաւորեն նաև
ձիւնը . այս տարբերութեամբ միայն՝ որ
ձեեան ճերմակ դոյնն կը լուծէ զինքը գու-
նաւորով գյուցութեանց կարմիր դոյնը ,
և անկէ առաջ կու գայ գեղեցիկ վարդի
դոյն մը :

4577 Ինչու համար սովորութիւն է տակն-
ուվայ ընել հողը՝ երբ ձիւնով ծածկուած
ըլլայ : — Զեան ջուրն ամենազուտ ջուր
ըլլալով՝ իր հեղուկ մասնաւոր աղդեցու-
թիւն մը չըներ գեանին լաւութեանը , բայց
շատ աղէկ է հողերու . մէկ մը , որսվէտեւ
հողու հետ խառնուած ձիւնն հալելով՝
պարապ տեղեր կը թողըւ , որոնց մէջ բու-
սոց արմատք դիւրաւ կը մասնեն և իրենց
ցողունին աւելի ծուծ կը մասակարարեն .
մէկ մ'ալ որ օդն մտնելով այս պարապնե-
րոն մէջ կը լուծուի և շատ կ'օդնէ բուսոց
ձեղուն :

(Ձեան կոյտ մը հալելով՝ գրեթէ իրեն
զանգուածին տասներորդ մասին չափ ջուր
կու տայ : Ձիւնն շատ աղէկ կը ընայ պա-
հութիւն սառնարաններու մէջ ամերով ամա-
ռու , երբ ձմեռն շատ ձիւնու ըլլայ , և ջը-
րոց մակերևութիւն սառումն ալ շատ քիչ :)

§ . Ե . — Կարկուտ :

4578 Ի՞նչ է կարկուտն : — Կարկուտն է
խտացեալ և հաստատուն գարձեալ ջուր՝
որ կ'ինկնայ երկրիս վրայ քիչ կամ շատ
մեծաբանակ :

4579 Ի՞նչ կ'իմացուի կարկրի ըսելով .
— Կ'իմացուի ձիւն մը որ սովորաբար շատ
մը խիս ընդ խիս կոնոններու ձև ունի ,
երեսն ալ աղիւրթաթաւ կ'երևայ . խտալա-
ցիր կորսիկայի ձիւն կ'ըսեն ասոր :

4580 Ի՞նչ է կարկուտն պատճառն : —
Կարկուտն կը պատճառի ձեան ծովերուն
արար սառումէն :

4581 Ի՞նչ կերպով կ'ըլլայ այս երևոյթս :
— Եոդիներով ծանրացեալ ամպերն ձիւնի
կը փոխուին , իրենց վրայէն անցած օդոյ
ցուրտ վաղուկի մը աղցեցութեամբ . այս
ձիւնն հանդիպելով դաղջ օդոյ տափի մը՝
կը սկսի հեղուէկանալ և աւելի կը մեծ-
նայ , որովհետեւ զանազան ծովք մէկմէ-
կու հետ կը միանան . և եթէ հանդիպին
ցուրտ օդոյ նոր վաղուկի մը՝ նորէն կը

խտանան . միայն թէ այս երկրորդ սառումն շատ աւելի արագ կըլլայ , որովհետեւ առջի անգամուան նման չէ զոքացեալ շոգւոյ փամիկուտներուն վրայ չի ձեւանար , հասպա ջրոյ պղտի կոյտի մը վրայ՝ կէս մը սառած և մասսամբ մ'ալ հալած , այսպէս որ ամենն միատեղ շատ պինդ կըլլայ :

1582 ինչո՞ւ համար ձեան երկրորդ սառումն աւելի արագ կըլլայ : — Որովհեան ասիկայ կըլլայ բարեխառնութեան շատ աւելի մեծ զիջմանը մը քան զայն որով ձիւնն առաջուց ձեւացած է :

1583 ի՞նչ կերպով կըրնայ փորձուիլ որ ձիւնն կէս մը հեղուկ վիճակին անցնելով , երկրորդ անգամ հաստատուն վիճակի դառնայուն բարեխառնութեան աւելի մեծ զիջում մը կը կրէ քան առջի ձեւալուն ատեն : — Որովհեան առջի առթին մէջ ամպին շոգին անցնելով օդաձեւ վիճակին հաստատուն վիճակի , կը կորուացնէ իր ծածկեալ ջերմութիւնը , որ կը ցրուի ամպերը պատող օդոյ մէջ , և այս կերպով ձեան սառումն կըլլայ կանոնաւոր և կամաց : Երկրորդ առթին մէջ , այսինքն երբ ցուրտ վազուի մը հանդիպի ձեան որ հեղուկանալու վրայ ըլլայ , իր բարեխառնութիւնն զրոյի կիսած կըլլայ , ծածկեալ ջերմութիւնն ալ որ կ'արձըկուի նուազ կըլլայ . սառոր համար սառումն շուր կըլլայ , և նոր սառած կոյտին բարեխառնութիւնն ալ այս

անգամ կըրնայ զրոյէն շատ աստիճան վար իջնել :

1584 ինչո՞ւ համար կարկուտն գրեթէ կըր ձեւ ունի : — Որովհեան օդոյ կարգերէն անցնելու ատեն միջնորդուային խոնաւութիւնն անոր չորս կողմը կը սառի , և անոր այս ձեւը կու տայ՝ որ միշտ առաջ կու գայ երբ հիւլիներն կարենան աղատաբար մէկ կենդրոնի մը չորս կողմը շարուիլ :

(Երբ կարկուտն ուշանայ բարձրութեան մէջ , կամ իջնալուն ատեն , շատ կը մեծ նայ միջնորդաին խոնաւութենէն , սակայն ձիւնն սառելով կը պահէ իր անկիւնաւոր ձեւը . եթէ իրեն չորս կողմը սառած խոնաւութեան կարգերն՝ չափաւոր թանձր չըլլան , առաջ եկած կարկըսի հատն կունենայ դուրս ցցուած կէտեր , որոնք անոր կորութիւնը կը կորուացընեն :)

1585 ինչո՞ւ համար կարկուտն ամառ ատեն միայն կու գայ : — Որովհեան ամառուան փոթորկի մը ատեն օդոյ մէջի վազուկներն՝ զգալապէս տարբեր բարեխառնութեան աստիճան մը կ'ունենան , և զանազան տակի կամ կարգ կըլլան , որը հարկաւոր են կարկուտին ձեւացման . այսպէսով տաք օդոյ կարգի մը տակ (որ այսպէս կըլլայ ամպի , մը խտացող շոյեաց ծածկեալ ջերմութեան պատճառաւ) , կըրնայ գտուիլ հիւսիսային կիմմաներէն հասած ամենացուրտ օդոյ վազուկ մը , որ կը

փոխանակէ տմառուան ջերմութեամբ հեռացողը երկրիս մակերևութէն :

1386 Ինչո՞ւ համար ձմեռ ատեն կարկուտ չի գար : — Ա . Որովհետեւ ձմեռը օդոյ վազուկներն շատ փափոխական չեն ըլլար , այս բանս պատճառող առթիներն նուազ ըլլարով : — Բ . ձմեռ ատեն օդոյ վազուկաց բարեխառնութիւնն գրեթէ միշտ աւելի բարձր է քան ամպերունը՝ որոնց վրայէն կանցնին , որովհետեւ սովորաբար շատ տաք երկիրներէ կու գան . և եթէ օդոյ վազուկներն աւելի ցուրտ ըլլան՝ ի հարկէ աւելի չոր ալ կըլլան , և ամպերը կը ցրուեն երկլուքէն . կամ եթէ ձեան ըիւրեղներ ձեացած են՝ անոնց մէջ այնպիսի բուռն շողիացում մը կը պատճառեն՝ որ վերենք կը ցնդէ :

(Ա) մարց ցուրտ օդոյ վազուկներն խիստ քիչ կը տենն , ջանալով հաւասարակըուելու ջերմութեանը ամբողջ կոյտին , ուստի կըրնան ձիւնը աստեցընել առանց մասնաւոր շողիացման : Ասկէ զատ , ձեան բուռն սառումն որ ամառը կըլլայ , կը վառէ զինքը կազմով սառած փամփշասային շողիներուն մէջ տեղը փակուած օդոյ մէկ մասը , և առաջ եկած աւելի ծանր կոյտան՝ մեծաւ երագութեամբ երկրիս մակերեւութին վրայ կինայ , և մէկն կը քոչու զինքը սառուցընող օդոյ վազուկէն :)

1387 Ինչո՞ւ համար սառած եւ կարկուտ դարձած ձիւնն չի հալիր օդոյ ստորին տաք

կարգերն անցնելու ատեն : — Որովհետեւ հազիւթէ ձեանայ՝ իր բարեխառնութիւնն զրոյէն աւելի ցած ըլլարով , ծըծած ջերմութիւնն կը կորսուի , հալելու ժամանակ չի մնալով :

1388 Ինչո՞ւ համար երբեմն կարկուտն անձրեւի հետ խառն կու գայ : — Այս բանս կըլլայ , Ա . Որովհետեւ կարկուտն շատ ընդդիմութիւն չի գտներ օդոյ բարձր կարգերուն մէջ , և ամենամանը մնալով՝ երբ հասնի ստորին տաք կարգերուն մէջ՝ և ամպերէն մէկն անձրեւի կը վերածուի : — Բ . Երկու ամպը՝ մէկն բարձր և միւսն ցած՝ կըրնան նոյն ատեն մէկն անձրեւի և մէկալուն ալ կարկուտի վերածուիլ . և այս կերպով անձրեւ և կարկուտ միատեղ երկրիս վրայ կը հասնին :

1389 Ինչ են կարկուտարգելլք : — Կարկուտարգելք փայտէ երկոյն ձողեր են ծայրերնին յարդի խուրձերով , արտերու մէջ՝ զանոնիք կարկուտէն պաշտպանելու համար :

(Ա) յ հնարողք կարծեր են թէ կարկուտն ելեկարութենէ կը պատճառի . սակայն վորձն ցըցուց որ կարկըստարգելք կամ բոլորովին անօդուա են , կամ խիստ քիչ օդապակար :)

1390 Ինչո՞ւ համար կարկուտին ինկնաւուն ատեն փայտակներ կամ մեծ որոսմունքներ ալ կըլլան : — Որովհետեւ կարկուտին ձեանալոն՝ օդոյ ցուրտ եւ տաք հա-

կառակ վաղուկներէն կըլլայ , առաստ շո-
գիացման մը պատճառաւ և ներմութեան
արձակմամբ և ծրծմամբը . բոլոր այս պատ-
ճառներս ալ մթնոլորտը անկանոն ելեկ-
տրական վիճակի մը մէջ կը դնեն . և որ-
պէս զի հասասրակշռութիւնն բոլորովին
հաստատուի , պէտք է որ ելեկտրականու-
թիւնն մէկ կէտէն միւսին երթայ , և ասոր
համար մեղի կը յայտնուի փայլակներու
տեսքով . որոտմունքներն ալ մեծածայն
կըլլան որովհեան մըրքիալից ամպերն սո-
վորաբար երկրէս քիչ հեռաւորութեամբ
գտնուելով , միանդամայն և ըլլալով կեն-
դրոն՝ առ որ կ'ուղղուի և ուսկից կ'ելէ ե-
լեկտրականութիւնն , գրեթէ մենք մէկէն
կը զգանք օդոյ մէջ պատճառեալ շառա-
շինք :

1591 ինչո՞ւ համար սովորաբար աւելի
փոխորիկ կըլլայ մշակեալ ընդարձակ գաշ-
տաց մէջ՝ քան թէ քաղաքաց վրայ և ան-
տառաց մէջ : — Ա . Որովհետեւ քաղաքք
իրենց բարձր չէնքերովը և անտառք ալ ի-
րենց ծառերուն ծայրերովը կը քաշեն կա-
մաց կամաց ամպերուն ելեկտրութիւնը ,
և կը պակսեցնեն անհաւասարակշռու-
թեան պայման մը մթնոլորտին բարեխառ-
նութեանը մէջ : — Բ . Քաղաքներն և ան-
տառներն ամբողջ օրը արեէն տաքնալով
կը սկսին ճառագայթել իրենց ջերմութիւ-
նը դէպ ի ամպերը , հազիր թէ արեգակ-
նային ճառագայթք ընդմիջուին նոյն ամ-

պերէն , և այս կերպով կը ցրջապատուին
տաք մթնոլորտով մը , որուն միջէն կար-
կուտն անցնելով երթէ չմեծնայ՝ ինկնալու
ատենը կը հալի :

(Փոթորկին հասնելէն առաջ օդոյ նեղիչ
հանդարտութիւն մը կը տիրէ երկրին մօտ ,
հազիւ թեթև հովիկ մը կը փչէ և բարե-
խառնութիւնն քանի մը աստիճան կ'իջնայ .
այս բանս առաջ կու գայ ամպերուն և
գետնին մէջ տեղի ջերմութեան փոխա-
դարձ ճառագայթմանէն :)

1592 ինչո՞ւ համար կարկուտն քիչ կը
տեէ : — Որովհետեւ ամսուուան ցուրտ
վազուկներն որ պատճառ են կարկրութիւն
ամենակարճ տարածութիւն մը կ'ունենան :
Բարեխառնութեան անհաւասարութիւնն
ալ քիչ ատեն կը տեէ , որովհետեւ ջերմու-
թիւնն կը ջնայ հաւասրակշիռ ըլլալու
ամբողջ կյուտերուն վրայ , և նոյն իսկ կար-
կուտին ձևանալէն ցնցուած օդոյ խառ-
նութիւն զանիկայ գագրեցընելու գլխաւոր
առիթն է :

(Կարկուտն օգտակար չըսուիր , սակայն
թէ և մշակաց շահերուն վեստ է բայց և կը
մարքէ օդը , կը սպաննէ բազմութիւն
ճճեց՝ որոնք կ'ապականեն մթնոլորտը . և
բարեխառնութեան յոնկարծակի զիջումն
ալ զոր կը պատճառէ՝ կը ջնջէ գետնին ճը-
ճինելը .)

ԳԼ. Գ. ՍԱՐԻՆ:

1593 Ի՞նչ է սառն: — Պաղած կամ թէ՝
իրեն ջերմութեանը մասնական զրկմամբ
(324) հաստատուն դարձած ջուր է: Երբ
ջուրն սովորական ճնշման տակ զրոյ բա-
րեխառնութեան դտուրի հեղուկ վիճակէ
հաստատուն վիճակի կ'անցնի:

1594 Ի՞նչ արգասիք կը պատճառէ ջըրին
վրայ՝ իր ջերմութեան մասնական զրկումն:
— Ջուրն՝ ուսկից ջերմութիւնն՝ կ'ելլէ՝ կը
խստանայ, այսինքն միշտ երթալով քանա-
կութեամբ կը նուազի, ինչուան որ չօրս
աստիճանի հասնի. այս կէտէ անդին ին-
չուան սառնան կէտը՝ կ'ընդլայնի:

(Չորս աստիճանին դրոյի ի՞նչալով, ջուրն՝
քանակութեամբ զրեթէ տասնորդի մը չափ
կը չափանայ. և այս կերպով մասնաւոր բաց-
առութիւն մը կըլլայ կաննի, ըստ որում
մարմինք իրենց ամենէն մեծ խառնութիւնն՝
հաստատուն վիճակի սանցնելու ատեննին
կը ստանան: Վահայն այս կանոնիս շատ
բացառութիւնք կ'ըլլան, որովհետեւ երբ
մարմին մը շարունակ շարժմամբ հաս-
տատուն դասնայ սովորաբար քանակու-
թեամբ կը մեծնայ:)

1595 Ի՞նչ է ցուրտն: — Ջերմութեան
զրկումն առաջ եկած զգացումն ցուրտ

կ'ըսուիք բայց ցըրտի գաղափարն չի կըր-
նար բացարձակ ըլլալ, որովհետեւ չկայ
մարմին մը ուսկից ջերմութեան նոր մաս
մը չկրնայ ելլալ:

1596 Ջուրն ջընդլայնիր երբ կրակին ազ-
գեցութեանը դրուիք: — Ոյս, ակսելով
կօ էն ինչուան եռացման կէտը՝ որ 100°ի
կը հասնի, ջուրն 76 հարիւրորդամեկը
ճնշման տակ՝ երթալով համեմատաբար
կ'ընդլայնիք:

(Ոյս երկու վերջին կէտերն հաստատ
կը ման, ամեններն չեն փոխուիր ոչ մէկն
նուազմամբ և ոչ միւսն աճմամբ բարե-
խառնութեան: Երբ ջուրն եռացման կէ-
տին հասնի և շուրջոյ վերածուիք, իր օգա-
կերպ վիճակի զանգուածն հազար եօթն
հարիւր անգամ աւելի մեծ կըլլայ՝ ջըրին
բարեխառնութիւնն կօ ի եղած ատենէն:)

1597 Ի՞նչ պատճառաւ սառն ջրի վրայ
կը ծրագիս: — Որովհետեւ ջուրն հաստա-
տուն վիճակի մէջ հեղուկ վիճակէն աւելի
թեթև կ'ըլլայ:

1598 Ի՞նչ կերպով հաստատուն ջուրն
կըրնայ հեղուկ ջըրէն աւելի թիթե ըլլալ:
— Որովհետեւ խսութեամբ նուազելով
քանակութեամբ կը մեծնայ. արդ սառի
կոյտէ մը փոխագրեալ ջըրոյ քանակու-
թիւնն նոյն սառի կոյտէն աւելի կը կըտէ.
և երբ մարմինք իրենց կոյտի ծանրութե-
նէն աւելի ջըրոյ զանգուած մը կը տեղա-
փոխեն, հեղուկին երեսը կը կենան:

(Ասոր համար է որ գէր անձինք ջըրին մէջնիշարներէն շատ աւելի զիւրութեամբ կը լրջան, որովհետեւ իրենց մարմնովը ջրէն մեծ քանակութիւն մը կը տեղափոխեն, վասն զի գիրութիւն կազմող նիթիք քիչ թանձր է:)

1399 Ինչո՞ւ համար ջուրն սառելով քանակութեամբ կը մեծնայ: — Որովհետեւ այս հեղուկիս հիւլէներն համեմատական դիրք մը կ'առնուն, այսինքն կը բերեղանան, հեղուկ զիհակի եղած ատենէն շատ աւելի մէկմէկէ կը հեռանան:

1400 Ինչո՞ւ համար բռած ամաներն ձմեռ ատեն կը ճաթըստին և շատ անդամ կը կոտրտին: — Որովհետեւ իրենց մէջի ջուրն ընդլայնելով ամանին ներքին կողմանցը մէջ մղում մը կ'ազդէ, բռուն կամ վեռնին կը ճեղքուի, և ջուրն ճեղքերուն միջէն կը մտնէ, կը ծըլքի հողուն ծակոտիքնութենէն, որուն ծակերուն մէջ կը սառի ամեն կողմերէն ճնշուելով և երբեմն բոլոր արտաքրին մակերևոյթն ճաթըստեցնելով. մինչեւ շատ անդամ ալ այս ճնշումն ինչուան ամանը կը կոտրէ:

1401 Ինչո՞ւ համար ձմեռը երբ սառի, շատ անդամ ջուր պարունակող հողէ սափորներն կը կոտրին: — Որովհետեւ ջուրն կը հեռացընէ մէկմէկէ սափորը կազմող մասերը, և հետեւարար անիկայ ալ կը կոտրի:

1402 Բայց ինչո՞ւ համար երբ սառի կը

կոտրի նաև ջուր պարունակող ապակեաց չի մը, թէպէտեւ ջուրն անոր ծակերուն մէջը շիթափանցեր: — Որովհետեւ սովորաբար շիշերուն տակը լայն վերը նեղ կ'ըլլայ, ուստի երբ ջուրն վերի երեսին հաստատուն դառնայ՝ հաստատ կարգն ըշկարենալով ելլել (ամանին ձերին պատճառաւ), կերպով մը խուփի նման կը ճնէք գեռ հեղուկ մնացած մասը, և աւելի զիւրութեամբ շին կողմանցը վրայ կը կոտրի:

1403 Ինչո՞ւ համար քարերն, չէնքերուն կղմին արներն, և ամենէն կարծր ժայռերն ալ ձմեռուան սառերուն ատեն կը ճաթըստին: — Որովհետեւ ջուրն հեղուկ միջաղած ատեն կը թափանցէ այս մարմնոց ծակերուն մէջ, բարեխառնութեան զիթմարի անոնց մէջ կը սառի, և կը սահնաց այնպիսի բռուն ծաւալական ոյժ մը՝ որ կը յազդէ կողմանց ընդդիմութեանը և զանոնիք կը կոտրէ:

1404 Ջրին սառելով սառացած ոյժն շատ մեծ է: — Այս, իր ուժին արգասիքն 1000 մթնոլորտի չափ սեպուած է: Ջըրով լեցուած հաստ երկաթեայ թինանօթներ, ամրամից գոցուած, և սառին ազդեցութեանը տակ գրուած, զանազան կողմերէ ճաթըստեցան:

(Մէկ մթնոլորտի ճնշումն կ'ըսուի՛ օդոյ սեան մը ծանրութիւնն որ վեր կը բռնէ 76 հարիւրորդամեր սնդըկի սիւնակ մը. ուրեմն հազար մթնոլորտի ճնշումն կը հաւա-

սարի հաղարք սնդդրկի սեանց՝ որոնց ամեն
մէկն 76 հարիւրորդամետքը բարձր ըլլայ:

1405 ինչո՞ւ համար լեռնոտ տեղեր գալր-
նան սկիզբը լերանց զանգուածէն կտոր-
ներ կը փրթին և ձորերուն մէջ կը գահա-
վիթին: — Այս ալ կը պատճապի ձմեւ-
սուան սաեէն, վասն զի ջուրն կը մոտնէ
կոյտին ճեղքերուն մէջ, և ընդլայնելով
լծակի կամ նիզի պէս կը շարժէ զանոնք,
մասերնին բաժնելով և մէկմէկէ հեռա-
ցընելով:

1406 ինչո՞ւ համար ուրեմն այս կոյտե-
րուն ինկնալն սառի ատեն ըլլայր, հապա-
սառերուն հայելուն ժամանակ: — Որով-
հետեւ սառն մանելով կտորներուն պարապ-
տեղերուն մէջ, մինչդեռ զանոնք լերան
հետ միակցութեան կտաերէն կը բաժնէ,
միանգամայն զանոնք կը պատօ պահելու շա-
ղաթ մը կ'ըլլայ, իսկ երբ ջուրն գտրնան
տաքութենէն հեղուկանայ աղատ կը թո-
ղու ծանրութիւնը որ զայն դէպ ՚ի վար
քաշէ:

1407 ինչո՞ւ համար փողոցներուն սա-
լցատակներն՝ ձմեռը սառի ժամանակ
գետնէն կը զատուին: — Որովհետեւ այս
քարերուն տակը գտաւած խոնաւութիւնն
կը սառի, և ընդլայնելով զանոնք կը վեր-
ցընէ, ասոր համար երբ սառն հալի քա-
րերը զատուած և անհաստատ կը թողու:

1408 ինչո՞ւ համար ըլրոյ խողովակի շատ-
անգամ ձմեռը կը ճեղքուին: — Որովհե-

աւ իրենց մէջ փակուած ջուրն կը սառի և
քանակութեամբ կը մեծնայ, խողովակ-
ներն ալ շատ նեղ գալով՝ տեղի կու տան
ջըրին ճնշմանը՝ և կը կոտրին:

(Այս անպատշաճութիւնը կը դարձաւ
նուի խողովակաց մասնաւոր ձև մը տա-
լով և աւելի ձուածն, որով իրենց կող-
մերն՝ եթէ դիւրաբեկ ըլլան՝ տեղի տա-
լով ներբին ճնշման կոտրուելին տուաջ բո-
լրաձն կը դառնան:)

1409 ինչո՞ւ համար սասարիկ ցրտերուն
մօտենալու ատեն վազուկ ջըրի խողովակ-
ները կը ծածկեն յարդով, աւազով կամ
ածուղով: — Որովհետեւ այս մարմիններս
գէշ հաղորդիչ ըլլալով, չեն թողուր ջըրին
սառելու, և խողովակները կոտրելին կ'ա-
ցատեն:

1410 ինչո՞ւ համար ձմեռը և գարնան
պարտիզպանք քանի մը տեսակ բայսեր
կնիւնով, յարդով, լսթով, և այլն, կը
ծածկեն: — Որովհետեւ այս մարմինք ըլ-
լալով գէշ հաղորդիչ չերմութեան, կ'ար-
գելուն տնկական նիւթին սառիլը, որով
բոյսը գարնան կ'ուռճանան:

1411 ինչ վես կը կրէ բայս մը երբ իր
տնկական նիւթին սառի: — Հեղուկն սառ-
մամբ ընդլայնելով կը պատռէ անցքերը՝
որոնց մէջ կը պատրտի, և առաջ եկած
վեսան է բուոյ մահը:

1412 ինչո՞ւ համար որմիագիրք աշնան
և գարնան սովորութիւն ունին իրենց չէն-

քերը յարդով ծածկելու : — Որովհետև յարդին հաղորդութիւնն ամենատակար է , և այս եղանակաց երկայն գիշերներուն մէջ կ'արգելու նոր դրուած կըրին սառելը :

1413 Ինչո՞ւ համար որմենազիրք և գաճի գործաւորք չեն կըրնար աշխատիլ երբ ցուրտն սաստիկըլայ : — Որովհետև սառն կ'ընդլայնէ զկիրը , և աղիւսները դրուած տեղերնէն կը խախտէ :

(Սառն՝ նոր ծեփուած կիրը և գաճը փոշիի կը դարձնէ , հին չենքերուն ծեփն ալ կը թափէ , եթէ շատ խոնաւ կամ անձրևոտ եղանակէ մը ետև հասնի , միշտ մերենական զօրութեամբ ներգործելով կցուած մասանց վրայ , որոնց միակութիւնը կը ննջէ . այն պատճառաւ է որ գարնան սառէն անդացած հողմբըն կը փշըրուին և կակուզ փոշի մը կը դառնան , որ երկրագործութեան պիտոցից շատ աղէի կը ծառայէ :

1414 Ի՞նչ պատճառաւ առուակներն և գեաերն բոլորովին չեն սառիր : — Որովհետև սառն կը ձեւացընէ ջրին մակերեւութիւն վրայ քիչ կամ շատ հասու տակ մը պարապ թողլով անոր և ներքեկի ջրոյն միջոց :

1415 Ինչո՞ւ սառն անոր տակի ջրեկն հեռանալով միջոցը մտած օդն կ'արգելու ջըրին սառելը : — Որովհետև . Ա . Սառն ամենագէշ հաղորդիչ է ջերմութեան , ուստի կ'արգելու ջուրը որ իր ներքեկն կը վա-

զէ , օդոյ ջերմութեանը հետ զուգակցելու : — Բ . Կ'արգելու չոփիացումը և հետեւաբար նաև ջըրին մակերեւութիւն պազումը : — Գ . Ճերմակ և փայլուն ըլլալով կ'անդրագործընէ ջըրին մակերեւութիւն վրայ՝ իրեն ճառագայթմամբ կորուսած ջերմութիւնը :

1416 Ի՞նչ վասս կ'ըլլար եթէ հաստատուն ջուրն հեղուկ ջրէն աւելի ծանր ըլլար : — Եթէ սառն ջրէն աւելի ծանր ըլլար դեսերն ձմեռը ահագին հաստատուն կոյսեր պիտի ըլլային , որոնք զրկուելով օդոյ շշափմանէն ամեննեին պիտի չկարենային հալիլ :

1417 Ինչո՞ւ համար ջուրն միայն մակերեւութէն կը սառիր : — Որովհետև ջըրին մակերեւոյթն օդոյ հետ կը շշափուի՞ որ իրեն ջերմութիւնը կ'առնու քարըողական վագուկաց միջոցաւ :

1418 Ինչո՞ւ համար սառն այնչափ աւելի կը հաստանայ՝ որչափ աւելի անէ ցուրտն : — Որովհետև սառն բիւրեղանալով իրեն բիւրեղներուն ծայրերը ջրին մէջ կը խոթէ , որ անոնց վրայ կալելով հետզհետէ կը սառիր , քանի որ օդն պալ կը բռնէ սառին մակերեւոյթը , կամ ինչուան որ տակի գետոյ ջուրն ցածնալով սառած կեղեին հետ շշափուելին հեռանայ :

(Գետոյ վագուկ ջրերուն մէջ սառին հաստանալն գտուար կըլլայ , որովհետև ջըրին ընթացքն կը կոտրէ բիւրեղաց ամե-

նապդտիկ կէտերն՝ որ կամաց կամաց կը ձեւանան։ Հեղուկի մը բիրեղացուցմն ալ օրինապէս ըլլալու համար զիսաւոր պայմանն է հանդարտութիւնն։)

4419 Ի՞նչպէս կը ընայ ըլլալ որ ջըրին մակերեսոյթն աւելի պաղ ըլլայ՝ եթէ տաք ջուրն սովորաբար վերի կարգերը կը բռնէ։ — Այս հանոնս սահման մը ունի. տաք ջըրյ կոյտ մը տասն սատիճաննէն աւելի կ'ունենայ վերի կարգերուն մէջ մինչդեռ ստորիններն կը ընան զրոյի մնալ. բայց կարելի չէ որ ջըրին մակերեսոյթն չորս սատիճանն ըլլայ և տակը գտուածն ալ նուազագոյն բարեխառնութիւն մ'ունենայ։

4420 Ինչո՞ւ կարելի չէ որ ջըրին մակերեսոյթն՝ բարեխառնութեան չորս սատիճանն ունենայ, և ստորին կարգերն աւելի ցած բարեխառնութիւն մը. — Որովհետեւ ջուրն սկսելով ընդլայնիլ չորս սատիճաննէն ինչուան զրոյ, աւելի կը թիթենայ, և ասոր համար վերի կարգերուն մէջ կը մնայ, մինչդեռ երեք կամ չորս բարեխառնութեան սատիճանն պահողն իրեն աւելի թանձրութեանը համար տակը կ'իջնայ։

4421 Ինչո՞ւ համար վաղուկ ջըրյ վրայ կապած սառն աւելի խորտուրոտ կ'ըլլայ։ — Որովհետեւ ջըրին բիրեղացուցմն շարունակ կ'ընդհատի. սասի առաջին թաղանթն որ կը ձեւանայ՝ ընթացքէն կը ջախջախուի, և հաւաքուելով անկէց կը քուրի ինչուան որ արգելք մը կեցընէ զայն։

այն ատեն վրայէն անցնող ջըրին ընդգիւմանալով ջուրն ալ վրայ կ'ելլէ և կը սառի. Ասկէ զատ ցուրտ և խայթիչ սուր հովն՝ որ կը տիրէ շարունակ շատ սառի ատեն, կը նորշուեցնէ ջըրին մակերեսոյթը, որ սառելով օգէն պատճառեալ տառնմանց ձեւերը կը պահէ։

4422 Ինչո՞ւ համար շատ անգամ նաև բոլորովին սառած գետոյ մը կամ լըճի մը մակերեսութիւն վրայ՝ կը գտուին աւելի միշտ հեղուկ կը մնան։ — Եթէ գետոյն յատակը աղբիւրէ մը ջուր գայ, սակայ նաև ձմեռը պահելով զրոյէն վեր չորս սատիճաննէ աւելի բարեխառնութիւն մը, գետոյն ջրէն նուալ թանձր կ'ըլլայ, և մակերեսոյթը ելլելով կը հաղորդէ չորս կողմի ջրին մաս մ'իր ջերմութեանը, այնպէս որ բարեխառնութիւնն երբեք զրոյէն վար չինալով ամեննեին չի սառիր, կամ հաղիւ սառիբարակ թաղանթ մը կը կապէ։

(Լ ճեր ալ կան որ ամեննեին չեն սառիր, այսպիսի աղբիւրներէ պատճառեալ ըլլալով։)

4423 Ինչո՞ւ համար ձմեռը գետի մը մէջ ինինորն ցուրտաը կարծուածէն աւելի նըւազ կը զգայ։ — Որովհետեւ հեղուկ վիճակի ջուրն չի կը ընար (սովորական պայմաններու մէջ) զրոյէն վար բարեխառնութեան սատիճանով մը մնալ, մինչդեռ ձմեռը շատ անգամ օգոյ բարեխառնութիւնն չորս կամ հինգ աւելի սատիճան

յած կըլլայ . ուստի մարմինն ձմեռը աւելի տաք պիտի գտնէ ջըրին մէջ քան թէ օդոյ, մանաւանդ հեթէ յուզեալ ըլլայ օդն :

1424 Ի՞նչ պատճառաւ ծանծաղ գետ մը՝ շատ աւելի շուտ կը սառի քան թէ խորն : — Որովհետեւ ջըրոյ պղոտի կոյտ մը շատ աւելի զիւրութեամբ կըրնայ պաղիլ իր ամեն կէտերուն՝ քան թէ մեծ կոյտ մը, և դարձեալ հեղուկի մը մակերեսոյթն չի սկըսիր սառիլ՝ ինչուան որ բոլորն ալ չորս սատիճանի իջած ըլլայ :

1425 Ի՞նչին կըլլայ որ բարեխառն գոտուցյն մէջ ծովու ջուրն հազիւ երեք կը սառի : — Ա . ջովու ջուրն այնպիսի կոյտի մը մէջ է՝ որ մեր ձմեռուան կարծութիւնն չի թողուրանոր բոլորովին պաղելու : — Բ . ջովուն մակընթացութիւնն և տեղատութիւնն կ'արգելուն սառին բիւրեղաց ձեւացումը : — Գ . Աղի ջուրն այն ատեն կը սառի՝ երբ իր բարեխառնութիւնն զրոյէն երկու կամ՝ երեք աստիճան վարիչած ըլլայ :

1426 Ի՞նչո՞ւ համար ձմեռ ատեն կակուզ հողի վրայ մնացած հետքն կամ ոտից նըշանն՝ կը ծածկուի թեթև սառով մը երբ ցուրտն վրայ հասնի : — Որովհետեւ սառն կը ձեւանայ հետքին մէջ ժողոված ջըրին մակերեւութիւն վրայ . մինչ նյոյն ատեն գետինն կը ծըծէ տակի ջուրը, և մակերեւոյթն միայն կը սառի :

1427 Ի՞նչո՞ւ համար սառն կը հալի՝ երբ

օդն շատ խոնաւ ըլլայ : — Որովհետեւ, Ա . Ջրային շողին սառած մակերեւութիւն վրայ իջնալով հեղուկի կը փոխուի, և սուոին կուտայ բոլոր այն ջերմութիւնը՝ որովհեքն շորոյ վիճակի կը գտուէր . բոլոր այս ջերմութիւնն միանալով կը հալցցընէ սառու : — Բ . Եթէ օդն շատ խոնաւ է՝ ըսել է որ սառէն բարձր բարեխառնութիւն մ'ունի . արդ ջերմութիւնն ջանալով մարմոց մէջ հաւասարակըլ՝ կ'անցնի սառին մէջ է կը հալցցընէ զայն :

1428 Ի՞նչ պատճառաւ աղն կը գիւրեցնէ սառին հալումը : — Որովհետեւ աղն և ջուրն ունին փոխսաղարձ յարընչութիւն մը : Աղն ալ ուրիշ մարմոց պէս յատկութիւն ունի ջերմութեան որոշեալ մաս մը ծլծելու՝ հաստատուն վիճակէ հեղուկի անցնելու համար :

(Յարինցորին կ'իմացուի այն գիմողութիւնը՝ զոր ունին քանի մը մարմինը ուրիշներու հետ միանալու . օրինակի համար . աղն շատ յարընչութիւն ունի ջըրոյ, որովհետուն անոր մէջ շատ աղէկ կը հալի . ընդհակառակն ամեննեին յարընչութիւն չունի զուտ ալքոոլին՝ որուն մէջ գրեթէ բոլորովին անկուծանելի կը մնայ : Ընդհանրապէս սառին հետ միացած հալական աղը՝ լուծուելով կը պատճառեն բարեխառնութեան զիջումը մը մեծագոյն քան զանոնք՝ որ քիչ լուծական են . այսպէս նաև այն աղերն որ շատ բիւրեղացման ջուր կը պա-

հեն՝ աւելի զգալի կը նեն պաղման երեւոյթը։)

Ա 429 Աղէն դատ ուրիշ ինչ կերպով կարելի է սառը աւելի արագութեամբ հալեցնել։ — Բոլոր այն զոյացութիւններով որ մեծ յարնչութիւն մը ունին ջըրին, ինչպէս են բոլոր հերուս թթուաք։

(Փէ աղերն և թէ թթուաք կը հալեցը նեն սառը, որովհետեւ շատ ջուր կը սփրեն։ Կախի իրենց կը քաշն խտացած մը թնողրտային խոնաւութենէն առաջ եկած ջըրոյ այն քողը՝ որ կը թրջէ միշտ սառին մակերեսոյթը։ Եետոյ յարնչութեան կանոնով կը սափաթին որ հաստատուն վիճակի մնացեալ ջուրն ալ անկէ զառուի. բայց որովհետեւ հեղուկանալու համար ջուրն պէտք ունի ջերմութեան մեծ քանակի մը՝ զոր ինքը ծածկեալ կ'ընէ, ասիկայ կը ջընջուի, մէկմը՝ նոյն թթուաէն կամ խառնուրդը ձևացընող աղերլուն բիւրեղացման ջըրէն. մէկ ժամ մերձակայ մարմիններէն, և ասոր համար ցրառութիւն կը պատճառէ այն մարմնոց՝ որոնց հետ կը շօշափուի։ Խաղաղ ջուրն շատ աւելի շուտ կը սառի քան սաստիկ յուղեալ ջուրն. սակայն բոլորովին զուտ ջուրն եթէ կարդ մը ձէթով ծածկուի և հանդարտ մնայ, կը ընայ ինչուան զրոյէն 12 աստիճան վար սառնց սառելու մնալ իսկ եթէ թեթև շարժմունք մ'ալ աղդուի իրեն՝ մէկէն կը սառի։)

Ա 430 Զուտ ջուրն աղտոտ ջրէն աւելի

շնչտ կը սառի. — Ոչ, որչափ աւելի զուտ ըլլայ ջուրն այնչափ աւելի գժուարաւ կը սառի։ Խառնակ ու տղմտու ջուրք շատ դիւրութեամբ կը սառին։

(Սոր համար է որ փասերուն ջուրը հաղիւ թէ ցուրաք ուկի խայթել, մէկէն կը բանձրանայ։ Ասկայն աղերն գրիթէ ամենքն ալ կ'ուշացըննեն ջըրին սառ փոխուիլը, իսկ հարականք բոլորովին կ'արգելուն։)

Ա 431. Ինչ պատճառաւ ձմեռը շատ թեթև գինին կ'աղեկնայ։ — Որովհեակ իր մէջը պարունակուած ջուրն կը սառի. և տակառէն գինին միայն կ'ելլէ։

Ա 432 Ինչո՞ւ համար ձմեռը շատ անգամ գժուար կ'ըլլայ տակառներէն թեթև գինին հանել։ — Որովհետեւ գինոյն հետ խառնուած ջուրն կը սառի և կը գոցէ տակառին ներքին ծակը. ասով հեղուկին ելքն ալ կ'արգիլուի։

Ա 433 Ինչո՞ւ համար աղէկ գինին ամենին չի սառիր։ — Որովհետեւ կը պարունակ առատ ալքոոլ որ կ'արգելու գինոյն սառիր։

(Ալքոոլ ամենէն սաստիկ ցրտութեան ալ կը գիմանայ. և ասոր համար է որ սրնովիկն աւելի կ'ընտրեն ջերմաչափի խոզականերու, որովհետեւ. սնդիկն կը ընայ երբեմն սառիլ, մինչդեռ ալքոոլ միշտ հեղուկ կը մնայ։)

Ա 434 Ինչո՞ւ համար բոլորովին զուտ և ձէթով բարակ մը ծածկեալ ջուրն չի սա-

ոիր՝ թէպէտե. իր բարեխառնութիւնն զըրոյէն 42 աստիճան ցածնայ, մինչեւ հասարակ ջուրն հաղիւ դրոյի իջնայ կը սառի: — Որովհետեւ հասարակ ջուրն կը պարունակէ, Ա. պղոփի կենդանիներ որոնք շարժելով հեղուկին մէջ ջըրին հիւլէլոց հանդարտութիւնը կը խանդարեն: — Բ. Փոյշի կամ օտար գոյացութիւնք՝ որոնք հեղուկին մէջ ցրուած կը գտուին, մագականութենէն և ձգողութենէն ծաղած վազուկներն իշարժման կը պահէն, և ասով հիւլէր ալ կը շարժմին: — Գ. Ջէթի կարգով մը չծածիուած կամ օդոյ գրուած ջըրին մէջ կը պատճառուին քարշողական վաղուկներ, որ հեղուկին միջնէն կ'անցնին և կը շարժեն. այս պայմաններուս մէջ գրուած բոլորովին զուտ ջուրն այս պատահարներէս ազատ ըլլավով՝ կըրնոյ աւելի դէմ կենալ ցրուութեան:

Ա433 Արուեստուկան հնարքներով ալ կարելի՞ է ջուրը սառեցնել: — Այո, պղոփիկ բարակ շիշ մը ջրով լցցուն և եթերով թաթիսուած բամբակով. շրջապատած կամաց կամաց օդոյ մէջ շարժուելով շուտով կը սառի:

Սառեցուցիչ խառնուրդք.

(Սառեցուցիչ խառնուրդք կը պատճառեն ցրտութիւն քիչ կամ շատ՝ ըստ յատկութեան և քանակութեան գործածուած նիւթերուն:

Ա. Խառնուրդք՝ գինին զովացընելու և կաթի սիրուց սառեցնելու համար.

Բորակատ բողասի	մասն	5
Ջրածնաբլուացեալ անուշատք	»	5
Ծծըմբուտ բորակի	»	8
Ջուր	»	16

Բ. Խառնուրդք՝ ամառը սառ շնելու համար.

Բիւրեղացեալ ծծըմբուտ բորակի	»	5
Ծծըմբային թթուուտ հեղուկացեալ	»	4

Գ. Խառնուրդք ամենացուրտ.

Ջիւն	»	3
Ծծըմբային թթուուտ հեղուկացեալ	»	2

Դ. Խառնուրդք՝ որ բարեխառնութիւնը զրոյէն 15 աստիճան կ'իւլցընէ.

Ջիւն	»	2
Ծովային ալ	»	2

Նաև կըակին կարմրցուցած ամանի մը մէջ ալ սառ կըրնայ շինուիլ, եթէ ըլադինէ աման մը կարմրցուի, և մէջը քիչ մը ջուր դրուի. այնպէս արագ կ'ըլլայ ծծըմբ բային թթուուին շոգիացումն որ ոչ միայն

կը ծըծէ ամանին բոլոր ջերմութիւնը , այլ
նաև անոր մէջի ջուրն ալ կը սառեցընէ :

Սակայն այս խառնուրդներս պէտք են
գործածութիւնից կանոնով մը : Որպէս զի
կարենան ստորևմն պատճառել , այս կեր-
պով պէտք են ըլլալ . — Ա . Այս ամանն
որուն մէջ կը դրուի խառնուրդն՝ պէտք է
քիչ հաղորդիչ նիւթէ մը ըլլայ : — Բ .
Ընդհակառակն անոր մէջոր ջուր կը դրուի
պէտք է ամենալաւ հաղորդիչ ըլլայ : —
Գ . Բոլորն ալ պէտք է չոր լաթերով ծած-
կել : Այս զգուշութիւններս՝ աղային նիւ-
թերը կամ ծինը լուծելու պէտք եղած
ջերմութիւնը կը հանեն ջըրոյ ամանէն ,
հետևաբար ջըրէն ալ . եթէ այս չըլլուի
ամեննեին չի յաջողիր ստորևմն :)

ՄԱՄՆ Դ .

Լ Ս Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ւ Ն

ԳԼ. Ա . ԶԱՅՆ .

Տ . Ա . — Բնուրիւն և տարածութեան
ձայնի :

1436 Ի՞նչ է ձայնն : — Զայնն է արգա-
սիք բրտական շարժման մը կշռելի նիւթի
մէջ պատճառեալ : Երբ ձայնի զգացումն
կիմանանք՝ ըսել է որ այս կերպ շարժ-
մունք մը ինչուան մեր ականնը հասած է :

1437 Ի՞նչ արագութեամբ ձայնն կը տա-
րածուի : — Զայնն մէկ րոպէի (մանրեր-
կըրողի) մէջ զբեթէ 540 մետր տեղ կը վա-
զէ : Երբ օգն 46 աստիճանի բարեխսառնու-
թիւն ունենայ :

(Հովհ ձայնի երագութիւնը իր ուժին
համեմատ կ'աւելցընէ , և նոյնչափ ալ կ'ու-
շացընէ երբ հակառակ կողմէն փչէ :)

1438 Ինչու համար երբեմն ձայներն
շատ տղէկ կը լսուին , և ընդհակառակն
ուրիշ անդամ նոյն ձայներն ամեննեին չեն

լուսւիր : — Որովհետեւ հովան նաև խոտոր նակի ալ փշելով՝ կը կոտրէ ձայնարձակ ալիքները՝ որ օգը կը չարդեն, և անոնց ձայները կը կորուսցընէ . նոյնպէս ալ եկեղեցւոյ զանգակներն երբեմն որոշ կը լրսուին, քանի մը վայրկեան վերջը չեն լրսուիր :

(Ովոր բաւական վարժութիւն ըրած է կըրնայ զարմանալի ճշտութեամբ հաշուել հովերուն մինուրուտին մէջ առած ուղղութիւնը, միայն ուշ դնելով սաստկութեան կամ նուազութեան ձայնին՝ որ որոշեալ կէտէ մը հասնի :)

1439 Ինչո՞ւ համար ձայներն ամենատկար կը լսուին ըրածը լիրանց գագաթը : — Ա . Որովհետեւ լիրանց գագաթին վըրայի օդն շատ անոսր է, և հոն ձայնն շուտ մը իր խտութիւնը կը կորուսցընէ : — Բ . Չըրս կողմը հաստատուն մարմիններ չեն գտուիր՝ որոնց հնչմամբը ձայնն կարենայ կրկնուիլ :

(Եռոնցիք սովորած են ձայնը ուժովցընելու համար՝ եզան եղջւրի մը միջն իսոսիլ, որ իրենց խօսնական փողի տեղ կը ծառայէ . այս կերպով լիրնէ լիռ կը խօսին, որը պարզ բերնով չէին կըրնար ձայն հասցընել :)

1440 Ի՞նչ պատճառաւ աւելի թեթև ձայներն անգամ անանկ սաստկութիւն մը կը ստանան՝ որ ինչուան նեղացուցիչ կը լւան՝ ջրասուզակաց զանգակի մը տակ : —

Ա . Որովհետեւ զանգակին մէջ փակեալ օդն շատ թանձր կ'ըլլայ՝ վրայի ջըրոյ ճնշմանը պատճառաւ : — Բ . Զանգակին կողմանց բոմբիւնն՝ ամենէն բարձր աստիճանին կը հասցընէ ձայնին սաստկութիւնը :

(Ջրասուզակաց զանգակի մը մէջ թըլլը բուկն (որ է ականջին այն մաշկն՝ որուն գէմ կը կոտրուին ձայնարձակ ալիքներն), շատ պիրկ է, որովհետև օդն զայն դրսէն ՚ի ներս կը ճնշէ . և ասոր համար շատ աւելի կը զգայ ընդունած պվտի ազդեցութիւնները, ինչպէս որ զինուորական թըլլը բուկի մը կաշին ալ երբ շատ պրկած ըլլայ՝ սովորականէն աւելի մեծ ձայն մը կը պատճառէ :

Ականջն ձեւացած է երեք մասէ .

Ա . Ալուսարին ականջ, որ գլխուն երկու կողմերը հաստատուած է, և առագաստ ու արտաքին շողական խողովակ լսուած մասերով կը ձեւանայ :

Բ . Միջին ականջ կամ թմրուկ, որ առանձին վեց մասեր ունի, որոնց մէջ զետեղուած է ձուանել պատռնանեն, սարաւանին և բրորչի պատռնանեն . ստորին մասին մէջ կը գտուի խասարեան խողովակ լսուած ոսկերդէն մասն . այս խողովակս կը հազորդուի որկորին ծակին հետ :

Գ . Ներդին ականջն կամ բաշիդն, որուն մէջ կը գտուին գափին, և շատ մը ուրիշ մասեր :

1441 Ի՞նչ կերպով կըրնայ զիսցուիլ թէ

անօսրացած օդն գէշ հաղորդիչ մ'է ձայնի : — Որովհետև զետեղելով զարթուցիչ մը կամ զարնող ժամացոյց մը՝ չնչեղոց մեքենային մէջ, սկզբան ձայներն շատ աղեկ կը լսուին, բայց երթալով կը տկարանան և բոլորովին կը մարին՝ քանի որ օդն անօսրանայ զանդակին մէջ մինչեւ որպարարուի . և դարձեալ պայծառ և որոշ կը զարնեն երբ օդոյ մուտքն բացուի :

1442 ինչո՞ւ համար մմեռը զանդակիներու և հեռու ժամացոյցներու ձայնն ամառընէ աւելի որոշ կը լսուի : — Ա. Չմեռը ոդն խտացած կըլլայ, և ձայնն այնչափ աւելի սաստիկ կըլլայ, որչափ օդն աւելի խիս ըլլայ : — Բ. Չմեռը մըթնորորտն աւելի յուղուած կըլլայ օդոյ վաղուկներէն, որ ամառը շարունակ կը ծագին :

1443 ինչո՞ւ համար ձայնք աւելի որոշ կը լսուին երբ սառն ձեանայ քան երբ համի : — Որովհետև առջի առթիրն մէջ օդն աւելի խիս կըլլայ և ձայնին սաստիկութիւնն միշտ օդոյ խտութեանը կը համեմատի :

1444 ինչո՞ւ համար բեեսապային գաւառաց մէջ մարդկային ձայնն ինչուան մզոն մը հեռաւորութեամբ կը լսուի : — Ա. Որովհետև հօն օդն ամենամիտ կըլլայ ցրութենէն : — Բ. Շատ հանդարտ կըլլայ, ուստի ձայնարձակ ալիքներն արդելքներու չեն հանդիսակիր : — Գ. Գետնին մակ-

երկողին սառէն պնդացած ըլլալով շատ կօդնէ այս բանին :

1445 ինչո՞ւ համար զիշեր ատեն ձայներն ցորեկուրնէ աւելի որոշ կը լսուին : — Որովհետև, Ա. Արեւուն մտնելն վերջը օդոյ բարեկառութիւնն կը նուազի, և խտութիւնն կ'աւելնայ : — Բ. Աւելի խաղաղ կըլլայ, որովհետև զիշերը սովորաբար բոլոր աշխատութիւնք կը դադրին : — Գ. Գիշեր ատեն օդն նուազ ենթակայ է պատահական վաղուկաց :

1446 ի՞նչ պատճառաւ կարելի է խուլի մը հասուկցընեւ լսուական եղիշրի մը միջէն խօսելով : — Որովհետև այս գործիս կ'արգելու ձայնը տարածուելու և անոր տրամադին ամփափելով կը յաւելու ձայնարձակ ալենաց ոյժը : — Բ. Անոր մէջ պարունակեալ օդն քիչ շարժուն ըլլալով, կըրնայ շատ աղեկ ընդունիլ և տալ կէտի մը ուրիշէ մը ընդունած բախմունքները :

1447 Ի՞նչ է ձայնատարն : — Քիչ մը կոնաձեւ և երկայնեեկ խողովակ մը, շատ լայն յատակաւ, որուն միջէն կը խօսուի բերանը նեղ կողմին դնելով :

(Զայնատար փողք սովորաբար կը շինուին բարակ պղընձէ կամ թիթեղէ :)

1448 ինչո՞ւ համար կարելի է մեծ հեռաւորութեամբ մէկմէկու հետ խօսիլ ձայնատար փողով : — Որովհետև, Ա. Խողովակին մէջի գտուած օդն խաղաղ կըլլայ : — Բ. Փողին կողմերն կ'արգելուն ձայն-

արձակ ալեաց՝ խոտորելու, և զանոնք այնպէս կ'անդրագարձընեն՝ որ շատ մը գործոյն առանցքին զուգահեռական գծերով կ'ելլան :

(Զայնն այնչափ աւելի մեծ հեռաւորութիւն կը կտրէ, որչափ մեծագոյն ըլլայ գործածուած փողն. 7,50 մեդր երկայն փողով մը՝ կարելի է ինչուան երկու մղոն հեռաւորութեամբ ձայնը հասցընել, Զայնատար փողն մասնաւորապէս կը գործածուի նաւաց մէջ, ուր պէտք կ'ըլլայ ուժգին ձայն մը՝ ալեաց շառաչմանը յաղթելու :)

1449 Որ և իցէ ձայնի ձայնարձակ ալերներն հաւասար երագութեամբ կը տարածուին: — Այս. ուժով ձայներն տկարներէն աւելի շուտ չեն տարածուիր, ոչ ալ սուրերն քան բոլթելոր:

1450 Ի՞նչպէս կը փորձուի որ ուժով ձայներն տկարներէն աւելի շուտ չեն տարածուիր: — Որովհետև երաժշտական ներդաշնակութիւն մը՝ որչափ ալ հեռու գտուի՛ զանազան ձայներն հաւասարապէս կը լսուին:

(Կըրնայ ըլլալ որ շատ հեռաւորութենէն ներդաշնակութեան մը սուր և աւելի ուժով ձայներն միայն լսուին, և մէկաւներն մեր ականջին չհասնին. բայց չի կըրնար ըլլալ որ տկարներն և բութերն քիչ մը վերջը լսուին, կամ իրենց ձայնը պատճառուած կարգերնէն առաջ կամ ետքը:)

1451 Ի՞նչպէս կարելի է ձայնի երագու-

թիւնէն չափել հեռաւորութիւնը: — Որովհետև ձայնն մէկ մանրերկրորդի մէջ 540 մեդր կը կտրէ, մինչդեռ լցուն այդչափ միջոց մը կտրելու համար՝ ժամանակ մը չուզեր, կըրնայ չափուիլ տարարկայի մը հեռաւորութիւնն հաշուելով լցունին տեսնուելուն, և այս առարկայիս մօտ պարպուած հրացանէ մը պատճառեալ շառաչման միջոց տարբերութիւնը :

1452 Ի՞նչ օրինակ կ'ըրնայ տրուիլ սոր: — Եթէ ծովու փրաց նաւ մը հրանօթ մը արձըկէ, և լուսոյ տեսնուելուն և ձայնին լառելուն միջոց 10 մանրերկրորդ անցնի, ծովեղըր կ'եցող գիտողն կըրնայ ըսել որ նաւն 3400 մեդր հեռու է:

(Հրանօթի մը լցուն մէկէն կը հասնի, և 80 անգամ կըրնայ ընել երկրիս ըրջանը (որ գրեթէ 36,000 հազարամետր է) նոյն չափ ատեննուան մէջ որ ձայնն կը պահանջէ 3400 մեդր հեռաւորութիւնը կտրելու համար:)

1453 Ինչո՞ւ համար երբ մէկն բոլորովին ջրոյ մէջ մտնէ՛ եղերքը պատճառած բոլոր ձայները կը լսէ: — Որովհետև ձայնն ջրոյ միջն աւելի աղեկ կ'անցնի, և չորեք պատիկ աւելի արագ՝ քան օգոյ միջնէն:

(Զայնին միջին երագութիւնն օգոյ միջնէն ամեն մէկ մանրերկրորդին 340 մեդր է: Ջրոյ մէջ գրեթէ 1453 մեդր:)

1454 Ինչո՞ւ համար ջրոյ տակ եթէ երկու քարեր մէկմէկու զարնուին՝ ծովեղըրը

կեցող անձն հարուածները կը լսէ : — Ուրովիշետե ձայնն գիւրաւ կը տարածուի հեղուկաց միջէն, և ջըռոյ թրթուական շարժմունքներն օդոյ հետ կը հաղորդուին :

1453 Ի՞նչ կերպով կը փորձուի որ հաստատուն մարմինք ձայնը կը ծաւալին : — Ա . Ուժով ձայն մը կը մտնէ սենեկի մը մէջ որչափ ալ աղէկ զոցուած ըլլայ : — Բ . Անջրակետ մ'ալ շատ աղէկ կը հաղորդէ տկար ձայնն անգամ : — Գ . Նաև հաստ պատի մը վրայ զարնուածքն հակառակ կողմէն կը լսուի : — Դ . Երկայն գերան մը մէկ ձայրէն մէկալ ձայրը կ'անցընէ զնտասեղի մը շիմամբ պատճառեալ թեթև շառաչիւնն ալ :

1456 Ի՞նչ պատճառաւ բուրգն, բամբակին, տաշած կամ սղցած փայտն կը տկարացընեն ձայնը : — Որովհետեւ այս նիւթերս կը ձեւանան շատ մը մէկմէկէ հեռու մասունքներէ, և որչափ որ համասեռ ըլլայ ձայնին տարածուած միջոցն այնշափ ալ նուազ կ'ըլլայ իր սփռուիլն :

(Ասոր համար գծուար կ'ըլլայ սենեկէ սենեակ ձայնը լսելը՝ երբ պատերն լաթերով կամ գորգերով ծածկուած ըլլան : Ձայնարձակ մարմինք ալ եթէ սաստիկ տարցուին կը կորուացընեն իրենց այս յատկութիւնը . որովհետեւ ջերմութիւնն հիւլէց միջոցներուն մէջ թափանցելով դանոնք մէկմէկէ կը հեռացընէ և նիւթին խոտիթիւնը կը նուազեցընէ :)

1457 Ինչո՞ւ համար ձեռաց ափով ականջ ները գոցելով շատ աղէկ կը լսուին չնչերակաց զարկն, պատի ժամացոյցի մը ծօնանսակին շարժմունքները կամ որ և իցէ ուրիշ ձայն մը, երբ զայն պատճառող մարմինն շօշափուի զմասուն մէկ մասին կամ զաստակաց հետ : — Որովհետեւ, Ա . Այն ատեն օտար ձայն մը չի զարներ ականջին թմբըկին, որ բոլորովին հանդարտ վիճակի մէջ կը գտուի : — Բ . Մեր մարմիոյն ոու կերպն ամենալաւ հաղորդիչք են ձայնի :

1458 Ի՞նչ պատճառաւ ժամացոյց մը իր հարուածներն աւելի ուժով կը լսեցընէ երբ սեղանի մը վրայ դրուի կամ պատկուկ շիմ մը վրայ, քան երբ գրպաններու մէջ կամ առկաի գտուի : — Որովհետեւ ժամացոյցն կը հաղորդէ սեղանին պատճառած թրթուածները, և ասիկայ ալ թըրթուալով իր հնչման շառաչիւնը կը յաւելու :

(Հաստատուն մարմինք օդէն աւելի շուտ կ'անցընեն ձայները, բայց երագութիւնն կը փոփոխի ըստ գոյացութեան :)

Սեպելով թէ ըլլայ և օդոյ մէջ ձայնին արագութիւնն հետեւեալ կարգով կ'ըլլայ ուրիշներոց հաղորդելուն չափն :

Անագ, 7. — Արծաթ, 9. — Կարմիր պղինձ, 12. — Փայտ, 12էն ինչուան 18. — Ապակի, Երկաթ և Պողովատ 16. :

Եղենոյ փայտն ամենէն աւելի գիւրութեամբ կ'անցընէ ձայնը :)

§. β. — Երաժշտական ձայնք :

1459 Ի՞նչ են երաժշտական ձայնք : —
Շատ մը հաւասար թրթումունք՝ որոնք այն պէս արագ կ'ըլլան որ կը դրդուեն ականջին մէջ շարունակ զգացում մը :

1460 Ինչի՞ն կը կախուի ձայնին յատ կութիւնն : — Ձայնին ծանրութիւնն (կամ բըթութիւն) և սրութիւնն կը կախուին որոշեալ ժամանակի մը մէջ պատճառեալ թրթումունքներէն. խտութիւնն կամ հաստ կութիւնն կը կախուի նոյն թրթումունքներուն ուժէն :

1461 Ի՞նչ պատճառաւ ջութակ մը շատ սուր (ցած) ձայն կը հանէ երր լարերն բաւական ձիգ չըլլան : — Որովհետեւ թրթումունքներն շատ կամաց կ'ըլլան : Լար կամ թել մը որուն թրթումունքներն շատ կամաց ըլլան՝ միշտ ծանր ձայն մը կ'արձրէէ . ընդհակառակին սուր ձայն կը հանէ երր թրթումունքն արագ ըլլան :

1462 Ի՞նչ պատճառաւ ջութակը շատ բարձր ձայններ կ'արձրէէն՝ բազմութեամբ լցուած մենակի մը մէջ : — Որովհետեւ սենիկին տարցած խոնաւութիւնն կ'ընդլացնէ թելերը և անոնց ձգումը կը յաւելու, այն պէս որ շատ անդամ կը խորտակին ալ :

1463 Ինչո՞ւ համար սաղմոսաքնարաց և դաշնակաց թելերն ոմանք երկայն ոմանք ալ կարճ են : — Որովհետեւ ձայնին սուր

թիւնն թելին կարծութենէն կը կախուի , և չետևաբար քանոնի մը կամ դաշնակի մը սուր ձայններն թելերը կարձեցնելով կ'ելլեն :

1464 Ի՞նչ պատճառաւ ջութակահար մը ձեռքը շարունակ վեր վար ջութակին կոթին փրայ կը շարժէ : — Ձափաւորելու համար տարբեր թելերէն թրթուացող մասը , և անօնցմէ տեղին համեմատ սուր կամ ծանր ձայն հանելու համար :

1465 Ինչո՞ւ համար սաղմոսաքնարի մը , ջութակի մը , և այլն , թելերէն ոմանք մէկալներէն աւելի հաստ կ'ըլլան : — Որովհետեւ թելի մը ծանր ձայնն իր հաստութենէն կը կախուի , և որովհետեւ ներդաշնակութիւնն առաջ կու գոյ ծանր և սուր ձայններու միաբանութենէ , պէտք է թելերն ալ այնպէս պատրաստել որ կարենան այս ձայնները դիւրաւ պատճառել :

(Եթէ հաւասարասպէս պիրի և երկայն երկու թելեր ըլլան , բայց մէկն մէկալին կէս հաստութիւնն ունենայ , նոյն ատենուան մէջ բարակն հաստէն կրկին անգամ աւելի կը թրթուայ)

1466 Ինչո՞ւ համար կան ձայններ որ ականջին հաճոյ կու գան , կան ալ որ տհաճելի են : — Այն ներդաշնակութիւնն է հաճոյ ականջին որ կը պատճառի այնպիսի ձայններէ , որոնց թրթումունքներն կարճ միջոցով կը դուզընթանան : Ընդհակառակին անհաճոյ զգացում մը կը պատճառ

սեն երկու ձայներ, որոնց թրթռմունքն ամենաբին չեն զուգընթանար իրարու կամ հաղիւ երեկ:

4467 ինչու համար կան նիւթեր որ ձայն արձակ են, և կան ալ որ ոչ: — Պինդ և առածգական նիւթը, ինչպէս պղինձ, երկաթ, և այլն, ձայնարձակ են. իսկ կակուզներն և առածգական չեղողներն ինչպէս կապարն, շատ քիչ ձայնարձակ են:

(Պայրեղուկն, allumine, նոր գտուած մետաղ մ'է, թէպէտե շատ կակուզ է, բայց շատ ալ ձայնարձակ է:)

4468 ի՞նչ նիւթերէ կազմուած է զտնդակաց մետաղն: — Պդնձէ և անագէ, հետեւալ համեմատութեամբ. Կմասն պըղընձի և 1 անագի: Այս խառնուրդս շատ աւելի ձայնարձակ կըլլայ քան թէ այդ մետաղներն առանձինն գործածուին:

(Եթէ քիչ մը արծաթ կամ զինկ պատշաճ համեմատութեամբ աւելցուի ասոնց վրայ՝ աւելի ձայնարձակ կ'ընէ խառնուրդը:)

4469 ինչու համար զանգակն զարնուել ձայն կ'արձըկէ: — Որովհետեւ ինքը մէկ կողմէն կը ճնշուի և մէկալէն կ'երկըննայ, և առածգականութեամբը նորէն իր առջի ձեւ կ'առնու: Այս փարկենական ձեւի փոփոռումն կը պատճառէ օդոյ մէջ ամենարտադ թրթռական շարժմունք մը:

4470 ինչու համար երբ մասով զանգակի մը դպչուի՝ տնոր ձայնարձակու-

թիւնն կ'արզիլուի: — Որովհետեւ մատին ճնշումն կը բաւէ դադրեցընելու զանգաւ կին թրթռմունքները. և երբ կողմունքն թրթռալէն դադրին՝ ձայն ալ չեն պատճառեր:

4471 ինչու համար ճամթած զանգավին անհանոյ ձայն մը կ'արձըկէ: — Որովհետեւ թրթռմունքներն մէկմէկու կը զարնուին, և կ'ընդմիւնն իրենց կանոնաւորութիւնը, այնպէս որ կտրուած և խառնակ կու զանականջին:

4472 ի՞նչու համար պրկուած ձայնարձակ թել մը ձայն կը պատճառէ երբ դըպչուի: — Որովհետեւ փոփօխակի կը կարձնայ և կ'երկըննայ ստանալով ճօճական շարժմունք մը բոլոր իր երկայնութեամբը, օդոյ հիւլէներն կը խախտին իրենց տեղէն և մէկէն նոյն տեղը կը դառնան, այս կ'երպով կը ծագին ձայնարձակ ալիքներն:

4473 ի՞նչ պատճառաւ ամբողջ թելն կը թրթռույ՝ երբ աղեղովլ միայն մէկ կէտին դպչուի: — Որովհետեւ շշափմանը թըրթռական շարժմունքն ըոլոր հիւլէից կ'անցնի:

(Թմբուկի մը մորթին տրուած հարուած մը՝ ամերող թմբուկը կը թրթռացընէ. ջութակի թել մ'ալ հաղիւ իմանալի ձայն պիտի տար եթէ ամերող գործին չիթրթռուար:)

4474 ի՞նչ պատճառաւ երբ մէկն շատ մը զարնուող թմբուկներու մօտէն անցնի՝ ամերող մարմնոյն մասերն, և մասնաւու-

րապէս թոքերն՝ նեղուելու կերպով մը կը ցնցուին : — Արովչետե մորթէն և թբրուկին պատճառեալ թրթռումունքներէն ցնցուած օդն, զանոնք մարգուն մարմնոյն կը հաղորդէ, մարմինն ալ բոլոր կը թըրթռայ . մասնաւորապէս կուրծքն կը կրկնէ կործիքներուն վրայ զարնուած ամեն մէկ հարուածները :

(Պատուհանաց ապակիներն կը թրթռան երբ տանը մօտէն կառը մը անցնի . կը ցնցուին եթէ թրթռումոնքն պատճառին հրանօթի հարուածէ մը . որովհետեւ այս առթիս մէջ ոչ միայն ապակիներն, հապանակ պատերն ալ կը սկսին թրթռուալ :)

1473 Ի՞նչ պատճառաւ երեմն չէնքեր՝ սաստիկ ոմբաձըզութեան ատեն կը փլշին, թէպէտե իրենց վրայ ոռումբ ալ եկած ըլլոյ : — Որովհետեւ օդոյ մէջ հրանօթից հարուածներէն պատճառեալ թրթռումոնքներն այնպէս ուժով կըլլան՝ որ տկար չէնքերուն պատերն սաստիկ կը ցնցեն, և երբեմն նաև տիբովզ չէնքը կը կործանեն :

1476 Ի՞նչ կերպով փշողական գործեաց մէջ ձայն կը պատճառի : — Այս գործիներուն ձայնն առաջ կու գայ խոլողվակին մէջ փակուած օդոյ սիւնակին թրթռումոնքներէն . հետեւաբար որինք մը միշտ նոյն ձայնը պիտի տայ եթէ իրեն նիւթին ըլլայ տօսախ, եթէ ոպնիսաղ և եթէ բիւրեղ :

(Եթէ որընզի մը ձայնն գործոյն թըրթռումոնքներէն առաջ գար՝ ձայն պիտի

չհանէր երբ մատով դպչուէր, ինչորէս կ'ըլլայ երբ մատով զանզակի մը դպչուէր :)

1477 Ի՞նչ կերպով կ'ըլլան փշողական գործեաց մէջ պարունակեալ օդոյ սիւնակին թրթռումոնքն : - Գործուոյն մէջ փշմամբ մտած օդն՝ կը խտացընէ անոր սիւնակին մէջ եղածը, որ իր առաձգութեամբ մէկէն կ'ընդլայնի, և այս խտացմանց և ընդլայնմանց արագ փոփոխութիւնն կը պատճառէ անոր մէջ թրթռական շարժմունք մը :

1478 Ի՞նչո՞ւ համար սրինդ մը փշելու ատեն՝ հետզհետէ ծակերը կը բանան և կը գոցեն : - Տարբեր ծայներ ընդունելու համար . որովհետեւ այս կերպով թրթռացող սիւնակն ըստ կամս կը կարծընայ, և կարճ օդոյ սիւնակն ալ կըրնայ աւելի երագ թրթռաւ :

1479 Ի՞նչո՞ւ համար փող փշողն ձեռքը գործոյն աւելի լցան կողմը կը դնէ : - Հնչունը եղանակաւորելու համար . փասն զի ձեռքն կ'ընդմիջէ օդոյ սեան թրթռումոնքները, և ելած ձայնն աւելի ծանր կ'ըլլայ :

1480 Ի՞նչէն կը պատճառի շողեւարժ մեքենայի մը սոյլն : - Շողիէն ասած կու զայ, որ ուժով պզափի ծակէ մը ելլելու ատեն՝ կը պատճառէ օդոյ մէջ շատ մը արագ և շարունակ թրթռումոնքներ՝ պզտի սահմանի մէջ, և որչափի որ ձայնաբճակ ալիքներն աւելի կարծ և շարունակ ըլլան այնչափ աւելի սուր կ'ըլլան պատճառած ձայններն :

(Դրան կամ պատուհանի մը ձեզքերէն փշած հովն, ծխանի մը խողովակէն մտածն, կը պատճառեն տարբեր ձայներ, բայց ամեն ալ կը պատճառին թրթուռած օդոյ աւելի կամ նուռաղ տարածեալ ձայնարձակ ալիքներէն :

1481 Ի՞նչ կերպով երգեհոնի մը խողովակներն ձայն կը պատճառեն : — Երգեհոնաց խողովակներն ձկուն մետաղէ լեզուակ մ'ունին, որ օդոյ ամենանեղ անցք մը կը թողու . երբ հովն փուքէն խողովակին մէջ մասէ, այս լեզուակն գրաէն ճընշուելով կը գոցէ անցքը, ասոր համար օդոյ վաղուկն վայրկեան մը կ'արգիլուի, վերջը գարձեալ լեզուն իրեն առածգականութեամբը ծակէն կը հետանոյ, և անցք կը բանայ օդոյ նոր քանակութեան մը : Այս շարժմանըներն որ մեծաւ երագութեամբ կ'ըլլան՝ օդոյ սիւնակին ձայնարձակ թրթամանքներ կ'աղգեն :

1482 Ինչո՞ւ համար տղայր և կանայք մարդկանցմէ աւելի սուր ձայն ունին : — Որովհետեւ տղայր և կանանց հաղագն աւելի նեղ է քան մարդկանց :

(Հաղագն է ձայնը պատճառող գործին, կոկորդին վերի և առաջակողմասին մէջ, և խոչափողին միջոցաւ կը հաղորդուի դանդիկներուն (bronches) և թոքերուն հետո

§. Գ. — Արձագանգը :

1483 Ի՞նչ է արձագանգին պատճառն : — Արձագանգն է ձայնին անդրագարձութիւնն, երբ հանդիպի բաւական մեծ և հեռու արգելքի մը :

1484 Յետ գարձած ձայնին արագութիւնն հաւասար է ուղիղ գայցած ձայնին : — Այսու և բաց ի անդրագարձութենէն՝ նաև սաստկութիւնն ալ նոյնաէս հաւասար է : Այս սաստկութիւնն կարած միջոցէն կամ ճամփէն կը կախուի :

1485 Ո՞րչափ ժամանակ կ'անցնի ձայնին պատճառման և կրկնութեանը միջոց : — Եթէ արգելքն ծկո մեղք հեռու ըլլայ, միջոցն երկու մանրերկորդ պիտի ըլլայ, որովհետեւ այն ատեն ձայնն մէկը երթալու կը գործածէ և միւսն ալ դառնալու :

1486 Ո՞ր աւելիքը աւելի աղէկ արձագանգ կու տան : — Անձաւք, քարայրը, երկայն և ծամածուռ ճամբաներն, եկեղեցինց կամարներն, պատեր, ժայռեր, լեռներ, և գարածե սառն :

(Անտառներն, ծովու մէջ նաւու մը շատ ուռած առաջաստներն, և ինչուան ամպերն ալ կըրնան արձագանգ պատճառել :)

1487 Ի՞նչ պատճառու ձայնին անդրագարձութիւնն արձագանգ կը պատճառէ : — Որովհետեւ երբ ձայնարձակ ալիքներն չկարենան թոփանցել մարմնոյ մը մէջ և

զայն թրթռացընկը, անկէ յետ կը դրկուին, ինչպէս կ'ըլլայ առաձգական մարմնոյ մը՝ երբ շատ ուժով լուրիշ շատ կարծրի մը վրայ նեռուի :

1488 Ի՞նչ պատճառաւ սենեկի մը պատերն արձագանգ չեն պատճառեր : — Ուրովհետեւ ձայնն՝ համեմատութեամբ սենեկի մը պատերուն մէջտեղի հեռաւորութեան, այնպիսի արագութեամբ մը կը տաստածուի՝ որ անդրադարձումն քիչ ընդարձակութեամբ միջոցի մը մէջ կը խառնակի առաջի ձայնին հետա, և բոմբինէ զատորիշ բան չի լսուիր . ինչպէս որ կ'ըլլայ կահ կարասիք գորդ ու կապերտ չունեցող սենեկաց մէջ :

1489 Ի՞նչ պայմաններ հարկաւոր են որպէս զի արձագանգն որոշ հասկըցուի : — Պէտք է որ այն առարիխյն որ ձայնը յետ կը դրկէ՝ գէթ այնչափ հեռու ըլլայ՝ որ ձայնն յետ դառնալու համար՝ վանկ մը հնչուելու ժամանակն անցընէ . որով առջի վանկը հնչելու գործածուած ատենն՝ բաւական կ'ըլլայ ձայնին երթալու և դառնալու . և արձագանգն՝ հազիւ թէ խօսելը լմնցուի վերջինը կը կրկնէ :

(Եթէ ձայնն՝ հեռաւորութիւնը կտրելու համար գործածէր այն ժամանակին կէսը՝ որ պէտք կ'ըլլայ շատ վանկերու որոշ հընչմանը համար, առաջինին կրկնութիւնն խօսող անձին այն ատեն կը հասնի՝ երբ վերջինը ըսած ըլլայ . ուստի առաջինն և

բոլոր յաջորդ վանկերն որոշակի կը Աւսուին :)

1490 Ինչու համար կ'ըլլայ որ տեղ տեղ ձայնն արձագանգով շատ անդամ կը կըրկնուի : — Այս բանս կ'ըլլայ երբ երկու կամ շատ արդելքներ այն գէրբով լցատինն՝ որ ձայնն երկու կամ շատ անդամ կրկնուի՝ նորէն ականջին հասնելէն առաջ :

1491 Ինչու համար արձագանգն գիշերները աւելի ուժով կ'ըլլայ : — Ա . Որովհետեւ ցորեկ ատեն արեւուն ջերմութիւնն կը պատճառէ բարեխատութեան անհաւասարութիւնն մը, ուսկից կը ծագին շատ բարձրացող և ինող վազուկներ, որը կը խափանեն ձայնարձակ ալիքները : — Բ . Մթնոլորտին օգն նուազ թանձր է ցորեկը քան թէ զիշերը :

ՄԱՅՆ Ե ·

ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ

ԳԼ. Ա. Լ030 :

1492 Ի՞նչ է լոյն : — Լոյս կ'ըստի այն
առիթն՝ (որուն բուն ինչ ըլլալն գեռ չէ^{նանչցուած}) որով կըրնանք տեսութեան
զգայարանքը զործածել : Ծփումն, եթիկ-
տրութիւնն և քիմիական աղդեցութիւնք,
աղբիւրք են լուսոյ :

(Լոյս հայթայթելու ամենէն դիւրին մի-
ջցն է կիզումն : Այն կիզանուտք որ բո-
ցով մը կ'այրին և մասնաւորապէս ձեր-
մակ բոցով, կը պատճառեն լոյս մը՝ որ ա-
ւելի խիտ կըլայ քան առանց բոցի այրող-
ներունը :)

1493 Ի՞նչպէս կըրնայ ըլլալ լոյս առանց
ջերմութեան : — Ա. Փոսփորական մար-
մինք պայծառութիւն կու տան առանց
զգալի ջերմութեան : — Բ. Կան կենդա-
նիներ, ինչպէս փոտոպայք, որք կարդալու
չափ բաւական լոյս մը կուտան առանց
ջերմութիւն պատճառելու : — Գ. Փայտն,
միոք, և ամենէն աւելի ձըկներն երբ նե-

խորթեան աստիճանի մը հասնին՝ լցոս կ'արձելին առանց ջերմութեան :

1494 Արդեօք առանց լուսոյ ջերմութիւն ալ կը ընայ ըլլալ : — Ա . Կան գոյացութիւններ ալ որոնք կ'ըրնան սասաթի տաքնաւ առանց լուսոյ արձակման : — Բ . Արեգակինային ճառագայթ մը կը ընայ լուծուիլ և իր չերմային ճառագայթին ճառագայթին զատուիլ բասարներէն :

1495 Ինչո՞ւ համար նայելով կոր խողովակի մը միջէն աչքին դիմացի կողմը գըրուած կանթեղին լցոն չի տեսնուիր : — Որովհետեւ լցոն համասն միջոցի մը մէջ ուղղի գծով կը ծաւալի :

(Միշոց ըսելով կ'իմացուի այն տարածութիւնն՝ որուն մէջ լցոն կը ընայ ծաւալիլ : Պարապն, օդն, ջուրն, ապակին և բոլոր թափանցիկ նիւթը՝ միջոցը են : Համասն միջոց կ'ըստուի որուն մէջ նիւթին բնութիւնն, յատկութիւնն և թանձրութիւնն, ամեն կողմէ հաւասար են : Խսկ տարասն այն է՝ որուն բնութիւնն, յատկութիւնն և թանձրութիւնն՝ հաւասար չեն ամրող զանգուածին մէջ : — Տարասն միջոցի մը մէջ մտնելով լոյսն կոր կամ բեկեկեալ գծով կը ծաւալի, և կը պատճառէ անդրադութիւնն լուսոյ : — Ջըրոյ մէջ թափանցելով լոյսն կը խոտորի ուղղութենէն . նոյնակն կ'ըլլաց այն լցոն ալ որ հեղուկաց մէջ մտած մարմիններէն կ'ելլէ, և ջրէն ելլելով դարձեալ կը խոտորի : — Ա-

սոր համար է որ ջըրոյ մէջ մարմին մը իւրականէն աւելի բարձր կը թուի . և թիակ մը օդոյ մէջ ունեցած ուղղութեան հակտուակ ուղղութիւն մը կը ցուցընէ ջըրոյ մէջ . ասոր համար երկու ուղիղներն մէկ կը ջըրոյ մէջ և միւսը գուրսը իրենց միութեան կէտին անկեան վրայ կոտորուած կ'երևան : Լուսոյ անդրագարձութեանն համար է որ առուակի մը յատակն նուազ խոր կ'երևայ, ձըկներն մակերեւութիւն աւելի մօտ, և ընկղմուած առարկաներն ալ աւելի մէծ :)

1496 Ի՞նչ պատճառաւ դիմանար առարկայը կը ձգեն շաք մը լուսոյ հակառակ կողմը : — Որովհետեւ դիմանար կամ անրախանց մարմինը կը նդդիմանան լուսոյ անցրին, որ ծաւալով ուղիղ գծով չի կը ընար անոնց միջէն անցնիլ :

§ . Ա . — Լոյս Աստեղաց :

1497 Ինչո՞ւ համար արեն ելլելուն և մոնելուն ատեն անարգել կը ընայ տեսնըւիլ, մինչդեռ ցորեկ ատեն իր պայծառութիւնն կը լցացընէ զաշս : — Ա . Որովհետեւ արեւուն ճառագայթներն հորիզոնին մօտ ցորեկընէ շատ աւելի թանձր օդոյ կոյտէ մը կ'անցնին, և օդն կը ձգէ քանակութիւն մը լուսոյ : — Բ . Ամեն ճառագայթներն ալ որ լցոյսը կը կազմեն մեղի չեն հասնիր՝ այս աստղիս մանելու ատեն, հապառմանը կը խոտորին, և մտնող արեւուն

լոյսն չունենար այն խտութիւնը՝ զոր կ'ու-
նենայ միջօրէէն ժամ մ'առաջ և երկու ե-
րեք ժամ վերջը :

1498 Ի՞նչ պատճառաւ արեն և լուսինն
շատ աւելի մեծ կ'երևան մտնելուն և ել-
լելնուն ատեն՝ քան թէ զէնիթին վրայ : —
Ա. Այս երեսյթս աւելի խարէական է
քան իրական . երբ արեն կամ լուսինն հո-
րիզմին մօտ ըլլան՝ այս աստեղաց սկա-
ւուակն աւելի մեծ կը կարծուի : — Բ.
Հաւանօրէն կարելի է նաև անոր համար
ըլլալ՝ որ երկնքի կամարն որուն մէջ այս
աստեղքն կ'երևան՝ աւելի հեռու է դէպ
՚ի հորիզոն՝ քան թէ զէնիթ :

1499 Ինչո՞ւ համար արեն և լուսինն
տափակ կ'երևան երբ հորիզոնին մօտ ըլ-
լան : — Որովհետեւ իրենց սկաւուակին
ստորին մասերն աւելի կը տարածուին
մթնոլորտին անդրագարձուցիչ զօրութե-
նէն՝ քան իրենց վերին մասերն . ասով ի-
րենց ուղղահայեաց տրամագծին երկայ-
նութիւնն կ'ամփոփուի , բայց կողմանական
տրամագիծն՝ ամեննեին չի փախուիր . աս-
կից կը հետեւի որ իրենց լայնութիւնն ա-
ւելի մեծ երեսյ քան բարձրութիւնն :

1500 Ի՞նչ է հորիզոնն : — Երկրսին
ստորին սահմանն՝ որ կը թուի թէ անհուն
գլխարկի մը նման կը ծածկէ զերկիր :

1501 Ինչո՞ւ համար երկինքն կամարա-
ձև կ'երևայ : — Որովհետեւ , Ա. Կապոյտ
դոյնն շատ թուի է վերին կողմը , և քանի

որ հորիզոնին մօտենայ՝ խտութենէն կը
նուազի : — Բ. Որովհետեւ երկրիս վրայ
կան շատ մը միջին առարկաներ , որոնք
մեզի աւելի հեռու կը ցուցընեն այն վեր-
ջին կէտերը զոր կը աեսնենք այն ուղղու-
թեան մէջ :

(Երկնից կամորն մեզի կապոյտ կ'երե-
սայ , որովհետեւ մեր մթնոլորտին օդն կը
ծըծէ մասամբ մը իրմէ անցնող լոյսը , բայց
եթէ դիտովն շատ մեծ բարձրութեամբ
մը կենայ՝ բոլոր երկինքը զրեթէ սև կը
տեսնէ :)

1502 Ինչո՞ւ համար արեն և լուսինն որ
գնտաձև մարմիններ են՝ տափակ մակե-
րեւութի մը պէս կ'երևան : — Որովհետեւ
իրենց հեռաւորութիւնն մեր գնտէն այն-
շափ շատ է՝ որ մեզի զգալի ըլլար իրենց
կենդրունէն և եղերքներէն հանած ճառա-
գայթներուն տարբերութիւնն :

1503 Ի՞նչ արագութեամբ կը ծաւալի
լցոյն : — Լուսոյ երագութիւնն այնչափ
մեծ է որ արեւու ճառագայթ մը կըրնոյ 8
անգամ մեր երկրագնալին ըրջանը ընել՝
մէկ մանրերկրորդի մէջ :

(Ա.յս երագութիւնս ոչ կը նուազի ոչ
կ'աւելնայ ըստ իրեն խտութեանը լցուոյ .
եթէ արեւուն և թէ կանթեղի մը ուղիղ
լցոյն , եթէ տուններէն և թէ ծաւերէն , և
այլն , անդրագարձեալն , մէկ մանրերկրոր-
դին մէջ 320,000 հազարամերդ կ'ընթա-
նան . Հրանօթի սումբն եթէ պահէ իր

սկզբնական երագութիւնը՝ մէկ մանրերկրորդի մէջ՝ 590 մետր երթալով՝ 17 տարուան մէջ արևուն կը հասնի. մինչդեռ այս աստղին լոյսն՝ մեզի 8 վայրկենի և 13 մանրերկրորդի մէջ կը հասնի. Արևուն մեզմէ 83 միլիոն մղոն հեռու է, իսկը լուսինն միայն 207,000 մղոն :

1504 Ի՞նչ պատճառաւ գնուակէ մը զարնուողն չի լսեր հարուածին շառաչինը, այլ կը տեսնէ ճայթումէն պատճառեալ լոյսը : — Որովհետեւ լոյսն գրեթէ մէկէն ՚ի մէկ կը հասնի, գնուակին երագութիւնն ալ ձայնին ծաւալմանէն աւելի է, ուստի ձայնարձակ ալիքներն անոր հասնելէն առաջ կը զարնէ մարդուն :

1505 Պէտք է վախնալ վայրկանց և կայծականց լոյսէն : — Ռ. որովհետեւ, Ա. Փայլակին և ելեկտրութիւնն՝ որ զայն կը պատճառէ՝ երկուքն ալ միանդամայն մէկ կէտի մը կը հասնին, ուստի կարելի չէ կայծակէն զարնուիլ անոր փայլակը տեսնելէն վերջը : — Բ. Օդոյ մէջ եղած իւրաքանչիւր ելեկտրական թօթափմունք՝ մէկ մէկ հաւանականութեան ցոյց են կայծակէն չքարենուելու, որովհետեւ ելեկտրականութեան հաւասարակշռութիւնն աւելի կը մօտենայ հաստատուելու :

1506 Ուրեմն մենք առաւտուն արեւ 8 վայրկեան և 15'' հորիզոնին վրայ ելլելէն վերջը կը տեսնենք : — Ռ. որովհետեւ արեւոն ճառագագայթին առաջարկեալ ամենաքիչ կը

վրայ հասած են, և մենք ենք որ լուսոյ մէջ կը մտնենք, ոչ թէ լոյսն է որ ամեն առաւտ արեէն կ'լլէ մեղի հասնելու :

(Լուսաւոր ճառագայթիները ամպերէն կը խափանուին, բայց ասոնք այնչափ քիչ հեռու են երկրէն՝ որ երբ արեն նորէն երեայ՝ գրեթէ մէկէն իր լոյսն կը հասնի :)

1507 Ի՞նչ պատճառաւ արեն այնչափ լուսաւոր է : — Արեն հաստատուն մարմին մ'է ինչպէս երկիրս, զրջապատաճ մթնոլորտով մը . բայց այս տարրերութեալ միայն որ մեր մթնոլորտն թափանցիկ օդ է, իսկ արեւունն հրակէզ և լուսաւոր է :

1508 Ինչո՞ւ համար արեւուն լոյսն չի մարիր կամ չի նուազիր, ինչպէս կրակին, կանթեղին, և այլն : — Որովհետեւ արեւուն լոյսն այնպիսի բնութեամբ մ'է՝ որ այս վասնդիս ենթակայ չէ. մենք ալ նոյնպէս արեւուն լուսոյն հաւասար լոյս հայթայթել կը ընանք, առանց զայն պատճառող մարմինը սպառելու :

(Կըրի կտոր մը՝ որուն վրայ գրուի քիչ մը վառած թթուածին և ջրածին կազ, շացցրները չափ լուսաւոր կ'ըլլայ, առանց ամենենին հատնելու : Արեւուն լոյսն շատ գարերէ ի վեր միջու հաւասար գտուած է :)

1509 Ինչո՞ւ համար շատ անգամ երբ լուսինն լրացեալ պէտք էր երեալ՝ ամենենին չի տեսնուիր, կամ յետ երեւալուն՝ իր սկաւառակն ամբողջ կամ մասամբ կը

ծածկուի : — Որովհետեւ երկիրս կը հանդիպի արևոն և լուսին մէջտեղ, կը ծածկէ այս վերջինս իր շուրբին մէջ, և կը պատճառէ խաւարումն ըստածք :

1510 Ի՞նչ կերպով երկիրս իր շուրբը կը ընթայ խաւարեցընել լուսինը : — Որովհետեւ լուսինն արեւուն լուսովը կը փայլի, ասոր համար երբ դիմահար մարմին մը ինչպէս է երկիրս, իրեն և արեւուն միջոց մտնէ, կը հետեւի որ այս աստղը խափանուի, և լուսինն ալ ընդունելով լուսաւոր ճառագայթները՝ մութի մէջ կը մնայ, ասոր համար ալ չի տեսնուիր :

(Նմանապէս երբլուսինն արեւուն և երկիրիս մէջտեղ մտնէ, արեւուն լոյսն ալ մեղի չի հասնիր, ասոր համար մենք մթութեան մէջ կը մնանք. այս է արեգակնան խաւարումն ըստածն : — Որովհետեւ որ երկիրս, արեւն, աստեղը և բոլոր արարածք, մեծ մեքենայի մը նման անփոփոխ օրինօք կը շարժին, դիւրին է հասկընալն թէ ինչպէս կարելի է անվրէպ ճշտութեամբ մը կանխագուշակել խաւարմունքը, գիսաւորաց երեւունքը, և զիտնալ երկնից երեսը հանդիպելիքը :)

1511 Ի՞նչ պատճառու բարձր լերանց գագաթին վրայ աստեղը աւելի մեծ կ'երեան քան թէ դաշտին մէջ : — Որովհետեւ լերանց վրայ այս աստեղաց լոյսն անցնելով օդոյ նուազ կարգերէ քիչ կը ծըծուի անկէ, և աւելի մեծ քանակութեամբ կը հասնի հոն՝ քան թէ դաշտաց վրայ :

1512 Ինչո՞ւ համար ասաղերէն ոմանք աւելի լուսաւոր և մեծ կ'երեան : — Որովհետեւ մեղի աւելի մոտ են . արեւն որ երկիրիս ամենէն մօտ աստղն է աւելի մեծ կը տեսնուի և ամենէն աւելի լուսաւոր :

1513 Ի՞նչ է այն լուսաւոր գօտին՝ որ իրիկունը երկինքը կը նշմարուի, և որ կը կոչուի, Միիր կարին, կամ Յարդգոյ : — Բաղմութիւնն է աստեղաց, այնպէս մէկմէկու մօտ՝ և այնչափ մեզմէջ հեռու, որ իրենց լոյսըն մեղի խառն կու գայ և կը ձեւացընէ այն տեսանելի գօտին որ կը պատէ երկնիրի կամարը :

(Այս աստեղաց իրարակրցութիւնն առաջօք է միայն, իրենց մեզմէ հեռաւորութիւնն մեղի կ'արգելու հաջուելու անհուն միջոցները՝ որ զանոնք կը բաժնեն մէկմէկէ, և անշուշտ ն կամ ն անդամ արեւուն մեզմէ եղածին չափ հեռու են իրարմէ :)

1514 Ի՞նչէ այն լուսոյ գեսն կամ տուտն որ աստեղաց ոմանց կպած կ'ըլլայ : — Այն լուսեղէն տուտն կը թուի թէ աստեղաց մթնոլորտն ըլլայ, համանման արեւուն լուսաւոր մթնոլորտին, որ իրենց երկնային միջոցաց մէջ ունեցած շարժման երագութեանէն յետ կը մզուի՝ ընդգիմութեամբ միջոցին՝ յորում կը գտուին :

1515 Ի՞նչպէս կը կոչուին այս աստղերս : — Գիսաւոր աստեղը :

1516 Ինչո՞ւ համար սովորաբար կը վախ-

յուրի գիսաւոր աստղի մը երենալէն : — Որովհետեւ սնասպատութեամբ կարծուած է թէ , չար ազդեցութիւններ կ'ընեն երկրիս այս աստղերն , և ոմանք ալ կը հաւատան . բայց ով որ ուղղագաստութիւն ունի պէտք է թողու այս նախապաշարմնները , և համօղուի որ գիսաւորք ամեններն երկրիս փոփոխութիւն մը չեն բերեր :

1317 Ի՞նչո՞ւ համար երբ գեղեցիկ գիշեր մը աստղերը դիտենք , կը տեսնենք որ գոյներնին կը փոխեն , մեր տեսութենէն կ'աներեւութանան , վերջը հետղէտէ դարձեալ կ'երեւան պատճառելով ցոյմանք աստեղաց ըսուած երեսյթը : — Որովհետեւ պատի ըսուաւոր ճառագայթներն որ աստղերն մեզի կը հասնին՝ անցնելով օդոյ աւելի կամ նուազ խիտ կարգերէ , չարունակ կը կարճընան . օդոյ դիպուածական պարագաներն ալ իրենց գոյնը կը փոխէ , մինչդեռ ոմանք մէկէն կը կորսուին . այս արգասիքս մեծաւ երագութեամբ մը կ'ըլլան , իրենց լոյսն կը թուի թէ չարունակ կը նորոգուի , և կը պատճառէ այդ ցումունքը :

1318 Ի՞նչո՞ւ համար արեն , ըւսինն և քանի մը մոլորակբ չեն ցոլանար : — Որովհետեւ աւելի լոյսն մակերեւայթ մը կը ներկայացընեն և չար ըսուաւոր ճառագայթներ մեր աչքին կը հասնին , մինչդեռ ոմանք ալ փոփոխութիւններ կը կրեն , ուրիշները մեզի ուղղակի և անարգել կը հաս-

նին , այսպէսով մէկը զմիւսը կը փոխանակէ և թէ ցոլումն ըլլայ՝ զգալի չըլլար :

1319 Ի՞նչո՞ւ համար շատ հոգի միատեղ կըրնան նոյն առարկայն տեսնել : — Որովհետեւ առարկայն կը տարածէ անթիւ ճառագայթներ՝ որ ամեն կողմէ կ'երկըննան , և ամեններն ալ կըրնան զայն տեսնել տարբեր ճառագայթներով :

1320 Ի՞նչ պատճառաւ առարկայ մը հեռաւորութեանն համար անտեսանելի կ'ըլլայ : — Կամ անոր համար որ աչքին մէջ ձեւացած պատկերն այնչափ պղոփի կ'ըլլայ՝ որ չի կրնար տեսութիւնը վիրաւորել , և կամ որովհետեւ օգն կը ծըծէ առարկային լցուը՝ իր միջէն անցնելուն տաեն :

1321 Ի՞նչո՞ւ համար հետադիտակը տեսանելի կ'ընեն այն առարկաները , որ պարզ աչքը չեն տեսնուիր : — Որովհետեւ իրենք կը հաւաքեն անոր ճառագայթները չարտակալիք թուով քան աչքն , և դիտակին խոզմակին մէջ կը ձևացընեն պայծառ պատկեր , մը որ կը մեծնայ ոսպնապակեօք :

1322 Ի՞նչ է հետադիտակն : — Ե գործի մը երկու խողովակով ձևացած , մէկն մէկակին մէջ գրուած . երկու ոսպնաձեւ պատկեր տարրեր մեծութեամբ մէկմէկու կը յարին՝ անոր երկու ծայրերէն . մեծագոյնն կը զրուի այն կողմը՝ ուր դիտուելու է առարկայն , և կ'ըսուի առարկական . իսկ աչքը դիմացի կողմը կը գրուի , ուր պատի ոսպնաձեւն կայ :

1523 Ի՞նչ է թափանցկորիմ : — Այն յատկութիւնն զոր ունին մարմիններէն ու մանք , ըստ իրենց միջէն անցընելու , և առարկայից ձեւերը և պատկերները իրենց մէկ կողմէն մէկալ կողմ՛ը երեցընելու : Ամենէն աւելի թափանցկի մարմինք ալ կը գունաւորին՝ երբ ունենան բաւական հաստութիւն մը , որովհետեւ կը ծըծեն միշտ մաս մը իրենց միջէն անցնող լուսոյն , ինչպէս զուա ըլրոյ կաթիլ մը բարորովին ըլրուակ կ'երեւայ , բայց շատ քանակութիւնի դիտելով՝ կանաչացին դոյն մը :

1524 Ի՞նչ է զիմանարարիմն : — Այն յատկութիւնն զոր ունին մարմինք չըթողլու լուսոյ որ իրենց զանգուածին միջէն անցնի :

(Կրեթէ ամեն նիմիք ալ երբ ամենարարակ թիթեղի վերածուին՝ իրենց միջէն ըլրու կ'անցընեն : — Ոսկոյ ամենանուրբ թերթ մը առակւոյ մը վրայ հաստատուած՝ կառնու կանաչացին դոյն մը , երբ զետեղուի աչքին և լուսաւոր ճառագայթի մը միջոց :

1525 Ի՞նչ են լուսարափանց մարմինք : — Այն մարմիններն որ գրուելով աչքին և առարկայի մը մէշուեղ՝ կը թողուն որ անցնի մաս մը ընդունած լուսէն , բայց չեն զանազաններ դոյները , ոչ ալ չափել հեռաւորութիւնը : Ցղկեալ ապակին , թուղթըն , ողորկ լաթն , և այլն , լուսաթափանց մարմինք են :

1526 Ի՞նչու համար թուղթն , լաթն աւելի թափանցիկ կ'ըլլան երբ օծուին : — Որովհետեւ իւզն կը թափանցէ այս գոյութեանց ծակերուն մէջ և կը զիւրացընէ լուսոյն անցըլ :

(Այս յատկութեամբ զոր ունին մարմինք իւզը ծակերուն մէջ ընդունելու , ալ անթաթաւուչ կը մնան :)

Տ . Բ . — Աչք և Տեսուրիւն :

1527 Ի՞նչ է ոսպնաձեւ ըսուածն : — Թափանցիկ մարմին մը որ լուսոյ ճառագայթները հաւաքելու կամ ցրուելու յատկութիւնն ունի :

1528 Ի՞նչ է ոսպնաձեւաց ձեն : — Ընդհանրապէս երկու երեսով բոլորածե սկաւուակի ձեւ մ'ունին . որոց զոնէ մէկն կորէ , այսինքն տափակ չէ , այլ կամ գողաւոր է կամ կորընթարդ :

(Կորընթարդ կ'ըսուի այն որուն երեսն ուռած է , ինչպէս ոսպի հատն , իսկ զոգաոր՝ որուն երեսն խորացած է ինչպէս բակլազին . այն ոսպնաձեն՝ որուն երկու երեսն ալ ուռած ըլլան կրկնակորրեարդ կ'ըսուի , եթէ մէկն ուռած մէկալն շխտակ տափակորրեարդ . եթէ մէկն խոր մէկալն ուռած դրակորրեարդ . իսկ եթէ երկու երեսն ալ խոր ըլլան կրկնագորդ . եթէ մէկն չխտակ մէկալն խոր՝ տափագորդ :

1529 Փանի տեսակ ոսպնաձև կայ : — Կան ոսպնաձևք որ յատկութիւն ունին աւելի մեծ ցուցընելու այն առարկայն՝ որ իրենց միջն կը տեսնուի , և այս տեսակ ոսպնաձևներն կը կոչուին մերձարդիք , որովհետեւ կը մօտեցընեն մարմնէ մը հեռացած ճառագայթները , և զանոնք կէտի մը վրայ կ'ամփոփեն : Կան այնպիսիներ ալ որ առարկաներն աւելի պղոտիկ կը ցուցընեն , և կ'ըսուին հեռարդիք , որովհետեւ փոխանակ ճառագայթները հաւաքելու կէտի մը՝ անփէց կը հեռացընեն զանոնք :

1530 Ի՞նչ պատճառաւ մասեցուցած շքի մը յատակն ընդհանրապէս աւելի պղտի կը ցուցընէ զառարկայս : — Որովհետեւիր կողմերէն մէկն շիտակ , միւսն թեթէ մը դոգաւոր կ'ըլլայ , և կողմանց այս դիրքը կը ձեւացընէ հեռարդիք դոգայատակ ոսպնաձև մը , և միջն դիտուած առարկայքն աւելի պղտի կ'երեան :

1531 Ի՞նչո՞ւ համար մերձաւորիշ ոսպնաձևի մը միջն տեսնուած առարկայն աւելի մեծ կ'երեայ : — Անոր համար որ բոլոր ճառագայթներն ալ որ ոսպնաձևն փոյս կը համարին՝ անկէ մէկ կէտի մը վրայ կ'ամփոփուին , և մենք անոր մօտ նայելով կը տեսնենք առարկայն , ոչ թէ այն քիչ մը ճառագայթներով որ մեր բըրին կը հասնին , հապա բոլոր անոնցմով որ ոսպնաձևն մակերեւոյթը կը հասնին : Եւ որովհետեւ իւրաքանչիւր ճառագայթ կը

ներկայացընէ պատկեր մը նոյն առարկային , յայտնի է որ բոլոր այս պատկերներն գումարուած է ականէն շատ աւելի մեծ մը կը ներկայացընեն :

1532 Ի՞նչո՞ւ համար հեռացուցիչ ոսպնաձևով դիտուած առարկայն՝ մեղի աւելի պղտի կ'երեայ : — Որովհետեւ այն ճառագայթներն որ կը հասնին այս ոսպնաձևին մակերեւոյթը , անոր միջն անցնելու ատեն կը հեռանան , ասով չեն հասնիր մեր աչքին , ինչպէս որ պիտի զային՝ եթէ առարկայն պարզ աչօք դիտելու ըլլայինք . այլ պղտի մաս մը միայն կու գայ , և առարկայն մեղի աւելի պղտի կ'երեայ :

1533 Ի՞նչ է աչքն : — Այն կազմուածն՝ որովհեյսն կը հասնի տեսողական ցլլիին , և կը պատճառէ տեսութեան զգացումը :

1534 Ի՞նչ մասերէ ձեւացած է աչքն : — Աչքն զանազան մասեր ունին , ունակը հաստատուն և ունակը հեղուկ , և ասենքն ալ ունին մասնաւոր ազգեցութիւն մը առարկաները ճիշդ բըրունելու համար :

1535 Հէքին մէջ ո՞ր մասն է որ ոսպնաձև զործոյ մը տեղ կը բանէ : Բիրելակար բառածն , որ աչաց երկեք հիւթերէն մէկն է , և ճիշդ բըրին եւելը կը դտուի :

(Բիրէ է Ծիածանին բոլորածն կենդրոնական ծակն , ուսկից կը մտնեն լուսաւոր ճառագայթներն և առարկայից պատկերներն :

Ծիածանն է ձիգ մաշկ մը ուղղահայեաց

աշքիններթին մասին, ջըրային հիւթին մէջ՝
և կը ձեւացընէ զանտղան գոյներով ինչ-
պէս գորչ, չագանակի կամ և բոլորակը,
որով կը զանազանին մարդկան աչաց գոյնք
անոր միջի սե կէտն է՝ բիր ըստւած ծակն :

1536 Աչքին որ մասին վրայ կը նկարուի
մեր տեսած առարկաներուն պատկերն : —
Յահցատևակ մաշկին վրայ, որուն հետ կը
միանայ տեսողական ջիղն, և կը թուփ թէ
անոր մէկ ճիւղն ըլլայ, և կը պատէ բոլոր
ապակե լէն հիւթը . և ինչուան բիւրեղա-
կերպը կ'երկըննայ :

(Ապակե լէն հիւթն հալած ապակւոյ կը
նմանի, և աչքին ետևի կողմի զոգը կը լե-
ցընէ .)

1537 Ի՞նչ է աչքին թափանցիկ եղե-
րեայ թաղանձն : — Առաջակողման կորըն-
թարդ մասն, չատ մը մէկմէկու վրայ դը-
րուած մաշկերէ ձեւացած, որ կատարեալ
թափանցիկ է, և հագուցած է դիմահար
եղերկին մէջն, ինչպէս ժամացուցի ապա-
կի մը :

(Այս դիմահար եղերկիկ ըստւած մասն
կը շրջապատէ բոլոր աչքին գունաը, բաց
ի այն կէտէն՝ ուսկից տեսողական ջիղն
կանցնի .)

1538 Ի՞նչ կերպով կը բնանք որոշ տես-
նել առարկաները՝ թէ քանի մը բիթաշոփ
և թէ շատ փարսախ հեռաւորութեամբ : — Ա. Բիրն կ'ամփոփուի երբ շատ մօտէն
նայուի . և որչափ ամփոփուած ըլլայ բիրն՝

այնչափ աւելի մեծ կ'ըլլայ միջոցն՝ ուր առ-
արկայն կը բնայ շրջիկ: — Բ. Աչքն կը բ-
նայ այնպէս յարմարիլ որ մօտեցընէ ցան-
ցատեսակին մէկ կէտին մէջ շատ հեռա-
ցող ձառագայթները :

1539 Ինչո՞ւ համար ծերը մօտի առար-
կաներն որոշ չեն կը բնար տեսնել: — Ո-
րովհետեւ աչքն կը կորուսցընէ իր լիու-
թինը՝ քանի որ տարիքն առնուի. հետե-
ւաբար եղերեայ թաղանդին և բիւրեղա-
կերպին կորընթարդութիւնն կը նուազի,
և պատկերն երբ ցանցակերպին վրայ հաս-
նի հասարեալ ըլլար: Իրենց աչաց թի-
րութիւնը գարմանելու համար հեռու կը
բռնին զիրքը՝ երբ ուզենան կարդալ:

1540 Ինչո՞ւ համար մօտնք ալ եթէ ու-
ղենան կարգալ՝ կը ստիպուին երեսնին
դրիկն մօտեցընել: — Որովհետեւ իրենց
ոչաց եղերեայ թաղանդն այնչափ կորըն-
թարդ է, որ առարկաներէն եկած ճա-
ռագայթներն ցանցակերպին հանդիպե-
լէն առաջ կը միանան. հետեւաբար անոր
վրայ խառնակ պատկերներ կը ներկայա-
ցընին:

1541 Ինչո՞ւ համար երբ ճրագի մը նայ-
ուի արտեւանունքն սեղմելով բոլոր բոցն
ձառագայթներով շրջապատուած կը տես-
նուի: — Այս երեսյթս անկից է որ, եղ-
ջերեայ թաղանդը թրջող հեղուկն արտե-
ւանանց ակօսաց մէջ կը ձեւացընէ զլա-
նաձև և գոգաւոր տեսակ մ'ոսպնաձև, որ

ուղղահայեաց վեր ու վար կը բաժնէ վերի և վարի ճառագայթները :

1542 Ի՞նչ օգուտ տնի այն հեղուկն՝ որ միշտ լսրծուտ կը պահէ աչքին առջեի կողմին : — Ա. Թող չի տար օգոյ շաշափուելու եղջերեաց թաղանդին և եղջերին հետ . որ աչքին մասունքն են : — Բ. Կարգելու ճանձեաց ուղղակի մաշկերուն վրայ կենալու , ուսկից կը բնար սաստիկ նեղիչ զգացումն պատճառիլ :

1543 Ինչու համար եթէ առարկայից պատկերներն՝ որ կը գիտենք՝ մեր ցանցակերպին վրայ կը նկարուին , մենք զանոնք մեղմէ գուրս և հեռու կը տեսնենք : — Այս բանս առաջ կու գայ աչքին վարժութենէն , և հեռաւորութիւնները բաղդատելն . ի ծեկ իյրը որ յառաջացեալ հասակի մէջ աւաց լցոյ ընդունին՝ ի սկզբան առրիմաները այնչափ մօտ կը տեսնեն՝ որ կարծեն թէ աչքերնուն կը դպչին . հետզետէ կը ստանան զանազան հեռաւորութեանց գալափարը :

1544 Ի՞նչ կերպով երբ տեսնենք առարկայ մը շուտ մը գալափար մը կ'առնոնք իրեն մեղմէ ունեցած հեռաւորութեանը : — Ա. Որովհետեւ ցանցատեսակին վրայ հասած պատկերն քիչ կամ շատ մէծ կ'ըլլայ բատ հեռաւորութեան : — Բ. Քանի մը մանր մասեր որոշեալ հեռաւորութեամբ մը որոշ չեն տեսնուիր : — Գ. Միջակ առարկաներն ալ շատ կ'օգնեն այս որոշմանս :

1545 Ի՞նչ պատճառաւ լուսարձակ ճըժիներու լցոյն միայն դիշերը կ'երկայ : — Որովհետեւ օրուան լցոյն աւելի սաստիկ ըլլալով կ'անհետայցընէ այս ճնիներուն արձրկած տկար լցոյը :

1546 Ինչու համար աստղերն ցորեկ ատեն չեն տեսնուիր : — Որովհետեւ արեւուն լցոյն իրենց լուսէն աւելի սաստիկ է , զանոնք անտեսանելի կ'ընէ :

1547 Ինչու համար եթէ մէկն գտնուի շատ խոր հորի մը յատակը՝ կըրնայ տեսնել աստղերը՝ նաև ցորեկ ատեն : — Որովհետեւ լուսաոր ճառագայթներն ուղիղ գրծով կը ծաւալին . եթէ արեն ուղղահայեաց շլլայ հորին բերնին վրայ՝ լցոյն չի կըրնար հասնիլ ինչուան անոր յատակը կ'եցող դիտողին . ասոր համար ինքը մթութեան մէջ ընկլմած գտուելով՝ կըրնայ տեսնել աստեղաց լուսաւոր ճառագայթները . որ ուղղակի կ'իջնան հորին բացուածքին և ուղղակի ներս կը թափանցեն :

1548 Ինչու համար աւելի գիւրին կ'ըլլայ առարկայի մը հեռաւորութիւնն քաղաքի մը մէջ հաշուել , քան թէ ծովու մէջ կամ երկոնքի երեսը : — Որովհետեւ քաղաքի կամ դաշտի մը երես՝ միջին առարկաներն մեղի համար շատ մը բաղդատութեան կ'տեր կ'ըլլան , մինչդեռ ծովու մէջ կամ երկինքը՝ սովորաբար տարկայ մը չկայ՝ որ մեղի նիւթականապէս օգննէ բաղդատելու կամ չափելու :

1549 Ինչո՞ւ համար պարզ նոյուածքով մ'ալ կը ընանք դատել բաւական ճշութեամբ՝ առարկայից մեծութիւնը, ձևն ու դիրքը: — Այս դիւրութիւնս բնականէն չէ, հապա կը ստացուի երկայն վարժութեամբ զգացման, զոր կը պատճառին մեղի նոյն առարկաներն զանազան հեռաւ որութենէ տեսնուելով:

1550 Ինչո՞ւ համար արագութեամբ շարժելով վառած ածուղ մը՝ շարունակ լուսաւոր ըրջանակ մը կը տեսնուի, թէպէտելոյսն միայն կէտէ մը զայ: — Որովհետեւ լուսոյն ընթռնումն մէկէն ՚ի մէկ չըլլար, բայց մենք գեռ կը տեսնենք զայն իր թողած կէտին վրայ. և որովհետեւ այս բանս հետզետէ կը նորոգուի և ամենայն երագութեամբ, անոր համար կը տեսնենք լուսոյ ըրջանակ մը:

1551 Ինչո՞ւ համար է որ չենք կը ընար զանազաննել արագշարժով մարմնոյ մը զանազան գտյնիքը: — Որոշ չենք տեսներ զանոնք. որովհետեւ տեսութեան զգացումն մէկէն ՚ի մէկ չէ, այսինքն երբ զոյն մը, մարմին մը, կամ որ և է առարկայ մը՝ ցանցակերպին վրայ նկարուի, այն պատկերը ուղեղին անցընելու համար՝ պէտք եղած ժամանակը գործածելու է, վասն զի ուղեղն է գահ մեր զգայարանացը. այս ազգեցութիւնս արագ և ամենարագ է. բայց սակայն կը պէտք ունի նիւթական ժամանակի մը. այս միջոցիս գունաւու-

րած շարժող մարմինն հետզետէ կը ներկայացընէ իր գոյները. ասով զոյնի մը որոշ զգացումն գեռ չընեցած՝ ուրիշ մը կուզայ, և ահա ասոր համար իրարու կը խառնուին, և անկէց առաջ կու զայ միութիւն համասեռ գունոյ մը, որ սովորաբար տիրոջ գոյնն կըլլայ:

1552 Ինչո՞ւ համար յանկարծական լրցոն աչքերուն գէշ կընէ: — Որովհետեւ մթութեան մէջ բիբն շատ կ'ընդլայնի, երբ յանկարծ լրցոն համնի շատ լրւասւոր ճառագայթներ կը վիրաւորեն տեսովզական ջիւղը, քանի որ գեռ բիբն ամփոփուած չէ:

1553 Ինչո՞ւ համար քիչ մ'ատեն տեղ մը կենալէն վերջը՝ նաև ամենասպայծառ լրցոն ալ զինզ չի նեղեր: — Որովհետեւ կը վարժեցընենք մեր աշաց բիբը՝ ընդունելու մեղի պէտք եղած լուսոյ քանակութիւնը: Բիբն, ինչպէս որ ըսինք (1555) ծիածանին կենդրունին մէջի ծակն է, և անկէ կ'ընդունի մեր ուղեղն տեսութեան զգացումը. եթէ աչքին մէջ գործարանն անկատար ըւլայ, տեսութիւնն ալ անկատար կ'ըլլայ, բայց առանց ըրբի կոյր կ'ըլլայ:

1554 Ինչո՞ւ համար լուսոյ մէշ կ'ենալով չենք կը նար մթութեան մէջի առարկաները տեսնել: — Որովհետեւ բիբն շատ ամփոփուած կ'ըլլայ լուսոյ ազդեցութենէն, ասով բիշ լուսաւոր առարկայէ մը եղած տկար ճառագայթներէն՝ բիշ մաս մը կ'ամփոփէ, ասոնք ալ մասամբ մը կը կորսուին աւելի պայծառ լուսոյ ընդզիմութենէն:

(Մութի մէջ բիրը շատ կ'ընդլայնին ,
կարելի եղածին չափ առարկաներէն եղած
ճառագայթներուն մեծ մասն ամփոփելու
համար . առանց որոյ անկարելի է զանոնք
տեսնել :)

1555 Ինչո՞ւ համար գիշերը շատ աղէկ
լուսաւորած սենեկէ մը ելելով, զմեղ զր-
ջալապատող առարկաները չենք տեսներ : —
Որովհետև իրին գեռ շատ ամփոփուած ըլ-
լարմալ լուսէն՝ շատ քիչ ճառագայթ կ'ընդ-
ունի . և մենք մութի մէջ առարկաները
տեսնելու համար՝ պէտք կ'ունենանք որ
շատ ճառագայթներ մեր տեսարանաց
զարնուին :

(Քիչ ժամանակ պէտք է բըրին ընդլայ-
նելուն, և այս ընդլայնմամբ կը վարժինք
մթութեան, և կըրնանք զանազանել զմեղ
արձագանող առարկաները :)

1556 Իրաւ է որ կատուներն գիշերն
ալ կը տեսնեն : — Այս միայն թէ շատ
մութ շըլլայ :

1557 Ինչո՞ւ համար կատուներն նաև
մեր չտեսած ատենն ալ կը տեսնեն : — Ո-
րովհետև կըրնան իրենց բիրը մարդկանց
մէ շատ աւելի ընդլայնել, ասովլ կ'ամփո-
փեն առարկայէ մը անդրադառնալ ճա-
ռագայթից մեծ քանակութիւն մը, և զայն
տեսնել :

(Ամեն առարկայ զոր կը տեսնենք՝ եթէ
իրենք իրենցմէ լուսաւոր շըլլան՝ մեղի կը
յայանուին իրենց անդրադառնած լուսոյ

ճառագայթներով, արդ յայտնի է որ ա-
մենկին լուսոյ ճառագայթ չեղող տեղ մը
կարելի չէ որ մարմին մը անդրադառնէ
զայն . ուրեմն կատուներն ալ չեն կըրնար
տեսնել երբ կատարեալ մութ ըլլայ :

1558 Ինչո՞ւ համար կատուներուն աշ-
քերն մութ տեղ մը փայլուն կ'երեան : —
Որովհետև աչքին խորը և ճիշդ տեսողա-
կան ջղին վրայ, ունին պատի փայլուն բիծ
մը մարդած մետաղի նման, որուն վրայ
հասնելով բոլոր լուսոյ այն ճառագայթնե-
րը՝ զոր իրենց բիրն կ'ամփոփէ կ'անդրա-
դառնուին . և մենք այս միացած ճառա-
գայթները տեսնելով կատուներուն աշ-
քերը փայլուն կը կարծենք :

1559 Ինչո՞ւ համար ճառագարդ ճամբայ
մը, կամ երկայն և ուղղի փողոց մը՝ հե-
ռուն նեղ կ'երեան, ինչուան այնչափ որ
երկու կողմունքն մէկմէկու միացած կը
կարծուին : — Որովհետև առարկաներէն ե-
լած ճառագայթներն՝ որչափ հեռու ըլլան,
այնչափ նուազ բացահայեաց կ'ըլլան, և
աչքին հասնելով ձեւացուցած անկիւնն
միշտ աւելի կը պատիկնայ :

1560 Ինչո՞ւ համար շիտակ փողոցի մը
չենիքերն կամ ճամբու մը երկայնքր տըն-
կուած ճառերն՝ որչափ աւելի հեռու ըլ-
լան՝ այնչափ աւելի պատիկ կ'երեան : —
Որովհետև որչափ աւելի հեռու ըլլան՝ աշ-
քին ձեւացած անկիւնն երթալով կը պըզ-
տիկնայ, այսինքն միշտ աւելի սուր կ'ըլլայ :

1561 Ինչո՞ւ համար որ և իցէ առարկայ մը նաև մեծ , զոր օրինակ մարդ մը , լեռան կամ շատ բարձր աշտարակի մը վրայ կեցած՝ թոշնոյ պէս պղտիկ կ'երևայ : — Որովհետեւ շատ հեռու կամ բարձր առարկայէ մը ելած ճառագայթներն կը ճեացընեն անկիւն մը , որ գիտողին մօտ գըտուած թռչնէ մը ճեացածէն աւելի մեծ ըլլար :

(Եղյն պատճառաւ լուսինն աւելի մեծ կ'երևայ քան աստղերն , թէպէտե հազարաւոր անդամ անոնցմէ պղտիկ է . զգայարանաց այս պատրանին պարզապէս հեռաւորութենէն առաջ կու գայ :)

1562 Ինչո՞ւ համար մարմինյ մը շուրբն որ պատին վրայ նկարուի , այնչափ աւելի կը մեծնայ , որչափ այս մարմինն վառած կանթեղին մօտեցուի : — Որովհետեւ լուսոյ ճառագայթներն որ մարմինյն շրջապատը կը սոտերագրեն երթալոյլ կը տրամադրի որչափ որ իրենց ծագումէն հեռանան :

1563 Ինչո՞ւ համար ծովուն մէջ հեռուն եթէ նաւ մը դիտենք , առաջ կայմերուն ծայրերը կը տեսնենք , վերջէն առագաստները և կամաց կամաց ամբողջ մարմինը : — Որովհետեւ ծովուն մակերեւոյթն երկրիս գնտածն զըրից նման կորընթարդ է , ուստի շըրոյ կորութիւնն տեսութենէն կը ծածկէ նաւուն մարմինը , մինչդեռ տեղի բարձր մասերն կը տեսնուին :

1564 Ի՞նչ բանի կու գան երկու տչքեր՝

եթէ միայն մէկ պատկեր մը կը տեսնենք առարկայից : — Ա . Մեր աեսութեան ընդարձակութիւնը կ'աւելցընեն : — Բ . Զայն աւելի թափանցիկ կ'ընեն : — Գ . Կը նըւագեցնեն զգայարանաց յոդնութիւնը : — Դ . Առարկայից ձևերը աւելի որոշ կը ցուցընեն :

1565 Մէկ աչքը գոցելով պատկեր մը միայն կը տեսնենք , զայն գոցելով և միւսը բանալով դարձեալ նոյնը կը տեսնուի , ինչո՞ւ համար ուրեմն երե երկուքն ալ բանանք՝ երկու պատկեր չենք տեսներ : — Որովհետեւ պատկերի մը աչքին ցանցակերպին վրայ ըրած զգացումն համանման է միւսին վրայ եղածին . և այս երկու հաւասար զգացումներն ուղեղին անցնելով միայն շըղի մը միջոցաւ , թէպէտե պատկերն երկուք են մէկի կը միանան , և մենք երկու միացեալ պատկերաց խառնուրդով կը տեսնենք :

1566 Եթէ այսպէս է ինչո՞ւ որոշ բայց մէկմէկու նման երկու առարկաներ՝ մեղի մէկ պատկեր մը միայն չեն ցուցըներ : — Ա . Սովորաբար բնութեան մէջ այս կատարեալ համանմանութիւնն չկայ . մեծ ծառի մը բոլոր տերեւներն , բոլոր կենդանիք , ունին մասնաւոր կերպարանք մը՝ որ զիրենք մէկմէկէ կը զանազանէ . տարբերութիւնն երբեմն այնչափ պղտիկ կ'ըլլայ որ՝ շատ անգամ կրնանք զանոնք իրարուհետ շիրովիւն երբեմն այնչափ պղտիկ կ'ըլլայ

երկու հատ գտուին՝ զանազանութիւննին շատ զգալի կը լլայ : — Բ . Միւս առարկաներն ալ մեզի կիմացընեն որ անոնք՝ որոնց վրայ աչքերնիս կը հաստատենք՝ երկու են և ոչ մէկ . և յիրաւի , եթէ մէկն միւսին հետ նոյնանար , ինչ պիտի մնար պարապ միջոցին մէջ . այս պարզ անդրադարձութիւնն մեզի զանազանել կու տայ երկու նաև համանման առարկաներ :

1567 Ի՞նչ է հաստատայիտակե (Stéreoscope) : — Գործի մ'է որուն միջոցաւ երկու տարբեր բայց համանման առարկաներ՝ առանձին տեսնուելով , մէկը մէկ աչքով մէկալն ալ միւսով , այնպէս որ կարելի ըլլայ բազգատութիւն մը ընել չըֆակայ առարկայից հետ , այնպիսի տպառութիւն մը կը պատճառեն մեր տեսութեան վրայ՝ որ անոնցմէ մէկ հատ միայն կը տեսնենք :

1568 Ի՞նչպէս կը ընայ ըլլալ որ երկու առարկաներ հեռու և զորքի բազգատութենէ՝ միայն մէկ հատ կը տեսնուին : — Եթէ երկու առարկաներ ամենենին հաւասար ըլլան , և եթէ նոյն լցոն երկուքին վրայ ալ հասնի , յայտնի է որ երկու ամենենին հաւասար պատկերներ պիտի աղղեն ցանցատեսակաց վրայ , որոնք նոյն տաեն չտեսնելով ուրիշ պատկերներ՝ որոք կարենան բազգատութիւն մը ընել , մէկ աղղեցութիւն մը միայն կը զգան , և զանիկաց մեր զգայրանաց կ'անցընեն ; այն-

մէկ միացած՝ որ երկու առարկաներն մէկ հատ միայն կ'երեան :

(Հաստատայիտակն այս յատկութիւնս ունի որ՝ եթէ առաջ տեսած ըլլանք երկու առարկաները ցանցատեսակն երկու պատկերաց տպաւորութիւնը քիչ մ'ատեն կը պահէ , մինչև քիչ մը վկրը կը տեսնենք երկու պատկերաց մօտենալը և վրայէ վրայ գալը , մեզի մէկ հատի նման երենալով :)

1569 Բայց եթէ բնութեան մէջ չկայ այս կատարեալնմանութիւնն՝ ինչպէս կը ընան երկու առարկաներ նոյնանալ : — Երկու տարբեր առարկաներ չեն որ կը գիտենք հաստատայիտակին մէջ , հապա երկու պատկերներ մի և նոյն առարկայի մը արևուն լուսով առնուած :

1570 Ի՞նչպէս կը ընայ լուսով պատկերներ հանուիլ : — Այնպէս ընելով որ առարկայից պատկերներն մնայուն ըլլան թզի , ապակւոյ , կամ արծաթի կտորի մը վրայ , նաև այն ատեն՝ երբ առարկայն որ զայն կը պատճառէ՝ գազրի անոր վրայ անդրադառնալէն . և այս բանս կ'ըլլայ լուսանկարութեամբ (photographie) :

1571 Ի՞նչո՞ւ համար հայլիէ մը անդրադառնեալ մեր պատկերն՝ կ'աներեւութանայ , հազիւ թէ կեցած զիբբերնէս շարժինք : — Որովհետեւ լուսոյ ճառագայթներն ապահովուն կամ հայելոյն թիթեղին վրայ ամենենին ազգեցութիւն մը չեն ըներ , հետեաբար երբ ապակւոյն վրայ չենք նա-

յիր՝ ամենեւին մեր դէմքին հետքն ալ չի
մնար :

(Եթզ մարմարի մը դէմ նետուի փայտի
կտոր մը՝ յետ կը մղուի . բայց մարմարն
շօղավման էտին ամենեւին նշան չի պա-
հիր : Բայց եթէ փայտի կտոր մը նետուի
ապակւոյ մը վրայ՝ ասիկայ կը կոտրի, այս-
ինքն փայտն կ'ընէ ազգեցութիւն մը՝ որ
զապակին կը կոտրէ . ուրեմն մի և նոյն
դրյացութիւնն ունի ազգեցութիւն մը՝ որ
մարմնոյ մը վրայ բանի չի գար, ընդհա-
կառակն ունի զօրաւոր ազգեցութիւն մը
ուրիշ նիւթոյ մը վրայ : Այսպէս ալ լցոն,
հասնելով շատ մարմնոց վրայ՝ և ոչ ամե-
նափոք ազգեցութիւն մը կ'ընէ, իսկ ո-
մանց վրայ ալ մեծ փոփոխութիւններ կը
պատճառէ :)

1572 Ո՞ր դրյացութիւնքն են որոնց վը-
րայ լցոն աւելի բուռն ազգեցութիւն մը
կ'ընէ : — Ա. Բուսոց տերևներն, որոնց
կու տայ գեղեցիկ կանաչութիւն մը . ա-
սոնց՝ լուսոյ հակառակ կողմէիրն տժգոյն և
ճերմակ կըլլան : — Բ. Քանի մը պարզ
մարմինք, օրինակի համար՝ բլուն և թը-
թուածինն, որոնք կը պահուին մթութեան
մէջ խառնուած, բայց կը զուգագրին երբ
արևուն լուսոյն դրուին (268). — Գ. Քա-
նի մը տեսակ աղեր, օրինակի համար,
արծաթի մանջուկն, արծաթի բլուռուկն,
և այյն :

1573 Ի՞նչ փոփոխութիւն կը պատճառէ

արեւուն լցոն՝ քլոռուկին և արծաթի ման-
չուկին վրայ : — Լոյն երբ հասնի այս
մարմնոց վրայ՝ անոնց ճերմէկութիւնը սեկ
կը փոխէ :

(Այժմարի բլուռուկն աղ մ'է որ կը զինուի
շատ լոյծ բորակային թթուտի մէջ արծաթ
խառնելով, վերջէն ծովային աղ թափե-
լով ջրով անդայտացած լուծման մէջ. աս-
կէ ձեւացած ճերմակն է արծարի բլուռուկն :

Այժմարի մանջուկն կը զինուի մանջուկ մը
թափելով արծաթի բորակատի լուծման
մէջ, ասկէ առաջ եկած յարդագոյն ճեր-
մակն է մանջուկ արծաթի :)

1574 Ի՞նչ կերպով օգտակար եղաւ՝ լու-
սոյ այս աղերը ճերմէկութիւնէ ՚ի սկ փո-
խելու յատկութիւնն : — Հասցընելով այն
լցուը՝ որ կ'անցքրագառնայ որ և իցէ առար-
կայէ մը՝ այս աղերով օծուած թզթի մը վը-
րայ, կը պատահէ որ ըստ իրեն սաստկու-
թեանը աւելի կամ նուազ կը սկզբնէ այն
կէտերը՝ որոնց վրայ կը հասնի, և անա-
րատ կը թողու միւսերը . հետեւաբար առ-
արկայից պատկերն՝ թզթին վրայ կը տը-
պաւորի :

(Լուսոյն ազգեցութիւնն կը սաստկա-
ցուի սապնածեմի մը միջոցով, և անով
կ'ասնուին կատարեալ նմանութեամբ դէմ-
քիր : Ասոնք են լուսանկարի (Փոթոլիրաֆ)
դէմքեր, և յայտ է թէ հարկաւ մէկն միւ-
սին համանման պիտի ըլլայ : Երկայն կ'ըլ-
լար այս լուսանկարին դործողութիւնը բա-

ցատրիէլ, բաւական ըլլայ յիշեցընել զըլ-
խաւոր սկզբունքը, այսինքն թէ լոյն կ'ան-
դրագարձնէ զպատկերը. և պատկերն կը
տպաւորուի թիթեղի մը վրայ՝ փոխանակ
անհետանալու, ինչպէս կ'ըլլայ հայելոյն
վրայ :)

§. Գ. — Բեկրեկումն լրւայ :

1575 Ի՞նչ պատճառաւ կտրուած բիւրե-
ղի կտոր մը երբ լրւայ զէմ գրուի կ'առ-
նու զանազան գոյներ : — Որովհետեւ լց-
որն բիւրեղին անցնելու ատեն՝ զինքը կաղ-
մող մասսանց մէջ կը բաժնուի, այսինքն՝
այն զանազան գոյներն որ լցոր կը կաղ-
մեն՝ կը հեռանան մէկմէկէ զատուած, և
որոշ կ'երեան :

1576 Ո՞ր գոյներն են որ միւսերէն աւելի
որոշ կ'երեան : — Կատոյտն, գեղինն և
կարմիրն :

1577 Ինչո՞ւ համար բիւրեղի կտրուանք
այս գոյները մէկաններէն աւելի որոշ կը
ցուցընեն : — Որովհետեւ այնպէս մը կը-
տրուած են՝ որ միւսերէն աւելի աղէկ կը
լուծանեն լցոր, երկայն և եռանկիւն ա-
պակիները այս բանս աւելի աղէկ կը պատ-
ճառանեն, և այս կերպով կտրուած ապակին՝
կըսուի հատուածակողմնե :

1578 Ինչո՞ւ համար հատուածակողմ մը
կը բաժնէ լուսոյ ճառագայթ մը զանազան
գոյներու : — Որովհետեւ ամեն գոյն ունի-

տարբեր բեկրեկում մը. կարմիրն ամենէն
նուազ բեկուողն է, կապոյտն ալ ամենէն
աւելի բեկրեկողն, հետեւաբար կապոյտն
հայելադիտակին վերի մասը կ'անդրագար-
նայ, իսկ կարմիրն վարի մասը :

1579 Ինչո՞ւ համար երեք գոյն միայն չեն
տեսնուիր, հապա կը զանազանուիին ին-
չուան եօթն հատ, լուծեալ լուսոյ ճառա-
գայթի մը մէջ : — Որովհետեւ առջի երեք
գոյներուն երկուքին շշափման կէտերուն
միջոց՝ կը ձեւանան ուրիշ երկուք ալ, և բո-
լորն մէկէն կ'ըլլան եօթն գոյն :

(Ո՞վի երկու գոյներն նախական կ'ը-
սուին . անոնց միւսենէն ծագած գոյ-
ներն կ'ըսուին բաղադրեալ գոյնք . և այս
է իրենց կարգն հայելադիտակին մէջ, սկը-
սելով վարէն դէպ ի վեր . ա, կարմիր .
բ, նարնջային (կարմիր ու գեղին). գ, գե-
ղին . դ, կանաչ (գեղին և կապոյտ). ե,
կապոյտ . զ, լեզակ . կ, մանիշակ (կապոյտ
և կարմիր) . չայելադիտակ կ'ըսուի այն
գունաւոր և երկայնաձեւ պատկերն՝ զոր
հատուածակողմէն հսուորած և զատուած
լուսոյ ճառագայթներն կը ձեւացընեն մութ
յատակի մը վրայ :)

Ա. — Ծիածան :

1580 Ինչո՞ւ համար ծիածանն կը զանա-
զանուի ամակերէն՝ իրեն գեղեցիկ գոյնե-
րավը : — Որովհետեւ արեգական լուսաւ-

ւոր ճառագայթներն որ կը զարնեն անձրեւ լու կաթիլներուն վրայ՝ կը քակտուին, և կ'անդրագաղքարձնեն մութ ամպի մը վրայ զիրենք բաղադրող գոյները. ինչպէս որ մենք հասուածակողմօվմը կը ընանըք զանոնք անդրագարձնել որ և իցէ մարմնոյ մը վրայ:

1581 Ի՞նչ կարեւոր պայմաններ պէտք են՝ որ ծիածան երեւնայ: — Պէտք է, Ա. որ քանի մը ամպեր արևուն դէմ գտուին: — Բ. Որ այս սե ամպերն ընդունին հայելադիտակը, այսինքն անձրեւու կաթիլներէն անդրագարձեալ արևուն պատկերը: — Գ. Որ արեւն շատ բարձր ըըլլայ հորիզոնէն:

1582 Ի՞նչ փորձով գիտենք որ ծիածանն անձրեւ կաթիլներէն քակեալ լուսով կը պատճառի: — Կը տեսնենք որ ջրլիճք, ջրացայտք, անձրեւու կամ ցօլու կաթիլք՝ որ մարգաց խոտաք կը թթվեն, շատ յուղեալ ծովու ցայտուիք, և այլն, արևուն ցողմասիր նոյն երևոյթը կը պատճառեն:

1583 Ինչո՞ւ համար ծիածանն ամենամեծ աղեղան մը ձեւ կ'ունենայ: — Որովհետեւ արեւն կը ըլլալովի իր ճառագայթները չորս կողմը կը թթվացընէ, այս պատճառաւ կը ընացինք ծիրանի գոտին ահագին շրջանակի մը նման տեսնել, եթէ հորիզոնին յատակն մեղմէ միւս իէսը շըծածիկը:

1584 Ինչո՞ւ համար երբեմն կը տեսնուին երկու համակենդրոն ծիածանք: — Որով-

հետեւ երբ արեւն գեռ շատ ցած ըլլայ հորիզոնին վրայ՝ անձրեւի կաթիլներն որ ճառագայթները կ'անդրագաղքարձնեն՝ զանոնք թէ վերէն կը նդունին թէ վարէն, այն ատեն կը պատահէ որ լուծեալ կամ անդրագարձեալ ճառագայթներն ամպին վրայ կը բաժնուին երկու կարգի, մէկը բարձր և միւսը ցած:

1585 Ի՞նչ պատճառաւ երկու կամարներուն զոյներն նոյն գիրքը չեն պահեր, վըրացի կամարիներն հակառակ շրջուած կ'երեան: — Որովհետեւ ստորին կամարին մէջ կը տեսնենք ճառագայթներ՝ որոնք կաթիլն վերի կողմէն կը մտնեն, և վարէն կ'անդրագառնան, մինչդեռ միւսին մէջ կը նշարին այն ճառագայթներն որ կը մտնեն վարի կողմէն, և ասոր համար վերէն կ'անդրագառնան:

1586 Ինչո՞ւ համար օճառի (սապոնի) փըրփուրներն կը ներկայացընեն գունոց փափու երանգներ: — Որովհետեւ կողմերնին զանազան հաստութիւն ունի, և քանի որ հաստութիւնն նուազի իրենք կը ներկայացընեն հետզհետէ զանազան կէտերու մէջ ծիածանի բոլոր գոյները:

(Բեկրեկումն կը տարբերի ըստ պատաստին կամ թաղանդին հաստութեանը. բայց երբ ասիկայ հասնի վերջի աստիճանին բրութեան մը բոլոր գոյներն ալ կ'անհետանան, և այն ատեն փրփուրն սե կ'երեւոյ:)

1587 Ինչո՞ւ համար երբեմն ամսոց ե-

գերքներն ամենապայծառ կ'ըլլան , մինչ-
դեռ կենդրոնն կը ներկայացընէ քիչ փայ-
լուն գոյն մը և երբեմն նաև մութ : —
Որովհետեւ ամսոց եղերքներն նուազ թան-
ձըր ըլլառով՝ քիչ լրյա կը ծըծեն և աւելի մեծ
քանակութիւն մը կ'անդրադարձնեն :

1588 Ի՞նչ պատճառու է որ երբեմն ան-
ապատաց մէջ ճանապարհորդք կը կար-
ծեն թէ իրենց առջև կի՞մ մը կը տեսնեն ,
որուն վրայ կ'անդրադառնան բարձր առ-
արկաներն , բայց միշտ կը հեռանայ որ-
չափ որ իրենք ուղեն մօտենալ : — Այս
բան կ'ըլլայ երբ օգն բորբոքած զետին
շշափոմմըր սաստիկ անօսրացած ըլլայ .
որովհետեւ այն ատեն իր թանձրութիւնն
կը նուազի՝ բարձր կարգերու ելլերով , և
դառտած քիչ ծառերն , աւազէ լեռներն ,
և ցած հորիզոնն կ'անդրադառնան ցամաք
և աւազուտ զետինին վրայ , ինչպէս հայել-
ոյ մը վրայ , և լըմի կերպարանք մը կու
տան :

(Եթէ օգն աւելի անօսրացած ըլլայ սառ-
թին կարգերուն քան թէ բարձրերուն , այն
ատեն բաւական հեռաւորութեամբ տես-
նուած առարկաներն օգոյ մէջ կախեալ և
զիսիլայր կը տեսնուին)

§. Դ. — Անդրադարձորիւն լուսոյ :

1589 Կըրք պատի մը գէմ նետուի գնտակ
մը ինչպէս կը կոչուի անոր կտրած զիծը :
— Կըսուի դիպոդորեան զիծ :

1590 Կըրք գնտակն յետ ցատրէ՝ ինչպէս
կըսուի գնտակին այս երկրորդ նշանած
զիծն : — Կը կոչուի անդրադարձորեան զիծ :

1591 Կըրք մեր երեսին լուսաւոր ճառաւ-
գայթներն հանդիպին հայելոյ մը մակե-
րեսութիւ , ինչպէս կը կոչուի իրենց կտրած
զիծն : — Կըսուի դիպոդորեան զիծ . իսկ
երբ լուսաւոր ճառագայթներն մեզի գառ-
նան անդրադարձութեան զիծը կը նշա-
նեն :

1592 Ի՞նչ է անկիւնն : — Անկիւնն է
ձեւ մը ոսվորաբար երկու ուղիղ զծերէ
ասավ կու զայ , որոնք առանց ժմանակ գը-
րութուն իրարու կը գաչին կէտուլ մը :

(Մեր բազուկն ուղիղ է . արդ եթէ զայն
ձկինք՝ արմուկին մէջ անկիւն մը կը ձեւա-
ցընէ : Բաց զիրքն կը ներկայացընէ հարթ
կամ ուղիղ մակերեւոյթ մը . եթէ զայն
ուղինանք գոցիկ կը սկսինք ձկել . եթէ
ինչուան կէսը բարձրանայ կը ձեւացընէ
մէջուեզը անկիւն մը . այս անկիւնն կը-
սուի բար անկիւն ինչուան որ ձեռքերնիս
բանած զրբին մասն ուղղահայեաց ըլլայ
յատակին՝ որուն վրայ կը զառափ զրբին

միւս մասը . այն ուղղահայեացն հորիզոնականին հետ միացած՝ կը կազմէ ուղիղ անկիւն . եթէ զայն դեռ աւելի գոցնէնք , այն ատեն կը ձևանայ < ձեռվլ կոտրած անկիւն մը , որ միշտ երթալով կը նեղայ , ինչուան որ գիրքն բոլորովին գոցուի . ասիկայ ալ կըսուի աւր անկիւն : ուրեմն իրեք տեսակ անկիւն կայ , բութ , ուղիղ , և սուր :

1593 Ի՞նչ է դիպուրեան անկիւնն : — Այն անկիւնն որ առաջ կու գայ գիպողութեան գծէն և ուղղահայեացէն :

(Ուղղահայեացն է այն գիծն որ հորիզոնական ուղղից գծի մը վրայ իջնալով երկու ուղղի անկիւն կը ձևացընէ , ինչպէս ↓ :)

1594 Ի՞նչ է անդրադարձութեան անկիւնն : — Անդրադարձութեան գծէն և ուղղահայեացէն ձևացած անկիւնն :

1595 Ի՞նչու համար մեր կերպարանք հայելոյն մէջ կը տեսնենք : — Որովհետեւ լուսոյ ճառագայթներն որ կ'ելլեն մեր մարմնէն , հայելոյն հասնելով յետ կանդրագունան , և անդրադարձման գծից միջոցաւ մեր աչաց կը հասնին :

(Լուսաւոր ճառագայթներն հայելիէն կ'անդրադարձուին որովհետեւ չեն կըրնար հայելոյն ետեւ բառուած բաղախառնէն անցնիլ :

Բաղախառն կըսուին բոլոր այն մետաղաց խունուրդներն որոնց մէջ սնդդկի քանակութիւն մը կը մտնէ : Հայելեաց այն փայ-

լունութիւնը տուուղն՝ սնդդկի հետ միացած և ամենանուրը թերթերու վերածուած անազով շնոււած է :)

1596 Ի՞նչու համար հայելիէ մը անդրադարձեալ պատկերըն կը կրկնեն բոլոր այն տարկայից շարժմունքները՝ որ իրեն մէջ կը նկարուին : — Որովհետեւ բոլոր զիմուղութեան անկիւններն հաւասար են անդրադարձութեան անկեանց . ասով այն ամեն շարժմունքն ալ հաւատարմաբար կը կրկնուին , և նոյն իսկ հեռաւորութիւնն այլ կը պահուի . ասոր համար մեր գէմբը հայելիէն այնչափ հեռու կը տեսնենք՝ որ չափ որ մենք անկէ հեռու կը գտուինք :

1597 Ի՞նչպէս շինուած են այն հայելիներն որ պատի կը ցուցընեն իրենց միջն տեսնուած առարկաներն : — Այս հայելեաց ապակին մերձաւորիչ սոսնաձեի մը նման կոր է (1597.)

1598 Ո՞ր հայելիներն առարկաները ընականէն շատ աւելի մեծ կը ցուցընեն : — Անոնք՝ որոնց ապակին հեռացուցիչ սոսնաձեի մը նման ձևացած ըլլայ (1598.)

1599 Ի՞նչու համար ջըրէն անդրադարձեալ առարկայի մը պատկերն միշտ գիլիւվայր կ'ըլլայ : — Որովհետեւ դիմողութեան անկիւններն հաւասար են անդրադարձութեան անկեանց :

1600 Ի՞նչու համար երբեմն պատուհանաց ապակիներն բորբոքած կերեան առաօտոր կամ արեւուն մոնելու ատեն :

Որովհետեւ ապակին աղեկ անդրագարձոցի ըլլալով, յետ կը զրիէ արեւուն այն ճառագայթները՝ որ իրեն կը հասնին :

(Այն ատեն որ արեն շատ բարձր կը լըս ջորիցնէն՝ գծուար է իր ճառագայթները տանց ապակիներէն անդրագարձեալ տեսնել, որովհետեւ արեւուն դիմահար ճառագայթներն անդրագարձեալով հաւասար գծով մը՝ կը ձևացընեն մեծ բութ անկիւն մը, և դիմովն որ ուզենայ կենալ իրենց կտրած անդրագարձութեան գծին մէջ տեղ չը՝ չի կրօնար պատուհանը անենել :)

1601 Ինչո՞ւ համար քանի մը գոյացութիւններ՝ ինչպէս ապակին և պողովասն ամենափայլուն են, մինչդեռ կան ուրիշներ ալ որ չեն : — Ապակին և պողովասն ամենափայլուն են՝ որովհետեւ շոտ լըս կանդրագարձնեն. ընդհակառակին չեն փայլիր այն նիւթք՝ որ կը ծըծեն իրենց վրայ զարնող լուսաւոր ճառագայթից մեծ մասը :

Ա. — Գոյեք :

1602 Ի՞նչ է գոյեն : — Մակերեւութէ մը անդրագարձեալ լուսոյն մեր անսողութեան գործարանին վրայ ըրած զանազան պղեցովթիւնն :

1603 Ի՞նչ է մարմնոց գոյներուն պատճառն : — Իրենց մակերեւութիւննութիւնն, որ լուծելով լըսը՝ անոր գոյներէն մէկ քա-

նին կը ծրծէ, մինչդեռ զոմանս ալ կ'անդրագարձնէ . այս անդրագարձած գոյներն են որ մարմնոց յատուկ գոյն կը կարծուին :

1604 Ինչո՞ւ համար ծովու ջուրն կանաչէ : — Ա. · Որովհետեւ լյան հասնելով ջըրոյ մակերեւութիւն մասսամբ կը լուծուի, կանաչն ճառագայթներն կը ծըծուին և կապայտներն ալ կ'անդրագառանան . ուրեմն ջըրոյ գոյնն կապուտակ է . բայց ծովուն աւազն որ միայն ջըրէն ծըծուած ճառագայթները կ'ընդունի, կանաչն կը գունաւորի . և իր ճառագայթներն գարձեալ չեղուկին անցնելով կանաչը կը հաստատեն, որ՝ ստոր համար ծովու ջըրոյ սովորական գոյնն կ'երեայ : — Բ. · Եթէ ջաւրն շատ խորոշիւն չունենայ՝ յատակի գտուող աւազին կ'եղին գոյնն խառնելով ջըրոյ ընական կապուտին հետ զայն կանաչի կը վերածէ :

1605 Ինչո՞ւ համար տեղ տեղ ծովու գեղին կ'երեայ : — Որովհետեւ յատակի աւազն փայլուն գեղին գոյն մը կ'ունենայ, որ հազիւ կը կանաչնայ ջըրոյ կապուտ գունէն :

(Եթէ յատակի աւազն կարմիր ըլլոյ՝ ջուրն ալ կարմիր գոյն մը կ'անու . այս երեսյթա կը անսողութիւն Ա. փրիկոյ Լուսնկոյի ծովածոցին մէջ, և գեռ ուրիշ տեղեր ալ)

1606 Այս երեսյթա մարմնոց լուսայն պատճառն ի՞նչ է : — Լոյն սե գոյն չունի :

ուստի սևն գոյն չէ . սակայն այս դոյնս
կը յայտնուի այն ամեն մակերևութից վլ-
րայ՝ որ լուսոյ բոլոր ճառագայթները ծը-
ծելու յատկութիւնն ունին :

1607 Ինչո՞ւ համար կան մարմիններ ալ
որ ձերմակ գոյն ունին : — Որովհետեւ ի-
րենց վրայ հասնող բոլոր լուսաւոր ճա-
ռագայթները կ'անդրագարձնեն :

1608 Ինչո՞ւ գիմահար մարմնոյ շուրբն
միշտ սե կ'ըլլայ : — Որովհետեւ շուքի մէջ
գտառող մարմնոյն վրայ ամեննեկին լուսոյ
ճառագայթ չի հասնիր , ասոր համար իրմէ
ալ ամեննեկին գոյն մը շանդրադաւնար . և
երբ մարմինք լոյս շանդրադարձնեն՝ ի
հարկի սե կ'ըլլան :

1609 Ի՞նչ պատճառու կան մարմինք որ
կարմիր են , ումանք կապոյ և ումանք դե-
ղին : — Մարմնոյ մը գոյնն կը կախուի
իր մակերևութէն անդրագարձեալ լուսոյ
գունին տեսակէն : Կարմիր կ'երեայ այն
մարմինն որ կարմիր ճառագայթ կ'անդրա-
գարձնէ . գեղին այն՝ որ գեղին ճառա-
գայթ կ'անդրագարձնէ , և այլն :

1610 Հապա լուսոյն միւս գոյներն ինչ
կ'ըլլան : — Զանդրադարձուած գոյներն
կը ծըծուին նոյն մարմնէն :

(Մարմնոց մակերևութներն կը լինան եր-
կու կամ շատ գոյներ անդրագարձնելու
յատկութիւն ունենալ . այս առթիս մէջ ի-
րենց ներկայացուցած գոյներն կը տարբե-
րին ըստ գունոց որ զիրենք կը ձևացնեն :)

1611 Ինչէն է որ մարմինք լուսոյ գոյնե-
րէն ումանք ծըծելու և ումանք ալ անդրա-
գարձնելու յատկութիւն ունին : — Մէկ
մը իրենց մակերևութին փիճակէն : — Բ .
Զիրենք կազմող սկզբանց քիմիական ըը-
նութենէն : — Գ . իրենց հիւլէներուն գիր-
քէն :

1612 Ինչո՞ւ համար տնկոց տերևներն
կանաչ են : — Որովհետեւ թափանցիկ մակ-
երեւութին տակը կը գտուի կանաչ հեղուկ
մը որ ծաղկաբլու կ'ըսուի :

(Լոյսն մասնաւոր ազգեցութիւն մ'ունի
ծաղկաբլուին կանաչ գոյնին վրայ . ասոր
համար հազիւ թէ գարնան տերևներն
ծըլին՝ բաց կանաչ գոյն մը կ'ունենան , որ
երթարով կը թիսանայ . այն տունկերն որ
առանց լուսոյ կաճին՝ ընդհանրապէս ձեր-
մակ կ'ըլլան . գետնախանձորներն , մու-
թի մէջ զահուած եղերդի տերևներն , ծնե-
բեկաց ցօղունք , արմատոց բունն , և այլն,
ձերմակ կ'ըլլան , որովհետեւ իրենց վրայ
լոյսն իր ազգեցութիւնը ըներ :

1613 Ինչո՞ւ համար կանաչ ծաղկիներ ալ
չիսն : — Որովհետեւ կանաչ գոյնն աւելի
խիտ հիւսուածով գոյացութեան մը վրայ
կը պատճառի . իսկ ծաղկանց տերևներն
կամ թերթերն թոյլ հիւսուածք մը ունին ,
իրենց անօթներն ունին ամենանուրը պա-
տառած մը , և այնպիսի կերպով մը շարուած
են որ ամեննեկին չեն անդրագարձներ կա-
նաչ ճառագայթը , հապա զայն կը ծըծին .

այս պատճառաւ իրենց մակերևոյթն երբեք կանաչ չերեար :

1614 Ինչո՞ւ համար քանի մը նիւթք երբ փոշխանան , առաջուան գոյներին չեն պահէր : — Որովհետեւ մարմոյ մը գոյնն երեն հիւլէիցը դիրքէն կը կախուի , չետեաբար յայտնի է որ անոնց դիրքն փոխուելով կը փոփոխի նաև գոյացութեան կաղմած գոյնն :

(Նաև հանքային աղեր , մասնաւորապէս պղնձին , երկաթին , և ուրիշ զանազան տեսակներ՝ որ կապոյտ ե կանաչ են , կը ճերմիկնան՝ երբ բորսակ փոշի դառնան :

1615 Մարմոյ հիւլէքն ալ գոյն ունին : — Ոչ . բոլորովին հիւլէի վերածուած նիւթըն ամեներն գոյն չունենար և սե կերեայ :

1616 Ինչո՞ւ համար եթէ ծծումքի չողին (թթուած ծծմքային) այրի՛ կը չնջէ բուսոց գոյները : — Որովհետեւ բուսոց գունաւորիչ նիւթէն կ'առնու գունաւորութեան զիկաւոր ասիթներէն մէկը , որ է թթուածինն . և երբ մարմոյ մը քիսիկնան խառնուածն փոփօխուի՛ բնական է որ նաև չերմութիւնն՝ որ իրեն հետ միացած կ'ըլլոյ՝ փոփօխութիւն կըէ :

1617 Ինչո՞ւ համար կապոյտ գոյներն իրիւունը կանանչ կ'երեան : — Որովհետեւ կանթեղաց լցոն գեղնագոյն կ'ըլլայ , և իրեն գոյնն կապոյտին հետ միանալով կը կազմէ կանաչ գոյն :

ՄԱՍՆ Զ .

ՏԱՐՐԱԲՈՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԵՐՔ

1618 Երբ մարմին մը դիտուի , և անորդոյնն , ծանրութիւնն , կազմուածքն , պլնդութիւնն , փայլութիւնն , ծայնարձակութիւնն , և այլն , ճանաչուի , ինչպէս կը կոչուին այս յատկութիւնները : — Բնագիտական կ'ըսուին . վասն զի մարմոյ մը բնական նշաններն ամենն ալ զգացարանաց տակ կ'ինկնան , քանի որ ինքը կը պահէ իր բնական կազմուածքը , այսինքն երբ զանիկայ լուծել պէտք ըլլամբ :

1619 Երբ մարմին մը փշուի և ջրոյ մէջ խառնուի , կամ կրակին մէջ գրուի , կամ այլասեռ գոյացութեանց հետ միացուի՝ իր բաղադրութիւնը զիտնալու համար , ինչպէս կը կոչուին այն տաեն ճանչուած յատկութիւններն : — Կ'ըսուին Տարրաբանական կամ քիմիական :

(Մարմոյ մը քիմիական յատկութիւնները չենք կրբնար ճանչնալ՝ առանց զանիկաց բաղադրուծիլու :)

1620 ինչո՞ւ համար կրակի վրայ նետուած փայտի կտոր մը՝ բոլորովին կ'այրի, և մնացորդն կ'ըլլայ քիչ մը մսիսիր: — Որովհետեւ փայտն ըլլալով բաղադրեալ մարմին մը, չերմառթիւնն զայն կազմոյ գոյացութիւնները կը զատէ, և այնպէս մը կը լուծէ՝ որ կրակին ազգեցութենէն վերն ալ ամեննեին փայտի երեսոյթ մ'ալ չի պահէր:

1621 ինչո՞ւ համար կրակի վրայ զրուած կապարի կտոր մը կը հալի, իսկ երբ վար տոնուի՝ կը հաւասատնայ, բոլոր կապարի յատկութիւնները պահնելով: — Որովհետեւ կապարն պարզ մարմին մ'է:

1622 Տարրաբանք ինչ բաժանումն ըրած են ընդհանուր ամեն գոյութեանց: — Երկու կարգի բաժնած են. այսինքն պարզ կամ անընդ մարմինք, և բաղադրեալ մարմինք:

1623 Քանի՞ ճանչցուած են պարզ մարմինք: — Վաթսունէն աւելի են այն մարմիններն որոնցմէ կարելի չէ եղած որ և է կերպով ուրիշ բան դանել, բայց եթէ միշտ հաւասարանման գոյացութիւն մը, որ միշտ նոյն յատկութիւնները կ'ընձայէ թէ բնագիտական և թէ քիմիական, և ասոր համար կ'ըսուին պարզ մարմինք:

(Բոլոր մետաղներն, և զանազան կազք, ինչպէս քլոռն, թթուածինն, և այլն, պարզ մարմինք են:)

1624 Ինչպէս կը բաժնուին պարզ մարմինք: — Ի մետաղն, և ՚ի մետաղնուսու, ուրիշ

տարրաբանք կը բաժնեն՝ ՚ի դրական ելեկտրական և ՚ի միտրական ելեկտրական մարմինն:

1625 Տարրաբանից մետաղնուս կոչած մարմիններն քանի՞ հատեն: — 15 հատ են. 47 հատ ալ յատկապէս մետաղ ըստածներն:

(Մետաղուոր են, Ա. բրուածին (oxigène), Բ. ջրածին (hydrogène), Գ. բրուկածին (nitrogène), Դ. ծծումբ (soufre), Ե. սելեն (selenium), Զ. տելլուր (tellure), Լ. քլոռ (chlore), Ը. ծամին (brome), Թ. մահիչ (iode), Փ. ծորին (fluor), ՓԱ. փոսփոր (phosphore), ՓԲ. զարիկ (arsenic), ՓԳ. սիկլեռ (bore), ՓԴ. զայլախազածին (silicium), ՓԵ. ածղուկ (carbure):

Ասոնք, և քանի՞ մը ուրիշ մարմիններ ալ որ մետաղաց կը վերաբերին՝ ըստ տարրաբանից ունաց միտրական ելեկտրական մարմինք կ'ըսուին, մնացեալ բոլոր պարզ մարմինք՝ մետաղ են, և գրեթէ ամենքն ալ դրական ելեկտրական մարմինք:)

¶ L. II. ՄԵՏԱԼՈՒՏՔ ԵՒ ՄԵՏԱՐՔ:

§. II. — ԹԻՐՈՒԱԺԻԱ:

1626 Ինչու համար աղտոտ և խոնացոյ մէջ գժուարատ կը չնուիք: — Որովհ չետև աղտոտ և ջըրային շոգւով լեցուն օդն զուտ և չոր օդոյ թթուածին քիչ կը պարունակէ:

1627 Ինչու համար բաց օդոյ զրուած խոնաւ երկաթի կտոր մը ժանգով կը ծածկուի: — Որովհետև օդոյ թթուածինն կը դուզադրի երկաթին հետ, և կը կաղմէ այն կարմիր բռուը՝ որ ժանդ կըսուի:

1628 Ինչու համար բոցն թանձր օդոյ ատեն լաւագոյն կ'արձարձի, քան անօսր օդոյ: — Որովհետև թանձր օդն հաւասար քանակութեամբ անօսրացած օդէն աւելի թթուածին կը պարունակէ:

1629 Ի՞նչ է թթուածինն: — Թթուածինն է առանց գունի, համի և հոտի կաղմը: Բնութեան մէջ առատ կը գտուի, և օդոյ և ջըրոյ տարրներէն մէկն է. կը մտնէ նաև բորսոր գործարնանաւոր գոյութեանց բազուգրութեան մէջ:

1630 Ո՞ր կը գտուի թթուածինն: — Բնութեան մէջ թթուածինն աղատ կը

գտուի օդոյ մէջ բայց այնպէս խառնուած է որիվ կաղմի մը հետ՝ (ազօղ կամ ըրուակածին) որ կարելի չէ օդէն զատել և զուտ ունենալ:

1631 Ո՞ր նիւթերէն կը ընայ թթուածին կաղ հանուուիլ: — Մանկանեղի երկրրուաշն, որ ռամկօրէն ապակապործաց օչաւ կ'ըսուի, սեղիկի երկրրուաշն, կամ վայրասազնաւ կարմիրն, բորսափ բրուռուն և քանի մը ուրիշ գոյացութիւններ, կը ընան իրենց լուծմաւը բը՝ թթուածին կաղ մատակարարել:

(Բորսափ բրուռուն ամենէն դիւրին միջոցն է թթուածին կաղ հայրայթելու: Ապակեայ գնտածնի մը մէջ զնելով բռպասի քրուռուն, բերանը պէտք է գոցել՝ մէջտեղը ծակ սունկով մը. սունկին ծակին զնելու է Ն ձեռով ծառած խողովակ մը, որուն բաց կողը պէտք է մուցընել զիսիվայր զարձած ջըրալից ապակեայ գնափի մը մէջ, և պէտք է հաւաքել թթուածին կտղի փրփուրները որ ջըրոյ միջնէն անցնելով զանգակին վերի կողմը կ'եւլն: Ըուրը անկէց հեռացընելով, երբ զանգակն լեցուի ջըրոյ մէջ բռնած ուժուով գոցելու է, և այս կերպով փակուած կազն կը ընայ պահուիլ բատ կամ գործածիլու համար: Այս գործողութեանս ատեն ամանին մէջ մըտած արջի փրփուրները պէտք է թողով որ փճանան, վասն զի փամփուչտին և խողովակին մէջը պարունակուած մթնութրացին օդ ին:)

1632 Բայց երբ զանգակին մէջի ջուրն պարզուի , ի՞նչպէս կը զիտցուի որ մէջը թթուածին կազ կայ : — Թթուածին կազն կիզման սնունդ է . այն մարմինք որ գեռ կը պահեն իրենց կիզման սկիզբը՝ անոր մէջ կ'այրին ամենավառ բոցով մը . եթէ անձանօթ բնութեամբ ոգ մը պարունակող ամանի մը մէջ խորդուի փայտի կտոր մը կամ նոր մարած մոմ մը , բայց դեռ տաք , և ասոնք բոլնկելու ըլլան ամենավառ բացով մը , կը բնայ ըսուիլ որ այն օգն թթուածին կազ է , որովհետեւ ասոր նման երեսյթ մը պատճառող ուրիշ կազ չկայ : (Պառած ածուզ մը երկաթէ թելերով կտպելով և մտցընելով թթուածին կազի մէջ զարմանալի երադութեամբ կ'այրի . և նոյն իսկ երկաթին ալ կ'այրի լուսաւոր և շաքընող կայծեր արձեկելով , որ այնաէս տաք կ'ըլլան որ զանգակին ապակոյն հետ շշափուելով զայն կը հալեցընեն , և անոր մէջ կը մնան :

Փոսփորն թթուածին կազին մէջ այն պիսի պայծառ գունով մը կ'այրի՝ որ անկարելի կ'ըլլայ վրան նայիլ :)

1633 Ի՞նչպէս կը ճամփուի որ զանգակի մը մէջ պարունակուած կազն զուտ թթուածին է : — Թթուածին կազի մէջ այրած փոսփորն իրեն կը յատկացընէ բոլոր այն կազը . չետևաբար երբ փոսփորի կտոր մը ամանի մը մէջ այրի՝ կը ծըծէ բոլոր զուտ թթուածին կազը , մէկդի թող-

լով օտար կազերը՝ որ կը բնանան զայն աղ-
տոտել :

(Քննուելի կազով լցուած ապակեայ զանգակ մը՝ ջըրոյ վրայ զմիխվայր կը դը-
րուի , վերջը զանգակին մէջ վառած փոս-
փորի կտոր մը կը ձգուի՝ որ կ'այրի վառ
բոցով մը , և կը հատոցնէ թթուածինը .
այն ատեն ջուրն՝ արտաքին օգոյ իրեն վը-
րայ աղդած ճնշմարք կը բարձրանայ զան-
գակին մէջ և սպառած կազին տեղը կը
բռնէ : Ուրեմն եթէ զանգակն բոլորովին
ջըրով լցցուի նշան է որ բոլոր այն կազն
թթուածին էր , եթէ ջըրէն չըսնուած մի-
ջոց մը մնայ՝ ի հարկէ պարապ չըլլալով՝
պէտք է որ բռնուի թթուածինէն տարրեր
կաղով մը :)

1634 Զուտ թթուածինն վիճակի փոփո-
խութիւն մը կը կրէ : — Ոչ . զուտ և ա-
ղատ թթուածինն կազի վիճակի մէջ կը
մնայ , և ամեննելին կերպով մ'ալ կարելի
չէ զայն հեղուկի կամ հաստատունի վե-
րածելը :

(Բոլոր այն կազերն ինչպէս թթուածինն
որ առածգական են , և ջերմութենէն ընդ-
լանելի կամ ճնշելի , և վիճակին չեն փո-
խուր , մնայուն կողք կ'ըսուին :)

Ա. — Բորակածին .

1655 Եթէ օդոյ մէջի թթուածինն միայն բորակածնի հետ խառնուած է , ինչու կարելի չէ այս կազը օդէն զատել առանց դիմելու այն գոյացութեանց՝ որով արդէն դուգադրեալ կը գտուի : — Մթնոլորտային օդէն զուտ թթուածին հանելու համար՝ պէտք էր իրեն սպարունակած բոլոր բորակածինը իրմէ հանել . իսկ այս բորակածինն կամ աղողն այնպիսի կազէ որ ուրիշ տարրական մարմնոյ հետ չի զուգագրուիր . ուստի կարելի չէ զայն թթուածինէն հանել , թէպէտև օդոյ մէջ տար հետ պարզապէս խառնուած գտուի :

(Բորակածնին տեսակաբար ծանրութիւնն նուազ է քան զթթուածընին , որ օդէն աւելի թանձր է . օդոյ ծանրութիւնը 1,000 սեպէլով թթուածինն կը կռէ 4,1037 , բորակածնին 972 միայն .)

1656 Ի՞նչ է բորակածին կազն : — Կազ մ'է որ բնական երեսոյթներով չի տարբերիր թթուածինէն , նյանպէս անհոտ է , թափանցիկ , ճնշելի , և այլն , և առաջինն նման մնայուն :

1657 Ինչպէս որ կարելի չէ թթուածինը բորակածընի խառնուերդէն զատել , նյանպէս նաև ասիկոյ ալ չի կը բնար մթնոլորտային օդէն զատուիլ : — Բորակածինն

շատ աղէկ կը զատուի մթնոլորտային օդէն , որովհետև թթուածինն զիւրաւ կը զուգադրի որիշ տարրական մարմնոց հետ , և աղտո կը թուզի բորակածինը :

1658 Ի՞նչպէս կարելի է թթուածինը մթնոլորտային օդէն զատել : — Օգով մի ապակեայ զանգակի մը մէջ կը գրուի վաս փոսփորի կտոր մը , որ կը բանկի քանի որ զանգակին մէջ գտուի կիզումը սնուցանելու չափ թթուածին . երբ այս կազն պակսի փոսփորն կը մարի , և զանգակին մէջ կը մնայ միայն օդոյ մէջ գտուած բորակածինն :

1659 Ինչու համար փոսփորն կը մարի երբ զանգակին մէջ ալ թթուածին կազ չգտուի : — Որովհետև բորակածինն մարմնոց կիզումը չի սնուցաներ , ուստի որ և է մարմին նաև շատ աղէկ վառած կը մարի երբ աղոտ կազին մէջ խոթուի , իբրև թէ ջրոյ մէջ մնաւէր :

1660 Եթէ բորակածինն թթուածընին հետ շատ փիբովական բնութիւններ ունի դիւրին չէ զիրենք մէկմէկու հետ չփոթել : — Այս կը չփոթուին երեւութով , բայց կը բաւէ մէջը վառած մարմին մը խոթել և տեսնել , որ ասիկայ մէկէն կը մարի , կամ խոթել թռչնիկ մը՝ որ կը մնանի . և կիմացուի որ իր քիմական բնութիւններն բոլորին հակառակ են թթուածընին :

1661 Եթէ աղողն կը մեղցընէ կննգանիները , ուրեմն թունաւոր է : — Աշ .

զոդն այս վեաատկար յատկութիւնը չունի, բայց կ'ազդէ այնպէս՝ ինչպէս բերնին և ռնգաց գէմ դրուած թաշկինակ մը, այսին քըն կ'արգելու չնչառութիւնը . ասոր համար ով որ ազդի մէջ դառե՛ խեղուեւ լով կը մեռնի :

(Բորակածինն բուսեղինաց վրայ աղդեց ցութիւն մ'ունի . բոյսք այս կազը կ'առնուն ազդէ կամ պարարտութիւններէ , և իրենց կը յատկացընեն . ինքն կը կազմէ բուսեղինաց սննդարար մասը , և կենդանաց գլխաւոր սննդնդն է : Մասնաւորապէս մկանունքները կ'ուժովցընէ :)

Բ. — Մրեղորտային օդ և

1642 Ո՞րչափ բորակածին կայ մթնոլորտային օդոյ մէջ . — Հարիւր մասն մթնոլորտային օդոյ կը պարունակէ 79 մասն բորակածընի և 21 մասն թիւուածընի :

1643 Ի՞նչ բանի կու գայ բորակածընի այսպիսի մեծ քանակութիւնն մթնոլորտային օդոյ մէջ . — Եթէ այսպէս չըլլար՝ կրակը մեծաւ երագութեամբ պիտի վառէին , հրգեհը սովորական պիտի ըլլային , մէկ ծայրէն հազիւ կարմրած երակթ մը՝ ռետնի մէջ թաթիւած պատրութիւննան պիտի այրէր , մարդիկ և բոլոր կենդանիք պիտի չնչէին սասափի տառապանօր , և մէկէն պիտի մեռնէին :

1644 Ինչու համար կենդանիք շուտ մը պիտի մեռնէին շատ թթուածին կազ պարունակող օդոյ մը մէջ գառւելով : — Որովհետեւ այս կազս է որ կեանքը կը պահէ , թոքերը թեթև մը գրգռելով և թխագոյն կարմիր արինչը պայծառ կարմրի վերածելով . Եթէ բորակածին կազն իր հակառակ ազդեցութեամբը այս գրգռուունքը չի մեղմացընէր՝ գրգռուունքն այնպէս բուռն պիտի ըլլար , որ թոքերուն փափուկ մասերն սաստիկ կերպով պիտի բորբոքէին , և անխուսափելի մահ պիտի պատճառէր , կուրծքի հիւանդութենէ վերջը :

1645 Կենդաննեաց չնչած թթուածինն դարձեալ կը գառնայ օդոյն՝ արտաշնչութեամբ : — Աշ . ասիկայ կը մնայ մեր կազմուածքին մէջ , անորը լրացուցիչ մաս մը ըլլալու համար . արտաշնչութեամբ գրեթէ ամբովզ բորակածինը գուրս կը դրկենք՝ օդոյ :

(Արտաշնչութեամբ կու տանք օդոյ նաև մաս մ'ածզոյին թթուել :

1646 Առողջ մարդ մը օրուան մէջ ո՞րչափ թթուածին կը սպառէ : Կըրնայ օրուան մէջ իրեւ 800 լիգր թթուածին կազ չնչել :

1647 Եթէ իւրաքանչիւր մարդ այսչափէ կազ կը հատցընէ , արգեօք թթուածինն պիտի չի ըլլնանայ և միայն բորակածինն մնալով բոլոր կենդանիք մեռնին : — Այս բան կ'ըլլար՝ Եթէ բնութիւնն ուրիշ կերպով օդոյ չի գարցընէր կենդաննեաց սպառած թթուածընին մասը :

1648 Ի՞նչ կերպով կը դառնայ օդոյ
այն թթուածին՝ զոր մենք չնշառութեամբ
կ'առնունք : — Բոյսք՝ ածղային թթուտ
շնչելով և արեւու լուսոյն ազդեցութեամբ
իրենց մէջ պահելով ածղուկը, մթնողոր-
տին մէջ կ'արձը են ազատ թթուածինը :

1649 Բոււսոց տերեւներն միայն ածղային
թթուտ կը ծըծեն : — Յորեկը ածղային
թթուտ կը ծըծեն, բայց զիշերը թթուածին
կազ :

(Ասոր համար է որ զիշերը օդն նուազ
մաքուր կը լլայ քան ցորեկը :)

§. Բ. — Բաղկացեալ մարմինք և
քիմիական անորոշակոչորիւն :

1650 Ի՞նչո՞ւ համար երբ գէւ օդ ընէ և
մթնողուան լի ըլլայ ելիկոտրութեամբ՝ եկած
անձրեկի ջուրն բորակային թթուտ կը պա-
րունակէ : — Որովհետեւ ելեկոտրութիւնն
կը զուգագրէ թթուածին հետ մասն մի
բորակածին կազի, և ասկէ առաջ եկած
բաղադրութիւնն է բորակային թթու :

1651 Ի՞նչո՞ւ համար թթուածին կազն
զուգակցելով բորակածին կազին հետ՝ ած-
ղային բրուս կը պատճառէ : — Որովհետեւ
թթուածինն յատկութիւն ունի բաղադրու-
թիւններ կազմելու՝ որք կը ընան թթուտ
ըլլալ, երբ զուգագրի ուրիշ կազի մը կամ
որ և իցէ կիզանուտ մարմնայ մը հետ :

1652 Ի՞նչ են կիզանուտ մարմինք և կազք:
— Ա.յն ամեն գոյացութիւնք որ կը ընան
զուգագրի թթուածին կազի հետ և անոր
հետ բաղկացեալ մարմիններ կազմել :

1653 Ո՞ր բաղկացեալ մարմիններն են
որոնց մէջ թթուածին կը մտնէ : — Թը-
թուածինն կը մտնէ, Ա. Բոլոր թթուածնե-
րու մէջ (բայց 'ի քանի մը ջրածընեալ թը-
թուածներէ) : — Բ. Բոլոր մետաղիա և ան-
մետաղ բրուտիաց մէջ : — Գ. Բոլոր բուսոց
մէջ : — Դ. Բոլոր կենդանեաց մէջ :

1654 Ի՞նչ են թրուտք : — Թթուածք ընդ-
հանրապէս աւելի կամ նուազ զգակի թթ-
ու համով գոյութիւնք են :

1655 Ի՞նչպէս առանց ճաշակելու կըր-
նայ ճանչցուիլ որ մարմին մը թթուտ է : —
Բաւական է դնել կաթիլ մը մանիշակի
ների պարունակող գաւաթի մը մէջ, կը
տեսնուի որ մանիշակագոյն ներկն մէկէն
կարմիր կը դառնայ . այս կերպով բուսոց
թխակապոյտ գուներուն վրայ հակազդու-
յատկութիւնն նշան է թթուտաց :

(Հակազդել կ'ըստի այն ազդեցութիւնն
զոր կ'ազդէ մարմին մը ուրիշի մը վրայ,
այնպէս որ անոր յատկութիւններէն մէկ
քանին կը յայտնէ : Ա.յն ամեն գոյացու-
թիւնք որ կ'ընեն այս ազդեցութիւնն կը-
սուին հակազդիյք :)

1656 Ի՞նչ են թթուուկք : — Թթուուկք
են մարմինք որոնց մէջ կը գտուի թթուա-
ծընի շատ կամ քիչ քանակութիւն մը, և

թթուաներէն ասովկը տարբերին որ , լլ .
թթու համ չունին , նաև ընդհանրապէս
մետաղեայ թթուուկներն ամեննեին համ
չունին : — Բ . Մանիշակագոյն ներկը չեն
կարմըրցներ :

(Լուծելի թթուուկը կապուտի կը դար-
ձննն թթուուվ կարմքուցած ծաղկանց
կապոյտները :)

1657 Թթուածինն զուգագրելով մար-
մոյ մը հետ թթուու մը միայն կը կազմէ
թէ միայն թթուուկ մը : — Թթուածընեալ
թթուոտք և թթուկը կըրնան զուգագրեալ
պահել թթուածընի պղտի կոմ մեծ քա-
նակութիւն մը :

1658 Եթէ մարմին մը զուգագրի տար-
բեր համեմատութեամբ թթուածընի հետ ,
մինչ հուսասր ըլլան բազագրիչք , ինչպէս
պէտք է անուանել տռաջ եկած բազագրու-
թիւնները՝ որ մէկմէկու հետ չի շփոթին :
— Տարբաքանք հաստատած են ըլլու մը՝
որով որ և է դոյութիւն իր անուան մէջ
կը կրէ , նախ , Բազագրիչ գոյացութեանց
անունը . Երկրորդ , Անոնց պարունակած
թթուածընին քանակութիւնը . և երրորդ ,
իրենց բազագրողաց ելեկտրական յատ-
կութիւննը ալ :

1659 Ինչպէս կը կոչուին թթուոտք՝ ըստ
քանակութեան իրենց պարունակած թթ-
ուածընին : — Անոնք որ այս կազմէս քիչ
քանակութիւն կը պարունակեն կան վեր-
ջաւորութիւնը կ'առնուն , իսկ չոտ թթ-

թուածին պարունակողք՝ ային վանկով կը
վերջանան :

1660 Ուրեմն թթուածինն երկու համե-
մատութեամբ միայն կը զուգագրի մարմոյ
մը հետ զայն թթուածընելու համար : — Ոչ .
թթուածինն ինչուան վեց կամ եօթն ան-
գամ կըրնայ զուգագրիլ մարմոյ մը հետ :

1661 Այս առեն բ'նչպէս կը ճանչցուին
և կը զանազանուին մէկմէկէ բոլոր այս ա-
ռանձին բազագրութիւնք : — Ենք և վեր
մասնիկներով , որոնք թթուացեալ գոյա-
ցութեանց անուանց սկիզբը գրուելով կը
նուազեցընեն կոմ կ'աճեցընեն անոնց կան
կամ ային վերջաւորութեանց արժէքը :

Օրինակի համար բիրուն մեծ յարակցու-
թիւն մ'ունի թթուածընի հետ , որով կը
կազմէ եօթն թթու բազագրութիւններ ,
ամենքն ալ իրարմէ որո՞չ իրենց պարու-
նակած թթուածընի քանակութեամբը :

(Ահա այսպէս կը կոչուին այս քլոսի թթ-
ուածընին հետ եօթն բազագրութիւնք :

Թթուած Վելու-Գերաւուային Քլ թ 17. Երեք մասն

Քլոսի կ'վերայ 17 թթուածընի

* Քլաւու-Գերաւային Քլ թ 15. 13 *

* Վելու-Գերաւային Քլ թ 7. մաս

մը քլոսի և . . . 7 *

Քլաւու-Գերաւային Քլ թ 3. . . 3 *

* Անելու-Գերաւային Քլ թ 4. . . 4 *

* Քլաւու-Գերաւային Քլ թ 5. . . 3 *

* Ենելու-Գերաւային Քլ թ . . . 1 *

Այս թթուտներէն առաջինն՝ ամենէն աւելի թթուկացեալն է, միւսերն երթալով կը նուազին իրենց թթուածընին քանակութենին : Փ. կը նշանէ քլոտ, և Թ. թթուածին : Տարրաբաննք պարզապիս ասոնց և ուրիշ մարմնոց սկզբնագիրերը կը գործածեն համաստութեան և զիւրութեան համար, ուստի Յ. կը նշանակէ ծծումք, Զ. ջըրածին, Ա. ածղուկ, Ե. երկաթ, Կ. կապար, Փ. փասփոր, և այսպէս բոլոր միւսերն ալ, այս սկզբնագիրը կը կոչուին հշանակի :

1662 Իսկ թթուուկ գոյացութեան մը թթուկացման տարբեր աստիճաններն ինչպէս մէկմէկէ կը զանազանութին : — Երբ թթուածինն ձևացընէ պարզ մարմնոց մը հետ երկու կամ աւել թթուուկացեալ բազագրութիւններ, այս տաեն կը գործածուին այս մասնիկներս : — Նախ. (հիւլէ կամ չափ մը թթուածընի) : — Մակ. (մէկ ու կէս չափ) : — Երկ. կամ երկ. (երկու չափ) : — Գեր. (թթուկացման բարձրագոյն աստիճանն) : Այս մասնիկքս աւելցուելով բրուուկ բառին վրայ՝ շատ որոշ կ'իմացնեն որ և է գոյացութեան մը թթուկացման տարբեր աստիճանները :

(Օրինակի համար, Բարտան կը զուգադրի թթուածընին հետ և կը ձևացընէ երկու թթուուկ, առաջինն բրուուկ բարտի կամ Բ. մաս մը թթուածընի և մաս մ'ոլ բուդասի) . երկրորդն, գերարրուուկ բարտի

Բ. Թ. Յ. (մաս մը բոդասի երեք թթուածընի հետ) :

Հոս Բ. կը նշանակէ Բ. ոդաս :

Պղինձն կը կազմէ թթուածընին հետ այս բազագրութիւնները :

Դահանաթթուուկ պղնձի . . . Պ. թ.

Թթուուկ պղնձի Պ. թ.

Թթուուկ միջն Պ. թ. Յ.

Կրկնաթթուուկ պղնձի . . . Պ. թ. Յ.

Պ. կը նշանէ պղինձ :

Մանկանէզն կը կազմէ թթուածընին հետ երեք որոշ բազագրութիւններ .

Դահանաթթուուկ մանկանէզլ Մն թ.

Մականթթուուկ մանկանէզլ Մն² թ. Յ.

Գերանթթուուկ մանկանէզլ Մն թ. Յ.

Ա. — Աղբ :

1663 Ինչո՞ւ համար մանիշակագոյն ներկի մը մէջ դրուած թթուուտ մը՝ զանիկայ կարմիրի կը գարձնէն : — Որովհնեաւ թթուուն կը զուգադրի մանիշակը գունաւորող գոյացութեան հետ, և կը պատճառէ նոր բազագրութիւն մը՝ որ կը տարբերի առաջինն Փիղիգական և տարրական հանգամանիքներով :

1 Տարրաբաննք ուրիշ անուն մ'ալ կուտան Բուգասի, Խալ (Kali), և կարելի է այս անուանն համառօտթեամբ նշանակել զայն Կլ:

1664 Ի՞նչպէս կը կոչուին այն գոյացութիւնք՝ որք թթուտի մը հետ զուգադրելով կը կազմեն նոր բաղադրութիւններ : — Կըսուին Այսառք (bases) :

1665 Ի՞նչ անուն կը տրուի թթուտի մը և արմատոյ մը զուգադրութենէն առաջ եկած բաղադրութեան : — Այ :

1666 Ի՞նչ են արմատք : — Ամենքն ալ թթուուկք են աւելի կամ նուազ թթուածնեալք :

1667 Ի՞նչպէս կը զանազանուին այն աղերն՝ որ առաջ կու գան ՚ի զուգադրութենէ գոյացութեան մը պատճառած թթուուկներու, և ուրիշ գոյացութեան մը թթուներու : — Ա . Աւելի թթուածնեալ թթուուին անունն ային մասնկամք կը վերջանայ . արմատի մը հետ այս թթուուէս առաջ եկած աղն՝ ուստ վերջաւորութիւն կ'առնու . զոր օրինակ, ծծըմբային թթուուն և սոտն կը կազմեն ծծըմբայտ տափի : — Բ . Քիչ թթուածնեալ թթուուն կան կը վերջանայ, և ասկից ձևանարդուառաջ եկած աղն ալ իս վերջաւորութիւն կ'առնու . ծծըմբական թթուուն և սոտն, կը կազմեն աղն մը որ կըսուի ծծըմբայտ սոտփի : — Գ . Խոկ ներ և վեր մասնիկըն՝ անփոփոխ կը մնան թթուուին սկիզբ . զոր օրինակ, ենթածծըմբական թթուուն և սոտն կը կազմեն աղն մը որ կըսուի ենթածծըմբիտ սոտփի, և այլն :

1668 Աղերն ալ միայն թթուուտ մը և ար-

մատ մը կը պարունակեն : — Այս երկու բաղադրիչներէն ձևացած քիչ աղ կան, հազար ամենքն ալ միացած կըլլան ջըրոց շատ կամ քիչ քանակութեամբ մը :

(Աղերուն պարունակած ջուրն կըսուի բիորեկայմման որը :)

1669 Ի՞նչպէս կըսուին այն աղերն որ բիորեկայմման ջուր կը պարունակեն : — Զրատեալ աղը կըսուին :

1670 Ի՞նչ անուն կը տրուի այն աղերուն որ բիորեկայմման ջուր չեն պարունակեր : — Անջրատ աղը կըսուին :

(Ա.Ղ մը միշտ անջրատ կոմ ջրատեալ չէ . կըրնայ միտանգամյն թէ անջրատ և թէ ջրատեալ ըլլալ . բիորեկայմած երկաթի ծծըմբուն՝ ջրուտ աղմէ, բայց եթէ կրակին դրուի՝ կը հալի իր բիորեկայմման ջըրին մէջ, և շոգիացմանք կը կորուսցնէ զայն, վերջը գտրձեալ կը հաստատանայ, այս վեճակիս մէջ կը ճերմըկնայ, քիչ պինդ կամ զիւրափշելի կըլլայ և անջրատ կը գառնայ :)

1671 Ի՞նչո՞ւ համար աղք՝ թէպէտև ձեացած ըլլան թթուուէ մը՝ ընդհանրապէս թթու համ չունին : — Որովհետեւ թթուուք զուգագրելով արմատոց հետ՝ ընդհանրապէս կը չէզզաքանան, կը կորուսցնեն իրենց թթուութիւնն և ազատ եղած ատենուն ստացած հանդամանքներէն մէկ հատն ալ չեն ունենար :

(Անոր համար թթուուտ մը զուգագրելով

արմատոյ մը հետ՝ որուն հետ կազմէ թիւ-
րեցացած և չէզգոր աղ մը, հաստատուն
վիճակ կ'առնու, թթու համ' չունենար և
չի կարմըցըներ մանիշակի գոյնը :)

1672 Ի՞նչ կիմացուի լեռք աղ ըսելով :
— Զեղոր աղ կ'ըսուի այն աղն՝ որուն մէջ
չեն յայտնուիր դինքը կազմող արմատին
և թթուտին յատկութիւններն :

1673 Ի՞նչ կիմացուի թթուտային աղ
ըսելով : — Այն աղն՝ որուն մէջ կը յայտ-
նուին զայն կազմող թթուտին յատկու-
թիւնքն, այսինքն թթուտան բոլորովին չէ-
զորացած շրլար :

(Գիիներորդի սերի (չեմե de tartre) թթ-
ուտ մ'է, այսինքն թթուտին համն ծած-
կուած չէ, և ասոր համար թթուտային աղ
կ'ըսուի :)

1674 Ի՞նչ է կալարարային աղն : — Այն
աղն է՝ որուն մէջ դինքը կազմող թթու-
իին մասնական յատկութիւնքն դեռ կը
յայտնուին :

(Բոդասի ենթածխուտն կալարարային
աղ մ'է, որովհետեւ կը պահէ կալարա-
րի յատկութիւնները՝ որով ձեւացածէ :)

1675 Ի՞նչո՞ւ համար կերակրոյ աղն կը
հեղուկանայ երբ օդն չատ խոնաւ ըլլայ :
— Որովհետեւ աղն չատ անդամ կը պա-
րունակէ օտար գոյութիւններ՝ որ զայն
կալարատեն, և ատանք են հալոցական, այս-
ինքն կը լուծուին մթնոլորտային խոնա-
ւոթիւնը ձեծիլով :

1676 Եթէ աղն զուտ ըլլայ՝ օդոյ խոնաւ-
ութենէն շի հեղուկանար : — Ոչ. որով-
հետեւ կերակրոյ աղն (քլորուկ նատրի) հա-
լական աղ չէ :

1677 Ի՞նչո՞ւ համար շաքարն չատ աղէկ
կը հայի նաև պատզ ջըրոյ մէջ, մինչդեռ ծո-
վային աղն և արտաձակին (sel gemme) գժուտ-
րաւ կը հալին : — Որովհետեւ աղը քիչ
կամ չատ լուծանելի են . կան ալ նաև որ
ամեններն չեն հալիր, և կ'ըսուին անհուծա-
կան աղք :

(Աղերն կըրնան թէ լուծանելի և թէ ան-
լուծանելի ըլլալ : Ծովային աղն՝ ամբողջա-
պէս կը լուծուի ջըրոյն մէջ, բայց ալեռովին
մէջ բոլոր չի հալիր. երիաթի ծծըմբատն
լուծանելի է ջըրոյ մէջ, բայց ոչ զինւոյ
ոդույն մէջ, և այն :)

Գ. Բ. ԶԵՐԱՄԻՒՆ :

1678 Զուրն պարզ մարմին մ'է : — Ոչ.
բազկացեալ մարմին է ՚ի թթուածին և ջը-
րածին կազերէ :

1679 Ի՞նչ է ջըրածին կազն : — Ջըրածին
կազն է պարզ կազային, անբորբոքելի
մարմին մը, որ ոչ գոյն, ոչ համ', ոչ հոտ
ունի, և կազերուն մէջ ամենէն թիթեն է :

1680 Ջըրածին կազն ջըրոյ մէջ միայն կը
գտուի : — Ոչ. այս կազն թթուածընէն
վիրը՝ բնութեան մէջ ամենէն առատն է .

կը գտուի բոլոր գործարաններոր մարմնոց
մէջ, չսա ջրածնեալ թթուտաց մէջ. և
նաև կաղային վիճակի մէջ ազատ կը գը-
տուի. քանի մը բնական աղբերաց մէջ
թթուածնի նման այս աղատ մարմինս ալ
կազի վիճակի մէջ կը մնայ:

1681 Ի՞նչ կերպով ջրածին կազ կըր-
նանք ունենալ: — Զատելով գայն քանի
մը գոյցառթիւններէ որոնց հետ զուգա-
զրուած կ'ըլլայ:

1682 Ջրածնի ո՞ր զուգադրութիւնքն
դիւրաւ կը մասակարարնեն այս կազը: —
Իր թթուածնի հետ և մասնաւորապէս
ջրոյ հետ զուգադրութիւններն :

(Որովհետեւ թթուածինն շատ դիւրաւ
կը զուգագրի գլեթէ ամեն տարրական
մարմնոց հետ, ազատ ջրածին ունենալու
համար բաւական է այնպէս մը ընել՝ որ
այս կազս հաստատ կենայ որ և իցէ գոյա-
ցութեան մը վրայ:

Եւ այս կերպով կ'ըլլայ:

Միջին մեծութեամբ շիշի մը մէջ կը գը-
րտին քանի մը կառո զինկ, և վրան կը լե-
ցուի ջրոյ լուծեալ ծծմբային րրուս. մէ-
կէն կը տեսնուի որ շատ մը փրփուրներ
կ'ելլեն հեղուէկն, և անոր միջէն անցնե-
լու ատեն կը ձեւացընեն ճերմակ փրփուր
մը. այս փրփուրներն են ջրածին կազ, որ
շիշին վերի կողմը կ'ելլէ, և խողովակի մը
միջոցաւ կըրնայ թթուածնի նման ամփո-
փուիլ զանգակի մը մէջ:

1683 Ի՞նչպէս կըրնայ ասուզուիլոր ջրէ,
դինկէ և ծծմբային թթուտէ ընդունուած
կազն՝ ջրածին կազ ըլլայ: — Ա., Եթէ
վասած ճրագ մը խոթուի ջրածին պարու-
նակող ամանի մը մէջ մէկէն կը մարի, ո-
րովհետեւ այս կազու չի սնուցաներ կիզու-
մը, բայց կազն ինքնին բորբոքելի է, ա-
նոր համար մակերեւութին կողմէ կը բռնկի
դեղնաւ և կապյոտ գունով մը: — Բ. Ե-
թէ ջրածին կազն միացեալ միջնորդացին
օդոյ հետ զոցուի հաստ կողմերով ամսնի
մը մէջ և վառուի, կը պատճառէ ուժգին
ճայթիւն մը, և առաջուց չնջած ու թափ-
անցիկ եղող ամսնին ներքին կողմունքն
ճայթումէն վերջը կը սենան և կը ծած-
կուին թացութեամբ: — Գ. Կարկանձեցը-
նելով այս կազը սապանուած ջրոյ մէջ, ձե-
ւացած փրփուրներն երթալով կը բարձրա-
նան, որովհետեւ ինքը միջնորդացին օդէն
գրեթէ Էկ անզամ աւելի թեթև է: Այս
յատկութիւններով կը զանազանի ուրիշ
կազերէ:

1684 Ջրածնին ամեն կազերէն թեթև
ըլլալն օդափ կու գայ: — Ալո. կը գործա-
ծուի իրեւ ոյժ մը՝ որ կը ծառայէ բարձրա-
ցընելու օդապարփկ գունաերը:

1685 Ի՞նչո՞ւ համար օդապարփկ գունաե-
րան ստորին միջոց ծորակ մը կ'ունենայ: —
Որպէս զի աղատ անցք մը թողտի նոյն
կազին:

(Ջրածին կազն հասնելով սայնպիսի բար-

ձրութեան մը՝ որ ալ չկարենայ կրել մըթն-
ովորտային օդոյ բոլոր ճնշումը, քանակու-
թեամբ կը մեծնայ, այսինքն կ'անօսրանայ,
և եթէ ազատ չի թողուի գունոտին կող-
մանքները կը պայթեցընէ:)

1686 Ինչո՞ւ համար եթէ վառուած կան-
թել մը մօտեցուի ջըրածին պարունակող
օճառի փրփուրի մը՝ ասիկայ կը բորբոքի:
— Որովհեան ջըրածին կազն մթնողրտայ-
ին օդոյ հետ ջշափուելով՝ կը բորբոքի ջուր
պատճառելով:

1687 Ինչո՞ւ համար ջըրածին կազն վա-
ռուած մարմիոց և օդոյ հետ ջշափուելով՝
կը բորբոքի: — Որովհեան կիզանուած կազ-
մ'է, որով մէկէն կը զուգադրի օդոյ թը-
թուածինն՝ և ջուր կը մեկացընէ:

1688 Ի՞նչ է Նիւմանի խողովակ ըսուածն:
— Նիւմանի խողովակն է այն զործին՝ որ
ինչուան հրմայ ընդունուած բոցերէն ամե-
նէն տարք կը պատճառէ: Կրկին քանա-
կութիւն ջըրածին կազի և մէկ թթուածը-
նի՛ իջնալով բարակ ասեղի ծակի չափ ծա-
կէ մը միատեղ կ'այրին. և այնպէս սաս-
տիկ է այս հազիւ տեսանելի բոցին ջեր-
մութիւնն, որ բոււրցն և բագինն իրեն
ազդեցութեան տակ դրուելով՝ մոմի պէս
կը հագին:

(Ջըրածին կազն զուգագրելով ածջուկի
հետ՝ կը կազմէ կրկնած ջուած ջըրածին կա-
զր, որ լուսաւորութեան գործածուածն է:)

1689 Ի՞նչ է Տրիսմինափ րայ ըսուածն:

— Ջըրածընի և թթուածընի խառնութքէ
մը պատճառեալ լցան է, որք կ'այրին ըը-
մարած կրի շատ չոր կաորի մը հետ չօշա-
փուելով: Ակրն շուա մը կը լուսակիցնայ,
և բխած լցան սյնաէս կենդանի է, որ հա-
զիւ կըրնայ վրան նայութիւ:

(Ջըրածին կազին կիզումէն ծագած բա-
ղադրութիւնն միշտ ջոր է, և ասոր հա-
մար է որ Ջըրածին կ'ըսուի:)

1690 Ինչո՞ւ համար Ջըրածին կազն այ-
րելով թթուածընին հետ՝ կը պատճառէ
սյնափիս սաստիկ տաք բոց մը: — Որովհ-
էն հետեւ այս երկու կազմերն վիճակինին փո-
խելով հարկ է որ մեծաւ մասամբ կորուս-
ցընեն զիրենիք կազի վիճակի բոնող ծած-
կեալ ջերմութիւնը, և այս ջերմութիւնս
բոցին մէջ կը յայտնուի:

1691 Ինչո՞ւ համար ջուրն, զինկն և ած-
ղային թթուածն միանալով ջըրածին կը հայ-
թայթին: — Որովհեան ջուրն բաղկացած
է Ջըրածընէ և թթուածընէ. թթուածինն
աւելի առընչութիւն ունի զինկի քան թէ
Ջըրածընի, ատով կը թողու այս կազմ՝ և
մետաղին հետ կը զուգադրի, պատ թող-
լով արձըկուած ջըրածինը:

(Ասով հեղուկին մէջ կը մնայ զինկի բը-
րուոկ և ծձմբային բրուս, այսինքն թթ-
ուուկ մը և թթուած մը, որ են երկու զինա-
ւոր սկզբունք աղ մը կազմելու համար.
արդ ծձմբային թթուածն կը զուգադրի
զինկի թթուոկին, և մինչդեռ Ջըրածին կազն

արձրկուի՛ խառնուրդը պարունակող ա-
մանին մէջ կը մնայ լուծեալ զինկի ծծը-
բառն :)

1692 Ի՞նչ երեսոյթ կ'ըլլայ՝ երբ զինկին
և ծծըբային թթուռարին միջոցաւ ջուրն կը
լուծուի՛ ՚ի ջըրածին և ՚ի թթուռածին : — Ա-
ռատ ելեկտրականութեան արձակում մը,
որ տարուելով և հաւաքուելով կէտի մը
վրայ միայն պղնձէ հաղորդիչներով՝ կը
կազմէ բարդոց ըստուածը (pila) :

1693 Ի՞նչպէս շինուած է բարդոցն : —
Հատ մը բոլորաձեւ շարուած ամաններ՝ լի
թթուռացեալ ջըրով և մէկմէկու հետ զին-
կով և պղնձով խառն հաղորդչով մը միա-
ցած, կը կազմին շատ մը պղտի բարդոց-
ներ, որոնք միանալով կը ձեւացընեն բա-
յոց մը (batterie) :

1694 Ի՞նչ բանի կը զործածուի բարդոց-
ներէն ելած ելեկտրականութիւնն : — Ե-
շիկտրական նեռագրուրեան, կարգանառու-
ման, և ուրիշ շատ մը քիմիական բարդ-
զրութեանց մէջ :

1695 Ի՞նչ է կարգանառութունն : — Այն
արուեստն է՝ որով կը հաստատուի կազ-
պարի մը վրայ (որ սովորաբար մետաղէ
կ'ըլլայ) պղնձի, ոսկոյ, արծաթի, և այլն,
տակ մը, այնպէս որ կազպարն կամ կնի-
քըն սոկիով, արծաթով, պղնձով, և այլն,
կ'օծուի :

1696 Ի՞նչ սկզբան վրայ հաստատուած է
կարգանառութունն : — Առվորաբար բարդո-

ցէ մը ելած ելեկտրականութեան ունեցած
յատկութեանը վրայ, որ է բազմալուծել
լուծեալ մետաղական աղերը՝ իրենց նախ-
նական բազմագրըչաց սկզբանցը մէջ, այս-
ինքն են կազմարին վրայ մնացած մետաղն,
և ազատ մնացած թթուռածն, վասն զի թթ-
ուռածինն կ'արձեկուի և կը թողու հե-
ղուկը :

§ . Ա . — Զորլ :

1697 Թթուռածնի զուգադրութենէ մը
առաջ եկած բոլոր բազմագրեալ մարմնոց
միջէն որն է բնութեան մէջամենէն առատ
գտուողն : — Զորլն է, այն թթուռածնու-
ցեալ բազմագրեալ մարմնն՝ որ երկրիս
վրայ ամենէն աւելի ափուեալն է :

1698 Ո՞րն է ջըրոյն յիմիական բարդորու-
րինեն : — Զորլն է բազմականոյ մաս մը թթ-
ուռածնէ և երկու մաս ջըրածնէ :

(Ջըրոյն ուսումնական անունն է յրուկ
ըրածնական, և իրեն նշանակն է Զթ.)

1699 Ի՞նչպէս կարելի է որ չորն հե-
ղուկ ըլլալով բազկանայ երկու մեայուն
կազերէ : — Այս բանս կը ցուցընէ՝ որ
մնացուն կազերն ալ միայն համեմատու-
թեամբ մերունեցած միջոցաց՝ այնպէս են,
սակայն որ և է կազ մը որ զրկուի ծած-
կեալ ներմութենէ (որ զինքը օգակերպ վե-
ճակի կը բռնէ), ոչ միայն նեղուկ կ'ըլլայ այլ
նաև հաստատուի :

(կրկու կաղերուն (ջըրածին և թթուածին) ջուր դառնալը, ամենաշատ ջերմութեան արձակմամբ մը կ'ըլլայ, որ բոցին մէջ կը յայտնուի :)

1700 Հապա ինչո՞ւ համար երբ թթուածին զինկին վրայ թափուի, և հեղուկ վիճակին (յորում կը գտուի ջըրոյն մէջ) անցնի հաստատուն վիճակի (թթուուկի մէջ), չի գդացուիր սաստիկ տաքութիւն մը : — Տաքութիւն ըլլար, որովհետեւ ջերմութիւնն մէկին ծածկեալ կ'ըլլայ ջըրածընէն, որ հեղուկ կազի կը փսխուի :

(Առաջ տեսանք որ նաև ջուրն դրկուելով իր ծածկեալ ջերմութեան մասէ մը՝ հաստատուն կամ սառի վիճակի կ'անցնի : — Ուրեմն ասկից կը հետեւի որ մարմաց վիճակն պատահական է, այսինքն իրենց պարբռնակած ծածկեալ ջերմութեան համեմատ :)

1701 Ջրհորոց, գետոց, աղբերաց և այն, ջուրն թթուածընի, և ջըրածնի քիմիական բաղադրութենէն առաջեկած է : — Այս բայց բնութեան մէջ սփռեալ գտուած ջուրն քիմիականապէս զուր չէ, որովհետեւ կ'աղտոտի շատ մը օտար գոյութիւններէ, որոնք կու տան զանազան ջըրերուն համ, և այնչափ տարբեր յատկութիւններ :

1702 Ինչո՞ւ համար գետոց ջուրն զուր չէ : — Ա . Ջուրն գետոց միջն կամ գետնի տակէն վաղելով կը լուծէ քանի մը հողային գոյացութիւններ և լուծեալ կը պա-

չէ : — Բ . Ջըրային բոյսերն որ ջուրց մէջ կ'աճին և կը մեռնին, կը թողուն անոնց մէջ շատ կամ քիչ քանակութիւնն մը բուսեղին գործարանաւոր գոյութեանց : — Գ . Զկունք և ճճեաց անհուն բաղմութիւնն որ կ'ապրին և կը կորսուին ջըրոց մէջ, կը թողուն իրենց կղկղանքը և մնացորդները, որով ջուրց մաքրութիւնը կ'ապականեն :

1703 Ինչո՞ւ համար ջըրհորոց ջուրն զուր չէ : — Որովհետեւ ջըրհորոց ջուրն անձրեի ջուր է սովորաբար մեծ ընդունաբաններու մէջ ժողվուած . անձրեկի ջուրն մաքուր չէ, որովհետեւ օդոյ կարգերէն անցնելու ատեն կը տողորուի բոլոր այն բուսեղէն և կենդանական գոյացութիւններով, որ մթնոլորտին մէջ կը թափառին, ասկէ զատ կայծակներն և ելեկտրականութիւնն անոր մէջ կը պատճառեն մաս մը բորակային թթուուի, որ մէկէն զուգադրելով կենդանական ներթոց բաղադրութումէն ճեւացած անուշացրին հետ, կը կազմէ նոր բաղադրութիւն մը, այսինքն բորական աշակի որ կը վասոէ մասամբ մը ջըրոյն մաքրութեանը :

1704 Որն է ամենէն զուր ջուրն : — Այն որ կ'ընդունի որ և է ջըրոց մը թորմամբ, միայն թէ թռչական նիւթեր չպարունակէ :

1705 Ինչ է բորեալ ջուրն : — Պաղմարմնոյ մը չօշակմամբ խտացած ըլլային շողին :

1706 Ինչո՞ւ համար թորեալ ջուրն զուտ կը ըլլայ: — Որովհետեւ ջուրն շոփիացմամբ կը գառնայ չողի, որ ամենազուտ ջըրէն կը զատուի, թողլով բոլոր աղային և հոդային գոյացութիւնները:

1707 Թորեալ ջուրն ամենէն զուտն ըլլալով՝ ամենէն ալ լսաւագոյնն է խմելու: — Աչ. թորեալ ջուրն ծանր է ստամոքսի, անհամ, և խանդարիչ մարսողական ներդրութեանց:

1708 Ինչո՞ւ համար թորեալ ջուրն զուտ ըլլալով՝ այս վեսասակար յատկութիւնն ունի: — Որովհետեւ եռացումն (որով կը թորի ջուրն) անոր պարունակած օղը կ'առնու. իսկ ջուրն աղէկ, անոյշ, թեթև և դիւրամարս ըլլալու համար, պէտք է որ ունենայ մթնոլորտային օդոյ որոշեալ քանակութիւն մը:

(Զկունք իրկայն չեն ապրիր մթնոլորտային օդէն զոտուած ջըրոյն մէջ: Սակայն թորեալ կամ եռացեալ ջուրն բռուն և շարունակ շարժման մը տակ գնելով՝ դարձեալ կը խառնուի օդոյ քանակութեան մը հետ, և այս կերպով գարձեալ աղէկ և ըմպելի կը ընայ ըլլալ:)

1709 Կ'նչպէս կը զանազանուին ջուրը: — Անոյշ կամ ըմպեկի ջուրը, և անեփ կամ իսկառ ջուրը:

1710 Ի՞նչեն անոյշ ջըրոց յատկութիւնք: — Ա. Պէտք են յատակ և անհոտ ըլլալ: — Բ. Պէտք է որ եփած ընդհղչնները

չպնդացընեն: — Գ. Երբ իրենց մէջ օնառն հալի՛ պէտք է որ մակերեւութին վըրայ շատ թանձր մակարդ չխապէ: — Դ. Շարժուելու ատեն պէտք է փրփրան: — Ե. Երբ ցամփելու չափ շոփիանան՝ պէտք է քիչ դիրս թողուն:

(Ցամփելու չափ շոփիացընել ըսել է հեղուկ մը այնչափ շոփիացընել որ իրեն եռացած ամանին մէջ հաստատուն կոյտ մը մրայն մնայ:)

1711 Ի՞նչ պատճառաւ կան ջըրեր որ թէ պէտ ամենայստակ են, բայց եռացընելով՝ կը պարունակին լուծեալ կը ըրի բնածղուտ կամ ծծըմբուտ, օրոնք լուծանելի ըլլալով ջըրոց որոշեալ քանակութեան մը մէջ, այնպէս չեն ըլլար՝ երբ շոփիացմամբ ջըրէն մաս մը վերցուի. այս ատեն իրենք ամաններուն տակը կ'իջնան և կ'ազատացընեն ամաններուն կողմենը որոնց մէջ ջուրն կ'եռայ: Կըրի ածղուտ կամ ծծըմբուտ պարունակող ջըրերն կ'ըսուին անենիք:

(Ոյն ջըրերն որ պարզ օդոյ միայն դրուելով՝ կը պարունակին կը ըրի կրկնածղուտ կը պարունակին, որ դիւրաւ բաղալուծելի է, կազզ դարձենելով ածղային թթուտի և չեղոր կը ըրի բնածղուտի, թեթև եռացմամբ մը, կամ նաև պարզապէս օդոյ դրուելով:

Լիրի բնածղուտ ճերմակ մարմարն է: Լիրի ծծըմբուն հանք մ'է որ առատ կը դտուի քանինի մը հողերու մէջ: Երբ սաստիկ

կրակի մը աղքեցութեանը դրուի՝ կը կորուսցընէ իր բնորեղացման ջուրը, ձերմակ պիրափշրելի կըլոյ, և կաշճ ըստած գոյացութիւնը կը կազմէ, (ծըլմբատ անջրուտ կըրի) :

Այս հանրէս առատ մասն ունող ջուրք մասնաւոր անուանը սկզենատ ջուրք կը սուբին :

1712 Անձրեի ջուրն անեփ է թէ անոյշ: — Անոյշ է, որովհետեւ ամենեին լուծեալ կըրի աղ չի պարունակեր :

1713 Ի՞նչ պատճառաւ կան տեղեր (ինչ պէս Բարիդ) ուր ջրհորոց ջուրն խմուելու աղէկ չէ: — Որովհետեւ անեփ ջուր մ'է, որ անցնելով առատ կըրի ծըլմբատով հօղուն միջն, անկէց մեծ քանակութիւն մը կըլուծէ. և այն առեն բմզկի ջուր մ'ունենալու համար՝ պէտք է զայն անցընել շատ մը գայլախաղային աւազի տակիւրէ :

(Գայլախաղային աւազն ամենեին լուծանելի չէ ջըրոյ մէջ:)

1714 Ինչո՞ւ համար աւելի դիւրին է անոյշ ջըրով լուսանալ քան թէ անեփ կամ կամ խիստ ջըրով: — Որովհետեւ անոյշ ջուրն կը լուծէ օճառը, մինչդեռ միւսն զայն հալեցընելով կը բաղալուծէ:

(Օճառն կը բաղալորի սոտէ և ձէթէ. երբ ջուրն շատ կըրի ծըլմբուտ պարունակէ աղէկ կը լուծէ օճառը, բայց ծըլմբային թթուտն կը զուգագրի սոտին հետ,

մինչդեռ ձէթն կըրին հետ զուգադրելով կը կազմէ անլուծանելի օճառ մը, որ ջըրոյ երեսը կ'ըլլէ ձերմակ բորբուսներու ձեռով:)

1715 Ինչո՞ւ համար խիստ ջուրն աղէկ չի կիր ընդուղէնները: — Որովհետեւ կըրի ծծըմբուտն կը զուգագրի բոււտց հիւսուածքին հետ և զանոնք կը կարծրացընէ:

1716 Ինչո՞ւ համար խմուելու անյարմար ջըրերն դժուարաւ ալ կ'եռան: — Որովհետեւ աղէկ ջըրերն օտար գոյացութիւններ չեն պարունակեր, ընդհակառակին գէշըն՝ անոնցմէ չատ կ'ունենան. և գիտենք որ ամեն օտար գոյացութիւն որ ջըրոյ վրայ աւելցուի՝ անոր եռացման կէտը կ'ուչացընէ:

1717 Ինչո՞ւ համար աղբերաց ջուրն աւելի հաճոյ է խմուելու: — Ա. Որովհետեւ աւելի օդ և ածղային թթուտ կը պարունակէ: — Բ. Նատ չի կըրեր մթնոլորտի աղդեցութիւնը: — Գ. Ջրհորի և գետոյ ջըրէն աւելի նուազ դործարանաւոր գոյացութեանց քանակութիւն կը պարունակէ:

(Ողբերաց ջըրերն կը պարունակեն մեծ մասն ածղային թթուտի և օդոյ, որովհետեւ զրիթէ ամենն ալ ձեանց հալելն կը պատճառին. ձիւնն ալ իրեն բիւրեղացը մէջ կը պարունակէ օդոյ և ածղային թթուտի մեծ քանակութիւն մը, որոնցմով կը լեցուի՛ մթնոլորտի կարգերէն անցնելու ասեն. այս կազերս ջըրոյ մէջ լուծեալ կը մնան, և անկէց չեն կըրնար բաժնուիւ,

որովհետեւ ջուրն բառական խոր իջնալով՝
գեսանին տակը ճնշեալ կը վագէ, անոր հա-
մար երբ երկրիս երեսը ելլէ՝ գեռ կը պա-
հէ այն կազերը, որ զինքը անոյշեալ ախորժ
կ'ընեն: Ձըրոյ՝ այս գետնի տակ ճնշուած
տատեն ածղային թթուտի մեծ քանակու-
թին մը լուծեալ բռնելու յատկութենէն
առաջ կու գայ պազանձաւաց երեոյթն:

1718 Ի՞նչ կերպով կարմիր է խիստ ջը-
րերը լաւցընել, և եթէ ամենալաւ ալ չէ՝
գոնէ տնական զործածութեանց բանեցը-
նել: — Քիչ մը սոտի բնածդրու խառնելով
մէջը:

1719 Ինչո՞ւ համար այն խոհանոյցաց
մէջ ուր սեխենու ջոր (1711) միայն կը բնայ
զործածուիլ՝ սոլովութիւն է պղտի տոպարա-
կով մոխիր դնել, երբ ուզուի ջըրոյ մէջ
ընդեղէններ եփել: — Որովհետեւ մոխիրն
կը պարունակէ բնածդրու բորափի, որ զու-
գագրուելով ծծըմբուտին կը բնակի հետ՝ կը
կազմէ բնածդրու կը բնակի իիջ-
նայ, և ամենեկին չի վնասեր ընդեղինաց
եփուելուն, միջնեռ հեղուէին մէջ լու-
ծեալ կը մնայ պղտի քանակութիւն մը ծը-
ծըմբային թթուտի և սոտի, որոնք միա-
տեղ զուգագրելով կը կազմեն ծծըմբատ
սոտի, որ ամենեկին ջըրոյ վնասակար յատ-
կութիւն մը չի հաղորդեր:

1720 Ի՞նչ պատճառաւ չողեշարժ մեքե-
նայից մէջ միշտ լաւագոյն ջուր կ'ընտրեն՝
չոդի կամ շարժիչ ոյժը ընդունելու համար:

— Որովհետեւ կը բնածդուտ պարունա-
կող ջըրերն, ինչպէս սելենուտն, անյար-
մար են այսպիսի գործածութեանց:

1721 Ի՞նչ փայթ է ջըրոյ աղէկ կամ գէշ
ըլլալն երբ շողին միշտ մաքուր ըլլայ: —
Վանաւանդ թէ այնչափ հոգալիք չէ որ շո-
գին զուտ ըլլայ, որչափ ընդհակառակն
փոյթ տանելու է որ կաթսային մէջի ջուրն՝
աղերէն զամուտած ջուր ըլլայ: որովհետեւ
ջըրոյ իշ շոգի փօխուելով՛ կը բնածդուտ
և ծծըմբուտ աղերն կը մնան կաթսային
կողմանցը վրայ, ձեւցընելով վտանգաւոր
քոս մը. և ասիկայ, Ա: Կուշացընէ ջըրոյ
եռացման կէտը. և այս բանս ալ կը պա-
հանչէ կիզանուտաց մեծագոյն սպառում
մը: — Բ: Կը բնայ նոյն իսկ կաթսայն ալ
ձաթեցընել:

1722 Ինչո՞ւ համար կաթսայի մը մէջը
ձեւցած կը բայցին քոսքն կ'ուշացըննեն ջըրոյ
եռացման կէտը: — Որովհետեւ կ'արգելուն
ջըրոյ և տափած մետաղեայ կողմանց ի-
րարու հետ ուղիղ ջշափումը:

1723 Ինչո՞ւ համար կաթսայ մը որ շատ
քոսուտած ըլլայ կը բայցին աղերով՛ գիւրաւ
կը ճարթի: — Որովհետեւ կաթսային մե-
տաղն՝ երբ տափութիւնն անի, շատ կ'ընդ-
լայնի, իսկ կը բայցին քոսն առածգական չըլ-
լարով տեղի կու տայ ներքին ճնշման, և
կը ճեղքուի, ու այս կերպով կը թողու որ
ջուրն յանկարծակի ջշափուի շատ տափ-
ցած մետաղին հետ. այն ատեն ձեւցած

շողին սաստիկ կռանի հարուածի մը նման կ'ագդէ , և շատ անգամ կաթսան կը ճա- թեցընէ :

1724 ի՞նչպէս պէտք է խիստ ջուրը եռա- ցընելու կաթսաներու միջէն հանել կամ արգելու այս քուրը : — Անչաղրի միջօ- ցաւ կարելի է չնշել այն կրային բնածդուսին մնացորդները . աստի բնած զուտի քանա- կութիւն մ'ալ աւելցընելով՝ կ'արգելուին սկզենու կամ կըրի ծձըմբուտով ջըրոց ե- ռացմամբ ձեւացած քուներն :

(Քանի մը գործարանաց մէջ սովորու- թիւն է քիչ մը այլիր կամ գետնախմառորի խիս խառնել անեփ ջըրոյ մէջ . այս դոյա- ցութիւններէս երկուքն ալ կըրի բնած զու- տին հետ զուգագրելու և անոր հետ ան- լուծանելի մակարդներ կազմելու յատկու- թիւն ունին !)

1725 ի՞նչո՞ւ համար անո՞ւ աղրե կաթսայից կողմանց վրայ կրային մնացորդաց վտան- գը կը փարատէ : — Որովհետեւ այս ազս կը ծագի ջըրածնաբլուսական թթուտի և աւշակի (բրոսաքրան աւշակի) զուգագրու- թենէ մը . և որովհետեւ ջըրածնաբլուսական թթուն աւելի յարակցութիւն ունի կըրի քան թէ աւշակի , անոր համար կը միա- նայ կըրին , և հետը կը կազմէ բուսի քլո- ռուկը , որ լուծական աղ մ'է . մինչեռ կըրի բնած զուտին ածդային թթուան՝ աւ- չակին հետ կը զուգագրի և կը կազմէ բըն- ած զուտ աւշակի , որ լուծական է և ան- վլաս կաթսայից :

(Ջըրածնաբլուսական թթուտն , ջըրած- նեալ թթուտ մ'է : Կիտենք որ թթոււածինն թթուտացուցիչ զօրութիւն ունի . արդ ջը- րածինն ալ զուգագրելով քանի մը մար- մնոց հետ՝ կը կազմէ թթուտներ , որք կը- սուին ջրածնեալք :

Ջըրածնի բոլոր թթուտներն ալ կան վեր- ջաւորութիւն կ'առնուն . որովհետեւ այս կազմ կը կազմէ զանազան զոյացութեանց հետ թթու բազագրութիւն մը միայն , և զանոնք թթուածնեալ թթուտներէն որո- շելու համար՝ թթուտացեալ գոյացութեան անուան սկիզբը կը գրուի չոր մասնիկն կամ բառն . զոր օրինակ , քլոոն ջըրածը- նին հետ կը ձեւացընէ թթուտ մը , ջրածը- նաբլուսական թթուտ . մանիչն , ժահինն և ծծումբն ջըրածընին հետ կը կազմին թթ- թուտներ , անոր համար կ'ըսուին թթուտ ջրածնամաշական , ջրածնամածըմբական , ջրածնամանական , կամ բրասական , ժահինայրական , ծծրմբաշական , և այն , որ աւելի կարծ է և նոյն բանը կը նշանէ :)

1726 ի՞նչո՞ւ համար ծովու ջուրն աղի է : — Որովհետեւ իր ձեւանապու ժամանակէն ՚ի վեր ջուրն շօշափուած է սոտի քլոուկի (ծովային աղ) մեծ կոյտերու հետ , և իրեն լուծիչ զօրութեամբը՝ զայն հալեցուցած է և միշտ նոյն վիճակի մէջ կը պահէ :

1727 ի՞նչո՞ւ համար անձրկի ջուրն աղի չէ , իթէ մեծաւ մասամբ առաջ կու գոյ ծո- վու շոգիացումէն : — Որովհետեւ շողիաց-

մամբ ջըրէն միայն գոլորշին կ'ելէ , որ ամենամաքուր է , և անխառն որ և է օտար դոյացութենէ :

1728 Որո՞նք են ծովու ջըրոյ մէջ պարունակեալ աղային նիւթերն : — Ծովու ջըրոյ մէջ պարունակեալ աղերն են քլոռուկ տոտի (աղ ծովային) , ծըմբուտ սոտի , ծըմբուտ մագնեսիոյ , բլուուկ մագնեսիոյ և բուսի , մանչուկ և ժաշճուկ մագնեսիոյ . սակայն ծովային աղն ամենէն առատն է : Վերջի երկու աղերուն (մանչուկ և ժաշճուկ մագնեսիոյ) հազիւ թէ հետքն կը գտուի :

1729 Ինչո՞ւ համար ջուրն աղէկ կը լուայ ձերմակեղէնները՝ երէ մէջը մոխիր խառնուի : — Որովհետեւ մոխիրին լուծական մասն բողասի բնած զուտ է , որ կը զուգադիր ձերմակեղէնը աղտեղող եղուո զոյացութեան հետ , և կը ձեւացընէ անոր հետ դիրաւ լուծանելի կակուզ օճառ մը , որ մէկէն կը հալի ջըրոյն լուծիչ զօրութեամբ :

1730 Ի՞նչ պատճառաւ գետոց ջուրն ծուռումուռ պատյաններ ընելով կը վազէ : — Որովհետեւ , Ա . Ջուրն զարնուելով եղերքներուն դէմ՝ կը կրծէ հողուն աւելի տկար մասերը և հոն կը ձեւացընէ կորութիւններ , որոնց մէջ մասնելով շարունակ կը բարձրանայ և կը ցածնայ . — Բ . Եղերքներուն քով գետեղրի ընթացքէն կը դանդաղի , մինչդեռ մէջ աելն նուազ շիմունք կը ելով կը ըրնայ արագ վազել :

ԳԼ . Գ . ՄԵՏՍԱՂԵԱՅ ԹԹՈՒՈՒԿԻՔ :

1731 Որո՞նք են ջըրէն միբջը բնութեան մէջ աւելի առատ գտուող թթուածընի բաղադրութիւնք : — Արմատական թթուուկք , կամ թթուածընի մարմար մը հետ ուղիղ կամ անուղակի զուգագրութենէ մը ծագած բաղադրութիւնքն , որ սովորաբար մետաղ մ'է :

1732 Ո՞ր մետաղներն են որ դիրաւ կը թթուկանան օգոյ չշափմամբ : — Բոլորովին չոր օգոյ չշափմամբ : — Բոլորովին չըներ մետաղի մը վրայ . իսկ խոնաւ օգն մասնաւոր աղդեցութիւն մը կ'ընէ հետագայ մետաղաց վրայ . Բողասա , սոտ , բուռ , երկաթ , զինկ , կորալտ և կաղմոն :

(Այս մետաղներուս թթուածընի հետ ունեցած մեծ յարակցութիւնն՝ կը ցուցընէ որ իրենք բնութեան մէջ հազիւ աղատ կը գտուին , այլ միշտ թթուուկի վիճակի , և շատ անգամ նաև զուգազրելով թթուտի մը՝ անոր հետ աղեր կը կազմեն . այնպէս որ զանոնք մետաղեայ վիճակի մէջ ընդունելու համար (որ հարկաւոր է առանին գործածութեանց մէջ) , պէտք է իրենց վրայ քիչ կամ շատ արուեստական ներգործութիւններ ընել , ըստ աւելի կամ պակաս աղդեցութեան թթուածընին՝ մե-

տաղէն բաժանուելու ատեն ըրած բռնութեանը : Ոսկին , արծաթն , սնդիկն , ըլազին , կը կորուսցըննեն թթուածինը՝ երբ ջերմութեան պարզ ազգեցութեան տակ դրուին :)

1753 Ո՞ր մետաղներն են որ սովորական բարեխառնութեամբ չեն թթուեանար՝ օդային խոնաւութեան կամ ջըրոյ շշափմանը : Ոսկին , արծաթն , ըլազինն , սնդիկն , կապարն , պիհանութն , պղինձն , և պաղլեզածինն՝ սովորական բարեխառնութեամբ չի թթուեացող մետաղներ են :

(Այս մետաղներս (բայց ՚ի պաղլեզածը նէն որ + 100° ոոլ կը թթուեանայ) , բնութեան մէջ ազատ կամ ուրիշ մետաղներու , կամ մետաղակերպներու հետ խառնեալ կը գոռուին , բայց ոչ թթուուկաց կամ աղից վիճակով :)

Ա . — Թթուուկը երկարի :

1754 Ի՞նչ է երկաթին վրայ կապած ժանգն : — երկաթի թթուուկ մ՚է :

1755 Ի՞նչ կերպով խոնաւ օդոյ դրուած երկաթն կը ժանգոտի : — Երկաթին մակերկացին կը զուգագրի խոնաւ օդոյ թթուածինին հետ , և կը բաղկանայ նոր գոյացութիւն մը , որ կըսուի մակարուսակ երկարի :

Այս նոր գոյացութիւնս ալ կը զուգացրի մթնոլորտին մէջի չոպիացեալ ջրոյն

հետ , և կը կազմէ երրորդ գոյացութիւն մը՝ յրաւուալ մակարրուուկ երկաթի առուամբ :

1756 Աղէկ ջինջ երկաթն չոր օդոյ դրուելով կը ժանգոտի : — Ոչ . եթէ երկաթն աղէկ ջինջ ըլլայ և օդն չոր , սովորական բարեխառնութեամբ ամեննեին փոփոխութիւն չի կրեր :

1757 Ինչո՞ւ համար չոր օդն չի ժանգուակը երկաթը և պողովատը : — Որովհեակ խոնաւութիւնն իրականապէս հարկաւոր է թթուածընին երկաթի հետ ներզործել տալու և յարակցելու սովորական բարեխառնութեամբ :

(Եսա բարձր բարեխառնութեամբ մը երկաթն նոյնակէս կը ժանգոտի չոր օդոյ դրուելով , ինչպէս ատրաշէկ երկաթեայ ձող մը պաղելով կը ժանգոտի :)

1758 Ինչո՞ւ համար եթէ կրակով կարմրցուցած երկաթի ձող մը՝ օդոյ շշափմանի կամաց կամաց պաղելով և ուռովծենակի իրմէ բարակ կտրոնիր կը քրթին : — Որովհեակ օդոյ թթուածինն չուուով կը զուգագրի տաքցած երկաթին մակերեւութին հետ , և անոր վրայ կը կազմէ խաւեր կամ քուեր , որ կըսուին ցայտ երկաթոյ :

1759 Ինչէն ձեւացած է երկաթի ցայտն : — Ցայտին գրափ կողմն երկաթի մազնիտական թթուուկ քոս մ՚է , տակի կողմն կամ այն որ երկաթին հետ կը շշափուի է նախաթթուուկ երկաթի :

(Մագնիսական թթուուկն , Ե⁵ Թ⁴ միջին թթուուկ մ'է ընդ մէջ երկաթին անսաթթուուկի և մակաթթուուկի :

Այս զուգաղբութեան անունն մագնիսական թթուուկ գրուած է , որովհետեւ շատ զօրաւոր մագնիսական յատկութիւններ ունի :

1740 Ինչո՞ւ համար ասեղ մը , պողովատեայ ունեիիք մը կամ երկաթեայ ձող մը , կրակին զրուելով՝ կը կրուսցընեն իրենց փայլութիւնը , և մութ կարմիր գոյն մը կ'առնուն : — Որովհետեւ օդոյ թթուածինն կը զուգագիր արագապէս մետաղին տարցած մակերեւութիւն հետ , և անոր վրայ կը կազմէ գերաթթուուկ ըստուած թթուուկ մը , որ մութ կարմիր գունովէ :

1741 Ինչո՞ւ համար վառարաններն , փուռերն , և այլն , չի բնակուած սենեիի մը մէջ կը ժանդոտին : — Որովհետեւ սենեկին օդոյ խոնաւ ըլլալով՝ կը թթուկացընէ երկաթին մակերեւօյթը :

1742 Տարւոյն ո՞ր եղանակին աւելի գը ծուար կըլլայ վառարանները , և այլն , ժանդէն աղատ պահէլն : — Աշնան և ձմեռուան մէջ , որովհետեւ օդոյ ջուր բռնելու կարողութիւնն ամառուանէ և տրը կը նուազի օրէ օր . հետեւաբար մաս մը իր շողիէն կը նատի բոլոր չօշափուած առարկայից վրայ :

1743 Ինչո՞ւ համար վառարաններն , փուռերն , և այլն , ունեիիքներէ , թիակներէ ,

և խառնիչներէ աւելի քիչ կը ժանդոտին : — Որովհետեւ վառարաններն , և այլն , սովորաբար կը ծածկուին որդուաբարի կարգովմը , որուն վրայ թթուածին կազն ամենեին աղդեցութիւն չըներ , բայց եթէ խիստ շատ ըլլայ տարբութիւնն :

1744 Ինչո՞ւ համար երկաթն չի ժանդոտիր երբ ծածկուած ըլլայ ճարպով կամ վեռնիֆոլ : — Որովհետեւ ճարպն և վեռնիճն կ'արգելուն երկաթին մակերեւոյթը՝ օդոյ խոնաւութեան հետ չօշափելէն :

1745 Ինչո՞ւ համար սեցած պողովատն աւելի շուար կը ժանդոտի քան ճերմակ ու ողորկ պողովատն : — Որովհետեւ պողովատին կապոյտ գոյնն կը պատճառի նոյն մետաղին մասնական թթուականալէն . հետեւաբար , արդէն ժանդը կազմող աղդեցութիւնն սկսած կ'ըլլայ :

1746 Ի՞նչ է շիշերուն գոյց կանաչ գոյն տուողն : — Երշի ապակուոյ գոյնն առաջ կու գայ երկաթի նախաթթուուկէն , որ մութ կանաչ կը գունաւորէ հալիչները :

(Հալիչ կը ըստուին այն գոյցացութիւնք որ գժուարացից մարմնոց հետ միանալով անոնց հալումը կը դիւրացընենն :)

1747 Ի՞նչ բանէ առաջ կու գայ արիւնաբարին մասնական գոյնն : — Երկաթի կարմիր թթուուկէն , կամ երկաթի անջրուտ գերաթթուուկէն , որ թանձր կարմիր գունով մ'է :

1748 Ի՞նչ է բնական խանդումանին : —

Մանգելիտական թթուուկ բառուած երկաթի թթուուկ մը, որուն քիմիական բաղադրութիւնն ամենէքին չի տարրերի երկաթին բառաւին բառաւի կամ ցայտերէն :

1749 Ինչէն կը ծազին կաւաքարային և կնրոյին հողոց կարմիր և թուխ գոյներն որ կը գործածուին նկարչութեան մէջ : — Ա. Բյուսփոյ կարմիրքն, Անգլիոյ կարմիրքն և Հնիքի կարմիրքն որ կը գործածուին՝ յատակները, դռները, պատուհանները, և այլն, նկարելու, առաջ կու զան իրենց սպարունակած երկաթի անջրուտ թթուուկէն : — Բ. Ելրք կաւերն պարունակին ջըրուտ երկաթի թթուուկի և մանկանէղի խառնուրդ մը, կը կազմեն ստուերահող, Սիենայի հող, և ուրիշ թուխ գոյներ :

(Երկաթի նախաթթուուկն լուծուելով թթուուտաց մէջ կը պատճառէ տժգոյն զըմ բուխտի կանանց գունով աղեր . զերաթթուուկն կը կազմէ նոյն թթուուկաց հետ՝ կարմիր և թուխ գունաւորեալ աղեր :

Այս երկաթի աղերէն ամենէն կարևորն կանչ արշասաց անուանեալն է : Երկաթի թթուուկն կը սկզբնէ զիստորին եփումը, և այսպէսով թանաք կը պատճառէ . ինքն է զիմաստոր բաղադրիչն սկզբ գորչ, ձիթենի, և մանիշակ գունոց, անով է որ կը մինուի բրասիոյ կապրյան, անով կը հայթհացիթի ոսկեց փոշին՝ որ յախանապակներն ոսկեզօծելու համար կարելոր է :)

1750 Ինչու համար սկազոյն հող մը

տակնուվրայ ընելէն քանի մը օր վերջը՝ մակերեւոյթն թուխ կարմիր գունով կըլլայ : — Այս բանն կ'ըլլայ երբ գետինն պարունակէ երկաթի սկզ թթուուկ բառուած բաղադրութիւնն մը : Այս թթուուկս խոնաւ օգէն թթուածընի նոր քանակութիւնն մը ծըծելով՝ կը վերածուի ջրասեալ երկաթի գերաթուուկի, որ բուխ կարմիր է :

(Երկաթի գերարրուուկն ջըրատեալ վիճակի մէջ ձերմակ կ'ըլլայ, բայց չի կ'ըրնարունակ մնալ, որովհետեւ ձեւացած ատենէն կը ծըծէ մասն թթուածընի և կը կարմըրնոյ, փոխուելով մակաթթթուուկի կամ գերաթուուկի :

Միշակ բրուուկն որ երկաթի երկթթուուկ կ'ըստէր սկզ է :

Գերարրուուկն կամ մակարրուուկն՝ կարմիր մանիշակագոյն է :

Զրատեալ գերարրուուկն, այսինքն ջըրոյ հետ միացածն, թուխ կարմիր է :)

Բ. — Թրուուկը անազի :

1751 Ի՞նչ է այն ժանդն որով անազն կը ծածկուի : — Անազի թթուուկ է, որ կը ծեւանայ օգոյ դրուած անազին խոնաւ մասնցը վրայ :

1752 Ի՞նչն անազն օգոյ շշափմամբ կը կորուսցնէ իր փայլութիւնը : — Որովհետեւ անազին մակերեւոյթն քիչ ատեն

նուան մէջ կը ժանդոտի . սակայն այս թը-
թուկացումն միայն առ երեսս է :

(Կապարին յաւելումն՝ անազին թթու-
կացումը կը շուտցընէ , հաւանաբար եր-
կու թթուուկաց փոփոխակի յարակցու-
թեանը համեմատ :)

1755 Ի՞նչ կերպով կը ջնջուին քիչ ատե-
նուան մէջ ձերմակեղինաց վրայ ձևացած
ժանդի բիծերն : — Այս երկաթաժանգա-
կան բաղադրութիւններն մէկէն կ'անե-
րեութանան (և առանց լաթեղինաց հիւ-
սուածքները փոփոխելու) ամենապարզ
կերպով մը , որ է թրջել բծոտ մասը՝ ա-
նազի թթուկացեալաղի թեթև լուծման մը
մէջ :

1756 Ինչո՞ւ համար խոհանոցի երկա-
թեայ և պղնձէ ամաններն կ'անապին (կամ
կլայեկեն) : — Որովհետեւ անազն կը պա-
հէ պղինձը և երկաթը թթուկացումէ ,
չթողով օդոյ՝ որ այս մետաղներուն հետ
չշափուի :

(Այս ամաններն եթէ զինկով ծածկուին՝
աւելի լաւ կը պահուին ժանդոտելէ քան
թէ կլայեկելով)

1757 Ինչո՞ւ համար խոհանոցի անօթոց
անագեայ խուփերն կրակին ազգեցութե-
նէն՝ թուխ գեղին գոյն մը կ'առնուն : — Ո-
րովհետեւ առաք անազն աղատապէս կը զու-
գաղրի օդոյ թթուածընին հետ , և այս զու-
նով թթուուկ մը կաղմէ :

Դ . — Թրուուկը կապարի :

1756 Ինչո՞ւ համար կապարին մակերեւ-
ոյթն խոնաւ օդէն կը կորուսցընէ իր փայ-
լութիւնը և աւելի մութ գոյն մը կ'առնու :
— Որովհետեւ խոնաւ օդոյ թթուածինն կը
զուգագրի կապարին մակերեւութիւն վրայ ,
և կը կաղմէ կապարի մակարրուուի բնած-
զուտ մը , որ պղտոր գորշգոյն մը կ'ունե-
նայ :

1757 Ի՞նչ կերպով կը ձեւանայ բնած-
զուտն : — Առաջուց օդն կը թթուկացընէ
կապարին մակերեւոյթը , այս թթուկս ալ
կապարի օդոյ ածխային րրուսին հետ ,
և կը կաղմէ բնածզուտ մը՝ որ կը հաղորդէ
կապարին իր գոյնը :

1758 Ինչո՞ւ զինկն , կապարն , արծաթն,
և այլն , չին ժանդոտիր : — Որովհետեւ
այս մետաղաց թթուկացումն միայն մակե-
րեւութական կ'ըլլաց :

1759 Ինչո՞ւ համար երկայն ատեն սովո-
րական հողէ ամաններու մէջ պահուած
կերակուրներն վեասակար կ'ըլլան : — Ո-
րովհետեւ անօթագործք կապարի ծծլմբուտ
կը գործածեն՝ այդ համարակ անօթեղէն-
ները բաելու համար . այս բուռու (վեանիճ)
դիրան կը լուծուի ճարպերէն և թթուու-
դիրէն , և կերակուրները կը վեասէ :

1760 Ի՞նչ է այն ձերմակ քոսն որ կը ձեւանայ ջուր պարունակող տաւագանաց և կապարեայ կոնքոց կողմանցը վրայ : — Ջրառաեալ կապարի բնածղուտ է՝ որ կը ձեւանայ ջրոց հետ շշափուած մետաղին կողմանցը վրայ : — Որովհետեւ այս բնածղուտս բունաւոր կը լլայ , անոր համար պէտք է զգուչանալ կապարեայ անօթոց մէջ պահուած ջուրը տնական գործածութեանց ծառայեցնելու :

1761 Ի՞նչ է կապարի սպիտակալեղն : — կապարի բնածղուտ է : Այս բնածղուտս թունաւոր է . և որոնք որ այս դոյացութենէս շատ անզամ կը գործածեն՝ կը ըլունիին սատուռնական ըսոււծ ցաւերով :

(կապարի սպիտակալեղն՝ ունի յատկութիւն ճէթի հետ բոլորովին խառնուելու , իր դոյնը պահելու , դիրաւ տարածուելու վրձինին տակ , աղէկ և միակերպ ծածկելու մակերեսոյթները , և ուրիշ ճերմակ դոյներէն նուազ գեղիննալու :)

1762 Կարչութեան մէջ կարելի չէ սպիտակալեղն աեղ ուրիշ ճերմակ և անթոյն դոյացութիւն մը բանեցընել : — Այսու կը գործածուի զինկի թթուուկն կամ սպիտակալեղն որ աւելի խնայողական ալէ , և կապարի սպիտակալեղին սուաւելութիւններն ունի , միանզամայն և թունաւոր չէ :

(Զինկի թթուուկն կապարի սպիտակալեղն այս առաւելութիւնս ալ ունի որ չի

սենար երկրորդին նման , ծծլմբատ ջըրածին կազին արտացնդ մանեն :)

1763 Ինչու համար կապարեայ անօթոց մէջ պահուած զինին և քացախմ՝ լիիթեր (սուր ցաւ) կը պատճառեն : — Որովհետեւ կապարի թթուուկի մասունքներ կը լուծուին այս հեղուկներէն , և կապարի բազագրութիւնքն կը հաւորդենիրենց մահարեր թունաւոր յատկութիւնները :

(Բոլոր կապարեայ և սովորական հողէ անօթոց մէջ (որոնց վեռնին կապարի թթուուկով կը չինուի) , եփուած կերակուրներն վեսասակար են : Կապարէ ամանի մէջ պահուած կաթն ալ փորու ցաւ կը պատճառէ :)

1764 Երեք կապարի սպիտակաղեղով վընատուի մէկն , ինչ կերպով կարելի է գոնէ թեթեցընել վիասը : — Վիչ քիչ իրալմի աղի թեթել լուծմունք մը խմելով , կուզբի կամ ջըրչունի իւղն և բոլոր պարարտ մարմիններն ընդհանրապէս աղէկ գեղեր են նկարչաց կրած ցաւերուն դէմ :

(Ոնդզիոյ քաղքէ մը կ'առնու այս անունը :)

1765 Ինչու իբուրմի աղն կապարի աղերուն թոյնին դէմ աղէկ գեղ է : — Որովհետեւ այս աղս կը կազմէ կապարի աղերուն չետք կապարի ծծլմբուտ մը , որ անլուծաննելի ըլլալով ստամզրսին թթուուացը մէջ , առանց աղդեցութեան կը մնայ կազմուածքին մէջ , և վեսասակար հետեանք ըունենար :

Դ. — Թրուտիկ պղբեայ:

1766 ինչո՞ւ համար պղինձն գիւրաւ կը կորուսցընէ իր փայլութիւնը: — Որովհ զետև օգոյ խոնաւութիւնն շուտով կը ժանգուէ զայն :

1767 Ինչ է այն կանաչ քոսն՝ որ կը ծածէկ օգոյ շօշափմանը գրուած պղընձնն մակերեւոյթը: — Այն կանաչ քոսն՝ պղընձի ժանդ ըստուած, պղընձի երկթթուուկի բընածզուաէ :

1768 ինչո՞ւ համար արոյրէ արձաններն քիչ ատեննուան մէջ կանաչ քոսով մը կը ծածկուին: — Որովհետև օգոյ խոնաւութիւնն կը զարնէ արոյրին և կը կազմէ անոր հետ այն կանաչ գոյացութիւնը, որ պղնձի երկթթուուկի շըրատեալն է, և բնածզուանոյն երկթթուուկին :

(Արոյրն բազագրեալ խառնուրդ մ'է անագի և պղնձի:)

1769 ինչո՞ւ համար պղընձէ սանի կամ պրյում մը մէջ նիւուած և պաղած կերակորներն թունաւոր կ'ըլլան: — Որովհետև թթուուաց կամ պարարտ նիւթոց աղցիցութենէն պղինձն կը ժանգուի, և այս թունաւոր թթուուկս կը լուծուի կերակրոց մէջ:

(Պղնձի թթուուտ կամ բնածզուով խառնուած գոյացութիւններ ուտելէն վերը մը եթէ գէշութիւն մը զգայ մէկն պէտք է

շատ շաքարուտ տաք ջուր խմէ փսխելու համար: այս բանս ընելէն վերջը՝ պէտք է խմել նաև քառորդ միոր ջըրոյ մէջ զարնուած վեց հաւելքթի սպիտակուց, կամ ամիրով ջուր:

1770 Եթէ պղընձէ ամաններն վեստակար յատկութիւններ կը հաղորդեն կերակրելինաց՝ ինչո՞ւ ուրեմն խոհանոցաց մէջ այս մետաղէս շինուած ամաններ կը գործածեն: — Որովհետև այս ամաններս կերակրոց ամեննեին վեստակար յատկութիւն մը չեն հաղորդեր՝ եթէ աղէկ մաքրուած ըլլան, և կերակուրներն պաղելու համար անոնց մէջ չթողուին:

1771 ինչո՞ւ համար պղընձէ ամաններն զրեթէ միշտ կ'անագուտին: — Իրենց գործածութեանը ատեն անզգուչութեամբ պատճառուելու վտանգները նուազեցընելու համար:

(Պէտք է նորոգել կլայշէկելը ամեն անգամ որ պղնձն մերկ երեայ:)

1772 ինչո՞ւ համար խոհանոցի փուռերու վրայ՝ այն տեղեր ուր ածուղներն ստներուն կը գալիքն երթեմն կանաչ բոց մը կը նշմարուի: — Որովհետև պղնձն բոցին շօշափմանը կը թթուուկանայ և անոր կը հաղորդէ կանաչ գոյն մը:

1773 ինչէն է որ ապակիններն գեղեցիկ կանաչ գոյն մը կ'առնուն: — Պղընձի երկրուուկն է, որ կը հալի ապակւոյն նիւթերուն հետ:

1774 Ի՞նչ գոյացութիւն կը գործածուի ապահեայ գեղեցիկ կարմիր գոյն տալու համար : Պղընձի նախարրուսկն՝ որ ապահովյն հետ միատեղ կը հալեցուի :

1775 Ի՞նչ է կասպյու արշապան : — Պղընձի ծծմբատէ, պղընձի նախաթթթուուկն և զուգադրեալ ծծմբային թթուտէն ձեւացած :

Ե . — Թրուռելք արժարի :

1776 Ինչո՞ւ համար արծաթն խոնաւ օքէն իր փայլութիւնը կը կորուսցընէ : — Որովհետեւ սովորաբար անօթներու մէջ գործածուած արծաթն զուտ չէ, այլ խառնուրդ է, որ օդոյ շօշափմամբ կը թթուու կանայ :

(Արծաթն իր զուտ վիճակին մէջ ամեննեին փոփոխութիւն մը չի կրեր օդոյ շօշափմամբ . բայց հաղիւ երբեք զուտ կը գործածուի, որովհետեւ այս վիճակին մէջ աւելի կակուղ կ'ըլլայ քան թէ պղընձի հետ խառնուած ատեն, և զուտ արծաթով շինուած անօթներուն եղերքն չուտ մը կը մաշին :)

1777 Ինչո՞ւ համար խոնաւ աղն կը սեցընէ արծաթէ գրալը : — Որովհետեւ խոնաւ աղին բլուն կը զուգադրի օդոյ հետ և կը կազմէ արծաթի քլոոուկն, որ կը սենայ արեգակնային ճառագայթից ազգեցութիւնը լուսած կ'ըլլայ :

(Այսպէս սեցած գրալն գարձեալ ճերմակ և փայլուն կ'ըլլայ՝ եթէ սրբուի կին զրոնացած և զուտ հեղուկ աւշակի մէջ թաթիւուած լաթովմը :)

1778 Ինչո՞ւ համար արծաթի վրայ կերակրոց աղին ազգեցութեամբը պատճառեալ բիծերն մէկէն կը ջնջուին հեղուկ աւշակէն : — Որովհետեւ արծաթի քլոոուկն աւշակի մէջ շատ դիւրաւ կը լուսուի :

(Կերակրոյ աղն կը բաղկանայ քլոուէ և սոսէն :)

1779 Ինչո՞ւ համար հաւկիթներն և ճըկներն արծաթէ պատճառաբաղներուն և զըքալներուն՝ գեղին ոսկեզօծ կամ թուխ կապոյս գոյն մը կու տան : — Որովհետեւ կը պարունակին ծծումբի քանակութիւն մը՝ որ կը զուգադրի արծաթին հետ, և կ'աղտոտէ անոր մակերեսյթը :

(Ճըկումն կը գտուի թէ սպիտակուցին մէջ և թէ գեղնուցին, բայց աւելի երկրորդին մէջ քան թէ առաջինին : Նեխեալ հաւկլթին գէլ հոտն առաջ կու զայ իրեն գոյացութեանց բաղալուծմանէն, որովհարձըկուի ծծմբուտ ջրբածնի քանակութիւնը մը՝ որ տհաճելի հոտ մը ունի :)

1780 Ի՞նչ կերպով դիւրաւ կը բնան հանուիլ արծաթին վրայի ծծմբէն պատճառեալ բիծերն : — Նիկեով արծաթին մակերեսյթը քիչ մը ձիթով կամ Սպանիոյ ճերմակով, կամ կաւով, կամ փայտի մոխ-

րով, կամ օճառով, և կամ հեղուկ աւշա-
կի մէջ թաթիսած լաթով մը :

1781 ինչո՞ւ համար ձէթն, կտւն, մո-
խիրն, կը հանեն արծաթեղինաց բիծերը,
— Որովհետեւ այս գոյացութիւնքս կ'ան-
հետացընեն ձևացած ծծումքը՝ լուծելով
զայն, կամ ծծումքը իրենց յատկացընե-
լով, կամ այսպէսով նոր բաղադրութիւն
մը կազմելով :

(Եթէ սե գոյնն մնայ, կը բնայ ֆնջուիլ
սպասարքագները, զբաները, և այն,
խոթելով բրուածնային թոււտի կամ քիչ
մը փայտի մոխիր սպասնակող ջըրոց մէջ)

1782 ինչո՞ւ համար շատ կամ քիչ ար-
ծաթի նմանող խառնուրգներով շինուած
ամաններն, ինչպէս զերմանիոյ արծաթն
(argentone), և այն, չուտ մը գեղին ոսկե-
զօծ գոյն մը կ'առնուն : — Որովհետեւ այս
խառնուրգներս պղընձէ, զինէկ և նիփելէ
շինուած են, որք արծաթէն շուտ կը ժան-
դուին :

(Գերմանիոյ արծաթով շինուած խոչա-
նոցի անօթներն մեծ զգուշութիւն կը պա-
հանին, որովհետեւ թունաւոր յատկու-
թիւններ կը հաղորդեն թթու հեղուկաց,
և պարարա գոյացութեանց, եթէ քիչ մը
ատեն անոնց մէջ մնան : Պէտք է ստէպ
մաքրել զանոնք Սպանիոյ ճերմակով, կամ
փայտի մոխրով, և երկայն ատեն աղտոտ
կամ թաց թողուչէ :)

1783 ինչ է դժոխարարն որ վիրաբու-

ժութիան մէջ կը գործածուի մարմինը խա-
րիու համար : — Ալբարի բրակատ է, այս-
ինքն բրակային բրուտի հետ զուգադրեալ
արծաթի թթուուկ :

1784 ինչո՞ւ համար գժոխաքարն կը պատ-
ճառէ մաշկին վրայ թուխը մը՝ որ քանի
մը ժամէ վերջը բոլորովին սե կ'ըլլայ : —
Որովհետեւ արծաթի բրուակատն՝ կը բաղա-
լուծուի նաև անդրագարձեալ լուսոյ աղ-
գեցութենէն . այս բաղալուծմանս մէջ
թթուուկի մաս մը մետաղային վիճակի կը
վերածուի, և մետաղն բաց թուխ գոյն մը
կ'առնու, որ իր բաժանուածութենէն կը
կախուի :

1785 ինչպէս ճերմակեղինաց վրայ նը-
շան կը գննեն արծաթի բրուակատով : —
— Ճերմակեղինին նշանել ուզած տեղ՝
թրծելու է սոտի բնածղուտով կալաքարա-
ցուցած նաշոյ լուծման մը մէջ, վերջը
վրան զրելու է քիչ մը խէժով խառնուած
արծաթի բրուակատի լուծմամբ . և շուտ մը
արեւու ճառագայթից կամ աղէկ կրակի մը
աղցեցութեամբ՝ զրերն կ'երեան, և եր-
թայով աւելի կը սենան, որշափ որ ճեր-
մակեղինն լոււացուի :

1786 ինչո՞ւ համար ճերմակեղինին վր-
այ նշան գննել ուզուած տեղը՝ թրծելու է
սոտի բնածղուտ կամ օճառ պարունակող
լուծման մը մէջ : — Զանիկայ լուացքի տ-
ելի զիմացկուն ընելու համար :

1787 ինչո՞ւ համար զրերն աւելի կը սե-

նան՝ եթէ ճերմակեղէնն արևու գէմ զըրուի : — Որովհետեւ արևուն կամ կրակին ճառագայթներն մետաղական փիճակի կը վերածեն աղը , մետաղն ալ ինքիրմէ սեէ , իրեն շատ բաժանուութեան պատճառաւ :

(Կտաւը սե նշանելու համար ջուրն՝ կը պատրաստուի խառնելով երկու մասն արձաթի բրուկատի թորեալ ջրոյ եօթն մասի հետ , որուն վրայ կ'աւելցուի մաս մը Արարիոյ խէժի :)

1788 Ի՞նչ կերպով կ'արուին արծաթի բրուկատով զրուած զրերն : — Բողասի խաժուկի լուծմամբ :

(Ճերմակեղէնները հաստատ նշանելու կերպ մ'ալ հետեւեալն է : Առ կնիք մը ուրուն վրայ ուզած զրերդ նշանուած ըլլան , և աղէկ մը տարցուր . քիչ մը բարակ շաքարի փոշի ցանէ նշանը զարնել ուզած տեղդ , և վրան տաք կնիքն ուժով կոխէ . տպաւորուած տառերն ամենեին չեն աւրուիր :)

Զ . — Սնդիկ , ոսկի , բաղդին :

1789 Սնդիկն օդէն կը ժանդուտի : — Անդիկն սովորական բարեխառնութեալը ամենեին փոփոխութիւն չի կը եր՝ եթէ օդոյ ալ գրուի . քիչ մը կը սենայ , բոյց չի ժանդուտիր :

1790 Եթէ սնդիկն կը սենայ , ինչո՞ւ ծանրաշափներու և չերմաշափներու խոզովակաց մէջ իր փայլութիւնը կը պահէ : — Որովհետեւ այս խոզովակներս օգ չեն պարունակեր , և ապակին կ'արգելու խոնաւութիւնը սնդիկին հետ չշափուելուն :

1791 Ոգոյ խոնաւութիւնն ոսկին ալ կը թթուկացընէ : — Աչ , սակայն տարրաբանք արուեստով կը գտնեն երկու բաղադրութիւններ ոսկեոյ թթուածընի հետ :

1792 Ո՞ր մետաղն է որ ամենեին չի թթուկանար և կամ չի ժանդուտիր : — Քլողինն ։ Այս յատկութիւնս է որ զինքը պիտանի կ'ընէ չափարանական գործեաց , քուրաններու և աստիճանաւոր աղեղաց շնութեան համար :

1793 Ինչո՞ւ համար թթուաններու գործածութեանը համար քուրաններն ըլլագինէ կը շնուռին : — Որովհետեւ այս մետաղս միայն քանի մը թթուտէ ազգեցութիւն կը կրէ , մինչդեռ մէկաններն ուրիշ մետաղաց և ապակւոյ վրայ այնպէս կ'աղջին որ բնագիտոց փորձերն անորոշ և խառնակ կ'ըլլան :

1794 Ինչո՞ւ համար ըլլագինէ քուրաններն երբ բնածդի կրակով մը տարցուին՝ կը կոտրին : — Որովհետեւ ած զսկին կարմրագոյն կ'ընէ ըլլագինը , միանգատայն պինդ և դիւրաբեկ : Այս պատճառաւ ովէար է միշտ զգուշանալ ըլլագինէ քուրանները բնածդոց դի չշափամամբ տարցըննելուն :

լ. : — Այլ և այլ բրուտկը :

1795 Ո՞ր մետաղներն աւելի մեծ յարակցութիւն կը ցուցընեն թթուածընի, — բոդասն և սոտն :

(Կալին՝ նախաթթուուկ մ'է ջըրատեալ բոդասի : « Նատրոնն նախաթթուուկ մ'է ջըրատեալ սոտի :)

1796 Ի՞նչ կերպով բոդասն և սոտն կը յայտնեն իրենց թթուածընի յարակցութիւնը : — Լուծելով ջուրը՝ անոր հնու շափուելուն տառն :

1797 Ի՞նչ կը պատճառէ բոդասն ջըրոյ վրայ : — Անոր թթուածինը ինքն կառնու և կը ծագեցընէ ջըրածին կազ, որ կը բորբոքի բոդասին թթուածընին հետ զրոգադրելովը պատճառած ջերմութենէն : Ջըրածին կազն բորբոքելով՝ կը պատճառէ այս կիզմանս մէջ պայծառ և կարմիր բոցմը, և առաջ եկածն է ջըրատեալ բարակ կամ կալի :

1798 Ի՞նչ կը պատճառէ սոտն ջըրոյ վրայ : — Զայն կը բաղալուէ և կը կրէ արագ թթուեկացում մը . բայց այս տարբերութիւնս ունի բոդասէն, որ աս կը պատճառէ տժ գոյն գեղին բոցմ մը՝ առաջ բերելով նախաթթուուկ ջըրատեալ սոտի կամ նատրոն :

1799 Ի՞նչ գոյացութիւններէ բաղադրեալ են քանի մը յարգի քարեր : — Ա. կարկեւանն, արեւելեան տպազիւնն, արևելեան մեղեսիկն և շափիւայն, պաղեղածընի թթուուկի են : — Սմպատակն է թթուուկ պաղեղածընի խառնեալ չատ մը երկաթի թթուուկի հետ : — Բ. Պրազիկի տպազիւնն, Պոհեմիոյ կարկեւանն, եղեգնաքարն, արեւելեան յասպիսն, ակատն, և եղերիկն ձեւացած են վանակնէ, մետաղական թթուուկներով գունաւորեալ . ու փայնն է բաղադրեալ ջըրատեալ գայլախաղական թթուուով :

(Այսամանին է բիւրեղացած բնածդղուկ : Յակինըն է ժարգոնական գայլախաղատ մը : Յմրտիստն է դայլախաղատ կրկին պաղեղակի և քաղցրանիկ : Պաղլուուին թըթուուկ մ'է պաղեղածնի որ երբեմն կըսուի դուռտ կաւ : Ժարգոնիկն է թթուուկ ժարգոնական : Քաղցրանիկն քաղցրանի թթուուկ մ'է, կակուղ և սպիտակ կողոյ, որ կը գըտուի Վիսկերիսյ ըւրեղի և զմրուխտի մէջ : Գայլախագն է թթուուկ մը թթու և անզուտ գայլախանի : Զուտ գայլախագն կը կազմէ քուարց և վանակն :)

1800 Բաց ՚ գոհարներէ և թանկ քարերէ, ուրիշ օգտակար քարեր ալ կան մետաղական թթուուկներէ ձեւացած : — Այս և են, Ա. Ցեսանաքարք, որ կը ծառցինս սովորաբար գանակները սրելու : — Բ. Գայլախագը, տրապողի, աւագք և նաև

աւազանաեր որ կը ծառային ճամբաները
սալյախտակելու։ — Գ. Արձաքարը և Հեր-
ձաքարը։

1801 Ի՞նչ օգուտ ունին մետաղական
թթուուկը : — Ա. Թթուուկը են արմատք
ամենայն մետաղական աղից : — Բ. Եղե-
րու և պարարտութեանց հետ կը կազմն
օճառներ : — Գ. Նկարի կը դորձածուին
ներկարաններու և յախճապահելոյ դորձ-
արանաց մէջ : — Դ. Ասոնք են գործա-
ծական բաղադրութիւնք՝ որով ապակեաց
այն պայծառ գոյները կը տրուին, նման
գոհար քարերու։

1802 Ի՞նչ է ապակին : — Ա. յսպէս կ'ա-
նուանին այն ամեն նիւթք՝ որ հալելէն վեր-
ջը կ'առնուն ապակային երեսոյթ մը, բայց
յատուկ ապակի ըստածն՝ որով կը շինուին
տնական անօթներն, ամենամաքուր աւա-
զի բաղադրութիւն մ'է, ստոի և կըրի հետ
հալած, կամ բողասի և պաղլեղակի հետ։

(Երկու առաջակ ապակի կայ, բուն ա-
պակի և բիւրեղ, առաջինն կը ձեւանայ ա-
պակի զուգագրութենէ՝ մը (գայլախազա-
կան թթուա) ստոին և կըրի հետ, և գրե-
թէ միշտ կապուատիկ է, մինչդեռ երկոր-
դըն կը ձեւանայ նոյն գայլախազական թթ-
ուատին զուգագրութենէն՝ բողասի և
կապարի թթուուկի հետ, և առաջ եկած
բաղադրութիւնն ամենայստակ և անգոյն
կ'ըլլայ, Ուրեմն այս երկու բաղադրու-
թիւնք են երկու գայլախազար, ապակին

է կրկին գայլախազատ մը սոտի և կըրի .
իսկ բիւրենք՝ գայլախազատ մը բոդասի և
կապարի ։)

1803 Ո՞ր մետաղական թթուուկներն են
որ ապակւոյն այսպիսի զանազան գոյներ
կու տան : — Կոբալտական թթուուկն
պղտիքանակութեամք՝ ապակւոյն կապոյտ
շափիւզայ գոյն մը կու տայ, Պղընձի թթ-
ուուկն՝ գեղեցիկ երկընքի գոյն մը կու
տայ, պղընձի և ուրանային թթուուկը՝ կու
տան կանաչ գոյն, որովհետեւ ուրանային
թթուուկն դեղին կը ներկէ ապակւոյն զան-
գուածը, Պղընձի ենթաթթուուկն կու տայ
ծիրանի կարմիր գոյն մը :

(Խոտեգոյն կանաչի համար կը գործա-
ծուի քրոմի մակաթթուուկն. շիշի կանաչի
համար՝ բարակ փոշի դարձած երկաթի
ցայտեր :

Զմրուխտ կանաչի համար՝ թթուուկը
նիբէլի և ուրանային. մանիշակագունի
համար՝ մանկանէզի սե թթուուկ. գեղնի
համար՝ սեւա թթուուկ մանկանէզի և եր-
կաթի մակաթթուուկ :

Ոսկոյ եռաբլուուկն կը գործածուի
վարդեգոյն կամ ծիրանեղոյն կարմիր ա-
պակիոյ շինութեան. սաթագոյն գեղնի
ալ՝ արձաթի քլուուկն.)

1804 Ի՞նչէ բաղադրած է ապակին կի-
տուածն (Ժմալ) : — Ապակեղէն կիտուածն
է ապակի մը, որ մէջը կը պարունակէ
ստուերամած նիւթոց մասունքներ :

1805 Ո՞ր նիւթերն են որ ապակին սոռուեցամած կը լնեն և ապակեղէն կիտուածի կը դարձընեն : — Անազի գերաթթը ուուկն, զառիկային թթուան, և կրային փոստիոն :

(Անազի գերաթթուուկն սովորաբար ամենէն աւելի գործածուածն է, որ ոչ միայն ճերմակ կիտուած կը կազմէ, հապա աւելի դիւրութեամբ կըրնայ զունաւորիլ ուրիշ մետաղական թթուուկաց հետ, ինչպէս կըլայ ապակեոյն ե պարզ բիւրեղին հետ)

1806 Ինչէ բազկացած է աստղաբարն՝ որուն մէջ օսկեաց մասունքներ ցանած կ'երեան : — Այս մասունքն որ ոսկի կը կարծուին մետաղական պըղինն են, նոյն մետաղին թթուուկէն պատճառած, և ապակեոյն մէջ երկաթի նախաթթուուկի հետ միատեղ հալած :

Գ. Դ. Բնախուին:

1807 Ջըրէն վերջը ո՞ր գոյացութիւնն է բնութեան մէջ ամենէն առատ գտուողն :

1808 Ի՞նչ է բնածուղն : — Պարզ մետաղակերպ մարմին մը, որ ազատ և քիմիական գուտ վիճակով հաղիւ երեք կը գտանի բնութեան մէջ, հապա քիչ կամ շատ խառնուրդով. և ուրիշ գոյացութեանց հետ զուգազբեալ կը գտանի մեծաւ քանակութեամբ ափուեալ իրեք նիւթական սեռից մէջ, հանքային, բուսական և կենցանական :

1809 Սովորաբար ինչ անուուամբ կը ճանչցուի զուտ բնածուղն : — Զուտ բիւրեղացած բնածուղն կը կազմէ աղամանդը, որ եթէ կտրուի զանազան ձեւերով՝ պայծառ և փայլուն տեսք կ'առնու, անոր համար կըսուի չողակի (brillant) :

(Յողականց մեծ յարդ ունենալուն պատճառն է զանոնք ձեի վերածելու գժուարութիւնն : Այս գժուարութիւնն ալ ազամանդին ամեն մարմիններէ աւելի պինդ ըլլայէն է :

1810 Ո՞ր կը գտուի ադամանդն : — Ամենէն առատ Հնդկաստան և Պրազիլ կը գտուի, Այս բիւրեղներս խառն կը գտուին որիշ շատ գոյացութեանց հետ ուշ՝ որոնց մէ կը զատեն կրկին և կրկին լուացմամբ :

1811 ի նշպէս կը բանին ադամանդը՝ եւ
թէ իրմէտ աւելի պինդ մարմին չկոյ : —
Պղտի ադամանդները մէկմէկու հետ շինե-
լով զանոնք փոշւոյ կը վերածեն, և վերջը
այս փոշին աւելի մեծերը բանելուն կը
դրձածուի :

1812 Զուտ և բիւրեղացած բնածուղն
գեռ ուրիշ գոյացութեանց մէջ այլ կը զը-
տուի : — Բոլորավին զուտ և բիւրեղացած
բնածուղն միայն ադամանդի մէջ կը զը-
տուի, սակայն ուրուարարն, գետնածու-
ղըն, և փայտի ածուղն, ևս և կենդանա-
կան գոյացութեանց ածղացմանքն բնա-
ծուղ են, բայց քիչ շատ խառնեալ ուրիշ
գոյացութեանց չետ :

1813 Ինչո՞ւ համար երբ հացն, միսն,
և այլն, զրուին սասափի տաքութեան մը
տակ գոյներնին կը փոխեն, կը կորուսցը-
նեն իրենց համը, և երթարով կը սենան :
— Որովհեաւ հացն ու միսն և բոլոր բու-
սեղին և կենդանական գոյացութիւնք՝ կը
պարունակեն ածղուկի մեծ քանակութիւն
մը՝ որ հաստատուն կը մնայ, մինչդեռ միւս
գոյացութիւնք չերմութենէն կը թոշին :

(Բուսեղին գոյացութեանց մէջ ածղուկն
կը փոփօխի բառ զանազան յատկութեանց
նոյն գոյացութեանց, և կան այնպիսիներ
որ 42 և նաև 45 % սոսկ ածղուկ կը պա-
րունակեն) :

1814 Ինչո՞ւ համար փայտի կտոր մը հո-
գի ամանի մը մէջ փակեալ և սասափի տա-

քութեան մը գրուած՝ կը սենայ, կամ ա-
ծուղ կը գառնայ : — Որովհետեւ թթուա-
ծինն և ջըրածինն կը թոշին . մինչդեռ ած-
ղուկն ըլլալով հաստատուն գոյացութիւն մը՝
ամանին մէջ կը մնայ :

(Հաստատուն գոյացութիւնը են այն գոյա-
ցութիւնն՝ որ երբ հնոցաց սովորական բա-
րեխառնութեամբ կը թոշին :

1815 Ինչո՞ւ համար բաց տեղ և օդոյ չօ-
շափմամբ վառած փայտի կտոր մը՝ գրեթէ
բոլորովին կ'այրի, թողլով միայն պղոտի
քանակութիւն մը մոխրոյ, ոչ սև գունով :
— Որովհետեւ ջըրածինն այրելով օդոյ չօ-
շափմամբ՝ կը տաքցընէ ածղուկը, որ թըթ-
ուածընի հետ կը զուգագրի, և ինքն ալ
կ'այրի ածղային բրուտ կազի վերածուելով :

1816 Շարարն, ամիջն և ալիսրն ալ նոյն
պէս ածղուկ կը պարունակին : — Այս
բաւական է այս գոյացութիւնները սաս-
տիկ տաքցըննել, որ թուխ գոյն մը առնուն,
որ վերջն կը սենայ :

1817 Եթէ այս գոյացութիւնքս այնշափ
ածղուկ կը պարունակեն՝ ինչո՞ւ սև չեն :
— Որովհետեւ երբ ածղուկն զուգագրած
ըլլայ ուրիշ պարզ գոյացութեան մը՝ իր սև
գոյնը կը կորուսցընէ :

1818 Ինչո՞ւ համար տաքցուցած գետ-
նածղէ ծագած կազն՝ վառ բոցով մը կ'այ-
րի : — Որովհետեւ ջըրածինն շատ մը պարզ
գոյացութեանց հետ զուգագրելու յատ-
կութիւն ունի, երբ գեսածին վիճակի մէջ

գտուի, այսպէս ջրածին կավին՝ չերմութեամբ զետնածուղէն բաժնուելու ատեն՝ տաքցած բնածղուկի քանակութեան մը հետ կը զուգադրի, և կը կազմէ բնածդուտ ջրածին կազ, որ լուսաւորութեան զործածածն է :

1819 ի՞նչ է մուրն : — Աղասատ բնածուդէ, կամ այրած պարարտ հիւթոց և ռետիններու ծուխ, այնպէս որ կարենայ հաւաքուկլ ամանի մը մէջ :

(Բոլոր ռետիններն ալ կը պարունակեն մեծ քանակութիւն մը բնածղոց, և ջրածինն որ միւս բաղկացուցիչ տարրն է՝ այրելով բաւական ըլլար տափցընելու բոլոր ածղուկը թթուածընի հետ զուգադրել տալու չափ, ուստի մեծ մասն բոլորովին բաժաննալ ածղուկի՝ առանց լուծուելու կ'աղատոի կիզումէն ծուխի ձեռով :)

1820 ի՞նչով պամանդէն կը տարրերին մուրն, զետնածուղն, փայտէ ածուղն, որուաքարն, և այն : — Ա. Առաջինք ածուղք են, որ կը պարաւնակեն կոմը զուգադրութիւն կամ պարդ խառնուրդ ուրիշ դոյցութեանց : — Բ. Հիւլից զանազան դիրքն է որ միւս ածուղներէն չառ տարրեր տեսք մը կու տայ ադամանդին :

1821 ի՞նչպէս կը յզկուին ոսպնածեներու համար կտրուած ապակիններն : — Ածուղով, որովհետեւ այս գոյացութիւնս որ դիւրարեկ է, երբ բաժաննալ վիճակի վեր ածուի՛ ածուղին ծայրերն և անկիւններն

կը մաշեցրնեն և կը յզկեն ապակուցն վըրայի սմաբատակէն պատճառած գծերը և անհարթութիւնները :

(Ապատակն է մթնշաղ եղած տապակին, որ ջինջ և ամենապայծառ կ'ըլլայ՝ երբ չփուի երկայն ատեն ածուղի փոշոյ և ջրոյ խառնըրդով ձեւացած զանգուածով մը :)

1822 Ի՞նչ պատճառաւ երբեմն գինեվաճառք ածուղի փոշի կը թափեն պղտոր զինուոյ մէջ : — Գինին պայծառ և քիչ գունաւոր ընկելու համար :

1823 Ի՞նչ պատճառաւ ածուղն կը զուգագրէ և կը պայծառուցընէ պղտոր գինին : — Ա. Որովհետեւ այս գոյացութիւնս չառ ծակոսկէն ըլլալով՝ իր ծակերուն մէջ կը կեցընէ զգինին պղտորով հաստատուն գոյացութեանց ամենամանը մասունքը, որով գինին աւելի յստակ և գիւրահոս կ'ըլլայ : — Բ. Գինւոյն գոյն տուող նիւթըն հաստատուն նիւթ է, սաստիկ բաժանեաել, որ փակուելով ածուղին ծածկուկնութեանը մէջ հոն կը մնայ, մինչդես հետ հեղուկ մասն մէջտեղէն կ'անցնի աւելի անգոյն :

1824 ի՞նչո՞ւ համար ջրհորոց շնութեան ատեն՝ սովորութիւն է ածուղով խառնել այն աւելլը՝ որուն միջէն ժողլւած ջուրն պիտի անցնի : — Ա. Որովհետեւ ածուղի փոշին բանելով աւազին միջոցները՝ զետ աւելի կը խստացընէ զղտող նիւթը, որուն միջէն ջուրն ստիպուած է անցնելու : — Բ. Ածուղն կ'արգելու ջրոյ հսուիլ :

1825 ինչէն առաջ կու գոյ ածուղին
զգութը չհստեցընելու յատկութիւնն : —
Ածուղին այս յատկութիւնն իր ծակոտիէ,
նութինէն է : Որովհետև ջուրն այն առան
նեխեալ և ապահանեալ կ'ըլլայ՝ երբ գոր-
ծարանաւոր կենդանական և բուսեղն զու-
յացութիւնը իրեն մէջ սկսին բաժարածամք
կրել . ինչպէս նաև նեխեալ կազք՝ որ հե-
ղուկին մէջ խառնեալ կը դտուին . ասոնք
փակուած կը մնան ածուղին ծակերուն
մէջ , որ զամամբ ջրբէն զատուելով զայն
դրեթէ զուա կը թողան , և յարմար անա-
կան է ործածութեան :

1826 ինչո՞ւ փայտէ ջըրոյ ամաններուն
ներքին կողմունքը կ'ածդացըննեն : — Ա .
Արովիշեսև ածուղն կը ծրէծ ջըրոյն հոսա-
ւոր նիւթերը , և զայն անոյշ և առողջա-
րար կը օրահէ : — Բ . Կարգելու ջուրը աւզ-
գակի հասնելու նոյն ամաններուն փա-
տին կորդիմն և զանոնք փառարներու :

1827 Ի՞նչ կերպով կարելի է միութ երկայն տակն պահել նաև շատ տաք տակն առանց նեխելու : — Ծածկելավ դայն քիչ փոշիացուցած փայտի ածուղով , այս կերպով կարելի է մասզէնները փոխադրել դաւառէ գաւառ , և պահել ժամանակի մը առանց ապականնելու : Այս փոշով ծածկեալ մասերն եփելու համար՝ կը բաւէ զանոնք կրկին անգամ լուալ պալ ջրով , որ կը վերցընէ վրանին կսած ածուղոր :

1828 ինչու համար ածուզի վոշին կ'ար-

գելու միավ հստեղն : — Ա . Արտիշեակ կը
չզպացընէ զայն օգոյ ուղղակի չօշափու-
մէն : — Բ . Փառին կը ծըճէ թացութիւնը :
— Գ . Քայլայմանէ առաջ եկած կաղերն
մէկն կը ծըճուին ածուղին փոշին :

§. Ա. — Անդային բբում :

1829 ինչո՞ւ յայտնի կ'երեաց որ ագումանգն բազագրեալ ըլլայ բնածուղէ, ինչպէս միւս ածուղներն : — Աղամանդն այրելով թթուածին կազի մէջ կը փոփոխի ածղային թթուածի . նմանապէս ածղային թթուածի կը վերածուի որ և է ածուղ՝ որ նոյն կազմով սպրի :

1850 წ նչ է ամբային րրուս կազն։ —
Կաղ մը՝ որ առաջ կու գայ մէկ մասն բնա-
ծովի և երկու թթուածընի բաղադրու-
թեամբ մը, Բն Թ²։

1851 ପ୍ରସ୍ତର କିମ୍ବା ଅଧିକାରୀଙ୍କ ପରିଷଦରେ ପରିଚୟ କରିବାରେ ଅନୁରୋଧ କରିଛନ୍ତି । — ଶ୍ରୀ ପରିଷଦରେ ଏହାର ପରିଚୟ କରିବାରେ ଅନୁରୋଧ କରିଛନ୍ତି । — ଶ୍ରୀ ପରିଷଦରେ ଏହାର ପରିଚୟ କରିବାରେ ଅନୁରୋଧ କରିଛନ୍ତି ।

և մասնաւորապէս կութին մէջի կը ըրին, կաւիճին, կրային քարանց, և այլն :

1852 ի՞նչ պէտք է գործել սովորաբար ածղային թթուտ կաղ ունենալու համար : — Պէտք է պղտի մասանց վերածել ճերմակ կուճը, և վրան թափել բլուայրածնական թթուտ . ածղային թթուտ կազն մէկն կը սկսի արձեկուիլ, և կը ընայ ամփոփուիլ որ և է ամանի մը մէջ թթուածին կազի կերպով :

1853 ի՞նչ հանգամանքով կը զանազանի ածղային թթուտ կազն որ և է սրիշ կազէ : — Ա. Ածղային թթուտ կազն դյն յունի, այլ րրունիկ համ մը և մասնաւոր հոռ մը, որ անգունքը կը գրգռէ : — Բ. Պէտքն աւելի ծանր է, անոր համար կրրնայ հեղուկի նման ամանէ աման թափուիլ : — Գ. Կը մարէ ձրագները և իրեն մէջ մզուած վասեալ մարմինները : — Դ. Թթուտ ըլլարով կարմիրի կը գարծընէ սրուակի մը մէջ իրեն հետ շօշափմամբ ծփուած մասին շակաղոյն ներկի : — Ե. Աստիք ճնշուելով հնկանիր կ'ըլլայ, և օդային վիճակի կը դառնայ երբ ճնշումն դադրի : — Զ. Եթէ կրային ըրբոյ մէջ կարմածուի՛ կը ձերմէկ յօւն, որովհետու կը ընալ հետ կապմէ անլուծաննելի ճերմակ աղ մը, որ է բնածդատ կրայ կամ մարմար :

1854 Ածղային թթուտն ինչպէս կ'աղդէ կենդանեաց գործարանաց վրայ : — Ա. Ժիւտական կերպով կ'աղդէ, և կը զաղրե-

ցընէ չնչառութիւնը, արգիկելով թթուածինը թոքերուն համակերու և քիչ ատենուան մէջ զայն չնչող կենդանին՝ կը խրդվուի : — Բ. Մասնաւոր կերպով կ'աղդէ չղային դրութեան վրայ :

1855 Ո՞ւր տեղ աւելի կը գտուի այս կազըս : — Եւ ամացայ ըրջակայիցը մէջ ամենէն անուանի տեղն է Շան քարայր բոււածն . սակայն ածղային թթուուն կազի վիճակով ուրիշ շատ տեղեր ալ կը գտուի :

1856 Ի՞նչ կերպով կ'իմացուի թէ հանք մը, ջրհոր մը, մառան մը, և այլն, ածղային թթուտ կը պարունակին : — Կասկածելի տեղերը վառած յարդի խուրձ մը նետելուէ . երբ բոցն առանց մարելու կամ քանակութեան նուազում մ'ունենալու վասի, նշան է թէ թթուածին կայ, կիցուածը ունուցանելու կարող, ուստի հնոն կը ընայ անվախ մասցուիլ . իսկ եթէ բոցն մարի, նշան է թէ թթուածին չկայ, և մահահառ կազ մ'է, որ սովորաբար ածղային թթուտ կ'ըլլայ, և կը ընայ վտանգաբեր ըլլալ անգուշութեամբ ներս մտուցա :

1857 Եթէ ածուղով վառած կրակարանէ մը մէկն հեղձամղձուկ ըլլայ, միթէ ածղային թթուածն է մահուան պատճառ : — Ոչ, ածղային թթուածն չէ, այլ բաղապարութիւն մը որուն տարելին նոյն են, այսինքն բան բնածդական թթուուկ կազն :

1858 Եթէ պէտք ըլլայ մտնել ջրհորի կամ մառանի մը մէջ ուր անձ մը խըլ-

դուած ըլլաց շատ ածղային թթուտ չնչեւուն համար՝ ինչ զգուշութիւն պէտք է ընել : — Ա . Որ և է կերպով պէտք է հավահարել այն տեղուանքը : — Բ . Բարակ փոշի դարձուցած և թեթեւ մը թրջած չմարած կիր նետելու է մէջը մտնելէն առաջ :

(Հովահարութիւնն կը գրգռէ շարժմանք մը ածղային թթուտի մէջ , որ խառնուելով օդոյ՝ ջրհորէն դուրս կը փոփոխուի . և չմարտ կիրն ըլլալով ամենայարակից ածղային թթուտի՝ կը զուգագրի ասոր հետ , և կը կազմէ բնածղատ կրոյ , որ է հաստատուն , և ամեննեին աղեցութիւն ըներ օդոյ վրայ :)

1839 ինչո՞ւ համար կը բի փռան մը սաստիկ ջերմութիւնն՝ անչչջ կը բի կը գարձընէ կրոշարեցը : — Որովհետեւ ջերմութիւնն թափանցելով կուճին հիւէլական խընդից մէջ կը սափաէ ածղային թթուտը՝ կիրը թողու , որ աղատ կը մնայ ածղային թթուտէն , և կը բի կամ կրային բրոկի վիճակ կ'առնուն :

1840 ինչո՞ւ համար չին շինուածոց շաղախներն հիմակուաններէն աւելի գծուարու կը կոսրուին : — Որովհետեւ չին շաղախաց բաղադրութեան մէջ կը բի աւելի մեծ քանակութիւնն մը գործածուած է , որ այնչափ տարիներ ծըծելով օդոյ մէջ ցըրուած ածղային թթուտը՝ կը վերածուի կը բի բնածղատի կամ մարմարի :

1841 ինչո՞ւ համար ալբանցք ասք կը լ-

լան : — Որովհետեւ խմօրող գոյացութեանց և տերեւոց ածղային կը զուգագրի օդոյ թթուածընին հետ , և կը կազմէ ածղային թթուտ . ամեն քիմիական զուգագրութենէն ալ ծածկալ չերմուրեան արձակումն կը պատճառի :

1842 ինչո՞ւ համար երբեմն մարագ մը առանց կրակի կը բանկի : — Որովհետեւ երբ չոր խոտն խոնանայ՝ կը խմրի , և կը բնայ ինչուան խոտին կոյար այրելու չափ ջերմութիւն արձեկիւ :

1843 Ի՞նչպէս կը կոչուի այս երեսոյթս : — Կ'ըսուի յանկարծական կիրումն :

1844 ինչո՞ւ համար երբեմն վառոզի գործանկ օգը կը ցատքեն՝ առանց ամեննեւին կրակ աւանըլու : — Որովհետեւ ածուղն որ բարակ փոշի դարձած մեծ աւատաններու մէջ կը պահուի , կը բնայ յանկարծակի կրակ առնուլ :

1845 Ի՞նչ կերպով կ'ըլլաց խոտին յանկարծական կիրումն : — Խոնաւութիւնն մանելով խոտին թելերուն մէջ կը սկսի բաժնել զանոնք . այս գործողութիւնս միայն բաւական է ջերմութեան որոշեալ քանակութիւնն մը պատճառելու , որ կը հետացընէ չոր խոտէն զինքը կազմող ջըրածինը . այս ջըրածինս զուգագրելով թըթծինը . այս ջըրածինս զուգագրելով թըթծինին չոր կը կազմէ , մինչդեռ ուրիշուածընին չոր կը կազմէ միանցքն մասն թթուածընի միանալով ածղութիւնն կը մասն թթուածընի միանալով ածղութիւնն իր քիմիական բաղադրութիւնքն՝ միա-

ցած են ջերմութեան բանակութեան մը ,
որ կը յայտնուի , և որ գումարուած և կէս
տի մը փրայ ամիսուուած՝ բաւական կ'ըլլայ
ինչուան բռնկցըներու :

1846 ինչու համար բարակ փոշի եղած
և մեծ քանակութեամբ ժողոված ածուղն՝
յանկարծ կը վասի : — Որովհեակ ածուղն
շատ ծակուտկէն ըլլալով՝ կը ծրծէ և կը
խոտացընէ իր ծակերուն մէջ մեծ քանա
կութիւն մը մինուղրուային օդոյ . այս խոր
տացմանն մէջ օդն կը կորուսցընէ մեծ մաս
մը իր ջերմութեան , որ տեղի տալրվածու
զին՝ ինչուան այն դիլուածին յանկար
ծական կիզաւմն կըրնայ պատճառել :

1847 ինչու համար չոր խոսն կը գէնայ՝
երբ խոնաւութիւն ծրծէ կամ անձռեէն
թրջուի : — Որովհեակ խմորումն խոնաւու
թիւն պատճառելով՝ խոսէն շատ ջերմու
թիւն կ'արձեկէ , և բաց կը թողու մաս մը
ածզուկի , որ խոսը կը սկցընէ և գէն
սնունդ կ'ընէ կինդաննաց :

1848 իրաւ է որ նաև մարգն կըրնայ
յանկարծակի այրիլ և ածզանալ : — Այս .
այս բանս կըրնայ ըլլալ . Ա . Աքրոռլային
ըմսկելեաց շափազանց սովորութեամբ : —
Բ . Զափազանց գիրութեամբ : — Գ . Սաս
տիկ յրտութենէ մը՝ որ արգելու մարմարն
արտաշնչութիւնը :

1849 ինչու համար երբեմն աղտոտ ցըն
ցուհաց գէկ մը յանկարծակի կը բորբոքի :
— Որովհեակ այն եղուառութիւնն որավ

ցնցոտիք աղտոտած կ'ըլլան՝ կը ծրծէ օդոյ
թթուածինը , և զանոնք աղտոտող պա
րարտ և բուսեղէն դոյացութիւնք կը թթ
ուկանան . և այս թթուկացումն միացած
է այնպիսի ջերմութեամբ՝ որ շատ անդամ
այս դոյացութեանց յանկարծական կի
զում կը պատճառէ :

1850 ի՞նչ պատճառաւ շիշերու մէջի գա
րեջուրն , կազային ջըրերն , և այն , կը
փրփրան երբ սկահակներու մէջ լցուին :
Որովհեակ կը պարունակին մեծ քանա
կութիւն մը ածզային թթուատի , որ՝ երբ
գտրի սունկին նոյն թթուատին և հեղու
կին վրայ ըրած ազդեցութիւնն , կը զա
տուի այս ըմսկելիքներէն , և շատաշմամբ
եղլու ատեն՝ զանոնք կը շարժէ և կը վեր
ցընէ :

1851 Ածզային թթուատն ջըրոյ մէջ կը
լուծուի : — Այս . օդոյ սովորական ծընչ
մամբ ծուրն կըրնայ պարունակել իր քա
նակութեան կրկինին շափ լուծեալ ած
զային թթուատ . այս յատկութիւնն կ'աւել
նայ բարեկանութեան զիջմամբը , և կը
նուազի անոր բարձրանալովը :

(Այս յատկութեամբը է որ ծուրն լու
ծեալ կը բռնէ ածզային թթուատի մեծ քա
նակութիւն մը , և որ նոյնափէս հալած կը
պահէ բնածզասակըրի . որովհեակ այս պա
հաւան է ածզային թթուատի մէջ , և կը
հալական է ածզային թթուատի մէջ , և կը
վայրասուզի երբ ջերմութիւնն հեղուկին
վայրասուզի երբ ջերմութիւնն հանկարծակին
կորուսցընել տայ մաս մը այս կազիս :

1852 ինչո՞ւ համար աղբեր մը թափուած տեղն և վերի կողմերն խորտաքորս և անհարթ կ'ըլլան : — Որովհետեւ աղբերաց ջուրն կը թողու թէ վերը և թէ վարը՝ մասըն կըրի բնածղատի , երբ երկայն տաեն օդոյ տակ ըլլալովկ կորուացընէ մաս մ'ածղային թթուատի , որ կը ծառայէ լուծեալ բռնելու այս ազս չեղուեկին մէջ :

1853 ինչո՞ւ համար ջուրն կը թողու այս կըրի բնածղատն՝ երբ բաց տեղ վաղէ և ոչ գետնի տակ : — Որովհետեւ այն անցքիրն որոց միջէն կը վաղէ՝ կընեն աղքեցութիւն մը իրեն վրայ , և այնպիսի կերպով որ ածղային թթուատ կազն չի կըրնար զինքը թողուլ այս ճնշմանս գագարումէն տառաջ :

1854 Ի՞նչպէս կը կոչուին այն այլ և այլ ձեւրով կոնոնք՝ որ կամարէն ջուր կաթող քարայրից մէջ կ'երեւան : — Անսնք որ կը ձևանան վերի կողմը՝ կ'ըսուին պաղածք կամ պաղաճառք վերաբիր , և անսնք որ կը ցըցուին քարայրին յատակը՝ կ'ըսուին երբեաթիք :

(Սովորաբար երկուքն ալ ճրագէ մը վաղող մօմի ձև ունին , բայց շատ անգամ՝ ալ այլակերպ ձեւեր կ'առնուն և կը նմանին բնական առարկայից : Խտալիոյ Պասսան քաղաքին մօս Յլիերոյի քարայրին մէջ կրոյ բնածղատն թանձրանալով՝ ձեւացուցած է գեղեցիկ խաղեր , որոնց մէջ կը նըմարուի ճշգրիտ աքաղաղ մը :

1855 ինչո՞ւ համար քացախի կամ որ եէ որիշ թթուատի կաթիլ մը՝ երբ ինկնայ մարմարի , ալապաստրի , կաւիճի , և այլն , վրայ , կը պատճառէ անոնց վրայ եռացումնի , և մարմարին թթուատին հետ չշափուած կէտն կը մաշի : — Որովհետեւ մարմարն , ալապաստրն , կաւիճն , և այլն , կը պարունակեն կամ բոլորովին և կամ մեծաւ մասսամբ բնածղատ կրոյ , որ աւելի զօրաւոր թթուատի մը ներկայութեամբը՝ կը լուծուի յածղային թթուատ , (որ կը հեռանայ պղտի փրփուրներու ձևով և եռք պատճառելով) , և 'ի կիր՝ որ կը զուգազրի նոր թթուատին հետ : Յրինակի համար , կուճն կը վերածուի ի բացախատ կըրի , եթէ թթուատն ըլլայ քացախ , ծծրեբառի՝ եթէ թթուատն ըլլայ ծծրեային , և այլն :

(Քացախին է լուծեալ քացախային թթուատ :)

ՄԱՍՆ Է .

ՏԱՐՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՄԱՐԱՆԱԿԱՆ

1856 Ի՞նչ ըսկելէ գործարանական տարրա-
րահորին : — Տարրաբանութեան այն մա-
սըն է որ կը յայտնէ թէ բուսեղէն և թէ կեն-
դանական գործարանաւոր մարմնոց բաղկա-
ցուցիչ մասերը :

1857 Որո՞նք են գործարանաւոր գոյա-
ցութեանց տարերք : — Ա . Գրեթէ ամեն
բոյսը ալ կը բաղկանան երեք պարզ տար-
րեղէն մարմիններէ , բրուսանին , ըլրածին և
բնածոյ : — Բ . Կենդանական գոյացու-
թեանց մեծ մասն և ոմանք ՚ի բուսեղինաց՝
կը ձևանան ուրիշ պարզ մարմնոյ մը յա-
ւելմամբ , որ է բուսակածինն , վերը ըսուած
երեք կաղերուն հետ միացած :

(Համեմատութեանց զանազութիւնն՝ ո-
րովայս կաղերս կը զուգազրին իրենց մէջ ,
կը բաւէ տարբեր գործարանաւոր բաղա-
դրութեանց երեսյթ , համ , և զանազան
յատկութիւններ տալու :)

1858 Շաբարն ալ թթուածընէ , բնա-
ծուղէ և ջրածնէ բաղադրեալ է : — Այս .
շաբարն բաղադրուած է այս երեք կաղե-

րովս, ինչպէս որ այս նոյն երեք կազերէն կը բաղադրին քացախն, զինամբրական թթուտն, ալբորդն, ամիգն, և այլն :

1859 Ի՞նչպէս կը գիտացուի որ շաբարն բազկացած է բնածուղէ, թթուածընէ և ջրածրնէ, - թմորման միջոցաւ, որով շաբարն կը վերածուի յածղային բրուս և յարուուլ: Ածղային թթուտն կը պարունակէ ջըրածին, բնածուղէ և թթուածին. Եթէ ուրիշ գոյացութիւնք խառնուած չըլլային շաբարին հետ՝ յայտնի է որ այս երկու նոր բաղադրութիւններու բազկացուցիչ տարերն՝ միայն շաբար պիտի տանենային :

1860 Ի՞նչպէս կը զիտացուի որ ալբորդն կը պարունակէ բնածուղ, թթուածին և ջրածրն: - Որովհետև ալբորդն բոցով կը վառի, և բաղազուծմամբ կը մասակարարէ ջուր և ածղային բրուս:

§. Ա. — Խմորումն:

1861 Ի՞նչ է խմորումն: - Անբորակածնատ բոււեղէն գոյութեան մը քացայումն:

(Անբորակածնատ գոյացութիւնք կը սովորն անոնք՝ որոնց բաղադրութեանը մէջ բորակածին կազ չի մտնէր:)

1862 Ի՞նչ կ'ըլլայ խմորմամբ: - Շատ մը նոր բաղազութիւններ առաջ կու դան տարերաց իրարու հետ նոր և զանազան կերպով գուզազրութեամբ:

1863 Ի՞նչո՞ւ համար խմորած խաղողին հիւթն զինի կ'ըլլայ: - Որովհետև խաղողին առատ շաբարն կը լուծուի մասակի մը, և կը վերածուի ալբորդի և ածղային բրուսի. ալբորդն լուծեալ կը մնայ զինւոյն մէջ, և իրեն կու տայ ոյժ և արքեցուցիչ զօրութիւն, մինչդեռ ածղային թթուտն իրմէ կը զատուի նոյն խակ խմորման ատեն:

1864 Ի՞նչո՞ւ համար բացցուն պահելով շիշերու մէջ քիչ ատենէն փրփրոս զինի կը գառնայ: - Որովհետև խմորումն հաւասարապէս տեղիք կ'ունենայ, բայց ածղային թթուտն չկարենալով ելել հեղուկն մէջ լուծեալ կը մնայ, և կ'ազատի անկէ երբ սունկէն (կամ խիցէն) եղած ճնշումն պագրի:

1865 Ի՞նչ պատճառաւ քացախն կը դառնան զինին, գարեջուրն և ուրիշ խմորելի հեղուկը: - Մթնոլորտասցին օգն թափանցելով զինի և ուրիշ հեղուկներ պարունակող ամաններու մէջ անոնց ալբորդն կու տայ իր թթուածինը, և երբ ալբորդին վրայ աւելցուի նոր քանակութիւն մը թթուածինի քացախն կը գառնայ:

(Եթէ շաբարն խմորման ատեն օդոյ գըրուած մնայ, ուղղակի քացախն կ'ըլլայ: Քացախի գառնալու համար բաւական է պարագաների երկու նոր թթուածինի մասնաց հետ)

1866 Ի՞նչո՞ւ համար քիչ մը խմոր կը խառ-

նեն այն ալիւրին՝ սրով հաց կը շինեն : —
Ա . Որովհետեւ խմորն կ'ազգէ ալիւրին
չորարին վրայ , անոր քաղցրիտին (ցլս-
տու) վրայ՝ խմորումն պատճառելով : —
Բ . Խմորն կը ծառայէ հացը թեթև և սպի-
դային ընելու համար :

1867 Ի՞նչ բաղադրութիւններ կը ծա-
զին հացին խմորմանը մէջ : — Ա . Քաղ-
ցրանիթն կամ ալիւրին շաքարն՝ տլրոսի
և ածղային թթուտ կազի կը վերածուի :
— Բ . Մաս մ'ալքոոլի կը ձեւանայ քացա-
խային թթուտ : — Գ . Քաղցրիտն լուծուե-
լով կը պատճառէ ածղային րրուտի , ջրա-
ծրեի , և աչակի նոր քանակութիւն մը :

(Աւշակն այս առթիս մէջ կը պատճա-
ռուի քաղցրիտի բորակածրեի մասէ մը , որ
կը միանայ անոր ջրածրեին : Թթուածինն
դուզագրելով բնածուզին հետ՝ կը պատ-
ճառէ ածղային րրուտ . արդ ածղային թթ-
ուածն և աւշակն կը զուզագրին միատեղ
և կը կազմեն բնածզատ աւշակի , որ հա-
ցին մէջ կը մնայ . բայց միանզամայն ալ-
քոոլին խմորման տաեն ձեւացած քա-
ցախային թթուտի հետքերն ալ կը բաղա-
լուծեն մասսմբ մը այս աւշակի բնած-
զատը , ուսկից կ'արձրեկեն ածղային թթ-
ուուտ , կազմելով նոր քաղցրութիւն մը ,
որ է աչակի քացախատէ : Աւշակն կը բա-
զարի մաս մը բորակածընի երեք ըլրու-
թընի հետ Բ . Զ .)

1868 Ի՞նչու համար խմորումն հացը թե-

թե ու փափուկ կ'ընէ : — Որովհետեւ զա-
նազան կազերն՝ չերմութեամբ կը ջանան
ընդլայնիլ և փախչիլ հացին զանգուածէն ,
որուն մէջ կը մնան քաղցրիտին խիժակա-
նութենէն , և փրփուրներ կը ձեւացընեն ,
որք կը բարձրացընեն զանգուածը , և ա-
նոր մանր մանր խորշերուն մէջ բանտուած
կը մնան :

1869 Ի՞նչու համար սովորութիւն է դեեւ
խմորեալ հացին զանգուածը աղէկ կրակի
մը զիսաց , կամ շատ տաք թօնրի (կամ
բուխերիկի) մէջ : — Ա . Որովհետեւ չեր-
մութիւնն աւելի կը չուտցընէ խմորումը :
— Բ . Զանգուածին մէջ ցրուած կազի
պղտի փրփուրները կ'ընդլայնէ : (Այս փր-
փուրներս որչափ աւելի ընդլայնին՝ հացն
այնչափ աւելի թեթև կըլլայ :)

1870 Ի՞նչու համար հացն պինդ ու ծանր
կ'ըլլայ երք զանգուածը եփելին առաջ պա-
ղեցրնեն : — Որովհետեւ կազերն խոտ-
նարով ալ չեն ձեւացըներ զանգուածը ու-
սեցընող փրփուրներ :

1871 Ի՞նչու համար հացն կը թթուի երբ
շատ խմորի : — Որովհետեւ հացային խր-
մորումն կ'անցնի երկրորդ աստիճանի մը ,
և կը սկսի թթու կամ քացախային խմո-
րումն :

1872 Ի՞նչ կը պատճառէ փռան ջերմու-
թիւնն հացին զանգուածին վրայ : — Կախ
կ'ընդլայնէ կազերը և կը դաղրեցընէ խր-
մորումը : — Բ . Կը չողիացընէ մաս մը

Հըրոյ և կը հաստատացընէ քաղցրիտը և ամիգը :

1873 ինչո՞ւ համար եփած հացն ճերմակ և միջուկը կափուղ կըլլայ , մինչդեռ գրսի կոզմիկն կարծր և սեցած կ'ըլլան : — Հացին միջուկն ամեններն 100% բարեխառնութենէն անդին շանցնիր՝ շարունակ շգաւոյ արձակման պատճառաւ . իսկ կեզեն բոլորովին կը չորնայ և չուտ մը կը հասնի 200% բարեխառնութեան , անոր համար կը կարմընայ :

§. Բ. — Նեխունն :

1874 ինչո՞ւ առաջ կու գայ տաք ատեն երկան ժամանակ օգոյ դրուած մսերու գեւ հոտն : — Այն հոտն կը պատճառի մոց քայլայումն , ուսկից կ'ործքիւին կազմին բաղադրութիւնք , որոնց հոտն ամենազարքելի է :

1875 ի՞նչո՞ւ կ'ըսուի կենդանական գոյացութեանց յանկարծական բաղադրուծումն : — Եկինալ իսորումն , և սովորաբար նեխունն :

1876 կենդանական գոյացութեանց նեխունն ի՞նչ առաջ կու գայ : — Ա . Ա . Զային թիւուտ . — Բ . Զուր . — Գ . Ա . Վակ :

1877 ի՞նչո՞ւ կը զուգագրին իրենց մէջ կենդանական գոյացութեանց տարերք՝ այս նոր բաղադրութիւնները մատակարարեւ

լու : — Որովհետեւ կենդանական գոյացութիւնք բաղկացած են բրնձառողկէ , բրուածընկէ , չրածընկէ , և բրակածընկէ . ասոնցմէ , նախ , մասին բնածուլիք կը զուգագրի թթուածընին հետ և կը վերածուի ածղացին թթուատի : — Բ . Ուրիշ բրուածընի մաս մ'ալ զուգագրելով չրածընի հետ կը կազմէ ծորւ : — Գ . Վերջապէս նոր մաս մ'ալ չրածընի կը զուգագրի բրակածընի հետ և կազմէ աշակ :

(Եթէ այս գոյացութիւնս որ կը բազալտութիւնի ծծումը կամ փոսփոր պարունակէ , ծծումըն և փոսփորն զուգագրելով ջրածընի մասին մը հետ կը կազմեն փոսփորային չրածին և ծծումբային չրածին կազեր :

1878 ի՞նչէ պատճառն այն գծնդակի հոտին որ գերեզմանառուններէն կը բուրէ : — Եծրմբային չրածին կազն է աշակի հետ խառնեալ , որք կը պատճառին մեռեալ մարմնոց քայլայումէն :

1879 ինչո՞ւ համար մեռեալ մարմինք իրենց քայլայմանը ատեն կը պատճառեն ծծումբային և փոսփորային ջրածին կազ : — Որովհետեւ կենդանիք կը պարունակեն մեծ քանակութիւն մը ծծումիք և փոսփորի , զուգագրելով ջրածընի հետ կը պատճառին այս բաղադրեալ կազեր :

1880 Մարգուս որ մասերն աւելի ծծումիք և փոսփոր կը պարունակեն : — Ա . Կակապալ մասերն , ջիզր , և մասնաւորապէս ուղեղն և սակրաց ծուծն . — Բ . Ասկրո-

տիք, որոնք գրեթէ ամենն ալ կազմուած են փոսփորային թթուուէ և կըրէ (լուսածընա կամ փոսփորա իրոյ) :

(Փոսփորն է պարզ մարմին մը մոմի նըման, որ բնութեան մէջ միշտ ուրիշ դոյացութեանց հետ զուգագրեալ կը գոտնուի : Այս դոյացութիւնն առեւելու համար մեծ կենդանեաց ոսկրները կը կրացընեն, և 'ի փողի վերածելով կը խառնեն ծծըմբային թթուուի հետ, որ կը զուգագրի կըրին, չնչելով մասամբ մը ծծըմբային թթուուին անոր հետ ունեցած յարակցութիւնը . այս զանգուածս միացընելով ածուզի փուլոյ հետ, աղէկ կը չորնաց և կը թորի : — Այս կերպով շինուած փոսփորն է որ վաճառքի մէջ կը գործածուի :

(Կաթնարայց կենդանեաց ոսկերք կը պարունակին աւելի քան 70% փոսփորա կըրը . միացածն զրեթէ բոլոր կրոյ բնածըզատ, սպիտ, և մետաղական աղը են :)

1881 ի՞նչ է պատճառ շըմծոլիկ հրոց որ կը նշարուին սովորաբար նոր գերեզմաններու կամ ճախճախուտ տեղեւաց վրայ : — Փոսփորային ջրածընի յանկարծական բորբոքումն կըլլան, որ կ'արձըլուի քայքայեալ մարդկային մարմիններէ :

(Զկունք ալ կը պարունակին շատ փոսփոր, և փոսփորակիզն յատկութիւն կ'առնուն երբ շատ քայքային . յուզեալ ծովու ջրերն ալ կը պատճառաւեն նոյն արգասիքը, որովհետեւ կը պարունակին մեծ քանա-

կութիւն մը պղտի մեռեալ կենդանեաց՝ որ կը սկսին քայքայիլ : Պղտի փոստուայր և ուրիշ լուսաւոր որդունք կը պատճառեն իրենց պայծառութիւնը իրենց մէջի փոսփորին դանդաղ կիզմամըր :

1882 ինչո՞ւ շըմսոյի հուրբ կը փախչին իրենց մօտեցող անձիքներէ : — Որովհետեւ պարուելու ասեն մեր մարմինն իր առջեւէն կը մզէ օդոյ սիւն մը, որ բաւական կ'ըլլայ շարժելու և մարելու այն բորբոքած կազմին ամենանուրբ գնափիկները :

1883 ինչո՞ւ համար շըմսոյի հուրբ կը վագեն նաև իրենցմէ փախչող անձանց եռեւէն : — Որովհետեւ մարդ մը փախչելու ասեն կը շարժէ ետեի օդը, և այս կերպով կը կազմուի սիւնակ մը՝ որյո մէջ կը քայուին այս կաղերս, և կ'երթան վազող անձն ետեւէն :

1884 ի՞նչ է այն դարշահոսութեանպատճառն որ կ'ելլէ լուալիթիներէ : — Աւակային արտաշնչութիւններ, ծծըմբային փոսփորային և կրկնածզուտ ջրածին են, որք կը ծագեն կենդանական դյացութեանց նեխեալ խմորութիւն ատեն :

1885 ինչո՞ւ համար միսերն աւելի շատ կը նեխին երեւ օդն փոփոխական ըլլայ : — Որովհետեւ այգափիսի փոփոխութեանց ատեն օդն լի կ'ըլլայ խոնաւութեամբ, և մինուղրային խոնաւութիւնն աղղիչ մ'է բարպաւծման :

1886 ինչո՞ւ համար օդոյ խոնաւութիւնն

սպղիչ և բաղարտման : — Որովհետեւ , Ա . Մթնոլորտային խոնաւութեան մէջ խառնեալ կը գտուին քանի մը կազեր՝ որոնք կ'օգնեն կենդանական գոյացութեանց քայքայմանը : — Բ . Նոյն խոնաւութիւնն կազդեցնելով մարմին մը կը թողու անոր վրայ ճնեաց հաւկիթները , և նոյն իսկ ճնիներն ալ՝ որ անհամար թուով կը գըտուին օգոյ մէջ :

1887 Ի՞նչ կերպով կը վերցուի քայքայեալ մսոյ գարշելի հոտն : — Ա . Կրկին և կրկին լուալով զանոնք քացախով : — Բ . Ժամանակ մը զանոնք ծածկելով փոշիացած փայտի ածղով : — Գ . Զանոնք ածուզի կոտրներու հետ խաչելով :

1888 Ի՞նըն համար մեռած թռչունք լաւուգոյն կը պահուին երե իրենց փետուրներուն մէջ պահուին , — Որովհետեւ փետուրներն կ'արգելուն օգը և խոնաւութիւնը հասնելու իրենց միին վրայ :

(Քատարկած մետաղեայ տուփերու մէջ պահուած չոր մսերն երկայն տարիներով կը պահուին :)

1889 Ի՞նըն համար նեխեալ կենդանական գոյացութիւնք կ'որդնուտին : — Ա . Որովհետեւ նեխուած գոյացութեանց տարերը օգնութեամբ շերմանեան , և կազից ու հեղուկաց շարժմունք մը գործարանաւոր հիւէի մը վրայ , այնպէս մը կ'ընեն որ հիւէին կը կենդանանան և կ'այլակերպի ի ճըժի : — Բ . 0դն իրեն մէջ առկախեալ

կը պահէ անհուն քանակութիւն մը ճնեաց , որոնք հասնելով լուծուելիք նիւթոց՝ անոնց վրայ կը ձգեն իրենց հաւկիթները , որք կը զարգանան և բաղմանան մեծ արդութեամբ :

1890 Ի՞նչ պատճառաւ նեխեալ բուսեղնքն կը թիսանան և սկ կապոյտ մը կը դառնան : — Որովհետեւ իրենց թթուածինն և ջրածինն կամաց կամաց կ'արձեկուին և կը զուգազրուին միայն նոյն բուսեղններուն մէջ պարունակուած ածղուկի պատի քանակութեան մը հետ . հետեւ բար քիչ ածղուկն որ ազատ մնայ կը գունաւորէ այն գոյացութիւնները որոնց մէջ գտուի :

1891 Թէ բուսեղէն և թէ կենդանական գոյացութեանց մէջ բաղալուածման մնացորդն ի՞նչ է : — Բոլոր կազերուն արձեկուեէն վերջը մնացորդն է հուզանիւթն , որ կ'սուբն սակ բասանադ , և այս հոզու շատ աղէն կը ծառայէ մշակութեան բուսոց և մասնաւորապէս ծաղկանց :

1892 Ի՞նըն համար նոր և կանաչ փայտընքիչ կը գործածուի տնկական պիտոյից : — Որովհետեւ դիւրաւ կը նեխի , իր ըջիջներուն մէջ բուսեղէն հիւթէն առաջեկած շատ խոնաւութիւնն պարունակելով , որ կ'ազգէ իրեր քայլայիչ գոյացութիւն մը :

1893 Եթէ խոնաւութիւնն այս վասակար աղդեցութիւնն ունի բուսեղէն գոյացութեանց վրայ , ուրեմն ի՞նըն համար վա-

զուկ ջրոյ ապեցութեան կը գրաւին փայտերն յցիուելէն առաջ : — Որովհետեւ վազուկ ջրուն փայտերուն հիմքի կ'առնու . որ ըլլալով բռւսելէն դոյացութիւն մը (և չետեարար գիւրա լուծելի) , կը ընար լուծելով հեռացընել րջաց կողմերը , որոնց մէջ որ կը պարունակուի , և հետեարար ամբողջ փայտն ալ քայլայիլ :

1894 Ի՞նչ ընելու է այն փայտից որք մթնոլորտային բռնութեանց դէմ պիտի կենան , որպէս զի երկայն ատեն անփուտ մնան : — Այնպէս ընելու է որ իրենց հիմքն փոխանակուի հանքային աղոտ լուծմանիքներով , որոնք անդորձարնաւոր դոյացութիւն ըլլալով՝ ոչ կը խորին և ոչ կը նեխին :

1895 Ի՞նչ կերպով կը մացընեն աղի լուծմունքը փոյտի մէջ : — Ա . Նոյն լուծման մէջ երկայն ատեն փոյտը միսեալ բըռնելով : — Բ . Շնչելցող մեքենայով մէկ ծայրէն պարապ գործելով , մէկալ կողմէն աղի լուծումն կը մտնէ և կը բարձրանայ հիմքը պարունակող խողովակներուն մէջ . հիմքն ալ աս պատճառաւ կը ստիպուի անոնցմէ հեռանալու :

1896 Սովորարար ի՞նչ աղեր ծծել կուտան այն փայտից՝ զոր անփուտ պահելու գնեն : — Երկթի հետ զուգադրեալ փայտային րրուս . պղընձի և երկաթի ծծմբատ , քանի մը քլոսուկ , և սցին : Այս աղերս փայտը զրեթէ անկէզ ընելու յատկութիւնն ունին :

(Փայտային բրուտ կ'ընդունուի փայտը թորելով ապակեայ գալարափողից կամ ուրիշ գոց անօթներու մէջ :)

1897 Ի՞նչ կերպով հասարակ փայտին կու տան այն գոյն ները՝ որով ամենէն թանկագին և պինդ փայտից կը սմանին : — Խրենց ծըծել տալով երկաթի և աղալի աղ , կապարի քացախատ , բողասական քրումատ , և Քրուսիոյ կապոյտ :

(Քրուսիոյ կապոյտն է զուգագրութիւն մը մետաղական երկաթի ընդ բրուսական թթուտի :)

ՄՈԱՆ Ը.

ՏԱՐՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՆԴՈՆԱԿԱՆ

ԴԼ. Ա. ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԱՆ ԵՒ ՄՍՈՅ

1898 Ամեն կենդանեաց արիւնն ալ կարմիր է : — Ոչ . մարդուն և բոլոր կաթնաբոյժ կենդանեաց արիւնն կարմիր է . մանր կենդանիք և ճճիք տարբեր գունով արիւն ունին :

1899 Կաթնաբոյժներէն զատ ուրիշ կարմիր արեամիք կենդանիք ալ կան : — Այս բոլոր ողնաւորք , կամ բոլոր այն կենդանիք՝ որ ուկը կամ փուշ ունին հետեաբար բարունք , զետունք և ձկունք կարմիր արիւն ունին :

(Ներամիք որդունք գեղին արիւն ունին . այս հեղուկս նարընջագոյն գեղին է քանի մը թրթուրներու մէջ , և թխագոյն՝ այն ճճեաց մեծագոյն մասին մէջ զոր բնագէտք կ'անուաննեն պատեհարեք :)

1900 Ճանճերուն արիւնն ալ նոյնպէս կարմիր է : — Ոչ . այն կարմիրագոյն հեղուկն որ կը ցայտէ ճղմուած ճանճի մը զլիսէն իրեն աչբին հեղուկն է :

1901 წლէ արեան կարմրութեան պատճառն : — Արեան տեսակ մը զեղակի ըստած մասի մասնիկներ՝ առկաթ մնալով շին ըստած թափանցիկ հեղուկի մէջ զայն կարմիր կը ցուցընեն :

(Արիւնն միշտ նոյն գոյնը չունենար .
ձևացած ատենը թխագոյն կարմիր գու-
նով կ'ըլլայ , վերջը չնշառութեան միջո-
ցաւ օգոյ թթուածինն զայն պայծառ կար-
միր գունի կը դարձընէ : Առաջինն կը
կազմէ շնկերակային արիւն , երկրորդն երա-
կային :)

1902 ինչ պատճառաւ երակէն ելած ա-
րիւնն մէկմէկէ զանազան Ներկու մաս կը
բաժնուի : — Որովհետեւ արիւնն մէկ գոյ-
ացութեամբ մը միայն չի ձևանար այլ եր-
կուքով, մէկն կըրնայ հաստատուն ըլլալ
կամ մակարդանալ, միւն միշտ հեղուկ կը
մնայ :

1903 Ի՞նչպէս կը կոչուին արեան այս
երկու զանազան մասերն : — Կարմիրներն
կ'ըստին գեղակը արեան, որ կը կազմեն
հաստատացող մասը կամ մակարդը . իսկ
այն կապտագոյն գեղին թափանցիկ հե-
ղուկն՝ որ միշտ հեղուկ կը մնայ՝ մամաց
կ'ըստի :

1904 ինչ գոյացութիւնք են որ կը կազմեն արեան գնդակիները : — Գունաւոր պատառ մը (որ միայն արեան գոյն ունեցող մասն է, և սպիտապին թափանցիկ հետուի մը :

1905 ինչ զպացութիւնը են որ կը կազմն արեան հեղողի մասը կամ շիճը: — Չորք, այլուն, ենարդիսն, պարարտ նիւթն է զանազան աղեր:

(Մարդուս արիւնն կը պարունակէ հազար մասամբ :

Զուր	900,00
Սպիտ	86,80
Դիբա	4,00
Քլուսուկ բռղասի և սոսի	6,60
Նամակն անզուտ	1,63
Ծծը մքատ երկաթոյ	0,35
Փոսիդրատ կրոյ և մագնեսիոյ	0,60
					1000,00

(Կերպիկուն է ճերմակ վարդապյոն գոյացութիւն մը, անհոտ և անհամ, ջրէն աւելի ծանր. Կը կազմէ կենդանեաց կազմուածքին առաջին զԱնաւոր մասն:

զեացած է բնածորդիկ, չըստինե, բորակածընէ և թթուածընէ՝ հետեւեալ համեմատոթեամբ. Բ⁴⁰ ջ⁵¹ Բ⁵ Բ¹²)

1907 Մամացն ինչ փոփոլութեա և

կրէ : — Կը ծըսուիքանի մը ամաններէ որբ կըսուին մամցարերը , որոնք զայն կըտա նին այն մասին մէջ ուր ճերմծկութենէն կամ թեթև վարդի գոյնէն կարմիրի կը դառնայ , որովհետեւ կը խառնուի արեան հետ :

1908 ի՞նչ առթիւ արիւնն չնչերակաց և երակաց մէջ կը շարժի : — Արիւնն խողովակներու և մազատեսակ ամաններու միջոցաւ թռիկերէն սրտին կ'անցնի , մասմացին հետ միացած , ոգէն թթուածնացեալ տաք քիմիական ազդեցութեամբ , որ անոր թթուածնացումն կը պատճառէ , և իի այն ամեն մասերով որ հարկաւոր են կենաց : Այս անցքն է նախ և առաջարիշ շարժման , որ ազդելով սրտին փրայ , (որ է ամենաշղթրաւ գրգռող գործարան մը) , զայն կը յոցէ և կը շարժէ . այսպիսի գալուստմանց տուեն ինքն մէկ կողմէն ընդունած արիւնը միւս կողմէն կը մղէ , կը ըրջեցընէ զայն :

1909 Բայց ինչո՞ւ համար արիւնն մէկ մը որ իր ըրջանը առնու՝ ինչուան ՚ի մահ ՚ի դադարիր : — Որովհետեւ արիւնն նոյն իսկ քջմանը մէջ կը գտնէ նոր ասիր մը որ զայն կը շարժէ :

1910 Ո՞րն է այն սարի՞ն որ ըրջանը ընդունած արիւնը կը շարժէ : — Ա . Արտէն ընդունած մրցմէն : — Բ . Նոյն իսկ արեան ծրակային և զանուցումն չնչերակացին և երակացին խողովակաց բոլոր տարածութեանը մէջ գտուած ծակափներէն դոր-

ծուած , որոնց միջէն արիւնն ստիպուած է անցնիլ : Ծակատեաց ծածկեալ արիւնն կը տարածուի բոլոր կազմուածքին մէջ և կը վերածուի մարդկային մարմնոյ ամբողջացոցի մասի :

1911 Ի՞նչ են չնչերակը : — Չնչերակը են գրեթէ ամենն ալներքին գլանաձև երկայն ամաններ , որոնք կ'ելլեն սրտէն և կը ծառային տանելու իրմէ արիւնը՝ բոլոր մարմնոյն գործարանաց մէջ : Այս ամաններս իրենց վարի գին լայն են , և որչափ որ սրտէն հեռանան՝ այնչափ աւելի կը բարակնան , ինչուան որ վերածուին բոլորովին իրարմէ բաժանեալ մանր խողովակներու , որք կըսուին մազատեսակ խողովակը :

1912 Ի՞նչ են երակը : — Դիւրապատառ երկայն ամաններ են և աւելի զրուանց տեսնուող : Կը ձեւանան մազատեսակ խողովակներէ՝ որոնց մէջ չնչերակը կը տանին արիւնը , և այս խողովակներէն ընդունելով չնչերակացին արիւնը , (որ արդէն զորկ կ'ըլլայ կենաց քանի մը էական մասերէն) զայն կը տանին թոքերուն և թուանին զայն կը տանին թոքերուն և թուանին զայն կը տանին վաղուկի մը միջցաւ , քերէն ալ՝ սրտին , վաղուկի մը միջցաւ , որ հակառակ է այն վաղուկին՝ որ կ'առաջ նորդէ արեան չնչերակաց մէջ :

(Ինչպէս որ չնչերակը կ'ընդունին սրբակն զարկը որ կը մղէ արիւնը ըրջելու , տին զարկը որ կը մղէ արիւնը ըրջելու , այսպէս ալ կ'ընդունին բոլոր իրենց երակային սակագութեամբը ընդունած զարնուածքին կացնութեամբը)

արդասիքը, և կը պատճառեն բարյախունն
կամ զարկ : — Երակը՝ իրենց ծաղման
պատճառաւ՝ չեն կը բնար զգալ սրտին բա-
րյախումը, և անոր համար ալ չեն պատ-
ճառեր բարյախումն :

1915 Ո՞ր գոյացութիւնք են որ կը մատակարարեն կենդանական կենաց մամացը և հետևաբար արիւնը: — Ուտելիք, և աստիճան մէջն ալ այն գոյացութիւնք՝ որ քանակութեամբ բորակածին կը պարունակեն, ինչպէս են կենդանեաց միսր:

1914 წნებ բաղկացած են կենդանեաց միսն և գնդերքն : — Միսն է արեան շարունակ զատուցումն , և առաջ կու գայ արեան նյոյն բաղադրիչներէն . միայն թէ աւելի թանձրացեալ ըլլալով՝ կը գտուի իրեն մէջ մեծագոյն քանակութիւն մը ներդիտի և նուապ ջրոյ :

1915 ինչո՞ւ համար մատղաշ կենդա-
նեաց միսն, օրինակի համար գառնուեկին
և հորթին, աւելի շուտ կապականի՞ քան
եզան կամ ոչխարի միսն: — Որովհետեւ
մատղաշ կենդանեաց միսն նուազ գնդե-
րային նեարդ կամ նեարդիտ կը պարու-
նակէ քան մեծերունը, և այս բանս զայն
աւելի դիւրաւ ապահանելի ի՞ոնէ:

Ծոր կը մնայ : — Բ . Ա . զն ըլլալով ամենա-
զօրաւոր հականեխիլի՝ մը՝ կ'արգելու քայ-
քայման գարչելի հստաք և համբ : — Գ .
Ա . զն կը մակարդէ զայն և կը սպասէ և կը
հաստատցնէ զինքը ջրէն զրկելով . անոր
համար այս գոյացութիւնս նաւազ զիւրա-
քայքայելի կ'ըլլայ : — Գ . Կը պաշտպանէ
մները՝ ձնեաց և օդոյ ողջակի շշափու-
մէն , ծածկելով զայն կարգով մը :

ԳԼ. Բ. ՇՆՋԱՌՈՒԹԻՒՆ

1917 Ի՞նչ բանի համար է շնչառութիւնն :
— Ա . Մատակարարելու արենան թթուա-
ծինը որուն պէտք ունի : — Բ . Բաժնե-
լու արիւնէն և թորերէն՝ առատ ածղային
թթուալ :

1918 ինչ կերպով չնառութիւնն կը
մատակարարէ արեան՝ թթուածինը : —
Ենառութեան ատեն օգն կը մոռնէ թոքե-
րուն մէջ և հոն թթուածինն կը զուգա-
զրի արեան հետ, փոխելով զայն կարմիր
գունին շիկագոյն կարմիր գունին :

1919 ինչ կերպով կը ձևանայ արարակը ածղացնին թթուուն։ Ենչերակացին արեան (որ գեա կրած էլ թթուածնացումն) գործ կարմիր գոյնն առաջ կու գայ իր պարունակած ազատ բնածուզի բանակութե-

1 ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ կամ ՓԱՌԱՅԻՆԸ արդելով:

նէն, և երբ թթուածինն աղդէ իրեն վրայ՝
այս ազատ ածլուկո կը դոգադրի անոր
հետ, և ածղային թթուտ կազի կը վերա-
ծուի :

(Արեան ածդուկին օգոյ թթուածնին հետ
զուգադրութիւնն՝ դիւրա կ'ըլլայ, որով
հետեւ օգն կը պատէ ամեն կողմէն արիւ-
նը՝ որ բաժնուած կը գտուի թոքային խոր-
շոց մէջ, որք կուռփի՝ երբ օգն մանէ իրենց
մէջ. այս քիմիական զուգադրութեամբ
թոքային խորչը լի կ'ըլլան ածղային թթու-
տով և օգոյ բորակածընով, որոնք դուրս
կը դրուին չնշառութեամբ : — Մթնոլոր-
տային օգն կը պարունակէ ½ բորակածը-
նի և ¼ թթուածընի :

1920 իրաւ է որ նաև բոյսք կը չնչեն: —
Ա.յո. բոյսք կը չնչեն բոլորիքենց մարմայն
տարածութեամբը, որ ծածկուած է ան-
հուն պղտի ծակտեօք, բայց զիմաւորապէս
տերեոց վարի երեսովք կը ծձեն. այս ծակ-
տիք կ'ըստին բնրանիկը :

1921 Բոյսերն ալ նոյնպէս րրուածին կազ
կը չնչեն: — Ոչ. ածղային թթուտ կազ կը
չնչեն:

1922 ի՞նչ զուգադրութեանց ենթակայ
կ'ըլլայ բոյսէրէն չնշառ ածղային թթու-
տըն: — Ա.յո կազս լուծուելով կ'ըլլայ թթ-
ուածին կազ՝ որ մթնոլորտ կը դառնայ,
ինչպէս որ մենք ալ կը դարձնենք յիտս
բորակածինը՝ իր անյարմար չնշառութեան
ներգործող մասին, և բնածուզն կը մնայ

տունկին մէջ, որուն կը ծառայէ տալու ա-
ճումըն և հաստատութիւն:

1925 Բուօսց տերեք չնշառութեամբ ու-
րիշ գոյացութիւն մ'ալ կը ծըծնէն: — Ա.յո.
կառնուն օգոյ ջրային շոգին, որ կը ծա-
ռայէ խոնացընելու տերեմները և ցօղուն-
ները, և ոչ թէ նոյն խոկոց գոյացու-
թեամբ վերածուելու:

1924 Ի՞նչ պատճառաւ օդն դոր արտա-
շընչութեամբ դուրս կու տանիք՝ խոնաւ է :
